

Մ Ո Ւ Ր Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3 1892

մարտ
Ա Գ Ի Ր

1892 № 3

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ


	Էրես	
1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	347	Տիգրանուհի (դրամա):
2 ՄՈՉԽՈՒԲԱՐԻՁԷ, ԱԼ.	369	Էլիս (վէպ):
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	389	Անարդ սին (բանաստեղծութ.):
4 ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ	391	Առանց դառնալիքի (վէպ):
5 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	414	Քրիստոսը անապատում (բանաստ.):
6 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	415	Նախկին քաղաքակրթ. վարերում:
7 ԲԱՐԽՈՒԳԱՐԵԱՆՑ, ՅՈՎՀ.	434	Յովհաննէս Ամուս Կոմնիոս:
8 ՔԱԼԱՆԹԱՐ, ԱԼ.	443	Վ. Փափաղեանի պատկերները:
9 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ՍԱՐԳԻՍ	453	Եղորդեանի բառարանը:
10 ՊՈՏԱՊԻՆԿՕ, Ի. Գ. Ն.	470	«Կաղախարական քաջանայ»:
11 ԼՈՒՍԻՆԻ.	473	Թիֆլ. թեմ. պատգ. ընտրութ. դործը:
	478	Արցախի թեմ. պատգ. ընտրութ.:
	482	Թիֆլ. հայոց թատրոնական ժողովը:
12 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.	489	Հրատարակչական ընկերութիւնը:
13 Ֆ.	496	Արտատահմանեան քրոնիկ:
14 Ա. Ա.	503	Սարգսեանց Սարգիս:
15 ԽՄԲ.	505	Խմբագրութեան կողմից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1892



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 3 1892

Մ Ա Ր Տ

1892 № 3

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1892

Дозволено цензурою. Тифлисъ, 14 Марта 1892 г.

Типографія М. Д. Ротивіанца. На Гол. просп. соб. домъ № 41.

ՏԻՓՐԱՆՈՒՀԻ

պատմական դրամա հինգ արարածով

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

Տիգրանի պալատը. դահլիճ:

ԵՐԵՒՈՅԹ I

ԶԱՐՈՒՀԻ, ներս է մտնում ՏԻՓՐԱՆԸ

ԶԱՐՈՒՀԻ

Ինչո՞ւ ես այդպէս մտայլ:

ՏԻՓՐԱՆ

Երիտասարդ դաշնակիցս ինձնից օգնութիւն է խնդրում—և ի՞նչ ես կարծում, ո՞ւմ դէմ: Աժդահակի դէմ, միւս դաշնակցիս դէմ: Թողը ապստամբւում է իւր պապի դէմ:

1) Տե՛ս «Մուրճ» № 1, 2.

ԶԱՐՈՒՀԻ

Իսկ դու... խոստացածը:

ՏԻԳՐԱՆ

Ի՛նչ ես խօսում, Զարուհի: Դու չը զիտե՞ս ո՞վ է Աժդահակը:

ԶԱՐՈՒՀԻ

Իսկ եթէ Կուրուշը զայրանայ և վրէժը քեզնից հանէ:

ՏԻԳՐԱՆ

Նորա զայրոյթը կը հանգցնեմ: Ուխտադրութիւն, դաւաճանութիւն իւր վերան առնել կարող չէ Տիգրանը: Երբէք, ե՞ս — սպառազինեմ իմ քրոջ ամուսնու դէմ — երբէք:

ԶԱՐՈՒՀԻ

Թէև մեր սուրբ Արմանեակի սօսիների լեզուն ինձ յայտնի չէր, բայց ես զուշակում էի, և զուշակութիւններս այժմ կատարւում են: Ես քեզ ասում էի. Տիգրան, մեզ պէտք չէ Մեղացու Մարի ազգականութիւնը, Մեղացու ազգականութիւնը մեզ պէտք չէ, Տիգրան. իսկ դու «չէ» ու «չէ»: Ես նախազգում էի...

ՏԻԳՐԱՆ

Դու ոչինչ չէիր նախազգում և ոչինչ որոշ բան չէիր ասում: Կամ Աժդահակի ծերութիւնն էիր մէջտեղ բերում, կամ Տիգրանուն ալանդխտութիւնը...

ԶԱՐՈՒՀԻ

Անմեղ էակին դու աքտրեցիր, և նա՝ առանց յանցանքի տուժում է իւր անարդար, ապօրինի պատիժը: Եթէ այն անմեղ աղաւնեակը, իբրև դործիք, պիտի նախատէր քո մեծութեան, քո վառքին, ապա ինչո՞ւ դու էլ, դաշնակիցդ էլ՝ ձեռներդ ծալած, երկուսդ էլ անդործ նստած էք տանը և միայն ապարդիւն ժամանակ էք վատնում: Դու գլուխդ բարձրացնում էիր մինչև Մասիսի սառնամանիքները, ամբողջ Հելլադան նւաճւում էր տիրապետութեանդ, և դու, հռչակաւոր աշխարհակալդ...

ՏԻԳՐԱՆ

Հերիք... ի սէր անդրանիկ որդուդ...

ԶԱՐՈՒՀԻ

Ես կը լռեմ, եթէ հրամայում ես: Բայց լաւ իմանաս, որ զրու-
թիւնդ այժմ աննախանձելի է: Քո մի ձեռքդ սեղմում է մի դաշ-
նակիցդ, միւս ձեռք միւս դաշնակիցդ, երկուսն էլ սեղմում են քո
ձեռները և միեւնոյն ժամանակ երկուսն էլ ոռնալով՝ արիւնածարաւ
զազանների պէս իրար վերայ ատամներ են կրճտեցնում, իսկ դու...

ՏԻԳՐԱՆ

Վերջապէս ի՞նչ ես ուզում ասել, ասան տեսնեմ: Արիւնս մի,
խաւնիլ, Զարուհի...

ԶԱՐՈՒՀԻ

Ես ուզում եմ ասել, որ եթէ Տիգրանուհուն չը տայիր Աժդա-
հակին, այս րոպէին քո զրութիւնը այսքան անելանելի չէր լինիլ:

ՏԻԳՐԱՆ

Արդարեւ, եթէ ես չը ծնէի, այս բանը չէր պատահիլ. դու
ճշմարիտ ես. միայն ինձ մենակ թող... հասկանում ես. ես կամե-
նում եմ մենակ լինել: (Զարուհին գնում է):

ԵՐԵՒՈՅԹ II

ՏԻԳՐԱՆ (մենակ)

Ափսոս երիտասարդ. նա մեռաւ ինձ համար: Սակայն նա փա-
ռաւոր ապագայ է խոստանում: Լաւ չարի, որ մերժեցի: Ափսոս այս
օրւանից մենք պէտք է թշնամանանք իրար հետ: Վերջապէս նա
կարող է քոյրիկիս էլ փնասել, իմ ոխս նորա գլխին թափելով...
Բայց ո՛չ. չեմ թողնիլ, որ բանը դորան հասնէ. կ'օգնեմ թազակցիս:
(Մտնում է սենեկապետը):

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Մեծափառ արքայ, այս րոպէիս արքունիքը մի լրաբեր հասաւ՝
բոլորովին յոգնած, քրտնած, ուժասպառ, շտապով ձիուց իջաւ,

Թառանջելով ներս մտաւ սրահը և շշմած թռչունի պէս ուշաթափ եղաւ և ընկաւ գետին: Ի՞նչ անենք հետը:

ՏԻԳՐԱՆ

Երբ ուշքի կը դալ, թող ներկայանայ: (Սենեկապետը դնում է):
Այս հիւ պէտք է լինի... Բայց ահա ինքը:

(Մտնում է Գոհարիկը զգեստաւորւած):

ԵՐԵՒՈՅԹ III

ՏԻԳՐԱՆ, ԳՈՀԱՐԻԿ

ԳՈՀԱՐԻԿ

Բարև՝ թագաւոր, ինձ չեմ ճանաչում:

ՏԻԳՐԱՆ

Ձայնդ ինձ ծանօթ է թւում: Դու հիւ ես:

ԳՈՀԱՐԻԿ

Ես Գոհարիկն եմ, թագաւոր...

ՏԻԳՐԱՆ

Գոհարիկը...

ԳՈՀԱՐԻԿ

Այո, թագաւոր, ձեր խոնարհ նաժիշտը և Տիգրանուհու, զգալի Տիգրանուհու ընկերուհին:

ՏԻԳՐԱՆ

Դժբաղդ Տիգրանուհու... Այս ի՞նչ է նշանակում... (ձեռք կրծքին դնելով): Աւետիք թէ բժիշ:

ԳՈՀԱՐԻԿ

Բժիշ:

ՏԻԳՐԱՆ

Այդ ես զգում եմ: Դու ծածուկ ես եկել. այնպէս չէ:

ԳՈՀԱՐԻԿ

Այ՛, Թազաւոր:

ՏԻԳՐԱՆ

Այդ ես տեսնում եմ: Քո ծպտած երեւալի, դէմքիդ անսովոր տխրութիւնը, քո դողդոջուն ձայնը ինձ արդէն շատ բաներ ասացին: Սկսիր:

ԳՈՀԱՐԻԿ

Կարո՞ղ Թազաւոր...

ՏԻԳՐԱՆ

Խօսիր համարձակ, մի՛ վախիր. ոչ ուրախութիւնից կը խենթանամ, ոչ տրտմութիւնից կը խելագարւեմ, ոչ բարկութիւնից կը կատաղեմ. ես պատրաստ եմ ամենասարսափելի հարւածի:

ԳՈՀԱՐԻԿ

Ես չեմ կարող, Թազաւոր... ես ոյժ չունիմ... ահա Տիգրանուն համակը... այստեղ ամեն բան զրւած է... ես զնում եմ Թազունու մօտ... (Գնում է):

ԵՐԵՒՈՅԹ IV

ՏԻԳՐԱՆ (մենակ նամակը ձեռին)

(Քիչ տատանւելուց սկսում է կարդալ), «Իմ Թանկագին, սիրելի իմ եղբայր, (համբուրում է նամակը), իմացիր, որ Աժդահակը այսուհետեւ էլ քո դաշնակիցը և բարեկամը չէ, նա քո թշնամին է, այստեղ ծագել է դաւաճանութիւն...» (կարծես սարսափելի երազից սթափած՝ չորս կողմն է նայում). «Քո կենդանութիւնը եղբայր, սորան հանգիստ չէ տալիս. սա պապական է քո արեան ծարաւից...» Կուրուշին ինչո՞ւ մերժեցի... «Աժդահակը և իւր եօթ խորհրդակիցները վճռեցին այսօր քեզ չարամահ սպանել...» (Թիկնապահներին): Պալատականներին այստեղ կոչեցէք: «Սիրելի եղբայր, միւսնոյն ծերունին, որ ինձ այստեղ բերաւ, արքայի ամենամտերիմ արբանեակը, շուտով դարձեալ պիտի ներկայանայ քո առաջ հաղորդելու թէ իբր

ես, քո քոյրը մահամերձ հիւանդ եմ, և ցանկանում եմ մահիցս առաջ քո երեսը տեսնել: Սոքա յուսով են այսպիսով քեզ հրապուրել իրանց սահմանների մօտ թակարդ ձգելու իրանց զիւական եղեռնագործութիւնը կատարելու համար...» Քեզ մարդ կարծեցի, Աժդահանկ, բայց ոչ զազան: Ուրախութեամբ, յօժարակամ ես սիրոս պոկեցի այստեղ և քեզ յանձնեցի, զի նկնգ, ապիրատ դարանագործ... Խեղճ իմ քոյրիկ, ինչքան խնդրեց, ինչքան աղաչեց, արտասալից աչքերով, ծնկաչոք նա պաղատեց ինձ, խակ ես... Քո բոլոր անէծքներդ, քոյր իմ, սլաքների պէս այս զլխիս թափւեն. ես արժանի եմ քո կշտամբանքին: Անդդաջ, ժեռ քար էր դարձել այս կուրծքս, որ անմատչելի մնաց քո ջերմ արտասուքների համար... Բայց հող չէ. զոնէ այժմ բոլորը պարզ է: Նս յանցանք գործեցի, ես կը քաւեմ յանցանքս: «Ախ, երբ կը տեսնեմ և կ'արժանանամ արդեօք ձեր կրկին տեսութեան—այդ աստուածներին է յայտնի, մազից է կախւած իմ կեանքս. բաւական է մի ջնչին կտակածանք: Գոհարիկին սիրեցէք, ինչպէս ինձ, և թոյլ չը տաք, որ վերադառնայ այստեղ, առանց ինայելու կտոր կտոր կ'անեն նորան: Իմ թանկազին եղբայր, ազատի՛ր, եթէ կարող ես, քո թշուա քոյրիկին»: Արդարադատ Արամազդ, կարողութիւն եմ ինդրում քեզնից՝ ուխտադրուծ, դաւաճան ոտխիս թութերը նիզակիս ծայրին արիւնաթաւալ մի տեսնեմ և ապա այնուհետև հողիս էլ առնես՝ դարձեալ զոհ, դարձեալ շնորհակալ եմ քեզնից, բարի աստուած:

(Մանում են պալատականները):

ԵՐԵՒՈՅԹ Վ

ՏԻԳՐԱՆ Լ ՊԱՆՍԱԿԱՆՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ

Ողջոյն ձեզ կրկին:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Ողջոյն, թագաւոր:

ՏԻԳՐԱՆ

Սիրելիներս, այսօր մեզ համար

Անյաջող օր է, զեռ մի քիչ առաջ
Մեր մէջ յղացած սրտնեղութիւնը
Փոխարինուում է ահա անսահման
Խորին բարկութեան: Մեր Տիգրանուհուց
Ես այս բոպէիս նամակ ըստացայ,
Որով նա ցաւով հաղորդում է ինձ
Թէ երկար-երկար մենք բոլորեքեան
Խաբւած ենք եղել Աժդահակի չար
Նենգամուտութեամբ...

(Պալատականների մէջ անհանդիստ շարժում):

Թէ մեր յոյսերը, մեր ցընորական
Բոլոր յոյսերը, ի ցաւ մեր սրտին,
Պիտ անհետանան և հանգչեն ինչպէս
Զըքնաղ վերջալոյսն իրիկնապահին.
Բարեկամներս, իմ թագակիցս
Դաւաճանել է...

ԲՈՒՈՐԵՔԵԱՆ

Դաւաճանել է:

ՏԻԳՐԱՆ

Դըրժել է բոլոր սըրբազան կապերը,
Որով սերտ կապւած էին իրար հետ
Ձեր թագաւորը և Աժդահակը.
Նա ոտնակոխ է արել մեր անկեղծ
Հաւատարմութիւնը, պղծել է մեր սուրբ
Դաշնակցութեան ուխտն և մեր նոր, զեռ թարմ
Ազգականութիւնը...

ՈՄԱՆԳ

Վըրէժ, թագաւոր:

ՄԻՒՍՆԵՐԸ

Ուխտադրուժ, մոլի Աժդահակիցը:

ՏԻԳՐԱՆ

Ո՛հ, մի՛ք վըրդովւիլ, սիրելիներս,
 Իզուր էք այդքան յուզում բորբոքում:
 Առնական ազնիւ քաջասրտութեամբ
 Տարէք հարւածներն իրար ետեւից:
 Ձեզ չը կոչեցի, որ ձեր վայրենի
 Գոչիւններովը այս դահլիճները
 Դուք թընդացնէք. այդ կարող էի
 Ես ինքս մենակ: Ո՛հ, բարեկամներ,
 Խորհըրդակցութեան համար կոչեցի
 Բոլորիդ այստեղ: Կը գայ ժամանակ,
 Եւ ազատութիւն կը տաք կորովի
 Ձեր բազուկներին: Բայց միայն այժմ
 Սանձահարեցէք ձեր այդ զայրոյթը
 Եւ համբերութեամբ, սառնասրտութեամբ
 Ուշադիր եղէք իմ ասածներին:
 Սիրելիներըս, իմ թագակիցս
 Բարեհաճում չէ ցանկանալ, որ ես,
 Ձեր թագաւորը, կենդանի մնամ:
 Դա անտանելի է նորա համար:
 Այն է տենչալի նորա փափաղը,
 Որ ես զո՛հ լինեմ զիշատիչներին...

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Վըրէժ, թագաւոր:

ՏԻԳՐԱՆ

Այդ նպատակով

Իսկ ուղարկել է նոյն ալեորին,
 Որ պարծենալով պատմում էր, ինչպէս
 Նա համբուրում է իւր ինքնակալի
 Հողաթափները. և զուցէ շուտով
 Նա այստեղ լինի...

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Կը սպանե՞նք նորան:

ՏԻԳՐԱՆ¹

Դեռ համբերեցէք, նսս պիտի յայտնէ
Թէ քոյրս — որ ողջ և առողջ է այժմ,
Այդ մեր մէջ ֆնայ — ծանր տկար է
Եւ ցանկանում է տեսնել իւր եղբոր:
Իսկ ես, ի հարկէ, կը շտապեմ իսկոյն
Դէպի Եկբատան: Մեղացիների
Բաղդը կը բացւի. ես կ'ընկնեմ թակարդ.
Նոքա կը գործեն ցանկալի ոճիրն
Եւ այն ժամանակ
Անդարձ յաւիտեան բարև դնա, Տիգրան:
Ինչպէս տեսնում էք, սիրելիներըս,
Աժդահակի հետ մենք այսուհետև
Ոչ թէ բարեկամ, այլ թէ ոխերիմ
Թըշնամիներ ենք. և նորա գաղտնին
Այժմ բոլորիս ակընյայտնի է.
Ասացէք, տեսնեմ, թէ ինչպէս վարւենք
Այս հանգամանքում, որ մեր նախահօր
Վըսեմ անունը չարատաւորենք:
Խօսիր առաջ դու, հանգուցեալ իմ հօր
Անւանակիցը:

ԵՐՈՒԱՆԴ

Ձերըդ Մեծութիւն,

Թըշնամուց վըրէժ առնելու համար
Միմիայն մի բան է ինձ քաջ յայտնի —
Բացարձակ, ազնիւ ճակատամարտը.
Ձինավառ ելնել պատերազմի դաշտ,
Հակառակորդի աչքի առաջին.
Եւ ապա ճակատ ճակատի տալով՝
Յաղթել կամ, յաղթած, սըլաքը կըրծքին՝
Գետին տապալւել: Այս է կարծիքս:

ՏԻԳՐԱՆ

Իմ սըրտից էիր զու խօսում, Երուանդ,
Աւազակներին թողնելով դադանի
Խաւարի գործը: Իսկ զուք ի՞նչ կ'ասէք:

ՄԷԿԸ

Պէտք է միանալ նորա հետ, որին
Այսօր մերժեցինք, և Կուրուշի հետ՝
Ձեռ ձեռի առաջ՝ ասպարէզ ելնել:

ՄԻԻՍԸ

Եւ շուտով անթիւ զօրքեր ժողովել
Եւ գնդեր կազմել:

ՏԻԳՐԱՆ

Այդ ամենը լաւ

Եւ գեղեցիկ է. այդպէս էլ կ'անենք:
Բաց մի՛ մոռանաք բարեկամներս,
Որ նա, որին մենք սպրտական ենք մեր
Ազատութիւնը տարաբաղաւարտ,
Այնտեղ է, ուր նա չը պէտք է լինէր —
Մեր արիւնարբու թշնամու ձեռին:
Չընչին կասկածանք կարող է նորան
Վըտանդի մատնել և մահի անդամ
Ենթարկել նորան: Այն չար Մեղացին
Իւր կատաղութիւնը և իւր փրզձուկը
Անողորմաբար կարող է թափել
Պաշտելի, անտէր մեր քրոջ գըլխին.
Կը յօշոտեն նորան, ինչպէս դայլերը
Մատաղ գառնուկին:

ԵՐՈՒԱՆԴ

Իրօք, թագաւոր,
Այնքան անսահման ու անագին էր
Մեր ընդհանրութեան յուզումը, գըլղիւն,

Որ մեղանչեցինք մենք նա իրական
 Մեր քոյրիկի դէմ, գէթ ժամանակով
 Մռապման տալով նորա փրկութեան
 Կարևոր հարցը: Բայց երբու՞մ եմ ես,
 Որ արժանի է,
 Նա պըսակազարդ խընկարկւի բոլոր
 Մէհեանների մէջ՝ մեր ոսկիամայր
 Անահիտի հետ հաւասարապէս:
 Եւ դորա համար մենք ճիշդ կը թափենք
 Ազատել նորան իւր օրհասական
 Գալիք աղէտից, որքան դա զըժար
 Լինէր մեզ համար: Միթէ, ճըշմարիտ,
 Հէնց նոյն լըրատուն, որ դիւցազնական
 Համարձակութեամբ յանդըղնեց հանել
 Սոսկալի գաղտնին, որ ծածկւած էր մեծ
 Պարիսպների ետ՝ անմերձենալի
 Առասպելական վիշապի հըսկայ
 Դըղեակի նման, մի՞թէ նոյն անձը
 Չէ կարող փըրկել մեր Տիգրանուհուն,
 Ազատել օձի իշխանութիւնից:

ՏԻԳՐԱՆ

Բայց կը զարմանաք, բարեկամներըս,
 Եթէ ձեզ ասեմ, որ այն լրատուն
 Ոչ թէ դիւցազն է, ինչպէս կ'ործում էք,
 Այլ մի հասարակ և թոյլ արարած,
 Անսահման բարի, անսահման խոնարհ,
 Չըքմեղ կուսութեան մի չըքնաղ տիպար.
 Թէպէտ չը զիտեմ մենակ է եկել
 Թէ ուղեկցի հետ, բայց ինձ բընաւին
 Հրաշք է թըլում, որ մի նըրբակաղժ
 Եւ մի խեղճ աղջիկ լեռներ ու ձորեր,
 Դաշտ և անտառներ սրաթիւ կտրելով,
 Աւագակների ապաստաններով

Եւ զազանային որջերի մօտով
 Եւ հազար ու մէկ փորձանքի միջից
 Անվընաս անփորձ վերջապէս այսօր
 Հասնում է մեզ մօտ՝ իւր նպատակին:
 Ես հաւատտի եմ, կամ Արամազդը
 Կամ Անահիտը նորան հովանի,
 Պաշտպան են եղել և աներևոյթ
 Էակի նման
 Պատըսպարելով՝ առաջնորդել են
 Անմեղ աղջկան զէպի անձկալի
 Նորա հայրենիք:

(Մտնում է Սենեկապետը):

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Մարաց արքայի պատգամաւորը:

ՊԱԼԱՏԱԿԱՆ

Երթանք, կոտորենք...

ՏԻԳՐԱՆ

Սուրը պատեանից

Իմ ապարանքում չը պէտք է հանւի:
 Դիմաւորեցէք... բայց ըզզոյշ եղէք —
 Զը լինի նորան դուք վիբաւորէք
 Տեղի անտեղի: Չերն է միայն
 Նորան ընդունել և այստեղ բերել:
 Կարող էք գնալ...

(Գնում են):

ԵՐԵՒՈՅԹ VI

ՏԻԳՐԱՆ (մենակ)

Պիտի պըղտորէ՛

Նա իմ այս սիրտըս... հէ՛, ախմայից
 Չեռքս զընում է զէպի ոսկէզօծ
 Երախակալըս.

Ես ինձ ուզում եմ, կարծես, մոռանալ.
Բայց պէտք է սանձել
Այս անտասովոր կատաղութիւնըս:
Ս'հ, անէծք նորան, որ բարի հոգիս
Այժմ լըցըրեց օձի չարութեամբ,
Գարշելի մաղձով... Ահա պատուելի
Իմ բարեկամըս:

(Մտնում են պալատականներ և 1-ին խորհրդակից)

ԵՐԵՒՈՅԹ VII

ՏԻԳՐԱՆ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Ողջոյն, մեծափառ

Թագաւոր:

ՏԻԳՐԱՆ

Ողջոյն:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Ես, մեծդ արքայ,

Քո ոտների տակ այս չընչին փոշին...

ՏԻԳՐԱՆ

Ի՛նչ է հրամայում իմ դաշնակիցըս,
Որ նորա համար ես պատրաստ անեմ
Մառայութիւնըս:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Կարող թագաւոր,

Ես ուղարկեա՞ծ եմ ձեր հաւատարիմ

Թագակից փեսից, որ նախ և առաջ

Նորա ողջոյնը ձեզ մատուցանեմ...

(Պալատականների մէջ զառը քըրքիջ):

ՏԻՊՐԱՆ

Յատուկ խնդրում եմ, որ սոցա վերայ
Ուշ չը դարձնես: Հանդարտ, անվրդով
Հաղորդիր բոլորն, ինչ բանի համար
Դու ուղարկած ես: Երևակայիր,
Որ դու վիթխարի սեպացած ժայռ ես,
Սոցա ծիծաղը—մի պարապ քամի,
Որ շրվուում է քո այդ հրակայական
Անասան կըրծքին:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Կարող թագաւոր,
Ես պիտի յայտնեմ տըխրալի մի լուր...
(Պալատականների մէջ դարձեալ իրարանցում):

ՏԻՊՐԱՆ (Պալատականներին)

Անվայել է ձեզ այդպիսի վարմունք
Մի ծերունու հետ, ով և նա լինէր:
(Սորդհրդ.) Դու շարունակիր:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ձերդ Մեծութիւն,
Ձեր հաւատարիմ փեսան...

ՄԷԿԸ (Կիսածալն)

Դաւաճան:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Կարող թագաւոր,
Ես շուարած եմ... երևակայել
Ձեմ կարող անգամ, ինչ է իմ մեղքը,
Որ այսքան դուք խիստ էք ինձ հետ վարւում:

ՏԻՊՐԱՆ (Պալատականներին)

Այսօր դուք արբած էք եկեղ այստեղ,

Թէ մտադիր էք դուք ձեր արքայի
Արիւնը խառնել: Զը գիտէք ո՞վ է
Զեր առջև կանգնած, թէ մեր դաշնակցի
Պատգամաւորին դուք չէք ճանաչում:
Դու շարունակիր յարդելի ծերուկ:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Բայց նախ ասացէք, թէ արդեօք ի՞նչ է
Այս նշանակում, ի՞նչու դառնութեամբ
Մաղրում են սոքա իմ այս ալիքը.
Որտեղից է խիստ և անմեկնելի
Այս փոփոխութիւնն, որ նշմարում եմ
Ես այսօր ձեր մէջ: Ես չեմ հասկանում
Եւ ձեր մեծութեան երկդիմի և մութ
Խօսակցութիւնը:

ՏԻԳՐԱՆ

Այս բոլորը, ծեր,
Նըշանակում է, որ փոթորիկը
Շատ էլ հեռու չէ:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Այդ ի՞նչ փոթորիկ
Է արդեօք, արքայ:

ՏԻԳՐԱՆ

Դու յայտնիր, տեսնեմ,
Ի՞նչ բանի համար ես այստեղ եկել:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ես կը հաղորդեմ... բայց ցաւում եմ ես,
Որ ձեր բարկութեան պատճառը դարձեալ
Անյայտ է մնում. կարծես բնաւին
Հանգած է ձեր մէջ բարեկաւութեան
Սիրոյ կրակը, և մինչև անգամ

Ինձ թըլում է թէ... Օ՛ աղաւում եմ,
 Թէ չար լեզուներն՝ նախանձից զըրդւած,
 Մեր դաշնակցութեան ամրապինդ կապերը
 Քակտելու համար,
 Անարժան լուր են տարածել ձեր մէջ,
 Մի ծածկէք ինձնից, այլ պարզ յայտնեցէք,
 Որ կարողանամ խաղառփարատել
 Ձեր այդ անտեղի տարակուսանքը:

ՏԻԳՐԱՆ (խիստ)

Աժգահակը իմ ազգականն է
 Եւ դաշնակիցը: Դու յայտնիր տեսնեմ,
 Ինչ բանի համար ես այստեղ եկել:

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Կարող թագաւոր, ես զարհուրում եմ
 Ձեր ահեղ ձայնի եղանակիցը.
 Ձերդ Մեծութեան հայացքն առաջ
 Քաղցր էր և մեղմ, այժմ՝ նա ասես
 Կայծակ է զարկում: Ձը լինի Կուրուշը,
 Մեր այն նենդաւոր, ապերախտ օձը,
 Որ ըռպէ-ըռպէ սպառնում է շանթել
 Իւր արիւնակցի և հարազատին,
 Ձը լինի նա է թըշնամութեան հուր
 Ձեր սրտում վառել...

ՏԻԳՐԱՆ (զաւրացած)

Ինքը երկինքը

Ձէ կարող քանդել մեր կապակցութիւնը,
 Ոչ թէ պատանին, որ դեռ երէկ է
 Իւր մէջքին կապել չափահասութեան
 Ոսկեկուռ գօտին: Դու յայտնիր, տեսնեմ,
 Ի՞նչ բանի համար ես այստեղ եկել:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Ես կը հաղորդեմ բարեդուժ արքայ.
Ես ըսկըսում եմ... բայց բոլորովին
Ձարմանք է թըւում... ես չեմ հասկանում...
Վերաս ոյժ չը կայ... Թնյլ տուր ինձ, իմ տէր,
Քիչ հոգի առնեմ... շատ յուզած եմ ես...

ՏԻԳՐԱՆ

Նըստիր, ալւոր: Քեզ ի՞նչ պատահեց.
Դու դողդողում ես, դու առանց այն էլ
Գունաւորած էիր, այժմ մեռելի
Ես դու նըմանում: Ողորմելի ծեր,
Մի՛թէ քո արքան հէջ չը խընայեց
Քո այդ կընծիւներդ և այդ ալիքըդ,
Որ քո զառամեալ, թուլացած մէջքին
Բարձեց այդպիսի մի անտանելի
Ծանըր, դառը բեռ, որ ամենևին
Վեր է քո ոյժից. պիտի մեղքանար
Նա քո ծերութեան և քեզ սար ու քար
Չը գըցէր նորից: (Քիչ լուրթիւնից լետու)

Բայց Տիգրանուհին —

Մոռացայ հարցնել — ինչպէս է անցնում
Իւր ժամանակը. նա չէ վըշտանում,
Որ հայրենիքից այսքան հեռու է.
Նա դո՞հ է արդեօք իւր վիճակիցը:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Մեր մայր-թագուհին...

ՏԻԳՐԱՆ

Ձեր մայր թագուհին:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Իմ բարի արքայ, զ՛հ երանի թէ
Պապանձուէր լեզուս, որ անգոր լինէր

Գուժելու այստեղ ցաւալի բօթը,
 Որի համար և ես ուղարկած եմ:
 Ահա թէ ինչու ես այսքան երկար
 Յապաղում էի չը համարձակելով
 Ձերդ Մեծութեան սիրտը պղտորել,
 Վըրդովել նորա անդորրութիւնը:
 (Պալատականների մէջ անհանգիստ շարժում, իրարանցում և չնչին)

Կարո՞ղ թաղուոր, չարութեան աստուած
 Մեր Ահրիմանը, մեր ազգի գըլխին
 Կրակ է թափում, բարկութեան կրակ:
 Ամբողջ Մարաստան անցոյս թախծութեամբ
 Սըզաւորական հանդերձ է հազած
 Պաշտելի իւր մօր մահամբրձ հիւանդ
 Լինելու առթիւ...

ՏԻԳՐԱՆ

Մահամբրձ հիւանդ:

ԽՈՐՀՐԳԱԿԻՑ

Տարաբախտաբար այժմ պիտ, ասեմ,
 Ամբողջ Մարաստան գիշեր ու ցերեկ
 Միշտ ծունըր իջած՝ ջերմաջերմ աղօթք
 Է մատուցանում Ահուրա-Մազդին,
 Որ գըլթայ նա մեզ և յարատև կեանք
 Շընորհէ նա մեր այնքան պաշտելի,
 Երկըրպագելի մեր Տիգրանուհուն:
 Բայց ի ցաւ և սուգ մեր ամբողջ ազգի,
 Ոչ արտասուքներ և ոչ աղօթքներ,
 Ոչ առատաձեռն զոհաբերութիւն,
 Ոչ թալիսմաններ, ոչ կախարդների
 Ճարպիկութիւնը, ոչ ինչ, մի խօսքով,
 Ձէ օգնում բընաւ: Ընդհակառակը,
 Քանի զնում է, այնքան առաւել
 Եւ չարազուշակ, ծանրը է դառնում

Տըկարութիւնը: Երբոր տենդային
 Զերմիցը բըռնւած՝ զառանցում է նա,
 Այդ միջոցներին ձեր անունըն է,
 Վեհափնռ արքայ, միայն պըտըտում
 Նորա բերանին: Եւ ամեն անգամ,
 Երբ նա վերջապէս ուշքի է գալիս,
 Միւսնոյն բանըն է կըրկնում նա միշտ.
 «Եղբօրս տեսնեմ, — ես կ'առողջանամ»,
 «Եղբօրս տեսնեմ, — ես կ'առողջանամ»:

ՏԻԳՐԱՆ

Իսկ՝ դու ինձ խորհուրդ կը տամ այցելեմ:

ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Անհրաժեշտ է, սրբազան պարուք է
 Դա եղբօր համար:

ՏԻԳՐԱՆ

Սարդի ոստայնը
 Ճարպիկ է հիւսւած: Իսկ դուք ի՞նչ կ'ասէք,
 Բարեկամներս:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

Վըրէժ միմիայն:

ՏԻԳՐԱՆ

Եթէ այդպէս է, կը դամ Եկբատան:
 Իսկ դու ականջիդ խցանը հանիր
 Եւ ինձ լաւ լսիր: Անպատճառ կը դամ,
 Թէ ցանկանում ես, ի՞նչ արքայական
 Ազնիւ խօսքըս քեզ լաւ առհաւատչեաց:
 Բայց իմացիր դու, ոչ թէ հինգ հարիւր
 Թիկնապահներով, այլ տասնեակ հազար
 Զօրքերով կը դամ ես ձեր անառիկ,
 Փարթամ Եկբատան: Ես այս էլ ասեմ:

Մաղկեաց անձրեւներ չը տեղան զըլիսիս,
 Իմ ոտներիս տակ թանկագին գորգեր
 Չը փրուեն բնու. ձեր արիւնսաներկ
 Դիակներն ինձ գորգերի տեղակ
 Պիտի ծառայեն, ձեր արեան զետով
 Ես պիտի անցնեմ, մոնեմ՝ Լիբատան:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Ողորմած՝ արքայ...

ՏԻԳՐԱՆ

Ո՛հ, մի՛ զարմանալ:

Կերթաս ու այսպէս կ'ասես դու նորան,
 Որ յափըշտակեց Տիգրանի սիրտը.
 «Ասիւծի զիմաց մըկան թակարդներ
 Չեն լարում երբէք. Տիգրանի սէրը
 Եւ մրտերմական դաշնակցութիւնը
 Առաւել օղուտ, պատիւ կը բերէր
 Մարաց արքային, քան թէ Տիգրանի
 Ապարդիւն մահը. լաւ չէ մոռանալ
 Բարեկամութիւն և ի չար գործել
 Հաւատարմութիւնըն ազգականի»:
 Եւ վերջումըն այս կ'աւելացնես.
 «Դու այսուհետեւ աւելի շուտով
 Գայլի հետ կարող ես մօտիկանալ,
 Բացց Տիգրանի հետ—երբէք չաւիտեան:
 Մինչև զերեզման կը մընանք՝ անհաշտ,
 Արիւնածարաւ իրար թշնամի...»

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Թըշառ Աժդահակ, դաւաճանութիւն
 Է այստեղ ծագել...

ԵՐՈՒԱՆԴ

Լըւիր, սըրիկայ:

ՏԻԳՐԱՆ

Այսօր կ'ըստասես իմ արքունիքում,
Մինչև պատրաստեմ մի նստակ...

ԽՈՐՀՐԳԱԿԻՅ

Արքայ...

ՏԻԳՐԱՆ

Իսկ այժմ ազատ ես դու...

ԽՈՐՀՐԳԱԿԻՅ

Թագաւոր,

Բացատրութիւն, աղաչում եմ:

ՏԻԳՐԱՆ

Բացատրութիւն կ'ըստանաք ինձնից
Դուք կըռւի դաշտում: Այժմ զանցառու
Կը լինեմ: Հերիք: Այլ ևս մի' խօսք...

ԽՈՐՀՐԳԱԿԻՅ

Բարեգիւթ արքայ...

ՏԻԳՐԱՆ (պալատականներին)

Առաջնորդեցէք:

(Գնում է խորհրդակիցը, նորա ետեւից մի քանի պալատականներ):

ԵՐԵՒՈՅԹ VIII

ՏԻԳՐԱՆ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Իսկ դուք, յարգելի բարեկամներըս,
Կը շտապէք շուտով զօրքեր ժողովել
Կապադովկացուց, Աղանից, Վըրաց
Մեր սահմաններից և հաւատարիմ
Իմ ժողովրդից: Իսկ դու, իմ Երւանդ,
Եւ դու, սիրելիս, կը փութամ իսկոյն

Ողջոյնըս տանել մեր երիտասարդ
 Եւ քաջ դաշնակցին, և ներողութիւն
 Խընդրել նորանից մեր մերժման համար
 Եւ վերջ ի վերջոյ դուք կը հրաւիրէք
 Նորա թարմ, զօրեղ աջակցութիւնը
 Մեր ընդհանուր չար թշնամու դիմաց:
 Ել մի՛ք յապաղիլ: Ուստի...

ԵՐԻԱՆԴ

Դէպի գործ:

ԲՈՂՈՐԵՔԵԱՆ

Դէպի գործ:

(Գնում են):

(ՎԱՐԱԳՈՅՐԸ ԻՋՆՈՒՄ Է)

(Կը շարունակւի)

Է Լ Ի Ս Օ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՁԵՁԵՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

հեղինակութիւն

ԱՎ. ՄՕՁԵՈՒԲԱՐԻՁԷԻ (ԿԱԶԵԷԳ)

Վրացերէնից թարգմ. Մկրտիչ Նաւասարդեան:

I

Վլադիկաւկազին մօտիկ, մի սքանչելի դաշտի վրա, երևում էր մի շրջափակ տեղ, բոլորած տան կահ-կարասիներով բեռնած սայլերով: Այս շրջափակի մէջ տեղում, դէս ու դէն, եւում էին կրակի վրա դրած կաթսաներ, որոնց կողքին պառաւներ նստոտած՝ կերակուր էին պատրաստում: Հէնց նրանց մօտիկ ծեր մարդիկ նստոտած իրանց չիբուխներն էին ծխում: Նրանց եռանդուն և հերոսական, թէև տխրած, դէմքերը կրակի լոյսի առաջ մի առանձին խորհրդաւոր պատկեր էին ներկայացնում:

Երեսներն էլ, խումբ-խումբ հաւաքւած, թէև աշխատում էին միմեանց խրախուսել, զարձացնել, բայց նրանց մտախոհ դէմքերը մնում էին դարձեալ անժպիտ:

Այստեղ տիրում էր մի զաղունի լուրթիւն, խորհրդաւոր ծանր հոգս, որը կամայ-ակամայ մարդու ձայնը կտրում, լեզուն պասպան-ձեցնում էր:

Երբեմն պատահում էին բոպէներ, որ մարդկանց շնչառութիւնն

անգամ դադարում և բաւականին ժամանակ զերեզմանական լու-
թիւն էր օխրում նրանց վրա:

Հրաշալի երեկոյ էր. տաքուկ, այնպիսի երեկոներէից մէկը, որ
մարդուս երանութեան մէջ էր տանում և նեքտարի ազդեցութիւն
գործում նեարդային ամբողջ կազմի վրա: Որքան բնապէս առոյգ,
նոյնքան և ուրախ չեչէնները լուել էին այնպէս, ինչպէս փոթորկից
առաջ օդը, որը պատրաստուում է անդորրութիւնից յանկարծ մրրիկի
փոխելու:

Ի՞նչն էր լուեցրել այս կենսալից ժողովրդին: Ի՞նչն էր նրանց
բերանի խօսքը հատեցրել: Ո՞ր անբախտութիւնն էր ընկճել սրանց,
որոնք, քանի մի տարի առաջ, ժպտերես և անվախ սրտով էին դի-
մաւորում:

Մինչև այժմ լսում էին դարձեալ զանազան կողմերից հատ ու
կտոր խօսքեր. բայց նրանք էլ զաղարեցին, և լուլթիւնը տիրեց
կատարելապէս: Այս խորհրդալից լուլթեան միջոցում, որը մարդուս
չիշեցնում է զերեզմանական անդորրութիւն, լուեց յանկարծ ճիւ-
նուրի մեղմ ձայն, որին հետևեց նոյնպէս մեղմ մրմունջ. բայց,
Աստուծ իմ, ի՞նչ ձայն էր այն, չեմ կարող նկարագրել: Պարզ
երևում էր՝ այն ձայնը դուրս էր թռչում սրտի խորքից, որ վառ-
ւելով և բորբոքւելով՝ տոչորում էր երգողին և լսողին:

Տարածւում էր հեռու հեռու դաշտի վրա, որտեղ թեթև
հովը առնելով իւր հեռ տանում էր ամեն մէկ թփի, իւրաքանչիւր
դաշարի մօտ և, շփւելուն պէս, կարծես աւելի զօրեղ կերպով էր
զգացնում իւր ոյժը, ամբողջովին զոդզոդացնում: Մէկ մարդու
մրմունջը շուտով ընդհանուրի փոխեց, որովհետև նրան ձայնակցե-
ցին միւսները և ամբողջ դաշտի վրա տարածեց սգալից և ծան-
րավիշաւ տանջանք: Այս անխօսք երգը, դուրս թռչելով նրանց կոկոր-
դից, այնպիսի մի աննկարագրելի վիշաւ էր արտայայտւում, որ խօս-
քերից տասնապատիկ ուժեղ էր ազդում, աւելի էր համակում մար-
դու սիրտը թախիծով և ցաւով, ստիպում էր մարդուն, կամայ-
ականաց, վշտակցել նրանց անբախտութեան: Տանջում էր, տոչորում
այս ձայնը. բայց մարդ չէր կարողանում հեռացնել իւր լսելիքը
այն ձայնից:

Այս էր հոգևարք որդու վերջին հրաժեշտը, որը յաւիտենապէս

անջատուժ էր իւր սիրելի ծնողից, որ զրկւում էր որդեսիրական զգւանքից ու գորովից ի շնորհս անխիղճ, անգութ և անօրէն ուժի: Այս մի անբախտ Վօր սուգ էր իւր միակ որդու վրա, այս հեկեկանք էր սիրելիից բաժանւելու պատճառով, որը զգում էր թէ առանց նրան չի կարող ուրախանալ, չի կարող այլ ևս ապրել...

Այս վիշտը, ախ ու վախը և սուգը աւելի դառնագին էր երևում նամանականդ այն պատճառով, որ սա չէր ներկայացնում մի մարդու ցաւը իւր տարաբախտութեան առիթով, սա չէր մի անձի վիշա կորուստից յառաջացած — սա պատկերացնում էր ընդհանուր թախիժ, ընդհանուր տանջանք, այստեղ զարկում էր ընդհանուրի շնչերակը և մի ախ քաշելը արձագանք էր տալիս ամբողջ ժողովրդի զգացմունքին և նեղ դրութեան:

Հայրենիքի սիրահար, սրա համար զլուխը վեր դրած չեչէնները հրաժեշտ էին տալիս իրանց ծննդավայրին, որի ազատութեան և բարգաւաճման առիթով հայրը որդուն չի խնայել, կ'ինը՝ իւր ամուսնուն, — և այնչափ մաքառումից և շոհաբերութիւնից յետոյ պէտք է զրկւէին նրանից:

— Աստուծ, ձրտեղ ես... աղերսում էին նրանց զէպի երկինք յառած աչքերը, բացց իսկոյն և եթ վար էին նայում գետնին առանց պատասխան ստանալու:

Այստեղ իւրաքանչիւր մացառ, ամեն մի խորշ, ամեն մի անկիւն, որի վրա թափել էին իրանց արիւնը, և որը իրանց սրտին ամենամօտն էր, յիշեցնում էր նրանց անվեհեր կործութիւնը: Այն տեղերի մօտով ամեն անգամ անցնելը իւրաքանչիւր քայլափոխին յիշեցնում էր ակուր պատկերներ, որոնք շանթահարում էին նրանց սրտերը և առանց մի խօսք արտաբերելու դառնացնում: Պատահում են երբեմն բոպէներ, երբ վշտագնած մարդու համար խօսքերը անտեղի են: Ով չի լսել իսկապէս վշտագնած սրտի թախիժը՝ նա չի երևակայել թէ սգացող սիրտը ինչպիսի տոչորոզ ձայն կարող է հանել, թէև հազար պերճ խօսքերից, նա աւելի խիստ է զգացնել տալիս:

Նրանց թախիժալի աչքերը յառած նայում էին իրանց գեղատեղերին, Գալաշի կատարներին, որտեղ երբեմն այնպէս անվեհեր մարտնչում էին այս հաւատացեալները և որտեղ շատ և շատ ուրախ ժամեր էին անցկացրել:

Բայց ի՞նչն էր սրանց զաղթելու պատճառը, ի՞նչ մի այնպիսի մեղք էին գործել, որ այս տեսակ տանջանքի էին ենթարկւել, այսպէս տմարդի կերպով պատժւել: Պատճառն այն էր, որ այն ժամանակ-ւայ Զեչէնստանի կառավարիչները ցանկացան շուտով հարստանալ, ցանկացան իրանց անյազ աչքերը կշտացնել և չեչէնների հարուստ հողերը տիրապետել. այս բանի համար նրանք անհրաժեշտ սեպեցին նախկին հողատէրերին հեռացնել և հեռացրին էլ:

II

Այս սգաւոր գաղթականներից հեռացել էր մի ջահիլ, հրաշալի զեզեցիկ աղջիկ, որը գնացել էր ջրի եզրը և այնտեղ նստել մէն մենակ: Նա իւր շնորհալի, բայց տոգունած, դէմքը յենել էր ձեռների վրա և թախծալից սևորակ աչքերը նայում էին անշարժ մի կէտի վրա: Նա ընկղմւել էր խորը մտածման մէջ, որ անտանելի էր նամանաւանդ այն պատճառով, որ արտասուքը ցամաքել էր և սրտի դառն կսկիծից աչքերը կարմրատակել էին: Վարժես նա ականատես չէր եղել բաւականաչափ ընդհանուր սգին և վշտին, որը ընկերների հետ աւելի հեշտ տանելի է և դիտմամբ մեկուսացել էր, որպէս զի առաւել լաւ կարողանար երեւակացել իւր կացութիւնը և խորապէս զգալ իւր վիշտը, իւր անբախտութիւնը: Սա Շամիլի հռչակաւոր կուսակալի աղջիկ էլիսօն էր, որի հայրը, Անգոր Զէրբիժ, այժմ ծերացած, ուժասպառ, երբեմն անվեհերութեան օրինակ է եղել: Անգորը, այժմ ծեր և կարողութիւնից զրկւած, որ իւր ամբողջ երիտասարդութիւնը անցուցել էր հայրենիքի պաշտպանութեան համար մարտնչելում, զոհ էր բերել իւր երեք որդոց՝ հայրենիքի անկախութեան պատճառով, այժմ իւր միակ աղջկայ հետ միասին վերջին մնաս բարեն էր ասում իւր աշխարհին:

Անգորը ճակատը կնճռած, տխրամած դէմքով և սրտատրոփ կանգնած էր իրանց սալլի մօտ, ձեռքը դրած խանչալի բռան վրա, և ականջ էր դնում անբացող երգին:

Փանի մի անդամ նրա ճակատին վրա տւեց սառը քրտինքը, քանի անգամ նա սրբեց զոգդոջ ձեռքով աչք քրտինքը. բայց չը կարողացաւ հեռացնել իրանից սրտի թախիժը և անցած կեանքի յուզւած յուշերը դարձեալ այնպէս տոչորում էին նրան:

Նրա աչքի առաջ նորից նկատուում էին պատկերի նման ջահիլ լիտրճութիւնը, ուսւ զօրքերի վրա այս ու այն կողմից արած կայծակնարագ յարձակմունքները, յիշեց նրանցից խաճ ջոգերի քշելը, յիշեց մանաւանդ ուռններից տարած աւարը, չեչէն աղջկանց այս ուրախութիւնը, յիշեց նաև այն օրերը, երբ ամբողջ Ձեչէնատանում ամեն օր նոր-նոր երգեր էին երգում, զովասանքը՝ զովասանքին էր հետևում, — և ծանր մտածմունքներից բեռնաւորւած զլուխը կախեց:

Վերջը պատկերացաւ նրա աչքի առաջ իւր կինը իբրև ջահիլ աղջիկ, որ նայում էր նրա աչք ու յօնքին իւր սիրելիի ցանկութեան համեմատ վարւելու համար. պատկերացան իւր որդիքը, որոնց ձեռքով և թաղւել էր սպասում, բայց, հայրենիքի պաշտպանութեան համար, թշնամու անողորմ ձեռքից հերոսաբար կոտորւել էին: Ծերունին էլի շփեց ճակատը ուժգին և դառնապէս ակա քաշելով դէպք:

— Լայ լահա, իլ ալլահ:

Նա դէս ու դէն նայեց, կարծես վշտալի աչքերը զբաղւելու կամ սփոփւելու առարկայ էին փնտրում և ձայն տւեց մի փոքր տղային, որ այնտեղ մօտով անց էր կենում:

— Կորի, չիս տեսել Ելիսօին:

— Ի հարկէ, տեսել եմ, պատասխանեց տղան. — նա այնտեղ աղբիւրի մօտ նստած է, ես այնտեղ էի, երեսու լւացի... մենակ է, այնպէս տխրած է, այնպէս որ... Տղան իւր խօսքը չը վերջացրած փախաւ:

— Տխրած, տխրած, բացականչեց չեչէնը սրտնեղւած — տխրած կը լինի, հապա ինչ կը լինի...

Այս խօսքերի վրա նա աւելի խորասուզեց մտածմունքների մէջ, կախեց զլուխը և փոքր լուծիւնից յետոյ ասեց դառնացած.

— Նա սիրում է մէկին, սիրում է, այն ինչ ես ուզում եմ մոռացնել, ուզում եմ հեռացնել նրանից:

Անդորը յամրաքայլ դիմեց դէպի աղբիւրը:

Ելիսօն՝ աղբիւրի մօտ նստած, յանձնւած իւր սրտի կսկիծին, որը աւելի զժւարատար էր լմանաւանդ այն պատճառով, որ, բացի հայրենիքից, անջատուում էր և իւր սիրելի Վաթիայից, Ելիսօն

գժւածի պէս էր սիրում Մոխեցի Վաժիաչին, որի հետ մտերմացաւ երբ նա ոչխարներ էր պահում:

Կործութեամբ հռչակած Վաժիան, գեղեցիկ հասակով և լաւ կարողութեան տէր, իբրեւ փեսացու, ոչ ոքից մերժում չէր ստանայ. բայց որովհետեւ նա քրիստոնեայ էր և Ելիսօն մահմեդական, այս պատճառով աղջիկը շատ լաւ էր հասկանում, որ իւր ազգականները չէին համաձայնի նրանց ամուսնութեան: Ոչ թէ միայն չէին կամաւորւի Ելիսօյի պատկերուն Վաժիաչի հետ, այլ մի խօսք անգամ չէին ասել տալ նրան այս մասին:

Սա չէր կարող բանալ իւր սիրտը ոչ մէկի առաջ, չէր կարող հակադնել իւր անել, ցաւալի զրութիւնը. որովհետեւ համոզւած էր թէ ոչ ոք չի վշտակցիլ իրան: Եթէ նախկին ժամանակներում պատահէր այս տեսակ մի դէպք, և մահմեդականը սիրահարէր «լեռնեցի» քրիստոնեայի վրա, այն ժամանակաւ տեղական սովորութեան համեմատ, դաւանութիւնը խոչնդոտ չէր լինիլ նրանց միութեան. բայց այժմ, երբ վրացիները, այսինքն քրիստոնեաները «գեաւուրներին» կամ ռսներին առաջնորդում են և ճախրներ են ցոյց տալիս, երբ սրանք գեաւուրների հետ միասին կուռում էին բարեկամ դրացիների դէմ, հիմաջ բողբոջին ուրիշ էր: «Քրիստոնեաների» ձեռնառութեամբ «գեաւուրները» խլեցին նրանց երկիրը, «քրիստոնեաների» միջոցով «վախլուկ գեաւուրները» ընկճեցին սրանց և այս դէպքից յետոյ էլ ինչ միութիւն կարող էր տեղի ունենալ սրանց մէջ:

Այսպէս էր մտածում, այսպէս էր ասում իւրաքանչիւր չեչէնը. սրանից յետոյ սրանց և հարեան վրացիների մէջ պէտք է վերջանար ամեն մի յարաբերութիւն և այս նախկին բարեկամ երկու տոհմերը արիւնարբու թշնամիներ դառնային: Խելացի և բանիբուն կուսակալ Անգորը, ինչպէս լեռնեցիների մեծ մասը, փոքր ինչ այլ տեսակ էր հասկանում վրացիների և չեչէնների գծտութիւնը և ասում էր. «մեզանից հեռաբնակ վրացիները խաբւում են զանազան խոտոմունքներից. իսկ լեռնաբնակ վրացիներին ստիպում են մեզ գէմ կուռլու». բայց այսպէս թէ այնպէս «գեաւուրները» աջողութիւնը վրացիներին էր վերագրում և, կամայականաց, սրտով էր ցանկանում նրանցից հեռանալ:

Բայց, նայիր բախտին... Կարծես դիտմամբ, աւելի տանջելու համար՝ նրա միակ աղջիկը սիրահարւել էր Մոխեցի Վաթիացի վրա: Նա, ճշմարիտ է, հաստատապէս չը դիտէր այս, բայց շատ էր կասկածում:

Եւ երբ է պատահում այս դէպքը... Երբ նա անջատւում էր իւր հայրենիքից, երբ վերջին անգամ մնաս բարեւ ասեց իւր տանը և իւր զոգլով ձեռքով ինքը սրտակոտոր և երեսի զոյնը նետած հրդեհեց այն, ահա այն ժամանակ, այն տանջանքի և նեղութեան միջոցում, իւր աղջկաց, իւր միակ ապաւէնի սրտին տիրապետել էր վրացին, որը, կամայ-ակամայ, պէտք է հեռացնէր նրա ծնողից... Նա դիտէր, որ Ելիսօն, ինչպէս չեչէնի աղջիկ, շուտով չէր հանդարտւիլ, շուտով չէր ընկճիլ իւր սիրտը. որովհետեւ չեչէնցին դժւար է սիրահարւում, բայց երբ մի անգամ սիրեց, — նա չը դիտէ կիսաչափ սիրել, — նա այս մտքին հոգով և սրտով է նւիրում: Թէև սա այսպէս էր մտածում և համոզւած էր իւր կարծիքի վրա, սակայն դարձեալ ժամանակի էր սպասում, որ յուզւած սէրը, կարելի է, որ և է կերպով կանհտանայ իւր աղջկաց սրտից. բայց ակսրած դէպքով նա օրէցօր նկատում էր Ելիսօի հալ ու մաշ լինելը, որի վրա սաստկացող յուսահատութիւնը, որը թէև պատահում էր անխօս և անզանգատ, սակայն առաւել ուժգին և արագապէս կարճում էր նրա կեանքի թելը:

Անգորը մինչև օրս համբերում էր և ոչ մի անգամ չէր յայտնել իւր աղջկան, որ ինքը նկատում էր նրա վիշտը, բայց այսօր, երբ վերջին անգամն էր տեսնում հայրենիքի սարերի կատարները, երբ գերիններին, ինչպէս աւազակներ, յանձնեցին անսիրտ և անտաշ զինւորներին, այսօր սիրտը վշտակից էր ուզում, չը դիմացաւ այլ ևս միայնութեան և այս պատճառով քայլերը ուղղեց դէպի իւր աղջիկը:

Ելիսօն այնպէս էր զբաղւած իւր «սրտի հատորով», որ իւր հօր մօտենալը չը նկատեց:

— Ելիսօ, հասնելուն պէս ձեռքը դնելով նրա ուսին ասաց հայրը:

Աղջիկը վախեցաւ և ուզեց ոտի կանգնել:

— Նստիր, նստիր, չը թոյլ տւեց նրան Անգորը և ինքն էլ մօտը նստեց:

Նրանք երկար ժամանակ լուռ մնացին. Ելիսօն նայում էր դէպի լայնատարած դաշտը, որի ծայրին գտնուող անտառապատ սարերի

զազաթները անհետանում էին հեռու հորիզոնում. այն ինչ հայրը ակնապիշ դիտում էր իւր աղջկան, կարծես ուզում էր կարգալ նրա բոլոր ներքին յուզմունքները:

Վերջը հանեց չթի մանր ծւիններից կարած քսակը, փշրեց ձեռի ափում ծխախոտ, լցրեց նրանով իւր ծխամորձը և սկսեց կայծաքարին վարկել. արդեօք զաւր խոնաւ էր, թէ կայծաքարի վրա չէր դրւած ինչպէս պէտք էր, չէր վառւում, այս պատճառով Անգորը քանի մի անգամ վերցրեց, զզգեց ծայրերը և նորից սկսեց կայծահարել: Վերջապէս վառւեց զաւր քարից ընկած կայծերից և Անգորը կպցրեց ծխամորձը, որը այնպէս երկար միջոց, անընդհատ և ուժով ծխում էր, կարծես մխով էր ուզում փարատել սրտի կսկիծը, սպանել նրա զգացմունքները և վանել նրան պարփակող դառն վիշտը:

Բաւական երկար լռութիւնից յետոյ ասաց նա տխրազին.

— Մեռնի հայրդ. ի՞նչի ես այդպէս դարդ անում:

— Եւ չեմ դարդ անում, պատասխանեց աղջիկը և յառեց վըշտալից աչքըրը դէպի նա:

— Տեսնում եմ, տեսնում. պատասխանեց հայրը գլուխը շարժելով և անասելի կերպով վշտագնած. — Նւազում ես, տանջում ես, այն ինչ ես դժբախտս ոչ մի բանով քեզ այլ ևս չեմ կարողանում օգնել:

— Ինձ համար հոգս մի քաշիր, հայրիկ, պատասխանեց աղջիկը և սկսեց քնքշաբար փաղաքշել նրան:

— Հօ նեղանում ես, հօ տանջում ես:

— Ի՞նչի սուտ ասեմ, ճշմարիտ է ասածդ:

— Ուրեմն, ի՞նչի չես ասում, ի՞նչի ես ինձանից թաքցնում:

— Հապա դուն քիչ ես նեղանում... Երանի կարողանայի և քո փոխանակ տանջւել, ասաց էլիսօն և փարւեց Անգորի վզովը:

— Ե՛ս, ասաց Անգորը դառնապէս ժպտելով: — Ես օրերս անց եմ կացրել, մի ոտս գերեզմանումն է, շատ դէպքեր են պատահել զլիսիս. իսկ դուն նոր ես կեանք մտնում... Ո՞վ գիտէ, ինչպիսի բախտ է քեզ սպասում... Է՛ջ հէջ... Ասումս մեծ է, վերջացրեց իւր խօսքերը ախ քաշելով ծերունիին:

— Դուն ողջ և հանգիստ լինես, և ես ուրիշ ոչինչ չեմ ցանկանում:

Մերունին նայեց նրա աչքերին, բայց ոչինչ չը պատասխանեց. իսկ փոքր ինչ լռութիւնից յետոյ սկսեց.

— Ինչի՞ չես գնում քո հասակակից ընկերուհիների մօտ, ի՞նչի ես մեկուսանում:

— Ի՞նչ ունեմ այնտեղ, ի՞նչ շինեմ:

— Ի՞նչ շինեմ... Մի՞թէ նրանք էլ չեն տանջւում... Մի՞թէ նրանց սրտերումն էլ չէ վառւում այն դժոխային կրակը... Վառւում է. բայց հարեանների հետ ցաւն էլ զւարճութիւն է... Այ տես, նրանք ճիւղաւոր են նւագում, զւարճանում են... Լալիս էլ են երբեմն— դուն էլ լացիր. արտասուքը սրտիդ թեթեւութիւն կը տայ:

— Նրանի նրանց. նրանք գոնէ կարողանում են լալ, տրամելով ասաց էլիսօն:

Անգորը վշտակցելով նայեց իւր աղջկան և յօնքերը կիտելով բացականչեց.

— Ի հարկէ, աղջիկները պէտք է լան—կտրիճները՝ վրէժն առնեն: Այս խօսքերի վրա ձեռքը տարաւ դէպի խանչալը: Անգորի խորն ընկած, կենսագուրկ աչքերը, կարծես յանկարծ բորբոքեցին և երկար ժամանակ այն անտիճան ցոլում էին, որ մարդս ականայ գլուխը կը կախէր: Վերջը փոքր առ փոքր հանդարտեց, նայեց իւր աղջկան և շրթունքները դողդողացին:

— Էլիսօ. բացականչեց նա վերջապէս, և ձայնի մէջ դող նկատուեց.

— Ի՞նչն է քեզ նեղացնում այդպէս. ի՞նչի ես հալ ու մաշ լինում:

— Զը գիտեմ:

— Դու մի այլ ցաւ էլ ունիս և ինձանից թաքցնում ես:

— Քեզանից ոչինչ չեմ ծածկում, հայրիկ:

— Այդպիսի կացութիւնդ սիրտս տոչորում է, կեանքս անժամանակ է կարճում:

— Ես հօ չեմ զանգատում, ուրիշ ի՞նչ ես կամենում:

— Տէր Աստուծո՛ւ, բացականչեց ծերունին, ի՞նչ պէտք է ուղեմ.— քո հանգստութիւնը:

— Ես բոլորովին հանգիստ եմ:

— Զես այդպէս, չէ. և հէնց այդ է իմ անբաղտութիւնը:

— Ուրեմն ի՞նչ կերպ վարւեմ, ի՞նչ անեմ:

—Ասան ինձ ամենը, բայց արա սիրտդ ծնողիդ առաջ, գիտես հօ, որ նրա միակ մխիթարութիւնը դուն ես... Անժամանակ սիրտս մաշւեց, այրւեց... Կարելի է, դժն էլ չես մեղքանում ինձ:

—Հայր, հայր իմ... Այդ ի՞նչ ես ասում... ասա ինձ, ի՞նչով հաստատեմ դէպի քեզ տածած սէրս. ասա, եթէ կեանքս կարող է քեզ օգտակար լինել, կը տեսնես թէ որ աստիճանի սիրելի է աղջըկադ... միայն թէ ասես ու...

Այս խօսքերի վրա աղջիկը փարւեց և համբոյրներով ծածկեց նրա թշերը:

Պակասում էին միայն Անգորի խօսքերը, որ յորձանք տային Ելիսօի գբացած արտասուքներին, որոնք թափւում էին նրա աչերից եռուն աղբիւրների նման:

—Գիտեմ, գիտեմ, որ սիրում ես և այդ աւելի է ինձ սպանում: Սիրում ես ինձ և չես ասում թէ ի՞նչն է քեզ տանջում: սիրում ես ինձ և չեմ կարողանում մի բանով քեզ օգնել: Կարելի է իմ պատճառով ես անձնատուր եղել այդ տանջանքին:

—Գո պատճառով տանջւելս էլ ուրախութիւն է ինձ համար:

—Ուրեմն ի՞նչ է քեզ սպանում, ի՞նչի ես մաշւում:

—Չը գիտեմ, չէ. և աւելի ուժով փարւեց հօրը:

—Կարելի է, մէկին սիրում ես դուն, զգուշաբար ասաց մի փոքր լռութիւնից չհտոյ:

—Ես այդ չեմ ասել, շուտով պատասխանեց աղջիկը: Բայց այս խօսքերը ասելուն պէս Ելիսօի դողդոջ ձեռները առաւել դողդողացին և սիրտը սկսեց այնպէս ուժգին բաբախել, որ Անգորը աշկարա լսում էր նրա զարկերը: Նա աւելի կպաւ հօրը, որը իւր միակ ապաւէնն էր, թէև չէր համարձակւում իւր զգացմունքը յայտնել նրան. բայց սրտով ուզում էր, որ Անգորը ինքը հասկանար:

—Դուն այդ չես ասել, բայց այդպէս է, ասաց Անգորը գլուխը շարժելով:—Ի՞նչ անենք: Այդպէս է ծէսը. ժամանակը հասաւ, ձաղը պէտք է դուրս թռչի: Բայց արա սիրտ դհօրդ. առաջ, իմաց տուր թէ քի է քեզ նրա ձեռից իլում և երդւում եմ ապագայ գերեզմանովս, որ սիրտս արգելք չի լինիլ սէրիդ. ո՞վ է նա, որին ես սիրում:

—Հայր, հայր իմ... Ի՞նչիդ է հարկաւոր, որ ամենը ասեմ, ի՞նչիդ է պէտք մանեւ սրտիս խորքերը: Երդւում եմ քեզ, որ որին

և ինչպէս էլ սիրելու լինիմ, սրտիս մէջ կը սպանեմ զղացմունքս, սրտումս կը թաղեմ և քեզանից ձեռք չեմ վերցնի:

Հայրը ուրախութիւնից փարեց իւր աղջկան: Ձգաց, որ իւր ծնունդը սիրում է նրան, մեռնելու ընդհանր կը փակէր նրա արտաւանդները. էլ ուրիշ ի՞նչ էր ուզում: Բայց առաջին ցնծութիւնն վայելելուց յետոյ՝ հեռացրեց իրանից աղջկան ասելով.

— Սպասիր, մի՛ վազիր, ի զուր տեղը մի՛ երդիր... Ինչպէս արօտին անհրաժեշտ է առաւօտեան ցօղը, այնպէս էլ աղջկան մարդու գնալը: Ամեն բան իւր ժամանակն ունի: Աստի, ո՞րին ես սիրում:

— Ի՞նչ կ'անես, ով կուզէ լինի:

— Վաժիան է. սպասում էր հայրը սրտատրոփ, որը դարձեալ մի փոքր յոյս ունէր թէ Ելիսօն որ և չեչէնի անուն կը տայ:

Աղջիկը պատասխանելու փոխանակ ընդգրկեց իւր հօրը, որի բերանում խօսքը կարեց այս առիթով:

— Այ թէ ի՞նչի չէիր ասում ինձ, հազիւ արտասանեց նա:

— Ի՞նչ ես ուզում, հայրիկ. ի՞նչիդ է պէտք, ով կուզէ թող լինի: Ես երգեցի և չեմ հեռանայ քեզանից:

— Ուրեմն կամենում ես ամբողջ կեանքդ Ելիսօն օխով անցկացնել:

— Կ'աշխատեմ մոռանալ:

— Մոռանալ չես կարող, չէ, յուզած և դէմքը ձեռներով ծածկելով ասաց հայրը:

— Վաժիան քրիստոնեայ է, իսկ ես չեչէնուհի—պէտք է մոռանամ:

— Պէտք է,—եթէ կարող ես:

— Քեզ ասացի, որ կարող եմ:

— Ելիսօ, ականջ դիր խօսքիս: Ես ձերի ջոգ ունէի, որը անվախ կերպով արածում էր Ձեչէնստանի դաշտերի վրա,—եկան գեաւուրները և խլեցին ինձանից: Սեպհական հօտեր ունէի, և դռանս առաջով երբէք չէ անցել մի ճամբորդ, որին չը հիւրասիրէի մորթելով նրա համար մի ոչխար,—գեաւուրները վրա տւին և խլեցին: Ունէի սեպհական օջախ, որտեղ ապաւէն էր դռնում ամեն մի նեղացած, իւրաքանչիւր թշուառ,—եկան գեաւուրները և այրեցին այն: Այս ամենը պատահեց ի շնորհս վրացիների, սրանք էին առաջնորդում գեաւուրներին, սրանք էին ճամփաներ ցոյց տալիս, սրանք

էին մեզ դէմ պատերազմում: Այս ամենից ինձ մնացին երեք զաւակներս, դուռն և զէնքերս: Ես փախալի դէպի լեռները, այնտեղից ուղղում էի հատուցանել այս անօրէններին, բայց էրբ Աստուծոյ ցանկութեամբ է երեսը մէկից, արդէն ի զուր են նրա ջանքերը. այնտեղ էլ հասան «գեաւուրները» քրիստոնեաների սառնորդութեամբ, և երեք զաւակներս էլ մէկ միկի յետեւից կարգով կոտորեցին... Ո՛վ Տէր Աստուծոյ, ի՞նչ էր այն օրը... էլ ի՞նչպէս կարողացայ ապրել այն տեսարանից յետոյ... Միակ սփոփանքս էր, որ կործինները կործօրէն կոտորեցին. երեքին էլ կրծքերն էին ծակոտած. իմ զաւակները թիկունք չեն ցոյց տուել իրանց թշնամիներին:

Այս խօսքերի վրա ծերունին ստիպւեց լռել: Ուժգին ակնքաշեց Անգորը, շփեց ճակատը ձեռքով և երկար միջոց լռութիւնից յետոյ հազիւ կարողացաւ խօսքը շարունակել:

— Եօթն անգամ գեաւուրները կատաղաբար յարձակեցին մեզ վրա, եօթն անգամ էլ յետ քշեցինք նրանց և այստեղ էլ եթէ քրիստոնեաները (վրացիներ) չը լինէին, գեաւուրները չէին կարող տիրել մեր գեղին... Ես միայն ազատ մնացի մեր տանից և այս էլ այն պատճառով, որ դժոխային ամեն տեսակ կրակներ են վառւել սրտումս: Մերացայ, անկարացայ և երբ ինձ հարկաւոր է հանգստութիւն՝ այլ ևս օրօն անող չեմ գտնում. հեռանում եմ իմ պապեանական գերեզմանից, զրկւում եմ որպէս ոսկրներից, որոնց հետ հանգստանալու չեն այլ ևս ոսկրոտիներս: Դժար է, ծանր է կեանքս: Անտիրական ննջեցեալը արժանանալու չէ մինչև անդամ բարեկամական արտասուքին:

Այժմ դուն ես միակ ապաւէնըս, քեզանից եմ սպասում աչքերիս փակելը. միայն... Թէ որ Վաթիային ուղիղ սրտով ես սիրում, Թէ որ չես կարող նրանից ձեռք քաշել, ասա ինձ և... այդ վերջին միտքարանքիցս էլ կը զրկւեմ...

— Ոչ, հայրիկ, ես քեզանից չեմ հեռանայ, թէկուզ հազար անգամ աւելի սիրէի, չեմ բաժանւի քեզանից: Վանցի ժամանակ... Կը մոռանամ նրան... Միթէ կը մոռանամ, հայր...

Հայրը սեղմեց իւր կրծքին աղջկան և դողդոջ շրթունքներով համբոյրներ դրոշմեց նրա երեսին: Յետոյ յառեց աչքերը դէպի երկինք և մեղմ բայց սիրաւ յուզւած բացականչեց:

— Փնուք քեզ, Աստուած, որ այս վերջին սփոփանքս էլ չես առնում ձեռիցս:

Անգորը հազիւ վերջացրեց այս խօսքերը, երբ արբունքին հասած մի տղայ, ուսին գցած շնորհալի կերպով հրաքանը և թուշի գդակը ծուռը դրած գլխին մօտեցաւ նրան:

— Մարշիօղու՛ւ ¹), ասաց նա հասնելուն պէս:

Ելիսօն այս ձայնը լսելուն պէս ոտի ելաւ, շիկնեց բոլորովին և զլուխը կախելով չը կարողացաւ ձայն հանել:

— Աստծու բարին, ասաց Անգորը ոտի ելնելով: Հիւրը Աստծունն է, գնանք մեր բինէն և ինչ Աստուած տւել է մեզ, նրանով յիշենք նրա անունը:

— Ձեչէնները շատ հիւրասէր են, նրանց առատաստութիւնը հռչակւած է ամեն տեղ. սակայն ես քաղցած չեմ:

— Ճանփորդը պատրաստ պէտք է լինի միշտ հաց ուտելու, ո՞վ գիտէ, կ'ունենայ արդեօք նա ժամանակ ուրիշ անգամ հաց ուտելու:

Ի հարկէ, ճշմարիտ էք ասում. բայց ես շտապում եմ: Ես այս կողմը եկայ հարցնելու, թէ արդեօք սրանք հռչակաւոր Անգոր Զէրբիժի գիւղացիք չեն. նրա մասին ուզում էի հարցնել:

— Անգոր Զէրբիժ... Անգոր Զէրբիժը ես եմ. բայց դու ո՞վ ես, լիմ ճանաչում, մութն է:

— Անգոր, բացականչեց անծանօթը և առաջ եկաւ:

— Վաժիա, ասաց ծերունին զարմացած:

— Տէր Աստուած. Ելիսօն էլ այստեղ է: Ի՞նչէ պատահել, արտասանեց Վաժիան փոքր ինչ լռութիւնից յետոյ. դէպի հըր էք ճանփորդում, երեւի ուխտի էք գնում. և աչքերը յառեց Ելիսօի վրա:

Որովհետեւ ոչ մէկից պատասխան չը ստացաւ, Վաժիան ստիպւեց խօսել:

— Աղջիկ, մեր երկրի աղջիկները խնդումով և պարելով են ուխտի գնում. այն ինչ դուն տրտմել ես:

— Մեր կողմի աղջիկներս էլ գիտենք ցնծութեան ժամանակ ցնծալ և սուգի ժամանակ—սըգալ, պատասխանեց Ելիսօն սրտատոչոր:

Վաժիան ապշեց այս խօսքերը լսելով. նա գնում էր Անգորի

¹) Ձեչէններէն «բարի աջողումն» է:

գեղում՝ ձմեռելու բինա գտնելու և լսած չէր սրանց գաղթելու լուրը. սա պատրաստում էր այս ձմեռն և եթ իշխոսի վրա պսակ-
 ւելու: Վաժիան մեղմ հայեացք գցեց իւր շուրջը և հասկացաւ, որ
 սրանց պատրաստութիւնը ուխտագնացութեան չէր նմանում:

—Անգոր, ի՞նչ է պատահել, հարցրեց նա վախեցած ձայնով:

—Ստամբոլ ենք գնում, պատասխանեց ծերունին խուլ բայց
 պարզ կերպով:

Այս խօսքերը այն աստիճան անսպասելի և աներևակայելի էին
 Վաժիայի համար, որ բերանը բաց փնաց երկար ժամանակ մինչև
 կը կարողանար մի խօսք ասել:

—Ո՛ւր էք գնում, ի՞նչ ասիր, լրդլրդած. վերջապէս ասաց նա:

—Ստամբոլ, կարճ կտրեց ծերունին:

—Ստամբոլ, կրկնեց Վաժիան հեղելով և տախալին ուշքի չէր
 դալիս: —Ստամբոլ... Այդ ո՞ր կողմն է, հանձք ես անում, Անգոր: Ո՛հ,
 Ելիսօ, գոնէ դուն ասա ճշմարիտը:

—Անգորը ճշմարիտ է ասում. Ստամբոլ ենք գնում:

—Ի՞նչ ես ասում Ելիսօ... լաւ մի՞ոք արա... հապա ինձ ի՞նչ
 էք պատասխանում:

—Քեզ... հարցրեց ծերունին և չը կարողացաւ խօսքը վերջացնել:

—Այո՛, ինձ, ինձ... Բայց էլ ի՞նչի եմ թագցնում: Ելիսօին սի-
 րում եմ. Ելիսօի համար է մաշում Վաժիայի սիրտը, իսկ դուն
 ասում ես թէ Ստամբոլ ենք գնում:

—Սիրում ես իմ աղջկան, սսխայն...

—Սիրում եմ, Ասուած է վկայ և այնպէս եմ սիրում ինչպէս
 ձուկը ջուր, ինչպէս թռչունը օդ... Ո՛հ, Անգոր, ես առանց դրան
 չեմ դիմանայ... Ի՞նչի ես բախտս խորտակում, ի՞նչի ես կեանքս
 յափշտակում:

Ծերունին դողում էր ամբողջովին և չէր կարողանում պատաս-
 խանել:

Սա տեսնում էր որ իւր աչքի առաջ կանգնած էին քսան տարե-
 կան մի ջահիլ և տասնութեց ամեայ Ելիսօն, որոնք բախտաւորու-
 թիւն էին հայցում և իրաւունք էլ ունէին բախտաւորւելու: Ի՞նչ
 պատճառ, ի՞նչ իրաւունք ունէր ծերունին նրանց ճանփան կտրելու:

—Ելիսօ, լսում ես, պատասխանիր, ինքդ պատասխանիր:

— Ասա, ինձ, Ելիսո, ասա, թէ ոչ լեղիս խառնուում է, սիրտս ուռչում:

Թէև հայրն և Վաթիան ստիպում էին Ելիսոին խօսելու, բայց նա այնպէս արձանի նման քարացած մնացել էր, որ կարծես թէ այն խօսքերը իրան չէին վերաբերում: Երկու հարցնողներն էլ սպասում էին սրտատրոփ Ելիսոի պատասխանին, թէև երկուսն էլ բոլորովին զատ զատ պատասխան էին ուզում ստանալ:

Ելիսոն մնացել էր մնջւած և նրա անխօսութիւնից նկատելի էր, որ սրտումը երկու հակառակ զգացմունքներ մարտնչում էին անասելի կերպով միմեանց դէմ: Մի կողմը կանգնել էր հայրը—և որդիական պարտաւորութիւնը նրա վերաբերմամբ, միւս կողմը—սիրելին և նրանից զրկելը: Մի բոպէ առաջ Ելիսոի համար վրձուած էր համարում, որ պարտաւորութիւնը պէտք է յաղթանակէր զգացմունքի վրա. բայց հէնց որ աչքը գցեց Վաթիային, ինչ որ մի անշարտ ոյժ անցաւ նրա ամբողջ մարմնով. երբ լսեց Վաթիայի ձայնը, նա այն բոպէին եղաւ այն ինչ որ պէտք է լինէր—կին եղաւ: Եւ թէ տակաւին սիրոյ զգացմունքը չէր տիրել բոլորովին նրա սրտին, սակայն պարտաւորութիւնն էլ չէր յաղթանակել դեռ ևս:

— Ելիսո, կրկնիր այն, ինչ որ անցեալ անգամ ասում էիր ինձ... Թէ չես համարձակուում այլ ևս սրան տեսնելուդ պատճառով:

— Հայր, հազիւ արտասանեց Ելիսոն և դարձեալ լռեց:

— Ել ինչ եմ հարցնում, ասաց հայրը վիրաւոր սրտով: Ռ՞րտեղ կարող է օրը թաքչել: Խաբեցիր էլի, աւելացրեց Անդորը վշտանալով, և ծնկները ծալեցին: Նա բաւական ժամանակ մնաց այն կացութեան մէջ և միւսներն էլ լուռ կանգնած էին:

Մտաւորական անբախտութիւնը ընկճել, գերել էր երիտասարդական անզուսպ յափշտակութեան: Հալւում էր ծերունու սիրտը, հալւում էին Վաթիայի և Ելիսոի սրտերն էլ նրան նայելով: Վերջապէս բարձրացրեց ծերունին զլուխը դէպի վեր և յուսահատ կերպով դիտեց իւր շուրջը եղողներին. նրա դողլոջ ձեռները, կարծես թէ, մի բռնելու տեղ, մի չլինարան էին որոնում: Յետոյ ծածկեց դէմքը ձեռներով և աննկարագրելի կերպով վշտագնած բացականչեց.

— Ուրեմն ինձ համար ամենը, ամեն բան վերջացաւ:

Բոլորովին մենակ, մենակ պէտք է մնամ... Ոչ խղճացող, ոչ

վրաս լացող և ոչ էլ հայրենի հողն ու ջուրը: Ամենը խլեցին ինձանից, բոլորը...

—Քեզ, քեզ եմ խնդրում, Վաժիա, քեզ եմ աղաչում, պաղատում... Հասկանում ես, Անդոր Զերբիժն է խնդրում քեզ: Անդոր Զերբիժը, որ իւր կեանքում ոչ մի մարդու խնդրած չէ երբէք... Դուն տղամարդ ես, կը հասկանաս խնդիրքիս իմաստը... Կը հասկանաս ծերունու սիրտը... Մի խլիր ծերութեանս ժամին այդ միակ ապաւէնս... Դու բախտաւոր ես, ունես եղբայրներ, ազգականներ, դուն դեռ ջահել ես և շատ բախտաւորութիւն է սպասում քեզ — դարձեալ կը գտնես շատ և շատ ցոլակն աղջիկներ, որոնք քեզ կ'ուրասացնեն: Իսկ ես... Հապա մէկ նայիր ինձ: Ես ծերացայ, մի ոտս գերեզմանումն ունեմ դրած, ամեն բանից զուրկ եմ մնացել և եթէ այս աղջկանս էլ դուն խլես, էլ ինչով մխիթարւեմ:

Այս խօսքերը արտասանելուն պէս յուզմունքից շնչասպառւեց ծերունին, հազիւ էր շնչում և որովհետեւ այլ ևս չէր կարողանում խօսել, ձեռների շարժումներով և նշանացի էր հասկացնում իւր տանջանքը: Ակնյայտնի պատկերացել էր նրա դէմքի վրա այն բոբքաւած կրակը, որ վառւում էր Անդորի սրտում: Վաժիան թէև բարեսիրտ էր, որի ապացոյցներ շատ էին տեսել, բայց անկարելի էր նրա համար էլիսօից անջատուել. որովհետեւ առանց այն աղջկան՝ կեանքը աներևակայելի էր նրա համար:

Էլիսօն մեղքացաւ իւր հօրը, որի շրութիւնը առաւել կակղացրեց նրա սիրտը, չը սպասեց Վաժիայի պատասխանին այլ ևս. և ակնյայտնի յուզմունքով և դողացող ձայնով, որը ամեն մի վարկեանում ընդհատւում էր, արտասանեց.

—Վաժիա. թող վկայ լինի վերն Աստած և վարը երկիրը, որ Էլիսօն բացի քեզանից ոչ ոքին չէ սիրել, չէ սիրում և սիրելու էլ չէ:

Երբէք, բացի քեզանից, ուրիշ ոչ մի անձն կրելու չէ նրա ամուսնու անունը: Այս խօսքերը լսելով՝ հայրը ախ քաշեց դառնապէս, այն ինչ Վաժիան ուրախացած աւելի առաջ եկաւ:

—Բայց... բայց Էլիսօն չի անջատուի իւր հօրից:

Այս դէպքից յետոյ տեսարանը այլ կերպարանք ընդունեց. ծերը իւր դողդոջ ձեռներով աշխատում էր գրկել աղջկան և մօտեցնել

նրա դէմքը իւր այրուող և ցամաքած շրթունքներին—երբ, այն միջոցին Վաթիան կայծակահար և ապշած մնացել էր ու չէր հասկանում թէ ինչ է պատահում իւր շուրջը:

Կարծես նրա աչքերը վառւում էին և մի տեսակ կարմիր փառ էր քաշւել նրանց վրա, որը ըոպէ առ ըոպէ շիկնած կրակի նման էր առկայծում: Կարծես՝ զլուխը սեղմել էին երկաթեայ շրջանակներով, որոնք՝ արգելում էին նրա արիւնի շրջանառութիւնը և մտածելու ընդունակութիւնը: Ես կարծում եմ թէ Վաթիան այնպիսի դրութեան մէջ էր գտնւում իսկապէս, որը պատահում է մարդուն խեղադարձելուց առաջ:

Վերջապէս նա շունչ քաշեց ուժգնապէս, որով կարծես թէ ուզում էր ազատւել իւր վրա ծանրացող բեռից. թոթափեց քանի մի անգամ գլուխը, տարաւ ձեռքը օձիքին և «Վայ ինձ» աւելով սրտառեց այն մինչև զոտին:

Անգորը ոտի էլաւ և իւր աղջկայ ուսի վրայ յինւելով՝ ուղղեց դողդոջ քայլերը դէպի բինէն: Յետոյ կանգ առաւ, դարձաւ Վաթիային և ասաց.

—Մնաս բարև, Վաթիա... Աստուած բարի տայ քեզ, բախտի հանդիպեցնէ. և այս խօսքերով յետ գնաց, որովհետև այլ ևս խօսք չը գտաւ ասելու:

—Սպասիր, Անգոր, ասաց մոխեցին ձեռները առաջ կառկաւած և քանի մի քայլ առաջ գնաց:

Անգորը կանգ առաւ:

—Դուն ասում ես, որ Ելիսօին սիրում ես. դրան լաւութիւն ես կամենում, մյուս Հապա ես չեմ սիրում, բարի չեմ կամենում ես... Աստուած է վկայ, որ ես չաւելի եմ սիրում, ես քեզանից առաւել խիստ կը թանջւեմ առանց դրան... Եթէ դրան չեմ ունենայ, էլ ինչը կապրեցնէ ինձ:

—Ելիսօ, հետդ տար նրան եթէ ուզում ես, ասաց հայրը:

—Հայր, իմ, ասացի որ քեզանից չեմ հեռանայ, էլ ի՞նչի ես չարչարում ինձ:

—Վաթիա, լսեցիր հօ, որ աղջիկս ինձ մօտ է մնում:

—Հապա չը լսեցիր, որ ինձ սիրում է, աւելացրեց Վաթիան:— Ինձ է սիրում, բայց քեզ մօտ է մնում: Զը հասկացար, որ բացի

ինձանից ուրիշ ամուսին չէ ուզում: Ի՞նչի ես դառնացնում դրա կեանքը: Նրա համար, որ դո՛ւն միայն զւարճանաս: Աւաղ... դո՛ւն ինձանից պակաս ես սիրելիս եղել: Ես այսպէս չեմ հեռանալ, զւարճութեանս պատճառով դրան չէի տանջի, չէ, Աստուծ է վկայ:

—Ո՛հ, անիծեալ, անիծեալ, բացականչեց ծերունին ատամները կրճտելով,—օձը դրսիցն է խայտաճամուկ, իսկ աղամայ որդին ներսից: Այդ խօսքերով ուզում ես, որ աղջիկս քեզ յանձնեմ: Ո՛հ, անիծեալ լինի...

—Հայրիկ, խօսքը կտրեց Ելիսօն.—ի՞նչի ես անիծում, ես ասի թէ քեզանից չեմ հեռանալ և...

—Ուրեմն ինձ չես սիրում, գոռաց Վաթիան բոլորովին ապուսելով:

—Սիրում եմ, սրան վկայ է ինքը Աստուծ, բայց հօրիցս չեմ բաժանւի:

—Ուրեմն էլ ի՞նչիս է պէտք կեանքս առանց քեզ, գոչեց յանկարծ Մոխեցին:

Այս ասելով՝ արագ կերպով հանեց իւր ուսից հրացանը, բարձրացրեց չախմախը, կրճքին դիմհարեց հրացանի փողը, այնքան որ կարողանար ոտի ծայրով հասնել չախմախին: Ելիսօն ճչաց և ուշագնաց գետին վուեց. Անգորը վրա պրծաւ և հրեց հրացանը մի կողմ հէնց այն բոպէին, երբ մոխեցին ուզում էր կայծեցնել: Հրացանը ճայթեց, բայց գնդակը օդում կորաւ:

—Ի՞նչ է արածդ, թշուառական, գոչեց Անգորը:

Մի բռնիր, թող մեռնեմ: Քանի որ առանց դրան կեանքս կեանք չէ լինելու:

—Մի խտունիր ինձ մեղքիդ մէջ, դու քո Աստուծդ՝ սպասիր:

Այս միջոցում տեսան նրանք ուշագնաց աղջկան և միասին վազեցին դէպի նա. երկուսն էլ մոռացան իրանց և աշխատում էին ուշաբերել Ելիսօնին: Վերջը, երբ բաւական ժամանակ անցաւ, աղջիկը ուժգնապէս շունչ առաւ, հայրն և Վաթիան էլ կարողացան ազատ շնչել:

—Ազատեց, գոչեց ծերունին:

—Փառք Աստծուն, աւելացրեց Վաթիան:

Նրանք երկուսն էլ մոռացել էին իրանց հակառակորդութիւնը,

իրանց անձը և հոգսները միմիայն էլիսօն էր դառել, նրանից աւելի ուրիշ բան չէին մտաբերում:

Էլիսօն շփեց ճակատը մեղմաբար, շունչ առաւ նորից ուժգնապէս և բացականչեց մեղմօրէն.

—Ո՞րտեղ եմ: Ի՞նչ է պատահում ինձ:

—Մի վախիր, Էլիսօ, այստեղ ես, ինձ մօտ, պատասխանեց Անգորը:

—Ո՛հ, այն ի՞նչ պատահեց, հայրիկ: Մի ինչ որ եղաւ, բայց չեմ յիշում:

—Ոչինչ չը կայ, հրացանը ճալթեց և դու վախեցար:

—Այո, հրացանը: Այս ասելով նստեց պառկած տեղից, բայց յանկարծ մտաբերով ամենը և սարսափելի ճիշտ արձակեց և ոտի ելաւ,— նա ի՞նչ եղաւ, ի՞նչ: Դու սպանեցիր նրան, դուն, հայրիկ: Վայ ինձ անբախտիս: Այս ասելով բռնեց իւր մազերը, բայց Վաթիան արագ գրկեց նրան իւր կառկառած թևերով և սեղմեց կրծքին:

—Մի վախիր, այստեղ եմ, քեզ մօտ, ողջ և առողջ եմ:

—Արձրիչ Աստուած: Ասա ինձ, հօ բան չը ցաւեցրիր քեզ, չը վիրաւորեցիր հօ: Մի՞թէ ողջ ես ճշմարիտ: Ո՛հ, դու անասուլիս, եթէ սպանւէիր, ի՞նչ պատասխան էիր տալիս ինձ:

Մի՞թէ այլ ևս չը մեղքացար ինձ, համբուրելով և գրկելով ասում էր Վաթիային:

—Իմ ամեն բանս, պատասխանն էր Վաթիայի, որը այլ խօսք չը կարողացաւ գտնել: Նրանք մոռացել էին ամեն բան, որովհետեւ սիրոյ զգացմունքը վերստին երևան ելաւ: Խեղճ հայրը, որին որդիքը մոռացել էին իրանց յուզւած սիրոյ պատճառով, մնացել էր կանգնած այնտեղ և չէր համարձակուում ձայն հանել: Համոզւած լինելով, որ իրան ուրիշ մի այլ ելք չէր մնում բացի նրանց միութիւնը. որովհետեւ քիչ մնաց, որ իւր դիմադրութեան պատճառով երկուսն էլ ոչնչանային, — ծերունին այլ ևս չէր համարձակուում դէմ կենալ նրանց բախտաւորութեանը. բաւական միջոց անցնելուց յետոյ, հայրը օրհնում էր նրանց և վերջը պայմանաւորում էին, որ վաղը «Զառուգում» (Վլադիկաւկազում) պէտք է յայտնէին, որ Անգորը և իւր աղջիկը այլ ևս Ստամբուլ չեն գնում: Սրա փոխանակ նրանք կը գնան Վաթիայի տուն, որտեղ Մոխեցին կը պսակւի Էլիսօի հետ և ծերունի հայրն էլ այնտեղ կանցկացնէր իւր վերջին օրերը:

Սրանից յետոյ նրանք վերադարձան բինէն, որտեղ լսուով էր այն սիրտ խոցոտող ճիւղնուրի ձայնը, որին ձայնակցում էր դարձեալ միևնոյն սասանիչ լացն ու կոծը, մրմունջն ու սուգը: Փոքր ինչ առաջ արեւից տաքացած դետիւնը դարձեալ ջերմութիւն էր արձակում: Բայց այժմ՝ նա պաղել էր և հարիւրներով հիւանդ մարդիկ թափած դետնի վրայ անձար, անբժիշկ, ցաւալի պատկեր էին ներկայացնում: Մի տեղ ընկած էր մի ցաւազար մայր գոգում կրելով իւր մեռնող զաւակին: Խեղճ մայրը դարձնում էր աչքերը այս ու այն կողմը, կարծես անխօս աղաչում էր, որ օգնեն մի կերպ իւր ծնունդին, որ այնպէս անտէր, անօգնական տալիս էր իւր վերջին շունչը մօր գրկում:

Միւս կողմը դարձեալ մի ծննդական մայր զաւարւում էր անտանելի ցաւով, ատամները կրճտում, բողոքում Աստծուն այս անօրէնութեան դէմ: Երրորդ տեղը ձայնը խրժած հայրն էր հրաժեշտ տալիս իւր զաւակներին, մտածելով խոցոտած սրտով, որ բոլորովին և յաւիտենապէս պէտք է հեռանայ նրանցից և թաղւի միայնակ: Ամեն տեղ տիրել էր ծանր հոգս, տնքոց, որոնց ձայնակցում էր ճիւղնուրի թախծալից ձայնը, անխօս ու զառն սուգը և սիրտ տոչորող մրմունջը:

(Վերջը հետեւեալ անդամ)

ԱՆԱՐԳ ՍԻՒՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Ահա անարգ սիւնն:—Նորա շուրջ խմբւած
Խուռըն ամբօխը ալեկոծւում է:

Նա ըստասում է:

Հասարակութեան ծաղրանքին մատնւած

Եւ դահիճներով չորս կողմից պատած՝

Դատապարտւածըն ¹⁾ ահա քայլում է

Դէպի նըշաւակ:

Բայց ոչ կորացած ճընշող ամօթից,

Որպէս մարդասպան և զոդ-աւազակ

Կամ թէ արտաքսւած մարդկանց շրջանից

Խայտառակութեան կենդանի էակ:

Ո՛չ. քայլում է նա, որպէս զօրավար,

Որ վերադարձած յաղթութեան դաշտից,

Բերում է իւր հետ անթիւ անհամար

Թանկագին իրեր՝ կորզած ոսոխից:

Առաջ է զալիս նա վեհ և հըպարո

Եւ անարգ սեան մօտ կանգնում է հանդարտ:

Բայց ի՛նչ անողորմ խայտառակութիւն:

¹⁾ Դէ-ֆօ, «Ռոբէրնզոնի» հեղինակը, Անդլիակի քաղաքական, հասարակական և գրական նշանաւոր գործիչ, որին պատժեցին Նորա մի գրքի համար—«The shortest way with the dissenters»:

Ծանօթ. հեղ.

Քրտինքով և ջերմ ջանքով վաստակած
 Փառք, պատիւ, անուն —
 Յանկարծ բոլորը անարգ սեան մատնւած:
 Սակայն բազմութիւնն չէր կարող ծաղրել
 Քաջամարտիկ, մեծ իւր բարերարին.
 Եւ չէր վիճակւած թըշնամուն հըրճւել —
 Պարտութիւնն էր նորա սև բաժին:
 Այժ. չը լըսեց արհամարհական,
 Ծաղրական քըրքիջ ամբօխի բերնից,
 Այլ «ողջոյն» հընչեց քաջալերական,
 Եւ օղը թընդաց ծափ ու կեցցէից:
 Եւ ամենուստեք ծաղկեաց պըսակներ
 Դատապարտւածի չորս կողմ տեղացին,
 Եւ հազարաւոր ցընծալի ձայներ
 Նորա անունը փառաբանեցին:

Սակայն ո՞վ է դա, որ սեան մօտ կանդնած
 Դառը և կըծու ծաղրի փոխարէն,
 Անէծքի տեղակ լըսում է յանկարծ
 Բազմութեան «ողջոյն» և խըրոխտ «կեցցէն»:
 Ո՞վ է դա, որի խընկելի անունը
 Փառքով պըսակեց այն անարգ սիւնը:
 Քարոզիչ է դա խըղճի մաքրութեան,
 Կարող ջատագով իդէալների,
 Հրեշտակ-պահապան հասարակութեան,
 Բայց ինքը — բանտի և դահճի գերի:

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վեպ Հենրիկ Սենկևիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Նարունակութիւն ¹⁾)

24 փետրւարի.

Զը գիտեմ որտեղից խելքս փչեց, որ գնամ Վարչաւա դատաւոր Տ-ի մօտ տղամարդկանց երեկոյթի: Դատաւոր Տ-ը սաստիկ աշխատում է հաւաքել իւր մօտ բոլոր բանակների ներկայացուցիչներին, որպէս զի թէյի ու տարտինների միջոցով հաշտութիւն գցի նրանց մէջ, թէև իսկապէս ասած երևի ինքն էլ լաւ չը գիտէ թէ ինչի վրայ պէտք է հիմնւի այդ հաշտութիւնը: Ես՝ իբրև գրեթէ միշտ արտասահմանում ապրող մարդ՝ գնացի այդ ժողովին տեսնելու համար, թէ ինչ բաներով են զբաղւած այստեղացիների գլուխները ու լսելու, թէ ինչպէս են նրանք դատողութիւն տալիս: Նատմարդ կար ու այդ պատճառով ձանձրալի էր և միւսնոյն ժամանակը նկատուում էր այն, ինչ որ սովորաբար լինում է չափազանց բազմամարդ ժողովներում: Համանման գաղափարների տէր մարդիկ խումբ-

¹⁾ Տե՛ս «Մուրճ» № 1 2.

խումբ հաւաքւում էին առանձին սենեակներում, այնտեղ միմեանց փոխադարձաբար յարգանք էին ցոյց տալիս, խոստովանում էին միմեանց արժանաւորութիւնը և այլն:

Ծանօթացայ այստեղի դասաւորներին ու մամուլի ներկայացուցիչներին շատերի հետ: Արտասահմանում մեծ զանազանութիւն կայ գրողի ու ժուրնալիստի մէջ: Առաջինին արտիստ ու մտածող են համարում, իսկ երկրորդին՝ արհեստաւոր (ուրիշ բառ չեմ կարողանում գտնել դրա համար): Այստեղ այդ զանազանութիւնը չը կայ և այդ երկու տեսակին պատկանող մարդկանց միւլենոյն ընդհանուր անունն են տալիս—մատենագիր: Նրանց մեծամասնութիւնը սրարպում է թէ ժուրնալիստութեամբ թէ գրականութեամբ: Անձամբ նրանք ընդհանրապէս աւելի կարգին մարդիկ են քան արտասահմանի ժուրնալիստները: Ես չեմ սիրում մամուլը և մամուլը համարում եմ մարդկութիւնը տանջող պատուհասներից մէկը: Այն արագութիւնը, որով մարդիկ իմանում են պատահած դէպքերը, հաւասարակշռւում է տեղեկութիւնների վայրիվերոյութեամբ և չի վարձատրում հասարակական կարծիքի այն խառնաշփոթութիւնը, որ չի կարող չը նկատել հարցին առանց կանխակալ համոզմունքի վերաբերւող ամեն մի մարդ: Լրագիրների շնորհիւ չքացել է այն զգացութիւնը, որով մարդիկ զանազանում էին ճշմարտութեան սուտից, նւազել է արդարադատութեան զգացմունքը, իրաւունքի ու անիրաւութեան զգացմունքը, չարը ամբարտաւանացել է, ստութիւնը սկսել է խօսել ճշմարտութեան լեզուով, մի խօսքով՝ ընդհանուր մարդկային հոգին անբարոյականացել ու կուրացել է:

Ի թիւս այլոց այնտեղ էր նոյնպէս և Ստաւոփսկին, որին ամենախելօք մարդն են համարում ծայրայեղ յառաջադիմականների բանակում: Նրա խօսելուց երևում էր, որ ընդունակ մարդ է, բայց և երկու հիւանդութիւն ունի,—լեարդի ու սեփական «ես»-ի հիւանդութիւն: Իւր այդ «ես»-ը նա պահում է ջրով լիքը բաժակի նման և կարծես շարունակ ասելիս լինի՝ «Զգո՛յշ, թէ չէ կը թափւի»: Այդ վախը մի տեսակ ներշնչմամբ այն աստիճան հաղորդւում է շրջապատողներին, որ ոչ ոք նրա մօտ չի համարձակւում ուրիշ կարծիք ունենալ: Նրա ազդեցութիւնը հիմնւում է նոյնպէս և այն բանի վրայ, որ նա իւր ասածին հաւատում է: Զուր են այդ մար-

դուն սկեպտիկ համարում: Ընդհակառակը դրա տեմպերամենտի նման տեմպերամենտ են ունեցել անշուշտ հին ժամանակների մոլեռանդները: Ստաուվսկին, եթէ որ մի հարիւր յիսուն տարի սրանից առաջ ծնած լինէր ու ատեանի անդամ լինէր, նոյնպէս կը հրամայէր Աստուածանարգութեան մէջ մեղադրուող մարդկանց լեզուները արմատիցը պոկել ու ծործորակներիցը հանել՝ ինչպէս այն ժամանակն էին անում: Այժմ այդ մոլեռանդութեան բովանդակութիւնը ուրիշ է, — այժմ նա լի է ատելութեամբ այն բանի դէմ, որ առաջ կը սիրէր, բայց խկապէս նա նոյնն է մնացել:

Մի հետաքրքիր բան նկատեցի: Մեր պահպանողականները շրջապատում էին Ստաուվսկուն ոչ միայն հետաքրքրութեամբ, այլ և մի տեսակ սիրալիր կոկետութեամբ: Մեզնում, ով դիտէ՞ զուցէ և ամեն տեղ, այդ կուսակցութիւնը քաջասրտութեամբ պարծենալ չի կարող: Նրանցից ամեն մէկը մօտենում էր Ստաուվսկուն թղի նման քաղցր աչքերով և այնպիսի դէմքով, որ կարծես ճակատներին զրւած լինէր՝ «Թէև ես պահպանողական եմ, սակայն...» Եւ այդ սակայնը դուն էր մի տեսակ զղջման ու ամեն տեսակ զիջումների: Այդ այնքան աշկարա էր, որ երբ որ ես, որ սկեպտիկականութեամբ եմ վերաբերում բոլոր բանականներին, սկսեցի վիճել Ստաուվսկու հետ ոչ իբրև մի որ և է բանի ներկայացուցիչ, այլ լոյ՛ իբրև մի մարդ, որ այդ դէպքում ուրիշ կարծիքի է, իմ յանդէնութիւնը զարմանք պատճառեց: Խօսքը հարստահարող կոչող դասակարգերի մասին էր: Ստաուվսկին սկսել էր երկար ու բարակ խօսել նրանց անել զրութեան, նրանց թուլութեան, նրանց՝ պաշտպանւելու անընդունակութեան մասին և այն է նրա չորս կողմը սկսել էր կազմել լսողների մի շրջան, որ դնալով մեծանում էր, որ ես նրա խօսք կարեցի:

— Ներեցէք, դուք Դարւինի զոյութեան կռիւ թէօրիան ընդունում էք թէ ոչ:

Ստաուվսկին, որ մասնազիտութեամբ բնազէտ է, ուրախութեամբ ընդունեց մրցումն այդ ասպարէզում:

— Ինչ ասել կ'ուզի, — պատասխանեց նա:

— Որ այդպէս է, թոյլ տւէք, պարոն, ձեզ ասել, որ դուք հետեւողական չէք: Ահա ինչու: Եթէ ես, իբրև քրիստոնեայ, կարեկ-

ցեմ թոյլերին, անպաշտպաններին ու նեղեալներին, հասկանալի կը լինի, — Գրիստոս ինձ այդպէս է պատւիրել. բայց դուք, զոյու-
թեան կռի տեսակէտից նայելով, պէտք է ձեզուձեզ ասէք՝ թոյլ
են, յիմար են, ուրեմն պէտք է՝ մէկին կամ մի ուրիշին զոհ զնան, —
այդ՝ բնութեան հիմնական օրէնքն է, — ուրեմն ջհաննամը թէ կը զոհ-
ւեն: Ինչո՞ւ դուք այդպէս չէք ասում, բացատրեցէք ինձ այդ հա-
կասութիւնը:

Զը զիտեմ՝ ապշեցրեց արդեօք Ստաւովսկուն իմ ընդդիմադրու-
թիւնը, որովհետեւ նա սովոր չէ ընդդիմադրութեան, թէ՛ ճիշտ որ
երբէք այդ հարցերի կապի մասին չէր մտածել, բայց մի անգամից
պատասխան չը գտաւ տալու, շփոթեց ու մինչև անգամ չը յիշեց
ալարուիզմ խօսքը, որ ճիշտն ասած բաւական զատարկ բառ է:

Այդ որ տեսան պահպանողականները, սկսեցին խումբ-խումբ
զաղթել իմ կողմն և ես հեշտութեամբ կարող էի այդ երեկոցեան
հերոսը դառնալ, եթէ որ ուշ չը լինէր, եթէ որ ես ձանձրացած
չը լինէի ու ուզելիս չը լինէի գիշերը վերադառնալ Պլոշով Գիշ-քիշ
բոլորն էլ սկսեցին ցրւել:

Արդէն մոռցաւս հագել էի ու մի քիչ համբերութիւնս հասած
փնտռում էի մոռցուսկիս ու սիրտուսկիս արանքին մի տեղ պարտի-
ւած ակնոցս, որ Ստաւովսկին, որը ինչպէս երևում էր հարցիս պա-
տասխանը գտել էր, մօտեցաւ ինձ ու ասաց.

— Դուք ինձ հարցնում էիք թէ ինչու ես...

Բայց ես կորեցի նրա խօսքը, որովհետեւ զեռ փնտռում էի
ու, չը կարողանալով գտնել, սաստիկ չարացել էի:

— Անկեղծ ասած, — ասացի ես, — այդ հարցը ինձ համար նշա-
նակութիւն չ'ունի: Տեսնում էք, ուշ է, ամենքը գնում են և բացի
այդ ես քիչ թէ շատ գուշակում եմ թէ դուք ինչ կարող էք ասել
ինձ, ուստի թոյլ տեցէք ցանկանալ ձեզ բարի գիշեր:

Ինձ թւում է, որ նրան ռիսերիմ թշնամի դարձրեցի ինձ՝ մա-
նաւանդ վերջին պատասխանովս:

Գիշերուայ ժամի մէկն էր, որ հասաչ Պլոշով, բայց այնտեղ
ամենաքաղցր սիրպրիզի արժանացայ: Անեկան ինձ սպասում էր
սեղանատանը՝ պատրաստ թէյն առաջին: Նա բոլորովին հագնւած
էր. միայն մազերն էին այնպէս սանրած, ինչպէս սանրում են քնե-

լուց առաջ: Այն ուրախութիւնից, որ ես զգացի նրան տեսնելիս, եղբակացրեցի թէ որ աստիճան զերել է նա իմ սիրտը: Ի՞նչ քաղցր էակ է, որքան գեղեցիկ էր նա՝ վզի վրայ ցածիկ հիւսած մազերով: Եւ որ զլիսաւորն է, գիտեմ որ բաւական է մի խօսք իմ կողմից ու մի կամ երկու ամսից յետոյ իրաւունք կ'ունենամ արձակել այդ ծամերը եւ շաղ տալ նրա ուսերի վրայ: Չեմ կարողանում հանգիստ մտածել զրա մասին: Հաւատալս չի զալիս, որ բախտաւորութիւնը այդքան հեշտութեամբ կարող է ձեռք բերել:

Սկսեցի նրան յանդիմանել, որ դեռ չի քնել, բայց նա ինձ պատասխանեց.

—Պունս սկի չէր տանում, ուստի մայրիկին ու մօրաքրոջս խնդրեցի, որ ինձ թող տան քեզ սպասել: Մայրիկը մի քիչ հակառակեց, թէ այդ անլայել է, բայց ես ասացի, որ մենք ազգական ենք,—եւ գիտեմ ով իմ կողմն պահեց—մօրաքոյրը:

—Աննաման հօրաքոյր: Դու էլ թէյ կը խմե՞ս ինձ հետ:

—Ինչու չէ:

Ասաց ու սկսեց թէյ ածելով զբաղւել: Ես տեսնում էի նրա արագաշարժ ու ճարպիկ ձեռները, որ սիրտս ուղղում էր պաշել: Երբեմն-երբեմն նա աչքերը բարձրացնում՝ նայում էր ինձ վրայ, բայց պատահելով իմ հայեացքին խիտոյն կոպերը քաշ էր զցում: Վերջապէս սկսեց ինձ հարց ու փորձ անել, թէ ինչպէս էի անցկացրել երեկոն եւ ինչ տպաւորութիւն էի դուրս բերել երեկոյթից: Երկուսով էլ կամաց ձայնով էինք խօսում, թէ եւ պառաւ տիկիներին ննջարանները հեռու էին ու մենք չէինք կարող նրանց զարթեցնել: Մեր մէջ մի տեսակ անկեղծութիւն ու մտերմութիւն կար, ինչպէս լինում է միմեանց շատ սիրող ազգականների մէջ:

Պատմեցի նրան տեսածս ու գիտածս այնպէս, ինչպէս մարդ կը պատմի իւր բարեկամներին: Յետոյ ասացի թէ ընդհանրապէս ինչ տպաւորութիւն է զործում այստեղի հասարակութիւնը հեռաւոր երկիրներից եկած մարդու վրայ: Նա ինձ լսում էր հանգիստ տրամադրութեամբ, աչքերը լայն բաց արած եւ իրան բախտաւոր զգալով, որ ես նրան հաղորդում եմ իմ մտածմունքներս. վերջը նա հարցրեց.

—Ինչո՞ւ, Լէօն, այդ բաները չես զրում: Ար իմ մաքովս այդ-

պիտի բաներ չեն անցնում, զարմանալի չէ, բայց այստեղ այդ բաները ոչ ոքի մոքովը չեն անց կենում:

—Ինչո՞ւ չեմ գրում,—ասացի ես.—շատ ու շատ պատճառներով, որ յետոյ մի օր քեզ կասեմ, իսկ ի միջի այլոց գուցէ և նրա համար, որ ոչ ոք չկայ մօտս, որ յաճախ քեզպէս հարցնէր ինձ՝ «Ինչո՞ւ ոչինչ չես անում, Լէօն»:

Երկուսս էլ ընեցինք: Դեռ գուցէ ոչ մի ժամանակ Անեկայի թերթերունքները այդքան ցած չէին քաշ ընկել նրա թշերի վրայ—և ես համարեա լսում էի, համարեա տեսնում էի, թէ ինչպէս նրա սիրտը բաբախում էր հազուատի տակին: Խսկապէս նա կարող էր սպասել, որ խօսքս կը վերջացնեմ ասելով՝ «Կ'ուզե՞ս միշտ մնալ ինձ հետ ու այդպէս հարցեր տալ ինձ»: Բայց իմ հեշտասիրութեանս սաստիկ բաւարարութիւն էին տալիս այդ գահավէժները, այդ կարծես մաղից կախւած գրութիւնը,—այդ սիրտը, որ կարծես բռիս վրայ էր բաբախում,—ուստի չէի ուզում վերջ տալ:

—Բարի գիշեր, —ասացի մի րոպէ յետոյ:

Սև այդ՝ իսկապէս հրեշտականման ¹⁾ էակը ամենեին ցոյց չը տւեց, որ այդ րոպէին հիասթափւեց: Նա վեր կացաւ ու մի քիչ յուզւած ձայնով, բայց առանց ջիգրի ամենափոքր նշույլի պատասխանեց.

—Քեզ լոյս բարի:

Իրար ձեռք տալով ամենքս մի կողմ գնացինք: Բայց, երբ որ արդէն դուռը բռնել էի որ բաց անեմ, յանկարծ կանդ առայ:

—Անեկա՛ն:

Նորից մօտեցանք սեղանին:

—Ասա ինձ, բայց բոլորովին անկեղծ, երբեմն-երբեմն մոքումդ չե՞ս յանդիմանում ինձ, թէ ես քմահաճ մարդ եմ, դժտուտ եմ:

—Չէ, դժտուտ չէ: Երբեմն մոքովս անցնում է, որ դու տարօրինակ մարդ ես, բայց իսկոյն ինձ ու ինձ ասում եմ որ քեզպէս մարդիկ պէտք է տարօրինակ լինեն:

—Մի հարց էլ. առաջին անգամը երբ մոքովդ անցաւ, թէ ես տարօրինակ մարդ եմ:

¹⁾ Անեկա անունը լեհերէն հրեշտակ բառից է ծագում:

Անելկան յանկարծ կարմրատակեց: Աքանչելի էր նա, երբ որ հետզհետէ բոցավառւում էին նրա թշերը, ճակատն ու վիզը: Մի րոպէ անցած նա պատասխանեց.

—Ոչ... շատ դժւար է... Ձեմ կարող ասել...

—Որ այդպէս է, գոնէ «հա» ասա, եթէ ես ուղիղը գտնեմ, իսկ ես քեզ միայն մի խօսք կ'ասեմ:

—Ի՞նչ խօսք, — հարցրեց նա ականերեւ անհանգստութեամբ:

—Տեսորը, Հնձ թէ չէ:

—Հնձ, — պատասխանեց Անելկան գլուխը կախ գցելով:

—Որ այդպէս է՝ քեզ ասեմ թէ ինչու այն բանը գրեցի տետրում, — նրա համար, որ մեր մէջ մի բան լինէր, որ մի անգամից մենք մի որ և է ընդհանուր գաղտնիք ունենայինք, իսկ երկրորդը...

Այդ ժամանակ ես ցոյց տուցի նրան ծաղիկների մի փուռը, որ պարտիզպանը առաւօտեան բերել էր ջերմանոցից:

—Իսկ երկրորդը, տեսնում ես՝ ծաղիկները աւելի լաւ են բացւում լոյս տեղում, ուստի ուզում էի, որ մեր մէջ մութ բան չը լինի:

—Ես երբեմն կարող եմ քեզ չը հասկանալ, — մի րոպէ լուռ կենալուց յետոյ պատասխանեց Անելկան, — բայց այնպէս եմ հաւատում քեզ... այնպէս եմ հաւատում, որ ինչ ասեմ...

Եւ նորից երկուսս էլ լռեցինք: Վերջապէս ես ձեռք տուցի նրան ու բարի դիշեր ասացի:

Դռանը հասնելով՝ դարձեալ կանգնեցինք, միեւնոյն վայրկեանում երեսներս շուռ տուցինք ու իրար նայեցինք: Ա՛խ, ինչպէս այդ վտակը քանի գնում լցւում է: Ամեն րոպէ կարելի է սպասել, որ հէս է ավերիցը դուրս կը գալ:

23 փետրւարի.

Մարդս կարծես ծով լինի, — նա էլ ունի իւր մակընթացութիւններն ու տեղաաւելութիւնները: Այսօր ինձ համար կամքի, եռանդի, որ և է դործի ցանկութեան, կեանքի փափագի տեղաաւելութեան օր է: Այդ տրամադրութիւնն եկաւ ինձ վրայ առանց որ և է առիթի — հէնց այնպէս — ջղերիցս է: Բայց հէնց այդ պատճառով ինձ պաշարել են դառն մտածմունքներ: Իրաւունք ունի՞ արդեօք պատկերու այդպէս Ֆիզիկապէս ջարդւած ու հոգով ծեր մի

մարդ: Ահամայից միտքս են գալիս Համլէտի խօսքերը՝ «Ինչու համար պէտք է մեղաւորներ բաղմացնես—գնա կուսաստան»: Ճիշտ է՝ ես մենաստան չեմ գնալ. իմ սերունդը, իմ ապագայ «մեղաւորները» ինձ նման կը լինեն՝ այսինքն կը լինեն ջղային, չափից աւելի զգայուն, ոչ մի բան անելու ընդունակութիւն չ'ունեցող մարդիկ, մի խօսքով՝ անպօրտօնօջլ հանձարներ, —բայց ջհաննամը թէ այդպէս կը լինեն: Այս բոլորէիս իմ հոգըս չեն նրանք, միայն Անելլան է այժմ ինձ հետաքրքրում: Իրաւունք ունեմ արդեօք պսակել նրա հետ, իրաւունք ունեմ կապել այդ ջահել ու թարմ կեանքը, որ լի է հաւատով դէպի աշխարհքը և Ասուած, իմ կտակածներիս, իմ հոգեկան թուլութեան, իմ անյուսալի սկեպտիկականութեան, իմ կրիտիկայի, իմ ջղերիս հետ: Ի՞նչ դուրս կը գայ դրանից: Ես հօ նրա մօտ լինելով նորից չեմ ջահէլանալու երկրորդ հոգեկան երիտասարդութեամբ, հօ չեմ վերածնւելու, ուղեղս չի փոխւելու, ջղերս չեն կաղուղւելու, ուրեմն, — ուրեմն նա թաւառեւոր է իմ մօտ լինելով: Այլանդակ բան չի՞ լինիլ այդ: Կարող եմ ես արդեօք խաղալ այն պոլիպի դերը, որ ծծում է իւր զոհին, որպէս զի նրա արիւնով ինքը վերակենդանանայ:

Ձէ, ուղեղս մշուշ է պատել: Թէ չէ, միւս կողմից նայելով, եթէ այդպէս է, էլ ինչու էի թողնում, որ բանը այն աստիճանին հասնի, որին այժմ է հասնել: Ի՞նչ էի անում Անելլայի հետ ծանօթանալու բոլորից ի վեր: Մասներս դնում էի նրա հոգու լարերի վրայ ու ինձ համար կոնցերտներ ածում: Բայց չէ՞ որ այն, որ ինձ համար „Quasi una fantasia“ սոնատ է, նրա համար կարող է „Quasi un dolore“ սոնատ լինել: Ճիշտ է, ճիշտ, առաւօտեանից մինչև երեկոյ ածում եմ խփելով նրա հոգու լարերին, — և այդ բաւական չէ. չը նայելով որ այժմ ինքս ինձ յանդիմանում եմ, դիտեմ, որ այդ բանից ձեռք քաշել չեմ կարող, որ վազն ու միւս օրը նոյնպէս կ'ածեմ ինչպէս ածում էի երէկ ու անցեալ օրը, որովհետև այդ՝ ինձ անդիմադրելի կերպով զրաւում է, որովհետև բացի դրանից ոչ մի բան աշխարհքումս ինձ չի զրաւում, որովհետև այդ աղջիկը իմ մէջ սաստիկ փափաղ է զարթեցնում՝ իբրև կին, որովհետև ես նրան սիրում եմ: Ինչու ինքս ինձ խաբեմ—սիրում եմ: Ե, յետոյ՝ ի՞նչ անեմ, — յեմ քաշւեմ, փախչեմ հռոմ:

Եթէ այդպէս անեմ, խաբած կը լինեմ նրան ու կ'անբախտացնեմ: Ով գիտէ՝ որքան խոր է արմատացել այդ զգացմունքը նրա սրտում: Եթէ պատկեմ,— զոհած կը լինեմ՝ նրան ինձ համար և ուրիշ ձեռով կ'անբախտացնեմ: Այ կախարդւած շրջան, որի միջից չի կարելի դուրս գալ: Միայն Պրոշովսկիների տեսակ մարդիկ կարող են այդպիսի շրջանների մէջ ընկնել: Ինչ քարուքացախի միսթարութիւն կարող է լինել ինձ համար այն, որ այդպիսի Պրոշովսկիներ շատ կան մեզնում, որ իմ անունս լեզէոն է: Սակայն որքան անողորմ կերպով այդ տեսակ մարդիկ դատապարտւած են ոչնչանալու, ինչպէս բախոն էլ (բաւական չէ որ մենք բոլորովին անշնորհք ենք կեանքի մէջ) ամեն բանում հալածում է մեզ: Ի՞նչ կը լինէր, որ մի այդպիսի Անելիայի պատահէի տասը տարի սրանից առաջ, երբ իմ առաջատեսները դեռ այնքան նման չէին քրքրւած սուպրանների՝ որքան այժմ:

Եթէ ագնիւ, յարգելի Պրոշովսկա հօրաքոյրս իմանար, թէ ինքը ախմայ ու ամենալաւ դիտաւորութեամբ ինչ չարիք է պատճառել ինձ, կը մնար ապշած: Բաւական չէր ինձ այն տրագեդիան, որ յառաջանում է ոչնչութեանս գիտակցութիւնից, այն խաւարից, որի մէջ ես խարխափում եմ, այժմ մի նոր տրագեդիա էլ աւելացաւ ինձ համար, — լինել թէ չը լինել. չէ, ինչ եմ ասում, աւելի վատը:

26 փետրւարի.

Երէկ նորից զնացի Վարշաւա, ուր պէտք է տեսնէի պան Իւլիուս Կվ-ի հետ, որի կալւածի գրաւականով պարտք է տրւած մօրիցս ինձ մնացած փողի մի մասը: Պան Իւլիուս Կվ-ը վարկի ընկերութիւնից պարտք է վերցրել և ուզում է ինձ հասնելիք գումարը վճարել:

Բայց թող գրողը տանի այն ձեւը, որով այստեղի մարդիկ վերջացնում են իրանց գործերը: Կվ-ը ինձ կանչեց նոտարի մօտ, ինքը նշանակեց պալմանաժամը և դուրս եկաւ այն, որ ես նրան ամբողջ օրը իզուր սպասեցի: Հինգ անգամ էլ դեռ կը կանչի ու հինգ անգամն էլ ինքը չի գալ գործը վերջացնելու: Կվ-ը կարողութեան տէր մարդ է, ինքն է ուզում այդ դումարից ազատել և կարող է ուզած բոլորին վճարել: Այ, այդ է մեզնում պալմանաժամը:

Ի՞մ սեփական զխոռոչութիւններից վաղուց այն եզրակացութեանն եմ հասել, որ մենք գրամական չարաքերութիւնների մէջ ամենաթեթեւամիտ ու պայմանաժամը բանի տեղ չը դնող հասարակութիւններից մէկն ենք: Ես, որ սիրում եմ ամեն բանի պատճառը գտնել, յաճախ մտածել եմ այդ երևոյթի մասին և ահա ինչ եզրակացութեան եմ եկել: Ի՞մ կարծիքով, այդ բանը միանգամայն մեր ժողովրդի բացառապէս երկրագործական պարապմունքիցն է յառաջանում: Առևտուրով մեզնում հրէաներն են պարապելիս եղել, նրանք չէին կարող մեզ ճշտապահութիւն սովորեցնել, իսկ հողագործը շատ անգամ պէտք է անճշտապահ լինի, որովհետև հողը չափից դուրս անճշտապահ է, հողագործը պէտք է անպայմանաժամ լինի, որովհետև հողը անսպայմանաժամ է: Հողի այդ բնաւորութիւնը անցնում է և նրանց, որոնք մշակում են նրան, — հեազհետէ մոռնում է ամբողջ հասարակութեան բարոյական էութեան մէջ ու կամացկամաց դառնում է ժառանգական ախոռ: Ճիշտ է՝ այդ երևոյթի պատճառը հասկանալու տրամադրութիւնս տեղը բերել չի կարող, որովհետև ստիպւած էի ամբողջ մի օր հեռու մնալ Անեկլայից և, որ աւելի վատ է, երկու օրից յետոյ էլ նոյնն է սպասում ինձ, — բայց ինչ արած, ծար չկայ:

Հօրաքրոջս բնակարանը վերադառնալով երեք այցեւորման տեսայ Կրոմիցկու ազգանունով՝ մէկը ինձ համար, երկուսը՝ պառաւ տիկիւնների համար: Վախեցայ, որ յանկարծ խեղքը փչի ու վերկենայ նորից մեզ այցելութեան գայ Պլոշով և միւս կողմից ուրիշ աւելի լաւ բան չ'ունէի անելու, ուստի գնացի այցեւորման թուղնելու նրա տանը: Դժբախտաբար նա տանն էր և ես ստիպւած եղայ կէս ժամի չափ մնալ նրա մօտ:

Նրա աւաջին խօսքն այն եղաւ, որ խոստացաւ զալ Պլոշով, որին ես պատասխանեցի թէ մենք Պլոշովում մնում ենք միայն հանգստանալու համար և որ այսօր-էգուց կը տեղափոխւենք Վարշաւա: Սկսեց հարց ու փորձ անել Անեկլայի մօր մասին և մեծ զգուշութեամբ Անեկլայի մասին: Երևում էր, որ ուզում էր հասկացնել ինձ, որ բոլորովին անշահասէր կերպով է հարցնում, լոկ իբրև ծանօթ: Այնքան սպառնորոշ եմ, որ այդ էլ սրախ զիպաւ: Համոն զարշելի արարած է հմտ Անշուշա Բատիխանի թաթարները

Լիզնիցայի յաղթութիւնից յետոյ այժմեան աւստրիական Սիլեզիան էլ են ոտնատակ տուել, որովհետեւ անկասկածելի է, որ Կրումիցկու՝ սրճահատիկների նման աչքերը սիլեզիական ծաղումից չեն:

Նա չափից դուրս սիրալիր կերպով էր վերաբերում ինձ, որովհետեւ հարուստ մարդ եմ: Ճիշտ է՝ նա ինձնից ոչինչ չի ուզում, ես նրան ոչինչ չեմ տալ և իմ հարստութիւնից նրան երբէք ոչ մի օգուտ չի լինելու, բայց նրա սիրտը արդէն համակուել է այն յարգանքով դէպի հարստութիւնը, որ զգում են առհասարակ Ֆինանսիստները: Սկզբում մենք խօսում էինք այն նեղութիւնների մասին, որ քաշել է կամ, աւելի լաւ ասած, մինչև այժմ էլ քաշում է Անելկսի մայրը: Կրումիցկու կարծիքով շատ բան կարելի կը լինի փրկել, եթէ որ պանի Պ-ն համաձայնի ծախել կալածքը: Կրումիցկին նրա յամառութիւնը կատարեալ բոմանտիզմ է համարում, որովհետեւ դեռ նրա համար հասկանալի կը լինէր, եթէ որ կարելի լինէր չը ծախել, բայց եթէ գործերը այնպէս գնան ինչպէս որ գնում են, վերջ ու առաջ ստիպւած պէտք է լինի ծախել, եթէ որ մի «forsa» չը պատահի—«եթէ, forza պատահի, ուրիշ բան է»:

Նա շատախօս մարդ է. գլուխս տարաւ խօսելով մեր թուլամորթութեան մասին: Նրա կարծիքով փողը շաղ է տւած փողոցում, պէտք է միայն կռանալ ու վերցնել: Ինքը ամենալաւ օրինակն է: Հայրը նման է եղել բոլոր մեծամեծ աղաներին,—այնքան պարտքեր է ունեցել, որ ամենաշատը հարիւր հազար զուլդէն է մնացել—իսկ անցմ:

—Այժմ, մի կապալ եմ վերցրել Թուրքեստանում՝ եթէ այդ կապալը ինձ յաջողի, կարող եմ իսկոյն բոլոր բաներս վերջացնել: Հրէաներն ու յոյները միլիոնների են տիրացել այդպիսով. հարցնում եմ, ինչո՞ւ պէտք է մենք չը կարողանանք տիրանալ: Ես ինձ օրինակ չեմ բերում, բայց հարցնում եմ: Այնտեղ ամենքի համար էլ բաւական տեղ կայ, ուստի և հարցնում եմ:

Իմ կարծիքով Կրումիցկին առևտրական գործերում մի քիչ աչքաբացութիւն, Ֆահմ ունի, բայց ընդհանրապէս տաճ՝ չիմար է: Որ մենք ճարպիկ մարդիկ չենք—հին նաղլ է. որ այս կամ այն անհատը կարող է միլիոնների տէր դառնալ կապալներով—հաւա-

տուժ եմ, բայց ամբողջ հասարակութիւնը պէտք է տանը աշխատի
և ոչ թէ միլիոններ փնտռի Թուրքեստանում:

Ստուռած խնայել է Անեկիային, որ նա իւր կեանքը չի կապել
այդ մարդու հետ: Գուցէ նա ունի իւր արժանաւորութիւնները,
բայց բոլորովին ուրիշ բարոյական տիպի մարդ է: Սակայն եթէ
Անեկիան իսկապէս կարող է ինձնից աւելի վատին հանդիպել, պէտք
է արդեօք տատանւեմ:

28 փետրւարի.

Պառաւնները սկսում են մի քիչ անհանգստանալ, որ գործը
իրանց ուղածի պէս արագ առաջ չի գնում, մանաւանդ սրանեղում
է երևի հօրաքոյրս, որ ի բնէ անհամբեր մարդ է: Սակայն պառաւ-
ներին հանգստացնում ու սիրտ է տալիս Անեկիայի դէմքի հանդիստ
ու երջանիկ արտայայտութիւնը: Նա հաւատում է ինձ այնքան, որ-
քան որ մարդս կարող է հաւատալ, և նայում է, ինձ վրայ այնպիսի
աչքերով, որոնց մէջ ես կարգում եմ անսահման վստահութիւն:
Ուշ ու միտքս այնպէս է գրաւել նա, որ ոչ մի բոպէ չեմ կարողա-
նում նրան հանել մոքիցս: Փանի գնում է փափագս դէպի նա
աւելի ու աւելի սաստկանում է: Ել կոնցերտներ չեմ ուղում,—
նրան եմ ուղում:

4 մարտի.

Այս օրւայ օրը ինձ համար այնպէս վերջացաւ, որ ունեցած
բոլոր հանգստութիւնս ու սառնասրտութիւնս պէտք է հաւաքեմ,
որպէս զի յաջորդաբար պատմեմ ու վերջից չը սկսեմ: Սակայն սիրտս
չի համբերում, պէտք է ասեմ,—Ռուբիկոնը անցայ կամ համարեա
թէ անցայ: Ոչ մի բան չէի կարողանալ գրել, եթէ նախ և առաջ
այդ չը գրէի:

Այժմ կարող եմ սկզբից պատմել: Կէսօրին մեզ մօտ ճաշի
եկան Մեհաօինսկիները: Վաղ ճաշեցինք, որովհետեւ այսօր թատրո-
նում ներկայացնում են նրա նոր կատակերգութիւնը, այնպէս որ
երեկոցեան նրանք պէտք է վերադառնային քաղաք: Թէև մենք շատ
լաւ ժամանակ ենք անցկացնում Պլոշովի միայնութեան մէջ, բայց և

այնպէս՝ նրանց զալուստը մեզ ուրախութիւն պատճառեց: Անեղիւն շատ մտերիմ է պանի Մնեատինակայի հետ, — ենթացողում եմ նայնպէս, որ նա պահանջ է զգում մէկն ու մէկի առաջ բաց անել սրտում դիպած բոլոր խորհուրդները: Պանի Մնեատինական վաղուց է հասկացել, թէ բանն ինչումն է և մինչև անգամ կարողացածի չափ իւր ուսերն էլ է դեմ տալիս որքան կարելի է շուտով սալլը տեղիցը շարժելու համար: Հէնց նրանք ներս մտան թէ չէ ու սկսեցինք խօսել մեր դիւղական միայնութեան մասին, նա իսկոյն դարձաւ հօրաքրոջս ու ասաց.

— Ա՛խ, ինչքան լաւ է, ինչքան հանդիստ է այստեղ: Հասկանալի է, որ ջահէլների զոյգն էլ այստեղ իրան լաւ է զգում ու չի կարոտում վարչաւային:

Ես էլ Անեղիւն էլ շատ լաւ հասկացանք, որ պանի Մնեատինական մեզ ջահէլ զոյգ անւանելով մեր տարիքը չ'ունէր ինկատի, այլ բոլորովին ուրիշ բան: Բացի այդ, ճաշի ժամանակ նա մի տասը անգամ դիտմամբ կրկնեց՝ կամ «ջահէլ զոյգը» կամ «մեր ջահէլները», իբր թէ հակադրելով մեզ հասակն առած տիկիններին՝ հօրաքրոջս ու Անեղիւսի մօրը:

Սակայն պանի Մնեատինակայի մեզ վրայ քցած հայեացքների մէջ այն աստիճան համակրութիւն էր երևում դէպի մեզ, նա այն աստիճան խոյ կանացի կերպով էր ականջ դնում ամեն բանի, որ ես ու Անեղիւն մեր մէջ խօսում էինք, և նրան այդ այնպէս էր սազ գալիս, որ ես ուրախութեամբ ներում եմ նրա բարեսիրտ «պոչատ-զղալութիւնը»: Բանն այնտեղ է հասել, որ մեր անունների այդպէս դիտմամբ իրար հետ կապելը աւելի դուր է գալիս սրտիս քան ջիզրս բերում:

Երևում էր, որ Անեղիւն էլ ուրախութեամբ էր լսում այդ: Նա այնպէս սիրալիր կերպով էր վերաբերւում Մնեատինակիններին ու այնպէս էր զբաղւում ճաշի ժամանակ նրանցով, որ կարծես իսկապէս նորահարս լինէր՝ առաջին անգամ իւր սեփական տանը սիրելի հիւրեր ընդունելիս: Հօրաքրոջս սիրտը փառասուրբում էր այդ տեսնելով, և նա ճաշի սկզբից մինչև վերջը հաճոյախօսութիւններ էր ասում Մնեատինակիններին: Այդ ժամանակ մի չափազանց զարմանալի բան նկատեցի, որին երբէք չէի հաւատալ, եթէ որ ինքս իմ աչ-

քովս չը տեսնէի, — պանի Մեատինսկայի ականջները կարմրում են երբ որ մէկը նրա մարդուն զովում է: Աինը կարմրի մարդու պատճառով ութ տարի ամուսնական կեանք վարելուց յետոյ... չէ... մի գուցէ յանկարծ դուրս գայ որ առաջւայ գրածներս լեհուհիներէ մասին սարսափելի յիմար բաներ էին:

Ճաշը հիանալի անցաւ: Պսակածների այդպիսի մի զոյգ կարող է հազարաւոր մարդիկ ամուսնացնել, որովհետեւ ամեն մարդ նրանց նայելով պէտք է ինքն իրան ասի, — «է՛, որ այդպէս է, ես էլ կը պսակեմ»: Գոնէ ես առաջին անգամն էի տեսնում ամուսնութիւնը ոչ թէ կենսական պրոգայի, հանապազօրէութեան ու քչից-շատից ծածկւած անտարբերութեան՝ գորշ խաւարում, այլ այդպիսի ուրախ լոյսով լուսաւորւած:

Անելկան էլ անշուշտ մեր ասպզան այդպիսի լոյսով էր տեսնում, այլ երևում էր նրա զէմքի պայծառ արտայայտութիւնից:

Ճաշից յետոյ ես Մեատինսկու հետ մնացի սեղանատանը, որովհետեւ դիտէի, որ նա սուրճից յետոյ ուրախութեամբ մէկ — երկու գաւաթ կոնեակ կը կոնծի: Պառաւները գնացին դահլիճը, Անելկան ու պանի Մեատինսկան վաղ տեցին վերեւ ինչ-որ ալբոմներ բերելու՝ Վոլինի տեսարաններով, իսկ ես սկսեցի հարց ու փորձ անել Մեատինսկուն նրա նոր կատակերգութեան մասին, որի համար նա անհանգիստ էր լինում: Խօսակցութիւնը հեռզհետէ փոխւելով անցաւ մեր անցեալ կեանքի այն ժամանակին, երբ մենք երկուսս էլ փորձում էինք թուել դեռ չը փետրապնդւած թւերով: Մեատինսկին ինձ պատահում էր, թէ ինչպէս աստիճանաբար ինքը յարգ էր ստացել հասարակութեան աչքում, ինչպէս շատ անգամ ինքն իրան կասկածով է վերաբերւել ու մինչև այժմ էլ յաճախ այդպէս է վերաբերւում, չը նայելով որ բաւական անուն է հանել:

— Ասա խնդրեմ, հարցրեցի ես, ի՞նչ ես անում փառքդ:

— Ինչպէս թէ ինչ եմ անում փառքս:

— Ուզում եմ ասել, եպիսկոպոսական թագի նման զլխի՞դ ես դնում, թէ «ոսկէ գեղմ»-ի ¹⁾ նման վզիցդ կախում, թէ դրած է գրասեղանիդ վրայ կամ քաշ արած դահլիճումդ: Ես հարցնում եմ,

¹⁾ Շքանշան: Պ. Թ.

իբրև մի մարդ, որ դադարաւ չ'ունի թէ ինչ է հոչակը և ինչ են անում նրան՝ հուշակածները:

—Դիցուք թէ փառքի տէր եմ. ահա պատասխանս,—մարդ պէտք է շատ ողորմելի հոգու տէր լինի, որ փառք կոչւած բանը դնի գլխին կամ գրասեղանի վրայ, կախ տայ վզիցը կամ պատիցը: Ճիշտ է սկզբում այդ մարդու ինքնասիրութիւնը շոյում է, բայց միմիայն հոգեկան parvenue-ի սիրտը կարող է բոլորովին գոհացնել այդպիսի շոյշոյանքը և միայն նրա աչքում կարող է փոխարինել երջանկութեան բոլոր միւս տեսակները: Ուրիշ բան է այն, որ մարդ իմանում է թէ իւր արածը աննկատելի կերպով չի անցնում ու արձագանք է գտնում,—այդ կարող է գոհութիւն պատճառել հասարակական գործիչի: Բայց թէ ինձ, իբրև մասնաւոր մարդու, կարողանայ բախտաւորեցնել այն, որ սա կամ նա մի որ և է զահլիճում շատ կամ քիչ յիմար դէմքով ասի,—ւորքան քաղցր ըստէնք եկք վայելել ձեր շնորհիւ», կամ թէ երբ որ մի դժարամարս բան ուտեմ, մի որ և է լրագիր խկոյն գրի, թէ «հաղորդում ենք մեր ընթերցողներին մի տխուր լուր, մեր հուշակաւոր X. X-ի փորը ցաւում է»,—որ այդ ինձ բախտաւորութիւն պատճառի,—[Թիւյ, ինչ աչքով ես նայում ինձ վրայ:

—Նսիր,—ասացի ես,—ես ինքս էլ սնափառ մարդ չեմ, բայց չէ որ մարդ կ'ուզի որ իրան քչից շատից զնահատեն: Այդ բնածին զգացմունք է: Ես իմ Աստածը, ես դատարկ մարդ չեմ, սակայն լսիր, անկեղծ ասեմ քեզ,—երբ որ իմ մէջ մի որ և է ընդունակութիւն են տեսնում, երբ որ խօսում են ընդունակութիւններ իս մասին, երբ որ ցաւում են, որ նրանք զուր կորչում են, այդ ժամանակ թէև իմ ոչնչութիւնս ինձ համար աւելի ակներև է դառնում քան երբ և իցէ, այնուամենայնիւ այդ մի քիչ շոյում է ինքնասիրութիւնս, այնուամենայնիւ այդ ինձ մի տեսակ—զուցէ և դառն—բայց էլի զւարճութիւն է պատճառում:

—Որովհետև ինքդ քեզ խղճում ես և իրաւունք ունես խղճալու: Հարցը մի ծովի: Ես ամենևին չեմ ուզում ապացուցանել, թէ մարդու կարող է զւարճութիւն պատճառել, եթէ նրան էլ անւանեն:

—Իսկ այն յարգանքը, որ հետևում է հուշակին:

Անեատինսկին, որ սաստիկ տաք մարդ է և որ սովորութիւն ունի խօսակցութեան ժամանակ վազվզել սենեակում ու նստել բոլոր աթոռների ու սեղանների վրայ, այդ անգամ նստեց պատուհանի վրայ ու պատասխանեց.

— Յարգմէք: Սխալում ես սիրելիս: Մենք զարմանալի հասարակութիւն ենք: Մեզնում տիրում է իսկ հասարակագիտական նախանձ: Ես կատակերգութիւններ եմ գրում, գործում եմ յօդուածատրոնի — լսւ. մի քիչ անուն եմ հանել — աւելի լսւ. ինչ ես կարծում՝ իմ այդ կատակերգութիւններին միմիայն ուրիշ թատերադիրները կը նախանձեն — սխալում ես: Ինձ կը նախանձեն ինժեներները, բանկի ծառայողները, մանկավարժները, բժիշկները, երկաթուղու պաշտօնեաները, մի խօսքով այնպիսի մարդիկ, որոնք, եթէ ուրիշ գործով էլ զբաղւած չը լինէին, էլի երբէք կատակերգութիւն չէին գրիլ: Նրանք բոլորը քեզ հետ յարաբերութիւն ունենալիս այնպէս ցւցց կը տան, թէ քեզ բանի տեղ չեն դնում, իսկ յետեւից արհամարհանքով կը խօսեն քո մասին, զիտմամբ կ'աշխատեն քեզ ստորացնել, որ այդպիսով իրանք բարձր երևան: Նթէ մէկը ինձ համար շոր կարող դերձակին է կարելու պատուէր տւել, հէնց որ յարմար առիթ պատահի՝ ուսերը վեր քաշելով կ'ասի, — «Անեատինսկին, նա որակի երեւելի մարդն է, նա էլ ինձ նման՝ Պացիկէիին է շոր կարել տալիս»: Ա՛յ մեզնում ինչպէս է, այ ինչ է հետեւում քո հռչակին:

— Բայց անշուշտ մի արժէք ունի նա, որ նրա համար և նրա պատճառով մարդիկ զլուխ են ջարդում:

Անեատինսկին մի քիչ մտածեց ու լուրջ կերպով պատասխանեց.

— Մասնաւոր կեանքում փառքը այնքան արժէք ունի, որ նրան կարելի է ոտնաթոռ շինել սիրած կնոջ համար:

— Դու այդ խօսքերիդ շնորհիւ նոր հռչակ կը ստանաս:

Անեատինսկին կրակի պէս թռաւ եկաւ ինձ մօտ:

— Այո, այո: Դափնիներդ դիր ծրարի մէջ, տար սրտիդ սիրած էակի մօտ ու ասա նրան. «Այն որի պատճառով մարդիկ գլուխ են ջարդում, այն, որ բախտաւորութիւն են համարում, հարստութեան հաւասար են գնահատում, այն ես ունեմ, այն ձեռք եմ բերել» — այժմ դու

ոտքերդ գիր վրան»։ Եթէ դու այդ անես, նա քեզ կը սիրի մինչև մահդ, — հասկանում ես։ Ուզում էիր խմանալ, թէ ինչ արժէք ունի փառքը, — այ նրա արժէքը։

Մեհաօրինակին խօսքը չը շարունակեց, որովհետև այդ ժամանակ ներս մտան նրա կիներն ու Անելկան։ Նրանք ուզում էին գնալ ջերմանոցը։

Ինչ սասանա կին է այդ Մեհաօրինակն։ Եկել էր իբր թէ մարդուց թոյլութեամբ խնդրելու, իսկ երբ որ մարդը, խօսք առնելով նրանից, որ տաք կը հագնուի ջերմանոց գնալիս, թոյլ տւեց, նա դարձաւ ինձ ու զէմքի կատարեալ կառույցին արտայայտութեամբ հարցրեց.

— Իսկ դուք թոյլ կը տաք Անելկային։

Որ Անելկան մինչև ականջարմատները կարմրեց — շատ բնական է, բայց որ ես, որ աշխարհային շրջանների ամեն տեսակ յետադարձ քարերի վրայ ածելիի նման սրւել եմ, իմ հին դաշլ տեղովս սկզբի րոպէներում նոյնպէս շփոթւեցի, այդ ինձ չեմ կարող ներել։ Սակայն ցոյց չը տալով, թէ շփոթւել եմ, ես մօտեցայ Անելկային, մօտեցրի նրա ձեռքը շրթունքներին ու ասացի.

— Այստեղ՝ Պլուշովում Անելկայինն է ամեն բան կախած և ես առաջինը պատրաստ եմ հնազանդելու նրա հրամաններին։

Սիրաս ուզում էր՝ մենք էլ նրանց հետ գնայինք ջերմանոցը, բայց ինձ զսպեցի։ Ես պահանջ էի դրում խօսել Անելկայի մասին, իմ ապագայ ամուսնութեան մասին, և տեսնում էի, որ Մեհաօրինակին վերջը խօսքը բերելու հասցնելու է այդ հարցին։ Ես մինչև անդամ հեշտացրեցի նրա բանը, հարցնելով իսկոյն տիկիներին գնալուց յետոյ.

— Այդպէս էլի, անյողդողդ կերպով հաւատում ես քո կենսական դաւանանքներին։

— Այժմ աւելի քան երբ և իցէ, կամ աւելի ճիշտ ասած՝ միշտ հաւաստարապէս։ Աշխարհումս սերից աւելի մաշած խօսք չը կայ, այնպէս որ մարդու սիրտ չի տալիս այդ խօսքը կրկնել, բայց քեզ առանձին կ'ասեմ, — սէր՝ ընդհանուր առմամբ, սէր՝ մասնաւոր առմամբ, և սէր եղած ժամանակը թող ջաննամք գնա կրթիկան։ Այո, այդ եմ իմ կենսական կանոնները։ Իմ փիլիսո-

փայտութեան հիմքն այն է, որ այդ կանոնների վերաբերմամբ չը պէտք է փիլիսոփայութիւն անել, և ես ինձ այդ պատճառով սկի աւելի յիմար չեմ համարում քան այն մարդիկը, որոնք դրանց մասին էլ են փիլիսոփայութիւն անում:

Այդ կանոնները ընդունողի համար կեանքը արժէք ունի. առանց այդ կանոնների՝ սև գրուշ էլ չ'արժի:

— Խօսենք քո ասած մասնաւոր սէրի մասին, կամ աւելի լաւ է այդ բառը փոխարինենք կին բառով:

— Լաւ, փոխարինենք: Յետոյ:

— Սիրելիս, միթէ չեա տեսնում, թէ ինչ սարսափելի խախուտ յենարանի վրայ ես հիմնում անհատական երջանկութիւնը:

— Նոյնքան խախուտ, որքան կեանքն է խախուտ,— ոչ աւելի:

Բայց ես խախուտ խօսքով չէի ուզում ակնարկել այն անդունդի մասին, որ կարող է պատճառել մահը,— և ասացի Սնեատինսկուն.

— Իմ ասածս այն է, որ դու չը պէտք է ընդհանրացնես քո անձնական օրինակը: Քո բախտը բանել է՝ լաւ վիճակ ես հանել, բայց կարելի է և վատը հանել:

Բայց Սնեատինսկին լսել անդամ չէր ուզում այդպիսի առարկութիւն: Նրա ասելով՝ հարիւրից իննսունին լաւ վիճակ է ընկնում: Կանայք՝ նրա կարծիքով մեզնից լաւ, մեզնից մաքուր ու ազնիւ են:

— Մենք նրանց համեմատութեամբ կեղտոտ փալաս ենք, զոռում էր նա թափ տալով ձեռքերն ու շէկ մազերը: Այո, կեղտոտ փալաս ենք: Նս եմ քեզ այդ ասում, ես, որ դիտում եմ կեանքը ու գիտեմ դիտել՝ թէկուզ հէնց նրա համար որ թատերադիր եմ:

Այդ ասելով նա ձի հեծնելու ձևով նստեց աթոռի վրայ ու աթոռամէջքը ինձ դէմ տալով շարունակեց խօսքը առաջւայ պէս կրակաւ:

— Ինչպէս Դիւման ասում է, կան կապիկներ Nod երկրից, որոնց հախիցը գալ չի կարելի, բայց մարդուս նրա համար է աչք տւած, որ այդ տեսակ կապիկ չ'առնի. իսկ ընդհանրապէս կինը մարդուն չի խաբել, չի դաւաճանիլ, եթէ որ մարդը ինքը չը փշացնի կամ անակոխ չը տայ, չը տրորի նրա սիրտը, կամ չը վախեցնի ու հեռացնի նրան իւր ոչնչութեամբ, իւր եսականութեամբ, իւր սահ-

մանավակ հոգով, իւր անպիտան ու ողորմելի բնաւորութեամբ: Բացի դրանից՝ պէտք է սիրես նրան: Թող նա զգայ, որ ինքը ոչ միայն քո էղն է, այլ քո գլուխն է, քո աչքի լոյսն է, քո երկնային է, քո մտերիմ բարեկամն է. կոնատակիւ պահիր նրան, թող նա տաք զգայ իրան, և այն ժամանակ ապահով եղիր, տարեցտարի նա աւելի ու աւելի պինդ կը սեղմւի քեզ, այնպէս որ զուք իրար կը կպչէք Սիամի երկուորեակների պէս: Եթէ նա այդ չը տեսնի քո կողմից, եթէ փչացնես նրան, եթէ նրա սիրտը կտրես քեզանից քո անպիտանութեամբ, այն ժամանակ կը հեռանայ: Կը հեռանայ հէնց որ մի աւելի աղնիւ ձեռք մեկնւի դէպի նա, որովհետեւ նա պէտք է հեռանայ, որովհետեւ այդ ջերմութիւնը, այդ գնահատութիւնը այնպիսի անհրաժեշտ պահանջներ են նրա համար ինչպէս շնչելու օդը: Նա այնպէս էր հուպ տալիս ինձ աթոռամէջքովը, որ ես պէտք է յետ-յետ քաշուէի. այդպիսով մենք հասանք լուսամուտի մօտ: Այն ժամանակ Մեհապիտակին թռաւ աթոռի վրայից ու շարունակեց.

— Ի՛նչ անխելք մարդիկ էք: Այնպիսի հասարակական երաշտի ժամանակ, ինչպէս մեր զարումն է, երբ չը կայ ընդհանուր բախտաւորութիւն, չը կան հասարակական յենարաններ ու յոյսեր, մարդ էլ չի աշխատիլ զոնէ մասնաւոր բախտաւորութիւն, զոնէ մասնաւոր յենարան ստեղծել իւր համար: Մարդ ցրտից սառչի ֆորումում ¹⁾ ու գեռ իւր տանն էլ կրակ չը վառի: Դրանից էլ աւելի յիմարութիւն չի կարող լինել: Նա քեզ դուզ ասում եմ՝ պսակիր...

Այդ ասելով նա պատուհանի մէջով ցոյց տուց ինձ Անելկային, որ նրա կնոջ հետ վերադառնում էր ջերմանոցից:

— Ա՛յ, հէն է քո երջանկութիւնը: Ա՛յ, տես՝ խոր ոտնաճանները հագած ման է դալիս ձեան մէջ: Կրկնում եմ՝ պսակիր: Ոսկու կշռով գին դիր նրան. ինչ եմ ասում, ի՛նչ ոսկու՝ զոհարի կշռով՝ գնահատիր նրան — հասկանում ես: Դու մշտական օթեան

¹⁾ Հին Հռոմում ֆորում կոչւում էր աղն հրապարակը, որտեղ բացօդեալ դատատան էին անում և որտեղ առհասարակ կենտրոնացած էր հասարակական ու քաղաքական կեանքը: Հրապարակները նոյն նշանակութիւնն ունէին նոյնպէս և հին Յունաստանում և մասամբ մինչև այժմ թունի մեզնում, օրինակ Շուշի քաղաքում: Ծան. թարգմ.

Հ'ունես, այդ բառի ոչ միայն Ֆիզիկական, այլ և մտաւոր ու բարոյական առմամբ. դու յենարան Հ'ունես, հանգիստ Հ'ունես, նա քեզ այդ բոլորը կը տայ: Միայն թէ տես նրան էլ՝ փիլիսոփայութիւն անելով ձեռքիցդ բաց չը թողնես, չը կորցնես, ինչպէս զուր կորցրել ես ընդունակութիւններդ ու երեսուն ու հինգ տարւայ կեանքդ:

Դրանից աւելի լաւ, աւելի ազնիւ ու իմ բաղձանքներիս աւելի համապատասխան բան նա չէր կարող ասել. ես սեղմեցի նրա ձեռքը ու պատասխանեցի.

—Ձէ', նրա վերաբերմամբ փիլիսոփայութիւն չեմ անիլ, որովհետեւ նրան սիրում եմ:

Եւ մենք գրկախառնւեցինք բարեկամբար:

Այդ ժամանակ ներս մտան նրա կիներն ու Անելկան: Պանի Մետափինսկան, տեսնելով մեր գրկախառնութիւնը, ասաց.

—Մենք որ դնում էինք, դուք վիճում էիք, իսկ այժմ, ինչպէս տեսնում եմ, հաշտութեամբ էք վերջացրել: Կարելի՞ է իմանալ, թէ ինչի մասին էիք խօսում:

—Կանանց մասին, տիկին, պատասխանեցի ես:

—Է՞, ինչ հետեւանքի եկաք:

—Ինչպէս տեսնում էք՝ գրկախառնութեան, միւս հետեւանքներն էլ շուտով կ'երևան:

Երկար չէր կարելի խօսել. նրանց սահմակը արդէն եկել սպասում էր դռանը: Օրերը կարճ էին, այնպէս որ արդէն իրիկնամուտ էր և նրանք պէտք է վերադառնային քաղաք, բայց որովհետեւ հիանալի հանդարտ եղանակ էր ու ծառուղիի ձիւնը պարկէտի նման յղկած էր՝ ես ու Անելկան վճռեցինք ճանապարհ զցել նրանց մինչև ծառատանի դարպասը:

Եւ ահա ինչ պատահեց: Մնաս բարեւ անելով Մետափինսկիների հետ՝ վերադառնում էինք տուն: Արդէն մթնում էր, բայց վերջապէս ղեւ շողում էր մեր առաջին, այնպէս որ Անելկայի երեսը շատ լաւ տեսնում էի: Նա մի քիչ յուզւած էր: Ինձ թւում էր, որ նա պանի Մետափինսկայի հետ պէտք է շատ սրտաբաց խօսած լինէր. գուցէ և յոյս ունէր, թէ հէնց այդ ժամանակն եմ ասելու այն խօսքը, որին այնքան սպասում էր նա: Արդէն իմ շրթունքներս էլ աչրում էր այդ խօսքը, բայց զարմանալի բան է՝ ես, որ

կարծում էի, թէ սիրային գործերում շատ քիչ մարդ կը գտնուի ինձ նման իրան չը կորցնող, ես, որ ինձ կոնցերտներ տուող արտիստ եմ համարում, ես, որ «վարժութեան ժամերին» եթէ ոչ բաւականաչափ ճարպկութեամբ, զոնէ կատարեալ սառնասրտութեամբ անդրադարձնում էի ամենաճարտար հարւածները,—ես՝ այդ ժամանակ զիննազիստի նման յուզւած էի։ Որքան տարբերութիւն կար այժմեան և առաջւան զգացմունքների մէջ։ Վախենում էի չը կարողանամ բռներն իրար կապել—և լուռ էի մնում։

Այդպէս լուռ՝ մենք մօտենում էինք պատշգամբին։ Ես ձեռք տուցի նրան, որովհետև սահնակը լարծուն էր դարձրել ձիւնը, և երբ որ նա յենւեց կռան վրայ, ես նորից զգացի, թէ իբրև կին որքան սոստիկ փափազ է ազդում նա ինձ։ Մի քանի բոպկից յետոյ այդ զգացմունքը սկսեց սարսեցնել ինձ և կրակի կայծի պէս անցաւ բոլոր ջղերովս։

Մտանք սրահը։ Ոչ ոք չկար, մինչև անգամ ձրագ էլ դեռ չէր վառած, միայն վառարանի բաց դռնակից երևում էր կրակի շողքը։ Երկուսս էլ առաջւայ պէս լուռ էինք։ Այդպէս անխօս կերպով մտնւթ սրահում ես սկսեցի հանել Անեղկայի վրայից մուշտակը և երբ որ յանկարծ այդ մուշտակի տակից ինձ վրայ փչեց նրա տաքութիւնը, զրկեցի նրան ու սեղմելով ինձ՝ շրթունքներս կայցրեցի ճակատին։

Ես այդ համարեա անգիտակցաբար արեցի։ Անեղկան երեւի բոլորովին չմեց, որովհետև ամենևին զիմադրութիւն ցոյց չը տուց։ Սակայն համարեա իսկոյն դուրս պրծաւ զրկիցս, որովհետև միւս նախասենեակից լսեց ծառայի ոտնաձայնը, որ ձրագ էր բերում։ Նա փախաւ վերև իւր սենեակը, իսկ ես բոլորովին յուզւած մտայ սեղանատուն։

Ամեն մի քչից—շատից յանդուգն տղամարդու վիճակում են կեանքում այդպիսի բոպկներ, ինձ էլ ի հարկէ արդէն պատահել էին այդպիսի դէպքեր, բայց սովորաբար բաւական հանդիստ եմ եղել այդ դէպքերում և ինքնագիտակցութիւնս ամենևին չեմ կորցրել։ Իսկ այժմ տպաւորութիւններն ու մտքերը այնպէս էին տալն ու վրայ լինում գլխումս՝ կարծես քամին պտոյտ էր ածում նրանց։ Իմ բախտիցը սեղանատանը ոչ ոք չկար. հօրաքոյրս ու Անեղկայի մայրը փոքր դահլիճումն էին։

Սեղանատուներն անցայ, մտայ դահլիճը, բայց միտքս այնքան հեռու տեղումն էր թափանցում, որ հազիւ էի հասկանում թէ ինչ էին ասում ինձ նրանք: Անհանգստութիւն տիրեց ինձ: Ես երեւակայում էի, թէ Անեւկան այդ ժամանակ իւր սենեակումն է և ձեռներով սեղմում է քունքերը. աշխատում էի զգալ ու հասկանալ, թէ ինչ կարող էր այդ բոսիկներին տեղի ունենալ նրա սրտում ու գլխում:

Մինչ այդ Անեւկան ինքը շուտով եկաւ: Ազատ շունչ քաշեցի, որովհետեւ չը գիտեմ ինչու ինձ թւում էր, թէ այդ երեկոյ նա մեզ մօտ չի գալ: Երեսը սաստիկ վառւում էր ու աչքերը փայլում էին, ոնց որ քնից նոր վեր կացած լինէր: Երեւում էր, որ աշխատել էր պուրթով զովացնել բորբոքւած դէմքը, որովհետեւ պուրթի հետքը աւելի թանձր էր նստել նրա ձախ քունքի մօտ: Նրան որ տեսայ՝ յուզեցի: Զգացի, որ շատ եմ սիրում նրան:

Զեւազործի հետ ընկած՝ զլուսը քաշ զցած էր նստած նա. սակայն նկատեցի, որ արագ է շունչ քաշում, իսկ մէկ-երկու անգամ էլ բռնեցի նրա թուուցիկ, հարցական ու անհանգստութեամբ լի հայեացքը:

Ուստի ուզելով փարատել նրա անհանգստութիւնը, խտունեցի պառաւների խօսակցութեանը (նրանք Սեւաստիկներին մասին էին խօսում) ու ասացի.

— Սեւաստիկներն այսօր յարձակում էր ինձ վրայ, թէ ես կատարեալ Համլէտ եմ, որովհետեւ չափից աւելի եմ փլիխովացութիւն անում, բայց ես նրան կ'ապացուցանեմ, որ ես Համլէտ չեմ, և ոչ ուշ քան վաղը:

«Վաղը» բառը շեշտելով արտասանեցի և տեսայ, որ Անեւկան շատ լաւ հասկացաւ իմ միտքս, որովհետեւ երկար նայեց ինձ վրայ, բայց հօրաքոյրս ամենեւին չը հասկանալով, թէ բանն ինչումն է, հարցրեց.

— Ուրեմն վաղը տեսնւելու էք իրար հետ:

— Պէտք է տեսնել նրա նոր կատակերգութիւնը. եթէ Անեւկան համաձայնի, կարող ենք վաղը զնալ:

Սիրասուն օրիորդը բարձրացրեց գէպի ինձ իւր շփոթւած, բայց վստահութեամբ լի աչքերը և պատասխանեց աննկարագրելի քաղցրութեամբ.

—Ես ուրախութեամբ համաձայն եմ ամեն բանի:

Այդ բոլորին սիրտս ուզում էր միանգամից վերջացնել բանը. և զուցէ ես պարտական էի վերջացնել, բայց «վաղը» բառը արդէն ասւած էր, ուստի ես ինձ զսպեցի:

Ես ինձ այնպէս եմ զգում ինչպէս զգում են այն մարդիկ, որոնք մատներով պինդ բռնում են իրանց աչքերը, ականջներն ու քթածակերը, որպէս զի ընկնեն ջրի խորքը:

Բայց այն էլ եմ մտածում, որ այդ խորութեան յատակում իսկական մարդարիտ կը գտնեմ:

(Կը շարունակւի)

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

ՅՈՎ.Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Անապատի մէջ խաւար ու տխուր,
Յրաճ քարերից մի քարի վրայ
Գլխակոր նստած, մտախոհ և լուռ
Մարդկութեան մասին մտածում էր նա:

Նրա ճակատը մութն էր առաւել
Քան անապատը զիշերւայ մթնում,—
Նա պատրաստում էր սէր — լոյս ծաւալել
Մարդկային կեանքի մութն անապատում:

Այնտեղ լսում էր աղմուկը մարդկանց
Անօրէնք երկրի ամեն մի ծայրից,
Յաւում էր Նրա սիրտը վշտացած
Մոլութեան անհոգ երգերի ձայնից:

Եւ անապատում մի քարի վրայ
Միայնակ նստած արտասւտում էր նա:

ՄԻ ՊՏՈՅՑ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Զմիւռնիայի և Նորա ծովային ու ցամաքային շրջակայքի անցեալից
ու ներկայից):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ ¹)

ՔԻՈՍՏՅ ՁԵՉՄԷ, ԸԼԸՁԱ ՆԻ ԷՐԻԹՐԷ

Ձէչմէ կամ, ինչպէս ընդհանուր պատմութեան մէջ անւանում է, Ձէչմէ քաղաքը գտնւում է Քիոսի հանդէպը և կղզուց դէպի ալդ Փոքր-Ասիայի ցամաքը նախելիս՝ վերջինս է որ հեռւից մի կղզու պէս է երևում: Ձէչմէ (տաճկերէն աղբիւր) հին Cyssus-ն է, որ մի լաջնանիստ ծոցի վրայ է և իզմիրից 65 քիլոմէտր հեռու: Այստեղ էր, որ 1770 թ. ռուսներն ու անգլիացիներն ալբեյին տաճկական նաւատորմիդը:

Նս Քիոսից դէպի Ձէչմէ ճանապարհ ընկալ մի միջակ առադաստա-
նաւակով, որովհետեւ ալդ երկու օրը չնոյնաւ չը կար: Առաջին անգամն էր, որ ես ալսպիսի նաւով ճանապարհ էի գնում, թէև մինչև ցամաքը երեք ժամից ավելի չէ քաշում: Ծովն հանդարտ էր, բայց հէնց որ նաւն սկսեց մի քիչ տատանել, սկսեցին նախ և առաջ խեղճ տաճկուհիներն անհան-
գիստ լինել և ապա փախել: Նս կարծում էի, որ չոյն կանաչք, ձկների ալս սերունդը՝ պէտք է զիմանան, բայց նրանցից էլ մի երկուսը մասնակցե-
ցին: Այր մարդիկ և միւս կանաչք, որոնց ծովային տկարութիւնը չի գիպ-
չում, ինձպէս զարմացմամբ նայում էին, թէև ոչ աջնքան անտարբերու-

¹) Տես «Մուրճ» № 1, 2:

Թեամբ, որովհետև այդ սրտակտուր ակս ու վախը մարդու թէ տխրացնում է և թէ շատերի «տիրուը» խառնում: Յաւալի է այդ ժամերին մանաւանդ խեղճ տաճկուհիների զրուկիւնը, որոնք «ճամլհրամի» պատճառով թէ մաքուր օդ ծծելու ազատութիւնն չունեն և թէ այս ու այն կողմ շարժելու: Բարեբաղդաբար ցամաքը հեռու չէր: Մենք անմիջապէս ծովեզր ելանք: Այս շտապեցի ապտեղ բնակող երեք հալերից մինը տեսնել, որ ինձ օդնէր անմիջապէս դէպի Ղլըջալի նշանաւոր տաք ջրերն երթալու:

Ղլերադարձիս ամէլի ժամանակ ունեցալ՝ այս բաւականին գեղեցիկ քաղաքի հետ ծանօթանալու: Ունի հիմա բաւականին լաւ տներ, որոնք ծովափից հեռոջնուէ լեռն են բարձրանում և իրանց ամբողջութեամբ գեղեցիկ տալաւորութիւն են գործում: Այս քաղաքն էլ իւր չըջակալքով հարուստ է ալլետտաններով, որոնք նորա գլխաւոր հարստութիւնն են կալմամբ: Այժմ համարեա 500 տուն ունի, որոնց միծամանութիւնը չուն, ապա տաճիկ և հրէալ են: Ապտեղ էլ հրէաները նախադասում են մանրալիճառութեամբ պարապել, հարուստ վաճառականներ մի երկուսն ունին, իսկ ալլեգործ և ոչ մինը: Երեկոեան ժամը 8-ին արդէն շուկաներում մարդ չէր երևում, բացի սրճարաններից, ուր մի երկու օտարական կամ նաւատիրներ էին երևում: Բոլորը քաշուկ էին իրանց ընտանիքների գիրկը, ուր ընթերցուց քնոտ լակոն անկողին են մտնելու: Մի պարզ կեանք:

Այս Ղլըջալի ջրմուղներն էլ գնում, որովհետև նրանք Երիթրէի ճանապարհին են գտնւում և վերջապէս հետաքրքրական էր տեսնել իղմիր-ցիւնների և առհասարակ չըջակալ լոյսերի «Աբասթումանը»: Մէկի հրապուրը կազմում են անտառապատ հովասուն լեռները, միաինը հիւսնալի ծովը, որի կանաչ ու կապուտ վճիտ ջրի նմանը ես տեսած չէի: Ղլըջալի ծովը շարունակ զով օդ է բերում և ալպիսով կրկնակի նպաստում հիւսնոյն-ըին: Ջուրն իւր բաղադրութեամբ, ինչպէս երևում է, նման է Աբասթումանի ջրին. ակունքներում հասնում է մինչև 50° Յելս, և լետոյ խմրում ամբողջ կողմներից մի գերմանացի ինձ ասաց որ այդ տաքութեան մէջ վխտում են բիւրաւոր մանրիկ ձկներ և բաւականին մեծեր մինչև 10 մատ-նաչափ: Այս չը հաւատացի, բայց նա ամէլացրեց, որ ինքն էլ գրազ էր եկել և մի բաժակ գարեջուր տարւել, կրք ակնհասեա էր եղել: Մոլափում չինւած են մի շարք կանոնաւոր տներ, որոնք այս ժամանակներում հիւրանոցի և լողարանների գեր են կատարում: Օրական $3\frac{1}{2}$ բուլլու չափ են վճարում, որ ալլետեղ ապաքինւող հարուստների համար այնքան կծու չէ: Միւսները հասարակ տներ են վեր գալիս:

Հետեւալ օրն ես մի գերմանագէտ չոն ծանօթ բժշկի օգնութեամբ (չունարէնս բաւ չէր), մի առաջատուար մակոյկ վարձեցի և ծովով ճանապարհորդութիւնը նախադասեցի, որովհետև ցամաքալինն ամէլի հեռու և փոշոտ էր: Իմ երկու նաւավարներն իրանց չունարէնից զատ ոչինչ չէին հասկանում, ուստի և որքան էլ ցանկանայի, չատ բան չէի կարող խօսել:

նրանց հետ: Այդ շարաթին էլ պատ ունէին, ուստի և հացկերութիւն էլ չը մասնակցեցին: Աս հարկադրած էի լուիկ մնջիկ գիտել այս ճարպիկ մարդիկն ու գեղեցիկ ծովը իւր չըջակալքով:

Ով առաջատուտը մակուկով ճանապարհ չէ գնացել, նա կարծում է թէ առաջատուտները միայն աճն ժամանակ են բանեցնում, երբ նախատուտը քամի է փչում: Ընդհակառակը՝ այս ճարպիկ մարդիկ աչնալէս են թիափարում և առաջատուտները դարձնում, որ միւսնոցն միջոցին թէ չառաջ և թէ չետ գնալ են կարողանում: Հէնց որ հովի ուղղութիւնը փոխւում էր և մակուկը չեղում, խոլոցն աջ կամ ձախ կողմից էին թիափարում, դեկը չարմարեցնում, առաջատուտն ալս ու աչն կողմ շարժում, իջեցնում և աչն: Միայն երբ բոլորովին հակառակ քամի է փչում, աչն ժամանակ իջեցնում են առաջատուտները: Առհասարակ մեքենապարանութեան մէջ չալոնի «ղողահեռական ուժերով» օրէնքն է, որ ի հուռց անտի գործադրւում է: Ծոփն հետզհետէ ալիւթւում էր: Ալիւթներն սկսեցին մակուկը սատուիկ տատանել և վերջապէս համարեա ամբողջովին վեր թռչնել: Նա բարձրանում և չորձ վալը էր ընկնում և միւսնոցն ժամանակ աչնքան ծռւում, որ մի կողմից ջուրը մեղ օրինաւոր սրակում էր: Բալց զարմանալի է, որ ես ամենին անհանգիստ չեղալ և առանց ալ և ալուրթեան ճաշակում էի պաշարիս մնացորդը, մինչդեռ սրանից ելեք տարի առաջ՝ Սև ծովի վրալ՝ մեծ շողեհաւի մէջ, որի տատանումն աչնքան աչքի չէր ընկնում, համարեա բոլոր ուղեորներս 36 ժամ անկողնի մէջ քաղցած անցկացրինք: Այստեղ, ի հարկէ, տատանման եղանակն է որ տարբեր ազդեցութիւն է գտնում մարդուս գլխի և ալ գործարանների վրալ:

Նրկու և կէս ժամ չետոլ տեղ հասանք: Հիմա ծովափում հին աւերակների վերալ գտնւում է մի գուտ լունական գիւղ, որ Էրէտրի կամ Լիթրի է անւանւում: Տները բաւականին կանոնաւոր են և ամենեւին նման չեն Հալաստանի գետնափոր բնակարաններին: Օրհնեալ որթատունկն ալստեղ էլ կեանք է տալիս աշխատասէր ժողովրդին: Փողոցից անցնելիս տեսալ շատ կանաչք ազբիւրի մօտ լացք անելիս և նոցն իսկ աշխատութեան ժամանակ բերանները չղարշի վարի ծալրերով կապած, որպէս զի այդ մարդիկ չը տեսնեն: Ճիշտ աճն նահապետական ամօթխած երևութն, ինչ որ ուղեորը տեսնում է մեր հայրենիքի գիւղերում: Այս Էրիթրէն ծովափում աչնալիսի դիրք ունի, որ թէ անցեալում և թէ ներկայում կատարեալ կղզիացած կեանք է վարում բարձրաբերձ լեռներով մալր ցամաքից անջատւած, Ուրեմն պէտք է մտածել, որ լոյները մահմեդական կեանքի ազդեցութիւնից անկախ շարունակում են ալսալիսի սովորութիւնները:

Հին կլազմէնէ (Clasomenae) քաղաքի թերակղզու վերալ էր հիւսնած Էրէթրէ քաղաքը, որի աւերակներն ալժմ երևում են հովիտներում և բլուրների վրալ:

Վերևից Սմիթի անգլիերէն աշխարհագրական բառարանից ¹⁾ հարկ եմ համարում հետեւեալ պատմական և աշխարհագրական տեղեկութիւնները քաղածօրէն մէջ բերել:

«Հերոդոտոս գրում է, որ այս քաղաքը հիմնել է Կնոպոս: Նախելով Պաւղանիոսի պատմած աւանդութեանը՝ այս քաղաքը հիմնել են այն գաղթականները, որ եկել են ալստեղ Ռոդոմոնտէսի ուղի էրիթրէի առաջնորդութեամբ: Սրանք եղել են նաև լիկիացիք, կարիացիք և պամփիլիացիք: Ստրաբոնը նույնպէս վիշատակում է այս մասին, թէ Կոզրոսի ապօրինի զաւակ Կնոպոսն է հիմնել այդ քաղաքը: Կազոբանն աւելի հաւանական է համարում, որ Կնոպոս կոտորածով է զրաւել քաղաքը: Աթէնէս պատմում է, թէ Օրթիգէսն էլ եկել Կնոպոսին է սպանել ու նաճել: Յետոյ ինքն էլ նույն վիճակն ունեցել»:

Սմիթի բառարանն աւելացնում է որ այս քաղաքի հիմնարկութեան պատմութիւնն իսկապէս այնքան անծանօթ է, որքան Փոքր-Ասիայի միւս հին քաղաքներինը: «Ստրաբոն այս քաղաքը դաղթականութիւն է համարում Բէօթիայի (Խտալիայի) նոյն-անուն քաղաքից: Նա Հիպօկրիմոս դետը սահման է որոշում Կլազոմէնի և էրիթրէի մէջ և վիշում, որ առջևը մի փոքր Լիպի կղզի կա՝ Բիոսի հանդէպ»: Մենք այս ծոցում շատ մանր ու խոշոր կղզիներ տեսանք, բայց այդ վիշեալն ամենամեծն է և ներքեից անտեսանելի: Աղէքսանդր Մակեդոնացին ուղեցել է այս թերակղզին կղզու վերածել, որով այս մեծ աշխարհակալն իւր քաղաքակրթիչ ազդեցութիւնն ալստեղ էլ պէտք է զգալի անէ՛ր: Զմիւտնիայի ծոցը մի երկու ժամաց նեղուցով Էգէէան ծովի հետ միացնելով: Այս քաղաքի արտադրութիւններն են եղել լաւ ցորեն և գինի և Հերոդոտոս ասում է, որ քաղաքացիք չորս բառբառներ են ունեցել, մեծ մասամբ նման Բիոսեան բառբառին: Նոյն պատմարանն ասում է, որ այս երկու հարեանները միշտ բարեկամ չեն մնացել, այլ ունեցել են պատերազմ: Պատմում է, որ էրիթրէցիք Խոնիայի միութեանը ուղարկել էին միայն 8 նաւեր, մինչդեռ քրոսցիք՝ 100, Միլէտի առաջ տեղի ունեցած պատերազմում: Խնչպէս երևում է, վետոյ կախում են ունեցել Աթէնքից (հաւանականաբար Պէլոպոնէսեան պատերազմի ժամանակ), որովհետև պատմութիւն կալ էրիթրէցի ապստամբութեան առաջինի դէմ:

Այս քաղաքում եղել է մի երեւելի գիտնական կին Սերիլ անունով և Աղէքսանդրի ժամանակ մի ուրիշը՝ Աթէնաս: Նոյնպէս Ստրաբոնի ժամանակակից Հերակլիդ բժշկի ծննդավայրն այս էր:

«Երիթրէն թէև մեծ հռչակ չէ ունեցել, չարունակում է բառարանը, սակայն երկարատև կեանք է ունեցել, որովհետև կան շատ հին ստակներ»:

Մենք այստեղ տեսանք մեծ քանակութեամբ դրամներ հեղինական և

¹⁾ William Smith, Dictionary of greek and romain geography.

հռովմէական ժամանակներից և մինը գնեցինք, որ իւր հաստ և անկիւնաւոր ձեռով շատ հին է երեւում: «Հին ստակների վրա Ալէոս գետի անունը Ագուոս է նշանակւած»:

Ստրաբոն պատմում է, որ «Էրիթրեցիք պաշտում էին Հերքիւլէսին Խլսկոնէեան տաճարում, որ իւր անունը տոացել էր ի պս միջատից: Նրանք պաշտում էին Հէրքուէսին, որովհետեւ որթատունկին վտաղաւոր միջատը ¹⁾ չը կար այս քաղաքում: Նոյնպէս կար Աթէնասի տաճար»: Մեր աշնտեղ եղած ժամանակ մշակները բաց էին անում տաճարի մի ընդարձակ հիմքը, և այս ու աջ կողմ ընկած էին նաև մարմարեալ բեկորներ, որոնք այլ ևս էին կրում որ և է ոճի չատկանիչները:

«Ալէոս գետը քաղաքի արևմտեան կողմից է վազում, նորա եզրերն էր մի նեղ դաշտավայր են ներկայացնում. այստեղ որոշ երևում են հելլենական պարիսպները և հիւսիսում վերջանում տրախտի ապառաժներով՝ բացի մի մասից, որ կապույտ մարմարիոնից է (Համիլտոն): Այստեղ տեսնւում են զանազան ոճերի տապանաքարեր, որմեր, դարատափներ (terrasse), կամարներ: Մի դարատափի պարսպի մէջ կալ 38 ոտք երկաշնութեամբ ցիկլոպեան ոճի մնացորդ: Գետի մէջ գտել են երեք սիւներ իոնական ոճով: Համիլտոն կարծում է, թէ սրանք Հէրքիւլէսի տաճարիցն են: Միջնաբերդը դաշտում առանձին բարձրանում է ծովից 200 եարդա հեռււ-տրուքեան վրա: Նոյնպէս գտնւել է մի մեծ թատրոն հիւսիսային կողմում: Համիլտոն տեսել է արձանադրութիւններ մի կամարի վրա»:

Մենք չը կարողացանք այս բոլոր փշածները մի առ մի տեսնելու, որովհետեւ թէ ժամանակը կարճ էր և թէ դուրի էինք լաւ ուղեցուցից: Այնուամենայնիւ մի երկու ժամ շրջելուց եկանք այն եզրակացութեանը, որ սա մի մեծ քաղաք է եղել և ունեցել է հասարակական զեղեցիկներ հիմնարկութիւնների, որոնց մարմարոնեալ բեկորները տեղ տեղ աչքի են ընկնում ²⁾: Այս աւերակը դեռ շատ բացւած չէ, մինք համեմատաբար քիչ մնացորդներ տեսանք և մի երկու խոշակների զեղեցիկ կտորներ հետեւրո առանք: Աւելի աչքի են ընկնում կաւեալ սպասեղէնների անհամար բեկորները ամենապարզից մինչև ամենանուրբը և գեղարւեստականը, այնքան շատ որ մեծ մեծ տարածութիւններ ուղղակի նրանցով ծածկւած էին, կարծես կաւեղէն ամանների զործարաններ եղած լինէին դրանք և երկրաչափից չանկարծ բոլորը փշրւած: Միևնոյնը տեսնում ենք նաև Նիկեսոսի աւերակների վրա և մասամբ՝ Անիում: Կան բեկորներ, որոնք այս երեք

¹⁾ Արջօք ֆելոքսերային ցեղակից էին:

²⁾ Ի միջի այլոց տեսայ մե հոր, որի տրամադիծը մատուցուողէս 12—15 ոտնաչափ էր, մէջ տեղում բարձրանում էր մի սիւն 4—5 ոտնաչափ: Իս հաւաքած տեղեկութիւններ մէջ այս մասին յիշատակութիւն չկայ և. հս չիմացայ, թէ այս ինչ բան էր:

աւերակներում միմեանց բոլորովին նման են: Անիկոյ բերածներ ունէի մօտոս, համեմատեցի: Գիւղում զեղջուկները առաջ բերին ստակներ, անօթներ և ալ հնութիւններ և կարծելով որ մասնադէտ հնախոյզ եմ, մինչեւ անդամ գներ չը նշանակեցին, ալ շարունակ հարցնում էին, թէ ինչ արժէ: Եւ մերժեցի նրանց առաջարկները, տեսնելով որ մեծ սպասելիքներ ունեն, բայց գիւղի վարժապետը վրաջ հասաւ: Նա մի երկու խօսք ֆրանսիական գիտէր, եւ էլ մի քիչ լոճարէն, որով գործի էութիւնն հասկացրի և չափուեց նորա միջնորդութեամբ գնել մի ամբողջ փոքրիկ փառչ 8 մասնաչափ բարձրութեամբ, որ հաւանականաբար ճնշեցեալի հետ ըստ ճախնի սովորութեան թաղած պէտք է եղած լինէր: Սրանից զատ մի կաւեալ բաւականին հաշակաւոր արձան նոյն մեծութեամբ, որ իւր ամբողջ դիրքով աւելի քրիստոնէական ժամանակների արտադրութեան տպագրութիւն է գործում: Ստակներից եւ նախընտրեցի մի երկուսը հելլենական ժամանակներից գնել, որոնց մին, ինչպէս վերն ալ առիւ վիշելի, շատ հին է: Գիւղի ճանապարհի վրաջ գտանք մի մեծ մարմարոնեալ քար, որի վրայ մի ընտանիքի անդամների անուններն էին, որ մի վիշտակութիւն էր նրանց բարերարութեան: Մի ալ տեղ գտաւ մի քար, որի արձանագրութիւնն անվերձանելի եղաւ, որովհետեւ մի կոտորն էր, և թեթեւութեան պատճառով հետո առի: Այս բոլորից զատ եւ հաւաքեցի բաւականին կաւեալ զանազանադոյն բեկորներ, որ երեւակալութեամբ համադրելով և ամբողջացնելով՝ եւ եկալ աչն եղբակարութեանը, որ ալս արհեստը շատ բարձր էր եղել: Ուշադրութեան արժանի է նաեւ ձկների առատութիւնը:

Միջնաբերդից ալս քաղաքը հիանալի տեսարան է ունեցել: Նրկու կողմերը խոր դաշտավայրը, որի միջից հոսում է զետակը իւր ճովս ալ՝ զեստաններով և մշտադալար ծառերով: Պատկերի ետեւի կողմից հետզհետէ բլուրներն են բարձրանում և տեղի տալիս լեռնաշղթաներին, որոնց վրաջ իշխում է պատկառելի Կարաբուրունը: Այս դաշտերն են, որ ցոյց են տալիս իրանց արտերի և ալլեստանների հարստութիւնները ի հնուց հետէ: Միջնաբերդի առջևում տարածւած է հմալիչ ծովը, որ բաւականին խորն է ընկնում և ալսպիսով աւելի ամբողջացնում ալս գեղեցիկ տեսարանները:

Նրկուցեան կողմ մենք Ըլըջա հասանք: Այստեղ տեսաւ մի գերմանացի երիտասարդ հնախոյզ, որ Լալցիզի համալսարանից է ուղարկւել ալս կողմերը և արդէն մի քանի տարի է Փոքր-Ասիայումն է: Նա ամուսնացել է Աթէնքում մի լոյն օրիորդի հետ և ալսպիսով սովորել է նաեւ նոր լոճարէնով վարժ խօսել և միջոց ունեցել ալս ժողովրդի կեանքը ի մօտոյ ուսումնասիրել: Նրկուս էլ ուրախացանք, իբրեւ զաւակներ մի alma mater-ի, որ իւր մալրական գործադրութ սէրն անխտիր տարածում է ալս խարհիս բոլոր կողմերից հաւաքւած հազարաւոր ուսումնաւարաւ երիտասարդների վրաջ և բոլորին չալեցնում:

Նախ խօսք բացւեց Էրիթրէլի և այլ աւերակների մասին: Նորա խօսածներից ուշադրութեան արժանի է այն, որ այս Փոքր-Ասիայում զեռահազարկ քանակութեամբ հին անծանօթ քաղաքներ կան, որոնց 4—5 միայն իրան է լաջողել բանալու: Յետոյ նա մի քանի համեմատական նկատողութիւններ արաւ հայերի և լոյների մասին: Ասում էր, որ Փոքր-Ասիայում իրան սլաւոնացի հայերը հիմնաւոր զաղափար ունին իրանց անցեալի մասին, իսկ ընդհակառակը լոյները շատ լիտ են մնացել այս տեսակետից: Խօսքն ի հարկէ աւելի համալսարանական կամ ուսեալ անձնաւորութիւնների վրայ էր, որ կարող էր մասամբ ճիշտ լինել, բայց ընդհանրապէս՝ ոչ: Նա աւելացրեց, որ Աթէնքում կա Ակադեմիա, բայց առանց ակադէմիկոսների, ուսանողների, որոնք քաղցածութիւնից կոշիկ են սրբում: Ասածների մէջ շատ ճշմարտութիւններ կային, այս ժողովուրդը տվրտութեան խորքնից սթափելով՝ մի կէս դարաւ մէջ (համալսարանը 1835 թ. հիմնեց) չէր կարող իւր համալսարանն եւրոպականի դիրքին հասցնել: Աշուտամեծաշիւ Գերմանիայում գտնէ աչքի էր ընկնում, որ լոյն ուսանողները արեւելեան բոլոր երկրներից եկածներից ամենամակողմանին էին, համարեա քիչ բացառութեամբ լիզարաւնութիւն են ստելրում, գլխաւորապէս լուսարկներ, կարծես 19-րդ դարու վերջերում այս աշխարհում ուրիշ գլտութիւններ ալ ես գոյութիւն չ'ունենալին: Գալով հալ և լոյն ուսանողի մտաւոր և բարոյական ոյժերի համեմատութեանը, կարծեմ սեպարծութիւն չի լինիլ եթէ ասենք, թէ մեր ազգալիւններն աւելի բարձր են: Յոյն ուսանողը կարծես իւր փառաւոր անցեալով միւլթարելով՝ աւելի վերելից է նալում արդի քաղաքակրթութեան արդիւնքներ լրալ, մինչդեռ հալը իւր աւելի համեատ անցեալով զգում է լիովին իւր ժողովրդի սլեքերը: Մենք, իբրեւ ուղտոր, գոլելով ժամանակալից լոյների հալքնատիրական բարձր արժանաւորութիւնները՝ սլեք է զանց չ'առնենք նաեւ նրանց սլակատութիւնները մէջ բերել: Կնչալս որ նախնի հեղիններն և ապա հոլմեայցիները ժառանգարար իրանց աշխարհիւ մլեակ քաղաքակրթ ազգն էին համարում և մլեաներին՝ բարբարոս, մթթէ մլենալն ուլին չէ իշխում տակաւին, երբ այս դարու մէջ կարծես՝ գոնէ ժողովրդի աւմկի դասի գլտակցութեան մէջ՝ օրինակ՝ հալ եկեղեցին քրլտոնեալան չի համարում: Կս ուրախ կը լինէի, եթէ իմ կազմած համազմունքը զուրկ լինէր հատատուն հլմքերից, սակալն և ալնալս՝ շատ բան լում և տեսում ենք, որոնք ալ ես տեղի չը սլեք է ունենար այս ժամանակներում:

Երրորդ օրն ես կրկին ձի վարձեցի և Չէչմէ վերադարձալ, ուր գիշերը զեալի Սամա դնացող չոլենաւի մէջ կրկին սլեք է մլանալ իմ լըմլրցի ուղեկցի հեա: Այս քաղաքում մի հատիկ հալ երկաթագործի բնտանիք կար, որի հեա լանձնարարութեամբ ծանօթացալ և մի գիշեր վալեկցի հալի նահապետական սրտարուղի հլւրասիրութիւնը:

Գիշերապառ ժամը մէկին ծոցը համարող շողեմաւը ուռեց և ետ իմ տանուսիրտը հետ նաւամատուց շտապելով Գիշերը մութ և ցուրտ էր, իսկ առաւօտը գեղեցիկ իւր նորանոր երեւոթներով, ես՝ զրաւած գեղեցիկ Սամսաի տեսարաններով՝ մոռացել էի որ արդէն անցնում ենք լաւնութեան 38° և դէպի 37° գնում, մի կէտ ուր երբէք չէի եղել։ Սամսան իւր անտառապատ հիանալի լեռներով ու ալպեամաններով ինձ իսկույն վիշեցրեց Ղրիմեան թերակղզու արեւնքը։ Ամեն կողմ երևում էին փոքր ու մեծ գիւղեր ու մասամբ քաղաքներ, թողւոյ կանաչադարձ ճուրջմանքներով։

Մտաւարապէս 6 ժամ քնող աթմեան վատի մալաքադաքի լաւնածաւալ ծոցը հասանք, որտեղից մինք արդէն սրտ աւանում էինք իշխանական ապարանը, եկեղեցիները և բլրի վրա հեղհեղէ բարձրացող տները։

Բայց արդ կղզու ներկա վիճակին անցնելուց առաջ՝ մէջ բերենք Բուլէի վերալիշեալ հանրապետաբանից միայն հետեւեալ պատմական տեղեկութիւնները։

«Սամսան աւելի անւանի էր հին ժամանակներում քան մեր օրերում։ Իւր մալաքադաքը նոյնպէս Սամս էր կոչւում, նորա անրակները տեսնւում են Քորալի չրջակայքում։ Նա Պրիթուդորասի, Պրոդիկուսի, Նկարիչ Տիմանթէի, բանաստեղծ Ապիլի և պատմաբան Գիւրիսի և ալին հայրենիքն էր։ Իւնոնն ալտեղ մի հռչակաւոր տաճար ունէր, ուր առանձին պաշտամունք էր կատարւում նորա համար։ Պէլագրիներից քնող Սամոս են դադրեւ կարիացիք և քնող ատտիկեցիք ու ապա մաոնակից են եղել սամոսացիք Իոնիան միութեանը, որի գլխաւոր պետութիւններից մէկն էր Թագաւորութիւնից քնող հառարակապետութեամբ կառավարւեց, մի քանի անգամ բռնակալներ ունեցաւ, մանաւանդ հռչակաւոր էր Պոլիբատէս (Քր. IV առաջ) և վերջապէս ընկաւ պարսկական իշխանութեան տակ։ Նա մասնակցեց Իոնիայի ապստամբութեանը և ազատ հրատարակեց 449 թ. Խիալումէ հաշտութեան համաձայն։ Պերիկլէսը նրան արթնացոյ հպատակեցրեց 441 թ.։ Պէլոպոնէսեան պատերազմի ժամանակ նա հաւատարիմ մնաց արթնացոյ, նաճեց Ղիզանդրի ձեռքով 403 և պարսիկներին լաւձնեց 337 թ.ին, բայց նա դարձեալ արթնացոյ արեց Տիմոթէոսի միջոցով։ Ապա նա Պերդամալի թագաւորութեան մի մասը դարձաւ և սորա հետ Հուովի ձեռքն ընկաւ 129 թ.։ Օգոստոսից մինչև Վէոպոտիան նա կրկին անկախ գիրք ունեցաւ։ Վերջինս նրան միացրեց կղզիների հետ։ Նա քնող պատկանեց արաբացիներին, վիստիկցիներին, գէնուացիներին և վերջապէս 1550 թ. թրքական իշխանութեան տակ ընկաւ։ 1821 և 1824 թ. սամոսացիք մասնակցելին անկախութեան պատերազմին, բայց ցումաքին շատ մօտ լինելով՝ չը կարողացան լիովին հասնել իրանց նպատակին։ Երեսուցի մի կիսաազատութիւն տալու կղզին, նա ունի տաճանադրութիւն, սենատ, երեսփոխանական ժողով, մի անխառն վարչութիւն, նորա

կռակալը (gouverneur) ¹⁾ նշանակում է Բ. Գրան ձեռքով, բայց լուսների միջից է ընտրւում:

Սամուր Փոքր-Ասիայից բաժանւում է մի շատ նեղ նեղուցով, ուր կէս ժամաչ ճանապարհ է: Կղզին զտնւում է Միկալէ լեւան հանդէպը, որ հռչակատւր Եփեսոսի անդամներից դէպի հարաւ 4—5 ժամաչ ձիւ ճանապարհ է: Այս կղզին ափքան փոքր է, որ 24 ժամում հանդատութեամբ ծալէ ի ծալը կարելի էր չըջան առնել և մի բարձր լեռ ելնելով՝ ծովն ամեն կողմից տեսնել: Նորա լեռնաշղթաների վրայ գլուխ է բարձրացնում Կէրկին, որ 1480 մետր բարձրութիւն ունի: Լեռներն ունին արծաթ ու ոսկի և գեղեցիկ մարմարիօն: Եւ զարմացալ մարմարիօնի առատութեան վերաջ ալս կղզում, ուր ահագին ապառաժներ կան և ափքան առատ, որ գիւղերն ու փոքրիկ քաղաքները միացնող ուղիների վրայ խիճաքարի փոխարէն մարմարիօն է տիւած և տեղ տեղ եղբւրքները մարմարիօնով սալած: Բայց ի հարկէ գործնական տեսակէտից ալս հարստութիւնն առաւելութիւն չէ ճանապարհների համար: Հողը արդաւանդէ և արոտարում է, փայտից և դանազան պտուղներից զատ, մասնաւորապէս ձիթեպտուղ, նուռ, նուշ և մանաւանդ շատ ընտիր «մուսկատ» անւանած խաղող, որ երկրի գլխաւոր հարստութիւնն է: Բնակիչների թիւն է մօտաւորապէս 46,364, որ մենք քաղեցինք իշխանական դրամենակի 1891. պաշտօնական վիճակագրութիւնից: (1875 թւականին Բուլիէն 50,000 էր նշանակել): Ամբողջ կղզին լրացնւում է չորս գլխաւոր ընտրողական շրջանների, որոնց իւրաքանչիւրի կենտրոնում՝ փոքրիկ քաղաքներում՝ կատարւում են երեսփոխանների ընտրութիւնը, որոնց միջից լատոյ ընտրւում են սենատորները:

Այժման իշխանն է լատինի Վարա-Փողոր փաշան, որի մասին երբեմն լսում էինք, թէ ժողովուրդը սիրում է, էրբեմն էլ՝ ոչ, Նա ամուրի է: Մի շատ համեստ կեանք է վարում: Խոր ապարանը համարեալ քիչ բանով է տարբերւում ալս մայրաքաղաքի տներից: Հասարակ զգեստ է հագնւում և միշտ ոտքով է չըջում, որովհետեւ երեւի ինքն էլ ուզում է հպատակել սահմանադրութեան կարգադրութեանը՝ քաղաքի մէջ ձի չը հծնելու և կառք չը նստելու: Եւ թէն շատ ցանկացալ ալս մարդու երեսը տեսնել, բայց չը չաջողուց: Շոգենաւն արդէն սուլում էր. մենք անում էինք մեր վերջին ապեւութիւնը իշխանական գեղեցիկ պարտէզին. ասացին՝ որ Նա պատուհանում երևացել էր. ես ալս կողմն շտապելի, մի քանի անգամ անց ու դարձ արի, բայց ոչինչ չը տեսայ: Նրեակալեցէք, թէ ես որքան ցաւած պէտք է լինէի, երբ վտոյ ինձ ասացին, թէ իղուր չ'ալցելեցի: Նա, ասեցին, մի շատ համեստ մարդ է, սիրով կ'ընդունէր մանաւանդ մի օտար

1) Հիմա առհասարակ իշխանն է կոչւում:

ուղևորի և լաւ էլ գերմաներէն կը խօսէր: Բայց ինչո՞ւ ցաւեցի, անշուշտ զրկւելով մի գէպից, որ կարող էր իմ «խառատիբութեան» ծառայել: Մեղպէս հառարակ մահկանացուները, որքան էլ փիլիսոփայօրէն դատեն, աչնու ամենաչնիւ տեղն եկած ժամանակ կարող են պարծենալ, որ «աչտտեղ իշխանի հետ տեսնուելն»... Թէն վեհապետներ լաւականին տեսել եմ, բայց խօսելու դէպք և ոչ մէկի հետ չեմ ունեցել:

Բայց ես իշխանով գրաւելով՝ շեղւեցի նկարագրութեան ժամանակագրական ընթացքից, մինչդեռ ընթերցողը պէտք է տեսնէր, որ երբ մենք կղզի ելանք, սամոսացիք ընկերիս և ինձ լորդ համարեցին, ուրեմն մենք կարող էինք գլուխ բարձրացնել, ինչպէս կատակով խորհուրդ տւեց իմ սրամիտ ուղեկից բարեկամը: Այս սխալմունքի մէջ ընկան չոյն մաքսաւորներն աչն պատճառով, որ ես Նքրիթից ժողոված հնութիւններով լի մի պարկ ունէի: Միևնույն ժամանակ երևում էր, որ այս կղզին շատ քիչ անգլիացիք են եկել, որովհետեւ ոչ ընկերս և ոչ ես անգլիական լորդի նմանութիւն ունէինք... Բայց ի հարկ է նշանք շատ հիասթափեցին, երբ մեր անցաթուղթերը տեսան, սակայն ես՝ իբրև ռուսահայտաւ և իրանց կարծեցեալ դաւանակից՝ աչնու ամենաչնիւ առանձին ուշադրութեան էի արժանանում...

Մալաքաղաքը մաքուր և գեղեցիկ է, թէն բոլոր փողոցները լաչն ու կանոնաւոր չեն: Աշխանական ապարանից դատ ուշադրութեան արժանի էր գլխաղիօնը և մի նորակառուց շինութիւն, որ արտաքուստ եկեղեցու է նմանում, իսկ ներքուստ գինեւորն է: Մենք երբ մօտեցանք նրան, փոխանակ խաչ ու աւետարանի՝ հարկւրաւոր ահազին տակառներ շարած տեսանք նոյն իսկ զանգակատան տակ: Մեր դարմացմանն աչն պատասխանը տվին, որ Բենեդիկտեան միաբանութեան սուրբ հայրերի գինեւորն է աչս, իսկ ետեւ գտնւում է մի մատուռ: Աչտեղ ժողովուրդը բերում է լեռներից չիրան, խաղողի մզելուց փտոյ անմիջապէս, և հազարաւոր տիկ գինի վաճառում: Միաբանութիւնը տակառներն է լցնում թարմ գինին և Դրանսիա ուղարկում, ուր նահապետական եղանակով պատրաստւած աչս հոտաւէտ ու քաղցր գինուց ամենաընտիր տեսակներն են չինում, որոնց մինը կարծեօք աչս տատճառով, Բէնէգիկտին է անւանւում ¹⁾:

Թէն կղզու նոյն գործով պարապող տեղացիք փորձեր են արել աչս միաբանութեան արտահանութիւնն արդիւլեւ, սակայն չէ չաջողւել, որովհետեւ ժողովուրդը նրան պաշտպանել է աւելի լաւ գինի տալու պատճառով: Ամբողջ կղզու վրայ մի կանոնաւոր գործարան չը կա, ամենքը գինին մզում են նահապետական եղանակով, մինչդեռ եթէ մասնագէտներ ունե-

¹⁾ Որի միլիտեւոր արժողութիւն ունեցող մեծ պահեստը Գրանտիայում անցեալ ամիսները հրդեհի ճարակ դառաւ:

Նապին, պէտք է կարողանալին անմիջապէս իրանց շահը բազմապատկել:

Այս կղզին ցարդ բոլորովին ազատ է մնացել Ֆիլիքսէրալից՝ չնորհիւ մաքսաւին Նոյն իսկ ստորակարգ պաշտօնեաների պարտաճանաչութեան, որոնք ամենալն խտուրթեամբ ծովն են ձգում Նոյն իսկ ամենաչնչին բուսական իր, որ կղզին են բերում: Խմպաշուտակում ստանա ծաղկի տերմ պարունակող մի պատուտակ, որ հետո առել էի Քիտսից իբրեւ ինձ համար մի նոր բան. հէնց որ մաքսաւորը տեսաւ, անմիջապէս ծովը նետեց: Այս երկրորդ անգամն էր, որ տեսնում էի մի արթնացող ժողովրդի պաշտօնեաներ, որոնք աւելի հաւատարիմ են իրանց հպարտութիւնը քան Նոյն իսկ եւրոպացի համարող պետութիւնները և զիջեցի այն առաջին սրտաշարժ դէպքն, երբ ես մի քանի տարի առաջ Բուլղարիայից անցնելիս՝ լրտեսի տեղ ընդունուցի և աչնպէս խիստ հակողութեան ենթարկուցի ոտակաճական հասարակ պաշտօնեաների կողմից:

Սամոսի տնտեսական և մտաւոր կիանքի մասին խօսելու և վիճակագրական տեղեկութիւններ ստանալու համար՝ ներկայակացաւ իշխանական գրասենեակի վարիչ պ. Եպամինոնդաս Ստամատիադէսին, մի շատ համակրելի և գիտնական անձի, որ հեղինակել է իւր հպարտութիւն վերին աստիճանի մանրամասն եռանաստոր պատմութիւնը: Յարգելի պարոնը շատ սիրալիր ընդունելութիւն արաւ, հաճութեամբ տեղ խնդրած տեղեկութիւնները և որովհետեւ Նոյն օրը մեկնելու էի և ժամանակը սուղ էր, ինձ լանձնեց երկու տետրեր ու մի գրկուկ, որոնք պարունակում են փոքրիկ կղզու ամենամանրամասն և բազմակողմանի վիճակագրական տեղեկութիւնները:

Ես ի միջի ալոց հարցրի թէ ինչ հանգամանք հարկադրել էր սամոսացիներին՝ մի քանի տարի առաջ անգլիական ընկերութեան հետ բանակցութեան մէջ մտնելու երկաթուղի շինելու համար, քանի որ ճանապարհներն այնքան լաւ ու կղզին այնքան փոքր է, որ երկու ժամում ամեն արտադրութիւն ձիւրով նաւամատուցները կարելի իջեցնել: Պր. Տնօրէնը պատասխանեց, որ զա մի սխալ ձեռնարկութիւն էր եղել, որ անչաձող անցաւ: Ես լսել էի, որ 30,000 գրատոնների տէրերն էին եղել, որ ոտքի էին կանգնել և քանդել տակ պալմանաղիբը, առարկել տալով թէ, եթէ մի սամոսացի բնիկ չողեկաւ քի տակ ընկնի, անգլիական ընկերութիւնը պէտք է գրկել իւր պահանջի $\frac{1}{4}$ -ից, երկրորդի համար $\frac{1}{2}$ և ալին:

Այս առասպելին, սակայն, պէտք է հաւատալի, տեսնելով թէ ինչպէս քաղաքում ձի հեծները խտուր արգելւած է, որովհետեւ մի մարդ է տակն ընկել: Նրբ ես մի օր Տիգանի գիւղից ձիով վերադառնում էի և քաղաք էի մտնում, ամեն տեսող վար իջիւր էր ատում, իսկ ես չը հասկանալով շարունակում էի, մինչև որ հեռւից իմ ուղեկից գերմանացու ձախը լսեցի, որ արդէն ոտով էր գալիս:

Պր. տնօրէնը հաղորդեց, որ կղզին Սուլթանին տարեկան 200,000 դրուշ սուրք է հասցնում, մի գումար, որ հաղիւ բաւականանում է Սա-

մութ տաճկական զօրքերի և Վատի մալքաքաղաքի առաջ կանգնող կաթսերական շոգենաւի պահպանութեան համար: Այս խօսակցութիւնից և առհասարակ այլ հանգամանքներից աչն եզրակացութեան եկալ, որ բնիկները դո՛հ են իրանց ներկալ վիճակից և պատերազմական հոգսերից ազատ լինելով՝ երկրի միայն մոտաւոր ու տնտեսական լաւաշաղիմութեան վրալ են ճիգ թափում:

Իշխանութիւնը 1890 թ. հում նիւթերից եկամուտ է ստացել 1,120,802 դր., իսկ 100° (?) եկամուտներ 2,442,086 զուբուշ: Մաքսաւին եկամուտները հասել են 1,321,284 դր.: Մինչև վերջին ժամանակներս Տաճկաստանից եկող տեղական կամ եւրոպական ապրանքներից մաքս չէր առնում Սամուը իբրև հարկատու երկիր, բայց մեր աչնտեղ եղած ժամանակը մաքսատուներ պահանջում էր, իսկ ապրանքատէրերը մերժում էին նախկին կարգերի հիման վրալ: Ինչպէս երևում է, այս դիտաւորութիւնը չը պէտք է լաջողւի, որովհետև Սամուը չունի մեծ վաճառականներ, որոնք կարենալին Եւրոպայի հետ անմիջական առևտուր անել, և ահա երկու օրերս լսեցի, որ ժողովուրդը դարձեալ հակառակում է, զգալով որ մի անգամ Տաճկաստանի և գլխաւորապէս Իզմիրի վաճառականների հետ կապակցութիւններ ունենալով՝ շատ դժուար է աղէ կախման լարարելութիւնները իղել: Աչն ժամանակ հարկաւ պէտք է մի կամ երկու իզմիրցի մեծ զրամատէրերի ձեռքում կենտրոնանար ամբողջ ներածութիւնը և բնականաբար հարստահարութեան առարկալ դառնար:

Ժողովրդի կրթական գործի մասին մենք քաղում ենք վերոլիշեալ պաշտօնական վիճակագրութիւնից հետեւեալ տեղեկութիւնները:

Բնակիչ 40,636, ուսումնարան 49, ուսուցիչ 89, ուսուցչուհի 16, աշակերտ 3,275, աշակերտուհի 1,289: Սրանցից գիմնադիւն մէկ հատ մալքաքաղաքում, 4 միջնակարգ և 8 օրիորդաց դպրոցներ քաղաքներում և մեծ գիւղերում, 35 ժողովրդական ուսումնարաններ, 1 մանկական պարտէզ:

Տեղի տղութեան պատճառով մենք չենք կարող աւելի ընդարձակ քաղածքներ անել իշխանական գրասենեկապետի լուրջ ու բազմակողմանի վիճակագրութիւնից: Մենք արտուղ կարողում ենք նաև, որ հերբարթական ու հակահերբարթական մրցումներ՝ այս «պատվիկ» հողի վրալ էլ տեղի են ունենում: Ժողովրդական ուսումնարանների նախկին տեսուչը գերմանական մանկավարժ էր եղել հերբարթեան ուղղութեամբ, վերջին տարւան և այս սեպտեմբերից՝ հակահերբարթեան: Նս դէպք ունեցալ ի մօտոլ ծանօթանալու 1890/91 թ. տեսչի հետ, որ այս վիճակագրութեան մէջ գրել էր տւել, թէ հերբարթական մանկավարժութիւնը մանկանը մեքենալ է համարում և աչն: Այս պարոնը մակեդոնացի էր և աչնտեղ ուսել էր մի ուսուցչանոցում, որ գլխաւորապէս գերմանական զրամազլիտով և ուսուցիչներով է կառավարւում: Մի առթիւ ես իմ տաք վիճարանութեան մասին գրեցի Գերմանիա, ուր հերբարթականներին շատ կը հետաքրքրէր այս

տեղեկութիւնը և աւելացրի, որ մեր մանկավարժական սկզբունքները բացատրելով՝ (պարծի) եւմ բերում վերալիշեալ սլարոնին: Աւ վերաւի, երբ հինգ ձեւական աստիճանների մասին մի մեծագրութիւն աւի, Հերբարթի այս հակառակորդն ¹⁾ սքանչալատ: Երբ առաջին անգամ ալտէս առք վիճաբանում էինք, մեր ձայնը լսեց նոր տեսուչը, որ ծովափի սրճարանի առաջ նստել էր: Նա հարցրեց իմ խօսակցից իմ ով լինելը և երբ լսեց, որ ես մի ջերմ հերբարթական եմ, հեղձնելով symphonie (համաձայնութիւն) բառն արտասանեց: Նոր կրթական տեսուչը, որ գիմնապիտնական նստարանից նոր հեռացած, բազմ նորերս մի սենատորի փեսայ լինելու բաղրն ունեցած լինելով՝ աղւ բարձր պաշտօնին էր հասել, ծաղրում էր մի մանկավարժութիւն, որի մասին թիւս մի քանի օր առաջ մի երկու քննադատական խօսք էր կարդացել: Ահա դարձեալ խնամութեան և պրոտեկցիայի պտուղները: Նախկին տեսչին հեռացրել են, որ դոնէ մի գերմանական ուսուցչանոցի մէջ մանկավարժական կրթութիւն էր ստացել և տեղը՝ մի գիմնապիտի նշանակել ²⁾:

Մի մասնաւոր, բազմ տեղեկ աղբիւրից (որի լիակատար ճշտութեան համար ես չեմ կարող երաշխաւորել) տեղեկացաւ, որ 105 ուսուցիչներից միայն 10 սեմինարական ուսում են ստացած: Նրանց վիճակը, ինչպէս ամբողջ ազատ Յունաստանում՝ եմթակալ է քաղաքական անձնաւորութեանց փոխիթութիւններին: Այս մասին ցածելով լսեցին նաև Ըլլջալում գերմանացի հնախուղից, որ տարիներով Աթէնքումն է բնակել: Այս ի հարկէ մի մեծ անբախտութիւն է մի երկրի համար, երբ մի միլիտարի կամ մեծ պաշտօնեակի փոխիթութիւնը խառնչութիւնեան մէջ է ձգում նոյն իսկ ուսումնարանական գործը: Աւրոպայում գոնէ ուսուցիչներից հեռու է մնում աղբ աղբեցութիւնը: Նոյն անձնաւորութիւնն ալն շատ հետաքրքրական կարծիքն էր լստնում, թէ տաճկահայտակ լոյների զպրոցներն առհասարակ աւելի բարձր են ազատ լոնականներից, որ սակայն ինձ ալնքան հաւանական չերեաց, որովհետեւ չէ որ ազատ լոյներն են ուսուցիչներ պատրաստում և ծրագիր ու հրահանգ տալիս տաճկահայտակներին: Կարելի է պարոնի տեսածներն ալալիսի եզրակացութեան բերած լինէին նրան: Չէ որ հոգաբարձու և առաջնորդներն էլ կարող են կուսակցական ոգով գործել, ինչպէս մեղսում: Ստամբուլ ուսումնարաններն էլ փակ էին արձակուրդների պատճառով, ուստի մեզ մնում էր ալ փաստերից եզրակացութիւններ անել: Ուսուցիչների նիւթական գրութիւնն էլ կարող է շատ բան

1) Պաշտօնից զրկւելով՝ նա հիմա Իզմիրումն է:

2) Իշխանական դրասենեկալիտ յարգելի թ. Ստամբուլի ալիք ցանկութիւն յայտնեց, որ իրան ուղարկեմ իմ տալաւորութիւնները, երբ հրատարակեն Յաւում եմ, որ ես որքան և ուրախացայ իւր սիրելի Հայրենիքի յառաջադիմական քայլերէ համար, երթական գործերից այն տալաւորութիւնները չը ստացայ որ սպասում էի:

լուսաբանել: Կրթական տեսուչը, որ ծրագրերի և հրահանգների է տալիս ժողովրդական դպրոցներին և շրջում է գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, ընդամենը տարեկան 8 օրմ. ոտկի է առնում, ներկալ կուրսերի բացառիկ բարձրութեամբ մօտաւորապէս 64 բուբլի, իսկ ուսուցիչները 20 բուբլու չափ: Այլ երջիններս ի հարկէ ապրուստի ալ աղբիւրի պէտք է նախն և ահա ապրանքութեամբ են պարապում և չարաթական մի երկու անգամ հաղիւ են դպրոց գնում: Աշակերտներն էլ սպասում են սպասում ու սուն են վերադառնում, մի բան որ այս աստիճանում չափազանցած է երևում:

Նշաղ հետաքրքրական չէ այս կղզու նաեւ կ'օնական կեանքը. Պաշտօնական վիճակագրութեան մէջ կարդում ենք, որ Սամոս ունի 75 եկեղեցի, 103 երկսեռ. կրօնաւորներ¹⁾, ուրեմն եկեղեցիները 1 1/2 անգամ չափ են ուսումնարաններից և կրօնաւորները 1 1/2-ով ավելի՝ ուսուցիչներից: Եւ չեմ կարծում, որ մեր հաշարակ քաղաքների մէջ, ուր քիչ թէ չափ հիւմ է զրեւ կրթական գործը, ապախիտ համեմատութիւններ գոյութիւն ունենան.

Ամբողջ կղզին իշխանի բոլի մէջն է, որի ապարանից ու գրասենեակից նեոաձայնի բազմաթիւ թելեր են տիրած՝ դէպի բոլոր գիւղերն ու քաղաքները: Մի քանի բոլետում կարող է նա այս կամ ալն կարեւոր տեղեկութիւնը հաւաքել ամբողջ երկրից: Երբ օրինակ մի մի անգամ մի անհեռաւոր գոյութիւն է անում, անմիջապէս բռնւում է: Մին էլ տեսնես սպասաւորը սորան նորան մօտենում հեռաձայնատուհն է հրաւրում, ասելով թէ այս կամ ալն գիւղից կամ քաղաքից խօսող կա:

Եւ սլատրաստում էի ձիով շրջակալ գիւղերն ու քաղաքները ճանապարհորդելու և ահա մեր գալստեան երրորդ օրը Սամոսը տօնում էր իւր կրօն-անկախութեան տարեդարձը Տիգանի գիւղաքաղաքում: Իմ գերմանացի վաճառական ծանօթը հեռաձայնատնում իւր բարեկամներից Կարլ-վասիլից Տիգանի հրաւիրւեց: Եւ առիթը բաց չը թողի ի հարկէ նոյն իսկ գիշերով դէպի հանդիսավայրն շտապելու, ուր պէտք է տեսնել ժողովրդական կեանքի զանազան երևոյթներ: Մեր ծանօթների մէջ ցանկացողներ չը գտնելով՝ երկու օտարականներս առանց առաջնորդի ճանապարհ ընկանք, մտածելով որ մի երկու ժամալ ճանապարհում այս փոքրիկ կղզու վրայ չը պէտք է մոլորւենք: Ոտով գնալն էլ լուսնակալ գիւղերում լեռների վրայից մի ալ հրապուր ունէր երկուսիս համար, ուստի ճանապարհ ընկանք և բաւականին թանկ պէտք է նստէր մեր չաւանդութիւնը, եթէ չը պատահէինք մի գիւղացի պատանու, որ նոյնպէս ալն կողմն էր գնում: Խոր ձորեր, դժարանցանքի ապառաժներ, մացառներ, որոնք չաղի հետքը կորցնում էին, այս բոլորը բաւական էին մեզ ուժասպառելու և

¹⁾ Սրանցից 26 քահանայ, 42 վարդապետ, 15 միայնակեցուհի և 10 մանուկներ: Այս թւերն էլ աւանդին ուշադրութեան արժանի են:

մոլորեցնելու, մանաւանդ որ մենք ոչինչ ուտելիք չ'առանք: Գիտեմ ենք: Ժամ ու կեսը երկու եղաւ, երկուսը $2\frac{1}{2}$, տեսնում ենք ծովը, բայց Տիգրանին չկալ ու չկալ: Մեր ուղեցույց պատանուսն էլ 20 բուլէն մի ժամ է դառնում, ֆու Teufel (սատանայ), բացականչում ենք, ժամանակի մասին զաղափար չունի սա: Թէն Գերմանիայում և Հայաստանում ոտով շատ աւելի երկար ուղեորութիւններ էի արել, սակայն այս առթիւ լիշեցի դէպի պատմական Սեբըլ լեռը (Մաքսիլիայի կամ Մանիսայի մօտ) արածս ճանապարհորդութիւնը, երբ վերին աստիճանի թեք զաւիպալը քանի գնում երկարանում էր. մի ժամը չորս դարձաւ և մենք հաղիւ հաղ գնացքին հասանք:

Այս գիշեր էր, որ վերջապէս լուսավառ Տիգրանին երևաց: Մենք թէն ջարդ ու փշուր եղած՝ անմիջապէս պաշտօնական հանդիսաւայն շտապեցինք, ուր մի բաւականին մեծ սրահում խիտ առ խիտ նստած էին սեղանների շուրջ սենատորներ, երեսփոխաններ, կրօնաւորներ և այլն: Մեր անսպասելի գալուտը շատ ուրախութիւն պատճառեց ուղեկցիս ծանօթ սենատորին, որ անմիջապէս մեղ տեղ անել տւեց և կերակուր ու զինի հրամացուց: Բայց պաշտօնական հացկերութիւն վերջն էր: Խմում էին մնացած բաժակները, ճառում և խրաքանչիւր անգամ մերթ փոքանաների և մերթ երիտասարդների կրկնցիկ խումբը գեղեցիկ ու ներդաշնակ կրկեր ասում: Անցնէին ու բուռն ծափահարութիւնները կնքում էին բանալեօտութիւնները: Երբ մենք, շնորհակալութիւն լալտնելով մեղ հիւրասիրող սենատորին, հրաժեշտ էինք տալիս, նա հրաւիրեց լաջորդ օրւալ ճաշի հացկերութիւն, առելով որ այս չեղաւ: Մենք ցաւեցինք, որ չը կարողացանք միւս օրն էլ մնալ:

Ընդարձակ ծովափում դեռ շարունակում էին հրաւառութիւնները, պարերն ու երգերը հանդերձ կոնծարանութեամբ: Որքան որ աշուղների ածելը հաճելի էր, աչքքան ներդաշնակութիւնից զուրկ էր եւրոպական նւագածոններին: Այս մասին զարմանք չալտնելով՝ հարցրի և իմացալ, որ դեռ Սամուր նւագածոնների խումբ չէ ունեցել: Այս էլ մի մասնաւոր ընկերութիւն է, որ նորերս կազմակերպւել է: Պարերի միջից մինն աւելի գրաւեց իմ ուշքը, որ համարեա իսկութեամբ Հալաստանի «կլոր» կամ (եալի) պարն էր, որ մեծ հմտութեամբ պարում էին ձեռք ձեռքի տւած երիտասարդները:

Ժամը երկուսը մօտենում էր, որ ևս «հիւրանոց» գնացի, ուր սենեակներում, բալիւմ այս ու այն կողմն էին ընկած Բաքուի հաւատարիմ աւանդապահները: Սրանք հետզհետէ շատանում էին ու միմեանց հետ «զղուզ» անում, ալսինքն՝ միմեանց զղում: Դուրսն էլ քէֆը տակաւին շարունակում էր, իսկ անկողնիս մէջ հետակ մլուկներ (փաշտօնիւնների) և նրանց թուղ չեղակալիցների անսպորտն արշաւանքները հետզհետէ սաստկանում էր: Դէհ, արի ու նեջիր:

Առաւօտ եկեղեցի շտապեցինք, որի առաջ ծածանւում էր իշխանութեան դրօշակն աչն տեղում, ուր 67 տարի առաջ նա առաջին անգամ պարզեց: Եկեղեցին զարդարւած էր պտակներով: Նրկսեռ լազմութիւնը վերն ու վարը լցրել էր: Նպիտոսորը աւետարան էր կարդում, բայց ոչ թէ իւր աչքերով, այլ տիրացուի և ինքը կրկնում էր: Նրեի ծերութեան պատճառով էր այդ: Մենք երկար մնալ չը կարողացանք, բայց աչտուղ էլ տեսաւ, թէ որքան նմանութիւն կա մեր և չունական եկեղեցական մեղեղի-նեի մէջ որ անշուշտ պատմական լազարութիւն ունի:

Այս եկեղեցու չրջակայքում տեսաւ մեծ սիւներ զլանաձև կամ մաս-նէքաւոր (ակօսաւոր) լուներով, որոնց վերջինն, ինչպէս լազարն է, իսնիա-կան ոճի լատինիչն է: Այժմ հողի տակից լոյս աշխարհ ևն գալիս չունա-կան ճարտարապետութեան լուսաւոր շրջանի սքանչելի բեկորները, որոնք հասարակական շինութիւնների մնացորդներն են: Մինչդեռ, ասում է Վիլհելմ Լիւքիէն իւր «Գեղարեւոյի պատմութեան» մէջ, «բռնակալների ննթակալ արեւելեան ժողովրդների մէջ ճարտարապետական ձևերը միայն տիրապետողների տարածներումն էին զարգանում, մինչդեռ նոն իսկ լոյների նախահալերի՝ սելազգեան նախածամանակներում, որքան երևում է Հոմերոսի նկարագրութիւններից և գտնւած մնացորդներից, թաղաւորական զղեակներն էին զեղարեւոտական ստեղծագործութիւնների զլիւսւոր առարկաները, չունական ազատ տէրութիւնների հիմնելով աղալիսի ետա-կան նպատակներն ընտ կն մղում և միայն բարձրագոյն լոյեաները, ամբողջ տէրութեան ընդհանուր նպատակներն իրաւունք են ստանում զեղարեւոտական կերպարանաւորման: Ուստի միայն տաճարումն է զարգանում ճարտարապետական ձևը, աչն հասարակական շէնքերը, որոնք ընդհանուրի շահին են ծառայում, իրանց զեղարեւոտական տիպարը ընդօրինակում են տաճարի շինութիւնից, ընդհակառակը չունականութեան լաւ ժամա-նակներում բոլորովին աննշան են մասնաւոր սների շէնքերն ու զարդա-բանքները: Արդեօք այս հասարակական ողին չէ, որ մինչև այսօր՝ դա-րաւոր խանդարումներից մետո՞ մեղ տակաւին հիացնում է:

Տիգանիից Վատի դառնալու համար՝ մենք ձի վարձեցինք և խճու-ղիով ճանապարհ ընկանք: Տեղանիի պարսպների մօտ տեսանք մի լճակ, ուր շատերը տղրուկ էին բռնում: Մենք շարունակեցինք մեր ճանապարհը անընդհատ աղետատանների միջից, որոնց մէջ տեղ տեղ փոքրիկ քաղաք-ներ Բորա, Մետեքլնուա և զիւլեր էին երևում: Մետեքլնուան ամենամեծն էր 5000 բնակիչներով, մաքուր սալաչատակ կամ քարած փողոցներով, զեղեցիկ տներով, եկեղեցիներով, քաղաք. վարչութեան տնով և մարմարո-նեալ սանդուղքներով երկաչարի ուսումնարաններով: Զիւլց վարիջանք Մետեքլնում, մի մատիքա (օղի) խմելու և հանգստանալու: Արճարանի ղռանը շատերը նստած էին: Տարեդարձի առթիւ տօն էր: Նստողների մէջ

տեսալ մի երկու ուսեալ բժիշկներ ու փաստաբաններ, որոնց հետ ուղեկիցս ինձ ծանօթացրեց: Երեք ժամ ցետոյ մալրաքաղաք հասանք:

Ընտանեկան կեանքին ծանօթանալու ոչ աչնքան ժամանակ և ոչ պատահութիւն ունեցանք: Նոյն իսկ այս մալրաքաղաքում ցոյները ցետ քաշած կեանք են վարում և մանաւանդ օտարներին շատ կասկածանքով են վերաբերում: Եւ իրաւունք ունեն, որ իզմիրցիներէ պէս՝ «կարպետի չորս պոչը ջրին չեն տալիս»: Առհասարակ ազգական ընտանիքներն են, որ միմեանց հետ երթ ու գալ ունին:

Մի օր ևս մնացինք և ճանապարհ ընկանք տաճկական փոքրիկ չողենաւով դէպի Նիքիտոս, մեր փոքրիկ ուղևորութեան վերջակէտը: Որովհետեւ Վատին դէպի Նիքիտոս տանող նաւահանգիստ Գուշադասի (Սկալանովա) քաղաքի բոլորովին հանդէպը չէ դառնում, ուստի մենք $1\frac{1}{2}$ ժամաւ պտտտ արինք մինչև ցամաք հասնելը: Գուշադասին ոչ մի ուշադրութեան արժանի բան չէր խոստանում մեզ, այս պատճառով մենք ձի վարձեցինք և մօտաւորապէս չորս ժամում երեկոցեան դէմ պատմական Նիքիտոսի տիսուր աւերակները ¹⁾ հասանք:

Նիքիտոսը հռչակաւոր էր մանաւանդ քրիստոնէական ժամանակներում իբրև կենտրոն, ուր տեղի ունեցաւ նիստորականութեան դէմ տիեզերական ժողովը: Այս քրիստոնէական վարդապետութեան առաջին շրջաններում, երբ մարդկութեան մէջ դեռ նա աչնքան չէր տարածւած, հնարաւոր էր համարւում աչսպիսի միջոցներով միութիւն պահպանել այս եկեղեցու մէջ, բայց ի հարկէ ժամանակի ընթացքում համոզմունքները անհաշտ փոփոխութիւնների ենթարկեցին:

Բուլէի բառարանից այս հռչակաւոր քաղաքի մասին քաղում եմ հետեւեալ տեղեկութիւնները:

«Նիքիտոս, այժմ Այա Սուլուկի, որ իոնեան միութեան գլխաւոր քաղաքն էր՝ Զմիւռնիայից 60 հազարամետր հարաւ. հարաւ-արեմուտք: Նա անւանի էր մանաւանդ Վիանայի հոչակապ տաճարով. այս տաճարը շինւել է Ասիայի բոլոր քաղաքների արած նւէրներով. նա աշխարհիս եօթը հրաշալեաց մէկն էր: Նա ալրւեց Հերոստրատի ձեռքով Ալէքսանդրի իսկ ծննդեան օրը (356 Ք.ր. առաջ), բայց նա ցետոյ վերաշինւեց տւելի շքեղութեամբ: Այս նոր տաճարը աւար առան Սկիւթացիք 203 թ. և հիմնադատակ արին Կոստանդինուսի ժամանակ: Նիքիտոսը հիմնւել է կարիւրացիների

¹⁾ Առաջին անգամը չէր որ իմ ուղեկիցն ու ես այտեղ էինք գալիս: Հայերն ունեն Նիքիտոսում մի բարձր բլրի վրայ Ս. Յովհաննէս, որի «փանաչէրը» Զոսկից յետոյ է լինում: Եւ ահա՛ նստակեաց իզմիրցիների համար մի առիթ՝ առնելու: Այս առթիւ արտաքոյ կարգի մի դէնացք է գալիս շքաղմաթիւ հայ ուխտաւորներով, որոնք վրանի տակ պատարագ են անել տալիս և յետոյ ուտում խմում ու վերադառնում են:

ձեռքով: Խոնարհութիւնը նորան գրաւեցին Կողբոսի որդի Անդրոկլէսի առաջ-
նորդութեամբ: Շատ անգամ գրաւած և հպատակ դարձած՝ նա միշտ ձեռք
է ձգել իւր անկախութիւնը: Պէտքոնեան պատերազմի աւարտման ժա-
մանակները ալտեղ հաստատեց իւր սպարապետական կալանը և միտն էր
դրել Նիեսոսն իւր սեփական տէրութեան կենտրոն դարձնել: Աղէքսանդրի
մահանկից լեռնոյ նա ընկաւ Լիդիամարի իշխանութեան տակը, որ նորան
Արսինօն անւանեց: Հռովմալեցիք նորան տիրեցին 130 թ. Քր. առ-
Հերակլիտ փիլիսոփան, Հիպոնաքս բանաստեղծը, Ապէլ և Պարրազիուս
ճկարիչները աջնեղ ծնեցին: Վրիտտոնէութիւնն աջնեղ հաստատեց իւր
առաջին եկեղեցիներէն մինը: Ս. Պողոս աջնեղ քարոզեց քրիստոնէութիւնը
57 թւականին, և իւր Տիմոթէոս աշակերտը նորա առաջին եպիսկոպոսը
կարգեց: Նալեով մի քանիսն ինչ՝ ալս եկեղեցիին սկզբանէ կառավար-
ւել է Ս. Յովհաննէս Աւետարանչի միջոցով. մինչև անգամ նորագոյն Ագա-
Սոլուկ (Aia-Solouk) անունն ուզում են լոնական agios theologos աշ-
տինքն՝ սուրբ աստուածարան բառերից ածանցել, մի անուն, որ տալիս
էին Ս. Յովհաննէսին: Նիեսոսումն էր, ուր 431 թ. կալցալ տիեզերական
ժողովը, որ նգովեց ճիստորականութիւնը. 449 թ. աջնեղ մի ալ ժողով
գումարեց, որ իրան էլտիլիսիանականութեան համակարծիք լալտարեց
և որ նշանակեց Նիքիստոսի աւագակոթիւնն անունով ալս բռնու-
թիւնների պատճառով, որ ալտեղ գործեցին: Նիեսոսն ալսօր մի գիւղ է,
ուր նստում է մի լոնական մետրոպոլիտ Պոլսի աթոռ իշխանութեան
տակը:

Նիեսոսի ալթման աւերակները ալս մեծ քաղաքի ամբողջութեան
հետքերը դժարութեամբ են ցոյց տալիս: Ահադին տարածութեան վրալ
հաս հատ սիւռւած են ալս ու ալս սիւներն ու կամարները, որմերն ու
բեկորները: Ամենից լաւ պահպանւել է մի ընդարձակ հոլակապ տաճար,
որ լոնականի հետ արարական ոճի հետքերն է կրում: Մեր Անալ մալս
եկեղեցու պէս թէն աւերակ, բալց պահածալի ճակատով նա իշխում է ալս
հնութիւնների վրալ: Սա աւելի գեղեցիկ է, ի հարկէ, նաև իւր ընտիր
մարմարիոնների և պոբփիւրների շնորհիւ:

Թէն եւրոպացիներն ամեն քիչ թէ շատ չարժական բան տարել են,
աջնուամենայնիւ դեռ անհամար վիշատակարաններ են մնացել ալս հռչա-
կաւոր քաղաքի նախնի փառքից: Մեծամեծ մարմարոնալ նրբատաշ սիւ-
ների և նրանց քանդակաղաղ խողակների բեկորները մասամբ գետնի մէջ
թաղւած, մասամբ գեռ տեսանելի են: Զանաղան կաւալ սպատեղէնների
կտորներ անհամար են: Վնչպէս երեւում է, գեռ շատ հնութիւններ կան
հողի տակը, որովհետև գիւղացիները հարուստ ժողովածուներ ունեն գրամ-
ների և արձանների, որոնցից մի երկունս ևս գնեցի, երբ առաջին ան-
գամ եկալ: Նիեսոս Զմիւռնիալի և նորա ծովալին ու ցամաքալին չիջա-
կալքում տեսածս աւերակներից ամենապանծալին էր:

Միւս օրը մենք Խզմիրի երկաթուղու վրայ էինք և 15 օր լեռոյ քաղաք հասանք բազմաթիւ նորանոր ականք և ուրախ տապաւորութիւններով: Տուն վերադառնալով մոտօցելի գրիչ առնել ու իմ հալընակիցներին մասնակից անել այս թարմ տապաւորութիւններինցս ուսացած հաճութենքին, որոնք կարող էին միևնույն ժամանակ մեր դրացի ազգի անցեալ ու ներկայ կեանքի ալս կամ ալն կողմը լուսաբանելով մեզ ուսանելի լինել:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՄՈՍ ԿՈՄԵՆՏՈՍ

(ՆՈՐԱ ԾՆՆԴԵԱՆ 300-ԱՄԵԱԿԻ ԱՌԻՓՈՎ)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՅԻ

Paedagogus non fit, sed nascitur.

(Մանկավարժը ծնւում է և ոչ թէ
դառնում):

I

Ձը նայելով Կոմենտսից առաջ տեղի ունեցած կրօնական չեղափոխութեան քանի մի լաւ հետեւանքներին, Գերմանիայում դեռ ուսումնարանները վատ դրութեան մէջ էին գտնւում, որովհետեւ հոգեւորական դասը, նոյն իսկ ժողովուրդը անուշադիր էր թողնում կրթական գործը: Դասաւանդութեան մեքենայական եղանակը լատինական դպրոցների խոչնդոտը և տանջանքն էր: Եկեղեցական խռովութիւնները նոյն իսկ դպրոցներում բռն էին դրել ու քաղաքային վարչութիւնները հալածում էին իրանց դասաւանդութեան չը պատկանող ուսուցիչներին և հովանաւորում իրանց դաւաւանակիցներին: Դպրոցական դաստիարակութիւնը շատ խիստ էր և սանիկների բնաւորութիւնը փչացնող: Ամեն տեղ իշխում էին միակողմանի դպրոցականութիւնը (սխալաստիկա), եզեխական ուղղութիւնը և իմաստակութիւնը: Եղած ուսումնարանները աշխատում էին միմիայն յիշողութիւնը զարգացնել, իսկ սիրտը թողնել անմշակ: Սանիկի ընդունակութեան և անհատականութեան վերայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, նորա ինքնուրոյնութիւնը ոտնակոխ էր արւած:

Ֆրանսիացում եզրիտների ուղղութեան դէմ դուրս է գալիս Ֆրանսուա Ռաբլէ (François Rabelais) և նորանից յետոյ նոյն զէնքով պատերազմի դաշտն է մտնում Միշէլ Մոնտէյն, իսկ Գերմանիացում—Ռատկէն։ Ռատկէն ուրախութեամբ կ'անանէր մանկավարժութեան կարապետ-մարգարէն, եթէ նորա օրով պատերազմի դաշտ դուրս չը գար մի այլ անձնաւորութիւն և կրթութեան գործի ճշմարիտ մարգարէն չը դառնար։ Այդ անձնաւորութիւնն էր Յովհաննէս Ամոս Կոմենիոսը ¹⁾։

Կոմենիոսը ծնւել է Նիմից ²⁾ քաղաքում 1592 թւականին մարտի 28-ին։ Նա ջրաղացպանի որդի էր, որը գաղթել էր Բոհեմիայից Ունդարիա։ Անգնութ մահը վաղ խլեց Կոմենիոսի հօրը, իսկ նա, զեռ մանկութեան հասակում, ընկաւ օտարի ինամակալութեան ներքոյ և այնպէս թոյլ էր, որ Կոմենիոսն հազիւ իւր տասն և վեց տարեկան հասակում մտաւ լատինական դպրոց։ Հէնց այդ հասակում նկատելի էր, որ սլատանին մեծ ձգտումն ունէր դէպի գիտութիւնը։ Դպրոցում լինելով ցաւում էր, որ այնպէս ուշ է մտել ուսումնարան։ Քանիցս անգամ յիշում էր նա իւր անցած ոսկէայ ժամերը, որ պարտաւ էր անցրել, և այնքան անգամ արտասունքը աչքերին խորին արմամութեան մէջ բացականչում էր. «Նրանի Իւպիտերը վերադարձնէր իմ անցած տարիները» ³⁾։

Կոմենիոսն իւր մանկավարժական ուսումնասիրութիւնների սկիզբը համարում է 1627 թւականը։ Թողնելով 1612-ին լատինական դպրոցը, նա մտաւ Հերբորնի համալսարանը։ Նախ նորա պարապմունքի գլխաւոր նիւթն էր բողոքական աստուածաբանու-

¹⁾ Կոմենիոսն իւր հարեներքում կոչում էր իսկապէս Կոմենսկի. նորա նախահայրերը պէտք է Կոմենից գաղթած լինեն։ Ռատկերը ալս դէպքի առթիւ նկատում է, որ 17-րդ դարում ալ ևս սովորութիւն չկար, ազգանունը փոփոխելուց յետոյ, անւանւել ծննդավայրի անունով։ Կոմենիոսն անւանել էր իրան Հալեյլքերգի համալսարանում, ինչպէս վկայում է այդ վերջինի արխիւը՝ Յովհաննէս Նիւաննու Մորաուս, իսկ 1650 թ. 24 նոյեմբ. հրատարակած մի ճառում՝ Johannes Amos Comenius Huna-Brodensis Moravus.

²⁾ Ըստ ոմանց նորա ծննդեան տեղն է Ունդարիչ-բրոգ։

³⁾ Omihi praeiteritos referat si Jupiter annos!

Թիւնը: Նա պատկանում էր, ինչպէս իւր ծնողները, բոհեմական եղբայրութեան: Այն ժամանակաշ բոլոր գիտութիւնները գրեթէ ծառայում էին աստուածաբանութեան, սորանով սկիզբ էին առնում և սորանով վերջանում: Ինչպէս Հաջդեբերգի համալսարանի արխիւը վկայում է, 1613 Թւականին մտաւ է Կոմենիոսը համալսարան աստուածաբանութիւնը շարունակելու նպատակով, ուր ծանօթացաւ նա Ռատկէի դպրոցական բարենորոգման ծրագրներին: Այստեղ առաջին անգամ ծնեց նորա մէջ սէր դէպի մանկավարժութիւն: Հաջդեբերգում երկար հիւանդութիւն քաշելուց յետոյ, փողի պակասութիւնից ստիպւած, 1614 Թւականին ոտով ճանապարհորդեց իւր հայրենիքը և ստացաւ Պրերաուի ուսումնարանի տեսչութեան պաշտօն: Այստեղ աւելի լուրջ էր մտածում դաստիարակութեան զործի մասին և այդ մտածման արդիւնքն այն եղաւ, որ յօրինեց քերականութեան մի փոքրիկ ձեռնարկ, որ և յետոյ, 1616 Թւականին, հրատարակեց Պրագայում:

1616 Թ. 24 տարեկան հասկում նա ընդունեց հոգևորականի կոչումն ու նւիրեց եկեղեցուն, այնպէս որ մանկավարժական ձգտումներն առայժմ նորա սրտի մէջ երկրորդական տեղ բռնեցին: Նա սկսեց աստուածաբանական գրականութիւնով պարապել և 1617 Թ. հրատարակեց բոհեմական լեզուով (չեխերէն) աստուածաբանական բովանդակութեամբ մի զիրք «Նրկնքից ներւածների հառաչանքների ձայնը» վերնագրով:

Սորանից յետոյ կարճ ժամանակամիջոցում գրեց մի այլ երկ՝ «Ճառ Քրիստոսի համար կուռքների դէմ»:

Ֆիւլնեկում Կոմենիոսը ստանձնեց 1618 Թ. եկեղեցու և ուսումնարանի կառավարութիւնը. այստեղ նա ձեռք բերաւ բաւականին դաստիարակչական հմտութիւն, սակայն Կոմենիոսի գործունէութիւնը Ֆիւլնեկում երկարատեւ չ'եղաւ. սպանիացիք յաղթեցին և այրեցին 1621 Թ. այն քաղաքը, ուր Կոմենիոսն կորցրեց իւր ստացւածքը, գրադարանը և ձեռագիրները: Թողնելով Ֆիւլնեկը 24 հոգևորականների հետ միասին, նա ապաստանարան դտաւ բարոն Յարոտինիի մօտ: Երեք տարի շարունակ մի որոշ բնակութիւն չ'ունեցաւ, այլ Թափառեց: Սակայն 1624 Թւականին բարոն Յարոտինի տունն այլ ևս ապահով ապաստանարան չ'ը համարելով, ուղեկցութեամբ մի

քանի հոգևորականների, ժամանակաւոր բնակարան դառաւ Բոհեմական սարերում բարոն Գէորգ Սատովսկու մօտ: Բոհեմական սարերում կարողացաւ աչցելել իւր ժողովուրդը, որից ընտրւեց պատգամաւոր Լեհաստան ուղևորւելու համար: Այս դէպքը առիթ տւեց Կոմենիոսին կրկին մանկավարժական գործով զբաղւելու: Վերոյիշեալ ժամանակի ընթացքում փոխառականների հետ մի փոքրիկ զբօսանք արաւ դէպի Վիլցից ամրոցը, ուր և ծանօթացաւ Սիլւեր ազնւականի հարուստ զրադարանին: Անյուսալի կերպով Կոմենիոսի ձեռքն ընկաւ Էլիաս Բողինուսի «Աւամունք դասաւանդութեան» երկասիրութիւնը, որը առիթ տւեց նորան նոյն տեսակ երկ իւր մայրենի լեզուով գրել: Այս աշխատութիւնը գեւ չը վերջացրած՝ հրատարակեց տպագրութեան պատրաստ մի ուրիշը՝ «Լեզուների բացւած դուռը»: Սա ինքն ըստ ինքեան մի դասագիրք է, որի նպատակն է իրերի ծանօթութեան հետ միասին տալ և լեզւի պաշար, իսկ սորա կազմութեան հիմնական սկզբունքն է այն մանկավարժական ճշմարտութիւնը, որի համաձայն մոտաւոր աշխարհը հիմնւած է արտաքին աշխարհից ընդունած տպաւորութիւնների և նոցա զիտողութեան վերայ. ահա այս է պատճառը, որ նա իւր գրքի հարիւր գլուխներում խօսում է աշխարհի ստեղծագործութեան, տարրերի, անասունների, մարդկանց գործերի, եկեղեցու մասին և այլն, նախ հասարակ և ապա բարձր նախադասութիւններով, աստիճանաբար դասաւորւած:

Նորա բոլոր քաջած նեղութիւնները առիթ տւին հեղինակել մի աշխատութիւն «Բաւիլ աշխարհի և Արքայութիւն սրտի» վերնագրով: Այս գրքի ոճը մասամբ երկիծաբանական է, մասամբ լուրջ, մասամբ էլ կատակաբանական է: Այդ վերջինի բովանդակութիւնն է՝ Կոմենիոսի կրօնական համոզմունքի խոստովանութիւնը, նորա կեանքի զանազան փորձերի համագումարը, նորա ապագայի նպատակը:

Յառաջաբանում խօսում է, թէ ինչպէս Աստուծոյ նորան գիտակ դարձրեց աշխարհի շողքորթ և խաբեբայական կեանքին ծանօթանալու: Նա նկարագրում է թէ ինչպէս աշխարհումս ամենայն ինչ զիմակով է ծածկւած և ապա սկսում է թել մարդկութեան բոլոր դասակարգերի վատ կողմերը: Մենք յիշենք այստեղ միմիայն հետաքրքրական կտորները: Աւսանողներից, մաղիսարդներից, զոքաորներից

շատերը չունեն ոչ աչքեր, ոչ լեզու: Շատերը թէկունեն լեզու, բայց չունեն աչքեր. շատերը միմիայն ականջներուն են և ոչ աչքեր և ոչ էլ լեզու: Աւաջիւնները զնում են զեղատուն հոգեկան հիւանդութիւնների համար դեղ գնելու: Այդ զեղատներն են գրադարանները: Ահա այդ գիտնականները հաբեր են զնում և սկսում են ծամել. համե՞ղ է, հարցնում է Կոմենիոսը, և պատասխան ստանում. «սկիզբը թթու և դառն է, իսկ յետոյ երբ արդէն կուլ ենք տւել, մեր բերանը քաղցրանում է և լաւ ազդեցութիւն է անում, բայց շատերի վերայ ընդհակառակն—սոքա սկսում են սիրտ թափել, փորները ուռչում է: Շատերն էլ ահից ուինչ չեն ընդունում, այլ ուղղակի լքցնում են իրանց գրպաններն և գլխաւորապէս այնպիսիներով, որոնց զեղատոմսերը հետեւեալներն են «Vocabularium Dictionarium, Lexicon Promptuarium, Forilegium, Herbarium» և այլն: Շատերն էլ փոխանակ գրպանները լցնելու, թեթեւութեան համար լցնում են իրանց սենեակները, արկղները և այլն: Ոմանք էլ դատարկում են ուրիշների լիքը տակաւներն իրանց դատարկ տակաւի մէջ: Կոմենիոսը այս դասակարգից անցնում է միւս դասակարգերին՝ աստուածաբաններին, զինւորականներին, վաճառականներին և այլն: Երկրորդ զրքումն մտնում է բաւիղից դէպի արքայութիւնը:

Վերջապէս երկար թափառելուց յետոյ Կոմենիոսը ուղևորւեց Լիսսա և 1632 թւականին սինոդը նշանակեց նորան միաբանութեան աւագերէց: Նոյն թւին լոյս տեսաւ նորա հուշակաւոր աշխատութիւնը «Բարձր վարդապետութիւն ուսուցման կամ ամենայն ինչ ամենքին սովորցնելու արւեստը ¹⁾»: Սորանից յետոյ հեղինակեց նա մի քանի հիմնական գրքեր:

1. Համիմաստութիւն (Pansofia) անունով, ուր նա քննում է մարդկային խոհական աշխարհը, բաժանելով երեք մասերի, որոնք կազմում են՝ Աստուած, աշխարհ և միտք:

2. Համապատմութիւն (Panhistoria), այն ամենի նկարագրութիւնը, ինչ որ աշխարհիս երեսին պատահել է և ինչ որ փորձով ըմբռնւած է: Այդ ընդհանուր պատմութիւնը բաժանում է նա վեց շրջանների:

¹⁾ Magna Didactika կամ Omnes omnia docendi artificium.

Ա. Սրբազան պատմութիւն:

Բ. Բնական պատմութիւն:

Գ. Գիւտերի պատմութիւն:

Դ. Առաքինի մարդկանց կեանքի զեղեցիկ օրինակներ:

Ե. Զանազան կրօնների պատմութիւն:

Զ. Քաղաքական պատմութիւն:

Այս երկի յառաջաբանը սկսում է նա հետևեալ խօսքերով, որը նորա առաջնորդող սկզբունքն է. «Մի՞թէ չենք ապրում մենք մեր նախնեաց նման բնութեան պարտիզում: Ի՞նչու չը պէտք է մեր նախնեաց նման մեր աչքերը, ականջները, հոտոտելիքը զործածենք: Ինչո՞ւ ուրիշ ուսուցիչների, այլ ոչ մեր զգայարանքների միջոցով բնութիւնը սւտեմնասիրենք: Ի՞նչու չը պէտք է մենք փոխանակ մեռած զրքերի, բնութեան կենդանի գիրքը բանանք»:

Յ. Մի ընդհանուր դասանաբանութիւն, որը մարդուսներքինը, մտապատկերների աշխարհը, հոգեկան երևոյթներն է նկարագրում:

Վեց տարուց յետոյ Կոմենիոսը հրաւեր ստացաւ Շւեդիայից այդ երկիրն այցելելու՝ ուսումնարանները բարենորոգելու համար. սակայն ինքը չը կարողացաւ գնալ, այլ ուղարկեց իւր երկասիրութիւնները, որոնք արդէն չեխերէնից լատիներէն էին թարգմանւած: Շւեդական կառավարութիւնը, ընդունելով Կոմենիոսի ուղարկածը, յանձնեց այդ բոլորը տպագրութեան: Magna didactika աւելի վաղ լոյս տեսաւ քան միւս աշխատութիւնները.

Անգլիական պարլամենտը 1648 թւականին հրաւիրեց Կոմենիոսին դպրոցների մէջ բարենորոգութիւններ մտցնելու: Անգլիա գնալով նորա նպատակն էր միևնոյն ժամանակ օգնութիւն հասցնել Լիսսաչի կրօնաւորների միաբանութեան: Անգլիական խռովութիւններն արգելէ եղան նորա նպատակի իրագործման, սակայն նա ծանօթացաւ այնտեղ Ֆրիդրիկոս Գէեր անունով մի հաշուատ վաճառականի հետ, որն և խոստացաւ Կոմենիոսին օգնել: Մի տարուց յետոյ նա ծանօթացաւ Շւեդիայում Ոքսենշտայն մինիստրի հետ էլ: Այստեղից ուղևորեց նա Ելլինգ, ուր և հրատարակեց մի ուրիշ երկասիրութիւն՝ «Նոր լեզուների ուսուցման եղանակը»: Այս վերջինի մէջ արծարծում է նա այն միտքը թէ խօսքերն և իրերը պէտք է զուգահեռապէս աւանդւին (ut intellectus et lingua parallele decur-

rant semper): Դասականդուծիւնը պէտք է լինի աստիճանաբար, հեշտ և զւարթացնող և աշակերտի գործունէութեան չը խանգարող: Նոյն սկզբունքները զործ է ածում նա լատիներէն լեզուի դասականդուծեան համար հետեւեալ գրքերի մէջ՝ Vestibulum, Janua linguarum reserata և այլն: Այս գրքերի յառաջաբաններում ասում է նա. «Ո՛հ մի անհասկանալի խօսք առանց իրի, ո՛չ մի յիշողութեան վարժութիւն, որի նիւթն անհասկանալի է, այլ ինքնուրոյնութիւնը պահպանող յառաջադիմութիւն, հեշտից դէպի դժւարը»:

1648 թւականին վերադարձաւ նա Լիսսա, ուր արժանապաւ միաբանութեան կողմից եպիսկոպոսի աստիճանի: Այստեղ նա մեծ յոյսեր ունէր. նա կարծում էր թէ կարող է յեղափոխել ուսումնարանական հին կազմակերպութիւնը և մտցնել իւր աշակերտների միջոցով իւր փորձառութեան և գիտութեան վրայ հիմնւած նոր սկզբունքները: Բացի այդ նա ցանկանում էր նոր երկով իւր գիտնական ուղղութիւնը աւելի որոշել, սակայն դորան արդէլք եղան նախ իւր կնոջ մահը 1648 թւականի վերջին, երկրորդ՝ Չիբենբուրգի իշխան Սիգիսմունդ Ռակոցի հրաւերը՝ Սարոս Պատակ (Ունգարիայ) այցելելու և նորա դպրոցները բարենորոգելու նպատակով: Սարոս Պատակի դպրոցի բացման առիթով կարգաց մի դասախօսութիւն, որը և 1650 թւականին տպագրւեց «Գրքերի գործածութիւնը» վերնագրով: Սարոս Պատակում յօրինեց նա մի քանի դասագրքեր և կազմեց բառարաններ:

Նոյն թւականին վերջացրեց նա Ունգարիայում Սարոս Պատակի ուսումնարանների համար նշանակւած մի աշխատութիւն՝ «Նկարւած աշխարհ» ¹⁾ խորագրով: Այս երկը պատկերների մի հաւաքածու է, որով ուզում է իրերը պատկերների միջոցով զգայարաններին ներկայացնել: Նա այս գրքի մէջ հետեւում է այն սկզբունքին, թէ մենք ոչ մի գործ կատարել և ոչ էլ խելացի խօսել կարող ենք, եթէ մենք նախ չ'իմանանք թէ ի՞նչ պէտք է անենք և թէ ի՞նչ պէտք է խօսենք. «Ոչինչ չկայ մոքի մէջ, ինչ որ չէ եղել

¹⁾ «Նկարւած աշխարհը» շատ անգամ է նորոգւել, մինչև անգամ Բաղեդովի օրով և որպէս առաջին ոճաբանական օժանդակիչ միջոց, իբր իրազեկական դասականդուծիւն, շատ չարպելի է:

զգայարանքների մէջ: Եթէ մեր զգայարանքները վարժեցնենք, որպէս զի իրերի զանազանութիւնը լաւ հասկանանք, այն ժամանակ մենք մեր հոգու մէջ կը զնենք իմաստութեան, ճարտասանութեան և խոհական կեանքի հիմունքները: Դորա մասին մենք այսօր լուրջ չենք մտածել: Պատկերները «Նկարած աշխարհի» մէջ ունեն վերնագիրներ և բացատրութիւններ: Այս գրքի նպատակն է՝

1. Երեխայք, որոնք ուրախութեամբ են պատկերներ տեսնում, ուրախութեամբ այցելեն դպրոց:

2. Ուշադրութիւն պէտք է դարձնել իրերին, որ երեխայք կարողանան ըստ կարելոյն կատարեալ մտապատկերներ ունենալ իրերից:

Կոմիտիօսը, Սարոս Պատակում՝ չորս տարի մնալուց յետոյ, կրկին վերադարձաւ Լիսաա, սակայն նորան չը վիճակեց այստեղ երկար մնալ:

Լեհացիք գտնուում էին 1656 թւականի սկիզբներին շեղական Կարլոս X-ի իշխանութեան ներքոյ. սակայն նոքա, չը կարողանալով տանել թշնամու ծանր լուծը, սկսեցին պատրաստել իրանց յաղթողի դէմ, և երկրից հալածւած Յովհաննէս Կաղիմիրը վերադարձաւ: Կարլոս X, նկատելով այդ զազանի պատրաստութիւնները, արշաւեց Լեհաստան. ճանապարհին Լիսաան, երբ սա ցոյց տւեց իւր թշնամական յարաբերութիւնը, ենթարկեց Կարլոսի զօրքերի աւերման: Կոմենիոսը իւր քաղաքացիների հետ միասին նորից կորցրեց իւր ստացւածքը և աղքատ հեռացաւ քաղաքից: Հասնելով Ամստերդամ, նա սկսեց հանգիստ կեանք վարել, ստանալով մի հարուստի որդիների պատրաստելու համար բաւականին մեծ գումար: Այստեղ Կոմենիոսը կրկին հրատարակեց իւր բոլոր մանկավարժական երկասիրութիւնները: Նոյն տարին լոյս տեսաւ նորա մի ուրիշ երկասիրութիւնը՝ «Լոյսը խաւարի մէջ» (Lux in tenebris) վերնագրով:

1658 թւականին 77-ամեայ ծերութեան մէջ Կոմենիոսը հրատարակեց իւր վերջին երկասիրութիւնը՝ «Միակ անհրաժեշտը» վերնագրով:

Այս գրքի մէջ Կոմենիոսը, զգալով արդէն իւր վախճանի մօտենալը, յայտնում է թէ իւր կեանքի մէջ ամենայն կարօտութիւնների և հալածանքների համբերելով, յոյս ունի Աստծոյ մօտ, խաղաղութեան նաւահանգստում, յաւիտենական անդորրութիւն գտնելու:

Այդ անդորրութիւնը վաղընդփոյթ դառաւ նա, ըստ իւր ցանկութեան, 1671 թւականին Ամստերդամում և թաղեց Նարդէնում:

Այս համառօտ կենսագրական ակնարկից երևում է, որ նա իբրև ճշմարիտ հայրենասէր սկսեց գործել իւր հայրենիքի նեղ շրջանում, սակայն նորա հանձարն և հայրենիքի քաղաքական ձախորդ հանգամանքները ստիպեցին նորան անընդարձակել իւր գործունէութիւնը յօգուտ ընդհանուր մարդկութեան, որով նա եղաւ կրթական սկզբունքների ճշմարիտ քարոզիչ:

«Արտօսրալիր աչքերով, ասում է Յիցենդորֆը, փակեց այս նոր երեմիան իւր եկեղեցու դռները, նախատեսած կարծելով իւր ժողովրդի կորուստը: Բայց նա սխալեց. Աստուած անհովիւ և որբացած չէ թողնում ժողովուրդները, նոքա չաւիտենական են»:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

ԱՆ. ՔԱՆԱԹԱՐԻ:

«Պատկերներ Թխրքահայոց» կեանքից, հատոր Ա. Մոսկւա 1891.
2. Գինեգործի աղջիկը, Թիֆլիս 1891. 3, Խաթ-Սաբա Թիֆլիս 1890,
4, Բոսֆորի ափերում, տես «Մուրճ» 1891 թ.

I

Փափազեանի գրածները բաւականին լատնի են դարձել հաշտարակութեանը, չը նախելով ան բանին, որ միայն երկու տարի է, ինչ նա սկսել է լուս ընծալի իւր վէպիկները և կեանքի պատկերները: Այդ չափով թիւնը հասկանալի է. նա չօչափել է ժամանակակից հետաքրքրութիւն ունեցող կեանքի երևոյթներ և բեղմնաւոր իւր գրչով լաճախ վիշեցրել է իւր մասին:

Արդարեւ նորա գրածքների նիւթը կազմում են աշխարհի երևոյթներ, որոնք գրաւել են ժամանակակից ժողովրդի ուշադրութիւնը և որոնց վերաբերմամբ ամենաչն մի ակնարկ ընդունւում է ազահութեամբ և անհամբերութեամբ: Նիւթի մշակելու ձևն էլ նպաստել է արտաքին հետաքրքրութեան, որովհետև ամեն քաղաքիստում զուրա են բերւած արտասովոր, խիստ գունդերով նկարւած պատկերներ, պատմւած են անարդարութեան, ճնշումների, հալածանքների, հարստահարութեան, բալց նոյնպէս և ազնւութեան ու հերոսականութեան գէպքեր: Վէպիկների ընդհանուր իմաստը լանդում է արդարութեան ու ազատասիրութեան հաստատելու և կապանքներ ու խոչնդոտներ քանդելու և հեռացնելու խնդրին: Ընթերցանութեան նպաստել են բացի այդ գրելու սահուն ոճը և պատկերների ոչ ընդարձակութիւնը:

Նա չեշտեցի պ. Փափաղեանի և բեղմնաւորութիւնը: Յիրաւի երկու տարւալ ընթացքում նա տեւ է մեզ պատկերներ և վէպիկներ մի ամբողջ շարք: Որոնցից կազմել է մի լաւ հատոր և կարող է կազմել մի երկրորդը նոյն մեծութեան: Յաճախ գրելով, Փափաղեանը իրան չէ մոռացրել ընթերցող հասարակութեան առջ: Նա հրատարակել է իւր գրածքները ղանազան թերթերում. «Մշակ»-ում, «Մուրճ»-ում, «Աղբիւր»-ում, «Տարաղ»-ում և ուրիշներում և սոսնձին գրքովիներով:

Նորա գրածքների երեւալը ստորագրած է ոչ միայն Նովկասի, այլ նաև երբեմն արտասահմանեան հաշկական մամուլում:

Մի խօսքով պ. Փափաղեանը բաւականաչափ լաւտարարած է և իբրև նոր գրող՝ նա տեղիք չունի տրոնջալու և զանգատուելու հաւարակութեան վերաջ և չի կարող մեղադրել սորան անուշադրութեան համար:

Կան արդարև վիպագրողներ, որոնց չէ չաջողում շուտ գրաւել հասարակութեան ուշադրութիւնը և որոնք պէտք է շատ սպասեն մինչև ըստ արժանոյն գնահատուին: Այդ հանգամանքը մնասում է նոցա ստեղծագործութեան, թուլացնելով նոցա դիւլու աշխուժը և եռանդը: Իւրաքանչիւր երկ դուրս է գալիս ի հարկէ մի չափոնի դեր կատարելու հասարակութեան մէջ: Երբ նա լաւ է, բաւց մնում է մթութեան մէջ, վարագուրի տակ, չը կարդացած, նա մոռցնում է նորա ստեղծելու շարժաւիթը, ցամաքեցնում է նորա բղիւնու հիմնադրւելը: Ի հարկէ՝ կան գրածքներ, որոնք չուտով չեն կորցնում իրանց նշանակութիւնը և թէև ուշ, ահա, ամենաշուրջ գնահատում են հնդկականների ծերութեան օրերում, կամ երբեմն նոցա մահից փոքր: Բայց հեղինակները չեն կարող մխիթարել ապալէս չոսերով, նա մանաւանդ, որ կեանքի խնդիրները միշտ փոխւում են: Իսկ վիպագրութիւնը՝ բացի այդ՝ կախած է զեղարեւոյ մասին ունեցած հաշկաքից և ճաշակից:

Հեղինակներին կանոնաւոր ճանապարհով դնալու գործին կարող են օգնել և պէտք է լուրջ կերպով օգնեն քննադատները և գրական ղեկավարող ուժերը: Փննադատութիւնը չէ կարող հեղինակին աւելի տաղանդաւոր չլինել, նորան տալ աւելի ստեղծագործական ուժ. բայց նա կարող է օգնել ալ տաղանդին և ալ ստեղծագործական ուժին՝ ուղիղ և շուտ գնահատելու, աւելի արդիւնաւէտ լինելու, կանոնաւոր զարգանալու և թերութիւններից մի չափոնի չափով ազատուելու:

Ոգտւելով պ. Վ. Փափաղեանի պատկերների ժողովածուի առաջին հատորից, մենք մտաբերեցինք նորա մի քանի միւս գրածքները (որոնց վերնագիրները փչւած են վերեւում), թերթեցինք նորից և ներկայացնում ենք մեր դիտողութիւնների և տպաւորութիւնների արդիւնքը, չոս ունենալով, որ մեր ցուցումները կունենան իրանց օգուտը, պարզելով մի վիպագրողի արժանիքը և պակասութիւնները:

Մենք ենթադրում ենք, որ ընթերցողը կարդացել է պ. Փափաղեանի

գրածքները: Նոցա բովանդակութիւնը հաղորդելը չափ երեսներ կը պահանջէր մեզնից և դարձեալ չէր գոհացնիլ ընթերցողին: Օրինակներ կամ բացատրութիւններ մինք կը բերենք աչն դէպքերում, երբ պէտք կը զգացւի մեր դատողութիւնները լուսարանելու:

II

Ի՞նչն է կազմում ալ Փափաղեանի գրածների երևալու շարժառիթը՝ սէրը դէպի զեղարեւոտը, կեանքը նկարագրելու ցանկութիւնը, թէ հասարակական երևոյթների լուսաբանութիւնը:

Պր. Փափաղեանին, որչափ նա արտայայտւել է մինչև այժմ, գրաւել են հասարակական երևոյթները: Գեղարեւոտը քիչ տեղ է բռնում նորա պատկերներում և նա մէկ մէկ ներս է մտնում իւր իրաւունքները առաջ դնելով:

Հասարակական խնդիրները եղել են թեմաներ, որոնց վերաջ հիւսւել է նորա վէպը, սուղծւել է նորա գրույցը, նկարւել է նորա պատկերը: Նրբ պէտք է համարւել, դիպուք, հարւածել գիւղական վաշխառւին և ցուց տալ նորանից կրած գիւղացիների նեղութիւնները—հիւսւել է մի վէպիկ «Ճգնաւոր Նղօ» անունով, ուր ամբողջ մի համեստ գիւղական ընտանիք քարուքանդ է լինում մի վաշխառու Մարտիրոս աղայի ջնորհքով: Մի ուրիշ անգամ, եթէ հարկաւոր է տեսնւել մերկացնել քաջամաների ազահութեան և անբարեխղճութեան արտայայտութիւնները,—հեղինակը գրել է «Ատակը», «Ննիչէրի» պատկերները, ուր դէպքերը լարմարեցրած են խիստ զոյներով դուրս բերելու ալք լատկութիւններով քաջանաների: Յուց տալու համար, թէ տղամարդու և կնոջ մէջ կապերը պէտք է հաստատւած լինեն սիրոյ հիման վերաջ—գրւել է «Գինեգործի աղջիկը» վէպը: Քարոզելու համար, թէ ժողովուրդը պէտք է քաջ կերպով իրան պաշտպանի և պատրաստ լինի միշտ զիմադրելու ոտխին—պատմւել է Խաթ-Սաբա վէպիկը: Ամենաչն մի գրածք ալլալիսով համապատասխանում է մի թեմայի, որի ներկայութիւնը գրածքի առաջին երեսներից արդէն զգացւում է:

Միւս պատկերները արտայայտում են ալալիսի մտքեր. պէտք է կանոնաւորել տուրքերի պահանջը, հողը հիւքն է մի ժողովրդի կեանքի (Խաթ-Սաբա), պէտք է բարեկարգել դատաւարութիւնը (Արդար դատարան), պէտք է զսպել կեղեքողներին (Լալօ), Պոլսից փրկութիւն չը կաջ Փոքր-Ասիայի ժողովրդի համար («Հալիկ», «Ճգնաւոր Նղօ»), մատնիչները պէտք է բարձւեն (Խերան) և ալլին:

Այս ամիտիւմները գաղափար են կազմել տալիս աչն նպատակների և իդէաների մասին, որոնց համար նա ուղում է ծառայեցնել իւր արած գիտողութիւնները և ժողոված տեղեկութիւնները: Բոլոր պատկերները ունեն հասարակական աստառ և նոցա գրելու զրդողը եղել է հասարակական խնդիր:

Մենք կամաւ ենք ասում ծառայեցնել, որովհետեւ հեղինակը պատեղ ներգործական դեր է կատարում, աշխատելով իւր ձեռքին եղած նիւթը դասաւորել աշխատ, որ նոքա նպատակին առաջ կամ աշխատանքի միտքը պարզելուն: Նա անդադար թելադրում է ընթերցողին իւր հիմնական հայեացքները, քարոզում է նոցա, թող չը սալով, որ ընթերցողը նիւթի մասին դատող լինի, որպիսին կարող էր նա լինել, երբ տեսնէր հարազատ պատկերներ խոր ուսումնասիրւած և հոգեբանօրէն ներկայացրած:

Ի հարկէ քարոզը կամ թելադրութիւնը օգտուէտ զործ է, որ կարող է ժամանակակից նշանակութիւն ունենալ, սակայն նոքա պահանջում են, որ ընթերցողը տրամադրւած լինի նոցա լսելու, որ նա գրւածքի մէջ որոնում լինի ոչ աշխարհ իրականի հետ ծանօթութիւն, որչափ ինքնահաճ լուսարանութիւններ հետաքրքիր ժամանակակից խնդիրներ լինին:

Բայց, որ կարեւորն է, վէպիկի, պատկերի համար բաւական չէ միայն նորա օգտակար լինելը հասարակական տեսակէտից¹⁾: Ձանաղանութիւն կա նոցա և հասարակ լօղածի, պատմական գրոյցի, հեքիաթի կամ դիւրող-ների մէջ: Վէպիկը, պատկերը պահանջում են գեղարվեստական արտա-յայտութիւն, դուրս բերող անձերի մարմնացում, կեանքի բնաորոշ երեւոյթների և տիպիքական անձնաւորութիւնների վերատեսչում:

Այս պահանջին համապատասխանում չեն պ. Փափաղեանի պատկերները: Գեղարվեստը, ստեղծագործական մարմնացումը թող են նոցա մէջ աշխարհ, որ վէպի ընթերցանութիւնից մնում է միայն մի լատենի տես-դենցիալի, մի քարոզի տպաւորութիւն և ոչ կեանքի պատկերներ:

Բոլոր վերեւ թւած վէպիկներից մէկը Սաթ-Սարան՝ աղք կողմից մի տեսակ բացառութիւն է կազմում: Անտեղ մեր առաջ պարզւում է պատկերների, գեղարվեստական արարչութիւնների մի շարք, որոնք ներկայանում են իբրեւ ողի և մարմին տոացած կեանքի անդրադարձումներ: Միւսների մէջ թող է աշխարհ, ինչ պէտք է մարմին և ձեւեր տպաւորէր ընթերցողի երեւակալութեան մէջ:

Նւ վէպիկները իրանք կամ նոցա բնաւորութիւնը չեն մեղաւոր, որ գեղարվեստը մուտք չէ գործել նոցա մէջ: Ոչ, Վէպիկները աշխատ են, որ նոցա ընթերցողը սպասում է կեանքի երեւոյթների պատկերացումների, անձնաւորութիւնների մէջ հոգեբանօրէն մեկնւած զգացումների շար-ժումներ:

Բայց կարծես, որ նոյն իսկ հոգեբանական կէտերը և հանդուցները հետաքրքրական չեն թւում հեղինակի աչքում, որովհետեւ նորա գրւածք-

1) Այս լօղածում ևս խօսում եմ պարոն Փափաղեանի վէպիկների մասին, իբրեւ գեղարվեստական գրւածքների մասին: Ուրիշ տեսակէտից նորա վէպիկները իրանց ժամանակաւոր դերը կատարեցին, իբրեւ մի յայտնի գոյնի ընթերցանութեան նիւթ:

ները լաճախ կառավարում են առանց դոցա: Այդպէս են «Ճգնաւոր Նղօն», «Հաջի-աղան», «Այաթակը», «Սև կղզին», «Բոսֆորի ավերումը»: Իսկ անտեղ, ուր նոքա կան (գուցէ հեղինակի ցանկութիւնից անկախ), հեղինակը հարեանցօրէն է անցնում և բաւականանում է ակնարկներով:

Ահա մի քանիսը աֆո հոգեբանական կէտերի, որոնց վերաջ կանգ է առել հեղինակը:

Խաթ-Սաբա բօշալի որդի Մարտոսը գնում է Էրզրում և պատկում մի ուրիշ բօշալի աղջկայ հետ: Ապրելով քաղաքում՝ Մարտոսը և իւր ամուսինը խօսք են տալիս միմեանց հեռանալու բօշալական անարգած հասարակութիւնից և իրանց պահելու իբրև նստակեաց, քաղաքացի հաշիւ: Որդիներին կրթում են աջնպէս, որ սոքա խորշին բօշաներից և ծաղրեն նոցա ու անարգեն: Մարտոսի մալը Խաթ-Սաբան մի օր լանկարծ մտնում է իւր որդու տունը և ականատես է լինում աֆո ատելութեան, որ սերմանել են ծնողները նորա թոռնիկների սրտում: Սոքա անգթաբար ծաղրում են իրանց մեծ մօրը: Մանր է և տպաւորութիւն գործող սպիտակաբանը:

«Ատակ» վէպիկի մէջ Խաթուն Մարէն իւր մահաւան մօտենալը զգալուց կամենում է հաշտել իւր Մարգար եղբոր հետ, որը վաղ երիտասարդութեան ժամանակ մի ընտանեկան անբաւականութեան պատճառով նեղանում է քրոջից և խռով մնում ամբողջ կեանքը: Քուրը կտակում է իւր ունեցածը իւր եղբորը, և միևնոյն ժամանակ մեծ պահանջ է զղում տեսնել իւր եղբորը և իւր ամբողջ կեանքի կաբօտը առնել վերջին բոպէսներում, բայց մեռնում է չը հասած ցանկութեան:

«Արդար դատաստան» պատկերի մէջ դուրս է բերւած թուրքական դատաստանը, որի առաջ և որի համար ժողովուրդը մի խաղալիք է: Ամբոխը գալիս է դատաստան, աղաչում է, խնդրում է, գլուխ է տալիս սուրան-նորան, վռնտում է մէկ ատենանից միւս ատենան, ենթարկւում է հարց ու փորձի և չետո՛ւ քմահաճ դատաւճիռներից չետո՛ւ տուն է արձակում: Ամբոխի շարւած դիրքը և չարաբերութիւնը դէպի դատաստանը հոգեբանական կէտ է, դրդող զանազան մտածմունքների:

«Թերան» վէպիկում պարզւած է հետաքրքրական է մի կէտ, որ հաջերը աւաղակապետին չարդում են, նորանից պատկառում, քանի կարծում են թէ նա քիւրդ է: Իսկ երբ իմանում են, որ նա հայ է, կորցնում են վախը, չարգանքը, պատկառանքը:

Կարեւի էր առաջ բերել և մի երկու էլ հոգեբանական կէտեր, բայց առհասարակ նոցա թիւը չատ սահմանափակ է:

III

Պարոն փափաղեանը իւր գրածքներին տւել է պատկերներ անունը: Անշուշտ նա դժարանում է եղել չարմար բառ գտնել նոցա բովանդատ-

կութիւնը և ոճը բնաւորոջիւր համար և խկապէս զժաւրութիւն էլ կալ։ Պատկերներ անունը ճիշդ և բնաւորոջ չէ։ Նոցանից մի քանիսը, ինչպէս «ձգնաւոր Նղօն» («Ֆերանը»), «Լտակը» և «Գինեգործի աղջիկը» կրում են վէպիկի բնաւորութիւն։ Նոցա մէջ կան ամփոփ պատմութեան, «Շահնան» և «Ապծակը» ներկայացնում են պատկերներ, «Հալիկը» նմանում է վիշուրութիւնների, արձանագրութեան, մնացածները կարելի կը լինէր անւանել կեանքի դժեր, նկարների, նկարագրութիւններ, Կարճութեան և հեշտութեան համար մենք էլ անւանենք նոցա պատկերներ։

Պատկերների մէջ ընթերցողը միշտ որոնում է մի հիմնական հանգույց, որը կապում լինէր նոցա զանազան մասերը և տար նոցա ամբողջութիւն։ Թէև հիմնական ալը կապող մասը բացակայ չէ պատկերներից, բայց շատ տեղ թույլ է և վատ մշակւած. Գույցէ ալը տեսակ պահանջ չէ կարելի անել «Հալիկ» պատկերի մասին, բայց արդէն ձգնաւոր Նղօն, Հաջի Աղալի, Շահնաւի մէջ պէտք է ամբողջապէս երևար մասերի ներդաշնակութիւնը և կապը։ «Ապծակի» մէջ մի քանի բան կարծես զանազան ժամանակներ են պրւած և չետոյ կպցրւած միասին։

Նս վերև ասացի, որ պ. Փափաղեանի պատկերների նիւթը ժամանակակից հետաքրքրութիւն և պրւաչութիւն ունեցող է, որ նա վերաբերում է աջնպիտի երկրի և մարդկանց, դէպի որոնց զարձրած է մեր հասարակութեան ուշքը։ Ամբողջ շարքի ընդհանուր բնաւորութիւնը—նկարագրութիւն է ժողովրդի տառապանքների և լացի և ակնարկներ են նորա պահանջների վերալ։

Խնդիր է ծագում, թէ որչափ ճիշտ և բեալական են աշխարագրութիւնները, աչն պատկերները, որ տալիս է հեղինակը։ Կա հիմնական խնդիր է և դորա պատասխանից կախւած է ընթերցողի վերաբերմունքը դէպի նոցա նշանակութիւնը։

Իսկ պատասխանը իմ կարծիքով սա է։ Պատկերներից մեծ մասի հիմքում դրւած են ճիշդ նկատւած կեանքի երևոյթներ, բայց նոքա մշակւած են ամենամանրաւարար կերպով։ Ճիշտ է, զիցուք, որ կալ գիւղում հալածանք, ճնշում կառավարիչների կողմից, ճիշդ է, որ վաշխառուն սաստիկ վնասում է գիւղացուն, ճիշտ է, որ քահանաները կանգնած չեն լինում իրանց պաշտօնի բարձրութեան աստիճանում, ալը բոլորը ճիշտ է, բայց տեսէք թէ ինչպէս է պ. Փափաղեանը մշակում ալը ճիշտ նկատւած երևոյթները։ Նա ալդտեղ չէ պահում իրան աչն չըջանի մէջ, որ տալիս է նորան կեանքի հանգամանքների ուսումնասիրութիւնը և սկսում է մի պրւա զրեւ, մի կողմում՝ հրէշաւոր կերպով նկարագրելով կառավարչի, վաշխառուի, քահանայի թէ կեանքը և թէ նոյն իսկ արտաքինը, իսկ միւս կողմում՝ դուրս բերելով զոհերի սրտաճմլիկ նկարագրութիւններ։ Ընթերցողը, վերջացնելով գրւածքը, զգում է մի տեսակ արհեստականութիւն, չինժուռ-

թիւն կարդացածի մէջ և մոռանում է կարդացածը: «Ճգնաւոր Նղոն», «Ննիչերին», «Ատակը», «Շահնան», «Հաջի Աղան» անքան բացառիկ կերպով են դուրս բերում կեանքը, որ մարդու մէջ միայն կասկած է լարուցում զէպի պատկերի ճշտութիւնը:

Պատկերներից մի քանիսը կարծես գրւել են մի զէպի, մի արկածքի տպաւորութեան տակ. մինչդեռ շատ հասկանալի է, որ ամենայն մի զէպը կեանքի մէջ դեռ չի կարող նիւթ լինել վիպադրութեան համար և ուղիղ արձանագրւել նոյնութեամբ: Դէպքը պէտք է բնաւորոյ լինի իւր տեսակների մէջ և նորա մէջ պէտք է համասեւութիւն նկատուի, որպէս զի նա ընթերցանութեան և քննադատութեան պիտանի նիւթ կարողանալ դառնալ:

Իսկ երևութները և անձնաւորութիւնները պէտք է ներքին կապ ունենան և հոգեբանական նուրբ ճշտութիւն, որպէս զի նոքա ընթերցողի համար պարզեն որ և է կեանքի զծեր և բաւականացնեն նորա գեղարվեստական պահանջը:

Մենք վերև ասացինք, որ հեղինակը կանգ չէ առել հոգեբանական նշանաւոր կէտերի վերաջ: Այժմ կարող ենք աւելացնել, որ եղածներն էլ զանցառութեան է տւել, առանց ցոյց տալու ան ելնէջները, որով հոգեբանական երևութը ամբողջութիւն է ներկայացնում: Մի խօսքով պ. Փաթաղեանի պատկերներից բացակա է հոգեբանական քննութիւն կամ վերլուծութիւն ասած բանը: Խաթ-Սաբալի մէջ կան լիրաւի նշանաւոր տեղեր, որոնց մէջ հեղեբանական հարադատութիւնը աչքի է ընկնում և որոնց շնորհիւ վէպը ստանում է հետաքրքրութիւն և գեղարվեստական գրւածքի նշանակութիւն: Այնուհետև՝ Ճգնաւոր Նղոն, «Խերան», «Հալիկի», «Ատակի», «Կաթակի», «Սև» Կղզու և «Գլինեգործի աղջկալ» մէջ միայն աղօտ հետքեր են նշմարւում հոգեբանորէն մշակութեան, որոնք բոլորովին բացակա են «Հաջի Աղան», «Լալօ», «Ննիչերի», «Շահնա», «Բօսփորի ափերում» և «Արդար դատաստան» պատկերներում:

Հեղինակի նպատակները, հակումները, տենդենցիաները շատ են վարագուրել իրանցով ան կեանքը, որ մտադիր է եղել նա նկարագրելու Փոխանակ կեանքի մարդիկ, կենդանի անձնաւորութիւններ ներկայացնելու, հեղինակը հնարել է խրտուվիլակներ ու արձաններ և նոցա բեռնաւորել զանազան լատկութիւններով: Այդ արձանները արհեստական կերպով շարժւում են և նոցա շարժումներից մնում է միայն մի սառն, անկենդան աղմուկի տպաւորութիւն: Տիպիքական անձնաւորութիւններ չկան պատկերների մէջ: Փոքր ի շատէ բաւարար են ալը կողմից Հալիկը, Խաթուն-Մարէն («Ատակի» մէջ), Կաթակը, Խաթ-Սաբան, մասամբ Սև Կղզին: Պէտք է նկատուի, լամնայն զէպս, որ Հալիկը տիպ է, թէև լուրջ տպաւորութիւն չէ գործում, Կաթակի հոգեկանը պակասաւոր է, լաւ չէ դուրս բերւած, Խաթ-Սաբան միայն լաջողւած է. իսկ «Բօսփորի ափերում» պատկերի մէջ արւած են տիպեր նկարելու սկզբնական փորձեր:

Հեղինակը իւր տեսած կեանքում անկասկած արել է սուր դիտողութիւններ և իւր փշատեսարում նշանակել է հետաքրքրական փաստեր, որոնցից փոքր օգուտ է քաղել իւր վէպիկների համար. բայց նա կանգ չէ առել այդ դիտած, ժողոված փաստերի աչն ներքին փխրափառութեան, ներքին կապի վերաջ, որ կաջ իրականութեան մէջ, ալ նոցա ծառայեցրել է իբրև նիւթ, իբրև աղիւս իւր հնարած բովանդակութիւնների համար:

Գիտողութեան և ուսումնասիրութեան է նա պարտ իւր աչն նկարագրութիւնները, որ տալիս է («Ապօծակում») (մկնդախաղի մասին), («Խերանում»), («Հալիկում») («Շահնալում»), («Արդար դատաստանում»), («Գինեգործի աղջիկում»), («Սաթ-Սարալում»), («Բոսֆորի ավերում»): Այսոս սակաչն, որ նկարագրութիւնները ամփոփած են հեքեաթարանական պատմածքներում, որոնք թէև ծառայում են համակրական նպատակի և ձգտում են մի լաչտնի բարոյական տպաւորութիւն դործելու, սակաչն շատ են մակերեսութեան, զուրկ խորութիւնից, զուրկ հոգեբանական թափանցիկութիւնից:

Հեղինակը միշտ գոհ է մնացել, երբ կարողացել է իւր վէպիկի կամ պատկերի մէջ իւր սիրելի իւր փափաղած մտքերից մէկը անցկացնել: Նա սաստիկ միջամտել է թէ հերոսների բնաւորութեան ու գործերի և թէ չըջպատող հանգամանքների դատաւորութեան մէջ: Հերոսները փոխանակ իրանց ասելիքը ասելու, քարոզում են հեղինակի թելադրած հալեացքները հատարակութեան, բնտանիքի, կրօնի, ամուսնութեան մասին և ալն, հալեացքներ, որոնց լուսաբանութիւնը կատարած է մի աչնալիսի զարմանալի թեթեւութեամբ, որ կարծել է տալիս, թէ հեղինակը չէ հասկանում նոցա լրջութիւնը և նոցա իրական բնաւորութիւնը նկարագրած կեանքի մէջ:

Տենդենցիալի, կամ մի հալեացք պարզելու համար՝ հեղինակը ձգտում է իրան հպատակեցնել նոչն իսկ բնութեան օրէնքները, Նա զորօրինակ՝ հեղեղ է լառաջացնում (Շահնա), երբ դա հարկաւոր կարող է լինել խիստ տպաւորութեան համար, թէկուզ ալ հեղեղը ամենինն ներքին կապ չունենալ հասարակական երևութի հետ և ալն: Նա աչխարհագրական տեղերի, կենդանի անձերի, լաչտնի դէսքերի անուններ է տալիս, որպէսզի պատմածը ստանալ մի տեսակ ճշգրիտ արձանագրութեան կերպարանք: Մինչդեռ պատմածի միւս մասերում նա առանց քաչելու մի դիւթական գաւազանով խաղացնում է դործող, անձերին, նոցա համար ամեն տեսակի ընդհարումներ հնարելով. և՛ սղանում է մարդկանց և՛ իսլապարցնում, և՛ հիւանդացնում. և՛ հերոսացնում մինչև Հերքիւէս և՛ խղճացնում մինչև վերջին որդը:

Հասկանալի են աչալիսով աչն չափազանցութիւնները և արհեստականութիւնները, որոնք չատկանիչն են պ. Փափաղեանի իւրաքանչիւր վէպիկի: Օրինակների թիւը աչնքան մեծ է, որ անելով է անգամ նոցա տեղնուտեղը նշանակելը. եթէ, զորօրինակ, տոկոսը շատ է վերցում գիւղա-

ցուց, նա ուղիղ երկու երեք անգամ է վերցնում, եթէ լեռներում կազմել են ժողովրդի պաշտպան առաջակ ղեկավարներ, նոցա թիւը ուղիղ 500 է, առանց մէկը-երկուը պակաս լինելու, եթէ մարդ զուրս է բերում անդուծ, նա նկարագրում է իրրեւ ամենածայրահեղ սատանայ, եթէ պանդուխտը Պոլիս է ընկնում, նա գալթակղւում է մինչև մարդկալին կերպարանք կորցնելը, եթէ զալմաղամը գործում է, նա ամենահրէշաւոր բռնաւորի տիպ է ներկայացնում և ալլն:

Ես ալ ևս չեմ խօսում անճաշակ, անհամ բառերի և սրախօսութիւն-ների մասին, որոնք բաղմաթիւ են վէպիկներում:

IV

Այլապիտով պ. Փափազեանը ներկայանում է մեր առաջ, իբրև մի հեղինակ, որ ունի արած կեանքի ղիտողութիւններ, որ զգալուն է դէպի ժողովրդի կեանքի վիճակը և պահանջները, որի ցանկութիւնները՝ աղատ, լուսաւոր, խառնադէմ գաղափարների կողմն են, բայց որը չը գիտէ մշակել նիւթը վէպի համար, որին անձանթ են գեղարւեստի հիմնական պահանջները տիպերի և հոգեբանական ուսումնասիրութեան վերաբերմամբ:

Վիպագրութիւնը, թէև կախած է հեղինակի տաղանդից, բայց նա միևնույն ժամանակ զօրաւոր կերպով հետևանք է և բարեխիղճ ուսումնասիրութեան և պատրաստութեան: Վիպասանը պէտք է կրթի ընտիր օրինակների վերայ, պէտք է ուշադիր կերպով ուսումնասիրի մարդկային ողուշարժումները, պէտք է խորասուզւի իրերի և անձերի չարաբերութիւնների աշխարհը, — որպէս զի նորա գրածքը չը գառնալ կամ հում նիւթի սառն դասաւորութիւն կամ միւս կողմից անզուսպ ֆանտազիայի անկարգ արտայայտութիւն և հեքիաթաբանական ստեղծագործութիւն:

Պարոն Փափազեանի բաղմաթիւ վէպիկների մէջ զոնւում են մասամբ ալն տարրերը, որոնցից կարող է կազմակերպւել ցանկալի վիպասանը: Գեղարւեստական արտայայտութեան տեսակետից չաջող կտորներ չատ կան Խաթ-Սաբալի մէջ, կենցաղավարական և ժողովրդագիտական նմուշներ ցրած են «Գինեգործի աղջիկը», «Արդար դատաստան», «Ալաթակ» և միւս պատկերներում: Հոգեբանական մի երկու մոմենտների վերայ մենք մատնացուց եղանք վերևը. հետաքրքրական պատմածք, բաւականին կանոնաւոր, ներկայանում է «Խերան»-ում, չաջող նմանողութիւն՝ նկատւում է «Պարսկական Ջրույններում»: Գծադրտաբար չենք կարող օրինակներ բերել տիպերի կողմից, որովհետև դոքա բացակալ են, չը նախելով ալն կարծիքին, որ ըստ երևութիւն ունի հեղինակը իւր զուրս բերած հերոսների մասին:

Պարոն Փափազեանը պէտք է նախ, քան վէպի գրելը, լաւ որոճալ նորա բովանդակութիւնը իւր երեւակալութեան մէջ, նորան պատկերացնի

իրեն կեանքի մի վերաստեղծումն և վետոյ թղթի անցկացնի նորան: Տպելուց առաջ էլ՝ նա պէտք է խիստ քննի և անխնայ կտրատի նորան, ազատելով աւելորդաբանութիւններից և արհեստական լաւելածններից: Նա չը պէտք է երբէք դրաւի աճ տեսակ ինքնամխիթարիչ բաներով թէ «հասաւ պատկերում ես խաչտառակեցի վաշխառուին, կամ քահանային, կամ միւլգիրին և փաշային, աջնոեղ ցույց տւի հալ բոշալի կատարելիք դերը, հալ քիւրդերի զոյուլթիւնը և ալլն»: Այդ նպատակները՝ վէպի կամ պատկերի կատարելիք գործի միայն մի մասն են կազմում, որովհետեւ պատկերը, եթէ նա պատկեր է, պէտք է հարադասութեան կնիք կրի իւր վերայ և նա «չտէրաւ» չէ քննի զանազան նպատակների ծառայելու համար ¹⁾։

Եթէ ընթերցողը ազդոււմ է կեանքի պատկերից, ալլ աճն պատճառով է, որ նա հաւատում է հեղինակին, նորա ճշմարտապատում լինելուն: Իսկ եթէ նա համոզւի, որ նորան տւած կեանքի պատկերները չինծու են, անհարազատ իրականին, հնարած զանազան դիտումներով—նա կամ կը փակի գիրքը, կամ կը կարդալ նորան իբրև հեքիաթ՝ ժամանակ անցկացնելու կամ ուղիղը զբաղեցնելու նպատակով: Աւելացրէք դորան, եթէ պատկերի մէջ պակաս է իրերի, հանդամանքների և միմեանց հետեղ երևոյթների պատճառաբանական կապը, որով միայն վրածքը ստանում է հետաքրքրական և ուսանելի ստեղծագործութեան կերպարանք:

Յօդւածի սկզբում ասացի, որ հեղինակի ոճը սահուն է, թեթեւ: Պէտք է սակաճն նկատեմ, որ լեզւի մէջ կան շատ անկանոնութիւններ, որոնք՝ իմ կարծիքով՝ հեղինակի արագագրութեան, սաստիկ շտապելու և անուշադրութեան հետեանքն են: Կործես հեղինակը երբէք վետ չի կարդում իւր գրածքը, ալլ ուղիղ լանձնում է տպագրութեան:

Վիպասաններ մենք քիչ ունենք, նա մասնաւոր ախպիւսներ, որոնց դրիչը նւերած լինէր թիւրքահալ ժողովրդի կեանքին: Յաւալի կը լինի, եթէ պարոն Փափաղեանի նման մի վիպագրող, որ արեւ է գիտողութիւնների ալլ կեանքի վերաբերմամբ և որը զուով չէ աճն տարրերից, որոնցից կարող է կազմակերպւել վիպասան, մնալ իւր ներկալ զրութեան մէջ և փոխանակ զեղարեւոտական պատկերներ տալու, ներկայացնի արհեստական կերպով կազմւած վէպիկներ, լի չափազանցութիւններով և անբնականութիւններով: Վէպն էլ մի տեսակ օրգանական շինածք է, որը պէտք է օրինաւոր կերպով կազմակերպւի երևակալութեան աշխարհում և վետոյ գրի անցնել:

¹⁾ Դա չէ նշանակում, որ վէպը չը պէտք է պարունակի իւր մէջ տեղեկացիա, կամ նպատակ: Բնդհանաւալը, նա պէտք է շիտակցական ստեղծագործութեան արդիւնք լինի և հաստատա նպատակների ծառայող մտքի ծնունդ: Սակայն կեանքը չը պէտք է դուրս բերել վէպում աշխարհուած: Մի ուրիշ անգամ կ'օգտուենք աւելից աւելի մանրամասն խօսելու այս կէտի մասին:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆ, ՀԱՅԵՐԵՆ-ՈՌՈՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ. -- Թիֆլիս,
տպ. Յ. Մարտիրոսեանցի 1891 (թ. 1):

(Շարունակութիւն 1)

«Սակալն իմ գլխաւոր նպատակը ան էր, ասում է պ. Սաղուբեանը, որ բառարանս գործածողը գտնի այս և ան բառի-ճիշդ և գլխաւոր նշանակութիւնը. թէ որքան աղ նպատակին լաջողել է ինձ համեմել ան պարմաններում, որ ես աշխատել եմ, աղ թող գատեն ուրիշները»:

Ձը գիտեմ ինչ կարծիքի են ուրիշները, ինձ գոնեա թվում է, որ բառարանի և աղ մասը տարաբաղդաւար լաջողված է. չը գիտեմ նոյնպէս ինչ են ան «պարմանները», որոնց վերաջ պ. Սաղուբեանը լառաջադոն պատրաստվում է իւր «գլխաւոր նպատակի» անլաջողութեան մեղքը գցելու: Եթէ աղ պարմանների թվումն է, ի միջի ալլոյ՝ նորա արդէն մի անգամ վիշած ժամանակ չ'ունենալը, աղ ի հարկէ լուրջ պատճառաբանութիւն է. չենք կարող խօ ենթագրել թէ, առանձին մի երկար ժամանակ է հարկաւոր ուսումնասիրելու թէ արդեօք ԼՄ է նշանակում և ոչ՝ ужели, неужели. թէ՛ դ ա ո ՞ ն г о р ь к и й նշանակելով չէ կարող նշանակել приторный, քանի որ приторный նշանակում է չ ա փ ա ղ ա ն ց ք ա ղ ց ր (սրտի տվող, սիրտ առնող). երան ի — блаженъ! ալն, բալց փորձեցէք ուսուրէն աղ միակ նշանակութեամբ, որ տալիս է պ. Սաղուբեանի բառարանը, թարգմանել ան բաղմաթիւ դէպքերը, որոնց մէջ տեսնում ենք երան ի. դորօր,՝ երանի քեզ, երանի չը գալիր, երանի թէ, երանի տալ և ալն. կամ թէ ն ա խ ա ր ա ր բառը. ինչ «պարմաններ» կամ ժամանակի սղութիւն կարող էին արգելել հեղինակին բերել բառի խակական և ճիշդ նշանակութիւնը և չը սահմանափակվել աղ բառի անճիշդ և շինծու նշա-

նակութեամբ: Ոչ, ալս և սոցա նման ղէպքերում ժամանակի սղութիւնը ոչինչ կապ չունի դործի չաջողութեան հետ. պատճառները ալ են և աւելի խոր են. բայց աղ մեղ չէ վերաբերում. մենք դործ ունենք Փակտի և ոչ փաստի հետ. իսկ ֆակտը աջն է որ պ. Նաղուբեանի բառարանը շատ լաճախ տալիս է բառի ոչ ճիշդ և ոչ գլխաւոր նշանակութիւնը, լաճախ սխալ նշանակութիւն անգամ: Նոյնը կարելի է ասել և բառարանում բերած զարձկածների վերաբերեալ. շատերը, պարզամտաբար զարձկածներ համարվերով՝ տեղ են դրել բառարանում. շատ իսկական, զործածական և բնորոշ զարձկածներ բաց են թողված: Դիմենք օրինակների.

«**Բռն**» — абазъ, двухгривенникъ (պարսերն՝ **دوگروینیک** կամ աւելի լաւ՝ **دوگروینیی**). հարկաւոր էր՝ իմ կարծիքով՝ աւելացնել 20-ти копѣчная монета, որովհետեւ, ինչպէս եւ նկատել եմ, Վովկասում ցրивенникъ-ի և двухгривенный-ի քանակութիւնը շատերին չափնի չէ:

«**Գրաւ**» — освободить. հարկաւոր էր զինք և избавить. զորօրինակ աղատեցէք ինձ ձեր ներկայութիւնից—ոչ թէ освободите ալ избавьте меня отъ вашего присутствія. նոյնպէս բերելու էր և спасти:

«**Գրաւոր**» — извѣститель; официантъ. աղ բառը հէնց իւր կազմութեամբ չէ կարող նշանակիլ официантъ:

«**Դռն**» — стулъ; табуретка. ապա ուր է ալն նշանակութիւնը (престолъ), որ պիտի ունենալ աղ բառը ալսպիսի ղէպքերում՝ ս. էջմիածնի աթոռը, աթոռ իշխանութեան և ալն. նոյնպէս և աթոռան իստ—պիտի ունենար престольный նշանակութիւնը, որ բառարանը չէ տալիս:

«**Դրաւոր**» — ինչո՞ւ անպատճառ և միայն лабазникъ, և ոչ мучникъ, мучной торговецъ:

«**Դրաւոր**» — мучнистый } ապա ինչպէս պիտի թարգմանով՝ ալիւրոտ:

«**Դրաւոր**» — мучнить } չորեք, չորեքը ալիւրոտել և ալն:

«**Դրաւոր**» — барство, — ծախել куражиться. ճիշդ չէ. եւ կը թարգմանէի важничать, корчить. ломать барина:

«**Դրաւոր**» — горничная, ինչո՞ւ միայն горничная և ոչ նոյնպէս служанка, մինչև անգամ հին նշանակութեամբ раба:

«**Դրաւոր**» — родникъ. չեն տրված ключъ, источникъ, քանի որ ալն, վերջին բառով պիտի թարգմանովի աղբիւր բառը ալսպիսի զարձկածներում՝ աղբիւր հարստութեան, շարադրութեան աղբիւրները և ալն:

«**Դրաւոր**» — прахъ. նախ և առաջ պիտի լինէր пепель, зола, մինչդեռ բոլորովին չը կա:

«**Դրաւոր**» — միայն аукционъ, չը կա торги. առաւել որ հետեւեալ՝ աճր. ախօսութիւն բառի նշանակութեան մէջ аукционъ բառը չէ մտնել ալ միայն торги:

«**Դրաւոր**» — устыдить, չը կա пристыдить:

каеда. միւս նշանակութիւնը՝ աւելի բառապէս՝ չը կալ—
амвонъ:

свирѣбный. չը կալ свирѣбный, лютый. օր. ամէնի զաղան,
ամէնի հրէշ:

приправлять. չը կալ усладить, смягчать, преклонить:

гроза, громъ, трескъ. նշանակում է гроза, громъ, трескъ.
Հալկազեան բառարանում բերած օրինակներէց մինը գեղեցիկ տեսակ բա-
ցատրում է ալք բառի նշանակութիւնը. «Ամպրոպը՝ խռովութեան և վրը-
ղովման անուն է, որպէս չամպս է տեսանել, չորժամ որոտմունք լինի և
կալծակունք»:

съ крѣпкими стѣнами. ևթէ մէկ անգամից տրված լինէր
обнесенный крѣпкими стѣнами, крѣпкостѣнный, ալն ժամանակ հարկա-
ւոր չէր լինիլ բերել՝ ամրապարիսպ քաղաք, բերդ—մի պարզ բան, որ
հեղինակը դարձված է համարել, չառաջ բերել և թարգմանել: Օգուտ քա-
ղելով դէպքից չառաջ բերենք ալստեղ մի քանի օրինակներ ալք տեսակ
դարձվածներից, որոնք ծիծաղելու համար պարզամիտ են և ոչինչ առանձ-
նապատկութիւն չը պարունակելով, դարձվածներ չեն կարող համարվել և
թարգմանվում են բառացի: Գեռ աղմկալից նիստ—бурное, шумное
засѣданіе դուք միտք ունենալ բերելու և թարգմանելու, առաւել որ
աղմկալից բառի տակ պ. Եղորեանը չէ բերում бурный նշանակու-
թիւնը, իսկ նիստ բացիլ засѣданіе նշանակում է և сздѣніе, присутствіе,
сѣансъ (տես նիստ բառը). ուրեմն աղմկալից նիստ սխալ թարգ-
մանելու առիթ չը տալու համար մէջ բերել և թարգմանել. բալց ինչ
կ'ատէք ալսպիսի դարձվածների համար:

быть осторожнымъ (բառարանում՝ զգուշ—осторожный,
լինել—быть):

небо покрылось тучами (բառարանում ևրկինք—небо,
ամպիլ—покрыться тучами):

писать письмо (բառ. նամակ—письмо, գրել—писать).
մնում է դարմանալ թէ ինչո՞ւ գիրք կարդալ, հաց ուտել, ջուր խմել և ալն
դարձվածներ չեն համարված, չեն բերված ու թարգմանված:

европеецъ—европейцы. ինչո՞ւ և ասիացի—азіатецъ
չունի նույնանման դարձվածը—ք. азіатцы. իսկ աֆրիկացի, ամերի-
կացի, աստորիացի իսկ բոլորովին չեն մտել բառարանի մէջ:

густой лѣсъ (բառար. բազմախիտ—очень густой,
անտառ—лѣсъ):

складная кровать (բառ. ծալովի—складной, ան-
կողնակալ—кровать):

добывать средство къ жизни (բառ. ամրուստ—сред-
ство къ жизни, ձարել—добыть):

բանոր գրականութիւն — устная литература (բառ. բանասոր — устный, գրականութիւն — литература):

գաղափարներ հարդ — съ идеями человекъ (բառ. գաղափարատէր — съ идеями, հարդ — человекъ):

բռլ տնկել — тупой уголъ. (բառ. բռլ — тупой, տնկել — уголъ):

գալուիւր — быть съѣденный волками (բառ. գալուիւր — съѣденный волками):

գալուիւր լիւն — быть растерзанный волками (բառ. գալուիւր — растерзанный волками, լիւն — быть):

գաղափար քաղ — вѣтъ города (բառ. քաղաք — городъ, գաղափար — вѣтъ):

Այս տեսակ իբր թէ դարձվածների օրինակներ շատ կան, բոլորն էլ բերելը եւ հարկ չեմ համարում:

հիշել — резюмировать. միթէ ալ միակ եւ գլխաւոր նշանակութիւնն է. նշանակում է եւ соединять, заключать въ себя, содержать.

այգի — утренняя пѣсня, серенада. այս վերջին նշանակութիւնը սխալ է եւ կամայական (տես «Մուրճ» № 2, էրես 301):

այծ — коза. ինչո՞ւ ոչ նոյնպէս եւ козель, առաւել որ դորա անականը ալ ծ եւ ալ բառարանը տալիս է ոչ козий ալ козлий:

անգլխութիւն — немилосердіе եւ միայն, հարկաւոր է եւ жестокость, безжалостность, безчеловѣчность. ինչպէս եւ անգլխութ, բացի немилосердый, նոյնպէս եւ жестокий, безжалостный, безчеловѣчный:

անգիտել — не признать, игнорировать. հարկաւոր է եւ незнать, неведать. առաւել որ հետեւալ բառը՝ տեղի տալով թարգմանած է незнание, неведѣніе:

անգրգգգ } ոչ միայն неграмотный, неграмотность, ալ եւ без-
անգրգգգ-ութիւն } грамотность, безграмотный:

անկոտոր — непрочный. պէտք էր եւ невѣрный:

անկոտորակ — непостоянный, նոյնպէս եւ неимѣющий твердой воли:

անճիւղէ բռնել — находиться въ недоумѣніи. կարելի էր մէջ չը բերել իբրեւ մեծամասնութեանը անպատ դարձված:

անշուշտ — непременно. չը կալ ալ բառի աւելի ճիշդ նշանակութիւնը՝ несомнѣнно, безъ сомнѣнія, конечно:

անշուշտ — сладкій չը կալ գլխաւոր նշանակութիւնը՝ пріятный. օրինակ՝ անուշ հոտ (ալանգիդ՝ անուշահոտութիւն) քրքրաւիտ, անուշ գինի՝ пріятное вино, ալ է сладкое вино (քաղցր գինի), անուշ ձա՛ն եւ ալլն:

անպիտ — непригодный. ինչո՞ւ ոչ եւ негодный. օր. անպիտք բան, անպիտք մարդ եւ ալլն:

անտեսել — игнорировать. հարկաւոր էր աւելացնել, отвергать, не заботиться, пренебрегать:

«*безъ хозяина, безхозяйный*» միթէ ալդ բառը գրեւոր հեղինակը չէ վիշել «Ծրիծեռնակի» ալն տողը, ուր ասված է՝

«Աստ անտէր ու խեղճ եմ ես»:

Թէ ալս և թէ հազարաւոր սորա նման ղեպքերում բառարանի ասված նշանակութիւնը անպէտք է. նա տալիս է բառացի և ոչ կարեւոր նշանակութիւնը, որ է՝ *безпомощный, покинутый*.

«*нажива*» } հարկաւոր էր } *нажива* } նոյն- } *стараніе*
 «*нажива*» } աւելացնել և } *нажива, приобрести* } պէս և } *стараться*

«*глазъ*» — *глазъ* — *пріохотиться*. ալս դարձվածը սխալ է թարգմանված. աչք ղնել նշանակում է *зариться, мѣрить, имѣть виды*. աչքի ընկնել — *бросаться въ глаза*, հարկաւոր է *аւելացնել և выдаваться*. աչքի ձգել (*կամ աւելի չաճախ՝ գցել*) — *перестать кого любить, охлаждаться къ кому* (ուզում է *аւել*՝ *охлаждѣть къ кому нибудъ*. աչքից ելլել մեզանում ասում են՝ *աչքից ընկնել* — *перестать быть симпатичнымъ (!)*, *съ глазу долой*. ալս վերջին նշանակութիւնը չունի. *աւելի լաւ կը լինէր թարգմանել* *попасть въ немилость, въ опалу*. Պահասում են *ալնպիսի դարձվածներ*, որոնք *անհամեմատ աւելի իրաւունք ունին բառարանում տեղ գտնելու քան նա մակ գրել*, բաղմախա անտառ, Եւրոպացի, — *ք և ալն*, *ինչպէս աչքի անցնել*, *աչքը (ս, դ) լոյս*, *աչքը (ս, դ) լոյս անել* (*зѣница ока, свѣтъ, свѣтигъ, ненаглядый*). *աչքի լոյսի նման* (*կամ պէս*) *պահել* (*беречь, хранить, какъ зѣницу ока*), *աչքիս վերայ*.

«*бесплодный*» — *бездесплодный*. *պակասում է* *бездесплодный, безрезультатный*.

«*жизнь*» — *жизнь*. *պակասում է*՝ *իրեւ դարձված՝ ապրեալ, շատ ապրեալ*, որը չնորհակալութիւն կամ գովասանք է նշանակում և մի քանի ղեպքերում էլ մի քիչ նաև զօջաղ. *ողջկալ կամ կնոջ համար ասվում է՝ ծաղկեալ* (բառարանում *ալդ էլ է պակասում*): Ալդ տեսակ դարձվածը չը տալով, մի քանի բառից չեսող պ. Եւրոպեանը չէ մոռանում տալ՝

«*добывать*» — *добывать* средство къ жизни (*տես վերեւ*).

«*цѣлованіе*» — *цѣлованіе* руки, деньги, которыя даютъ священнику. միթէ ինչ փող որ տալիս են տէրութիւն նշանակում է, աջահամբոյր, *деньги*, которыя даютъ священнику հարկաւոր էր *աւելացնել՝ ինչու համար* (за исполненіе требы *կամ սորա նման մի բան*):

«*брачный*» — *парусъ*. *իսկ միւս նշանակութիւնը* — *брачное ложе, брачный чертогъ*:

«*брать, взять*» — *аլդ միևնույն բանն է*. *փոխանակ միևնույն բանը հրկու ձևով գրելու, աւելի լաւ չէր՝ չը մոռանալ ալդ բառի* *купить* նշանակութիւնը, որ բառարանի հեղինակը մոռացել է: *Դարձված՝ բան առնել* — *вмѣщать, брать въ себя*. *եթէ ինձ պատահէր ալդ խօսքերը թարգմանելու, առանց բառարանին նախելու կը թարգմանէի՝ вещь* *купить, взять*

աւերել—стирать, разорить. **աւերելք** разрушить: **ալ**. Եւաղուրեանը, որ աւերում է աստուածային ուսանելն բաշի կատարեալ ձեռքերէն, այս ղէպում (стирать) շատ անգամ ղ բացառութիւն է անում և բերում **СТИРАТЬ** բաշի անկասար ձեռք, մոռանալով որ **СТИРАТЬ** նշանակում է և (չոր) լվանալ, որի կատարեալ ձեռն է **ВЫСТИРАТЬ**: Իսկ որորհտե հակերէն աւերել այդ նշանակութիւնը չունի, ուրիմն այս ղէպում հէնց ընդհակառակը պիտի բերէր բաշի կատարեալ ձեռք **стереть**, առաւել որ այդ բաշը միայն այդ ձեռք է նշանակում **աւերել**:

ափ—берегъ || ладонь. նշանակում է և **гореть**:

ափառանք—жадность չէ բերված **сожалѣніе**, որ աւելի է ամառանք նշանակում քան **жалость**:

Բազմապար—богатоубранный, **աւելցրէք** богатоукраченный:

Բազմել—возсѣдѣть, возсѣсть. **գահը բազմել**—возсѣсть на тронѣ. Բնչ դարձված է. բառացի թարգմանելով, նոյնը կը տառնանք:

Բազմեցնել—возвести кого, возводить. առաջինը՝ այդ միևնույն բանն է. երկրորդ՝ քանի որ այդ բառը այդ է նշանակում, էլ ինչու է հարկաւոր անհանգիստ լինել թէ՛ **գահը բազմեցնել** չին կարող թարգմանել՝ **возвести на тронѣ**. և երրորդ՝ այդ բառի առաջին և պարզ նշանակութիւնն է **посадить**, որ չէ բերված:

Բազմեցէ՛ք—на многіе дни. այդ թարգմանութիւնը անհասկանալի է. օրինակ (դարձված) **պէտք էք**, այդ բառի պարզ և ճիշդ նշանակութիւնն է **многодневный** (և ապա՝ **старый**). Համեմ. **ամենօրեալ**—**ежедневный** (որ չէ կա՛նք բառարանում), **միօրեալ**—**однодневный**:

Բաժնի—доля порція, приборъ. այս վերջին նշանակութիւնը չունի. իսկ ունեցածը չէ բերված՝ **часть**, **отдѣлъ**, **отдѣленіе**. հարկաւոր էր բերել և բաժին **անել** դարձվածը որը շատ ուրիշ բերվածների նման բառացի չէ թարգմանվում, այս—**раздѣлить**, **дѣлить** (между)—**փալ** անել. բաժին **հանել**, **удѣлить**, **давать долю**:

Բախ—счастье. **պակասում է** (удѣба, բերված են դարձվածներ՝ բախում և բախմամբ.—ի բերում և չեն լինված որ այս մարդու բախտը բերում է, բախտը կարում է, իմ բախտիցը:

Բայ—но, պակասում է **а**, ինչպէս և

Բայ (и такъ; а то). պակասում է **а**, **но**:

Բան—вещь, дѣло. բերված է իբրեւ դարձված բան **սանհալ**—**имѣть дѣло**, որ տառնեց այդ օգնութեան էլ աղբակն կը թարգմանվէր. բայց չը կա՛նք բան **չունի**ս, բան **չունի**ս, բանի լինել (և բանի զենք), Բնչ բանի և և ալն. չէ բերված բան բառի միւս՝ ոչ պակաս գլխաւոր նշանակութիւնը—**трудъ**, **работа**. չէ որ լեռն մէջ տեղ է դալիս բան **սանք**—**рабочій**, **рабѣтникъ**, որ առաջացել է անշուշտ բան բառից նորա **работа** մարտ, **сраженіе** և բան **անել**—**работать**, **трудиться**, որ

բառարանում նոյնպէս պակասում է ինչպէս և բան դցել (ժամացուցի մասին)—заводить: վերջապէս՝ բան (մի բան) նշանակում է և что нибудь, что-то, нечто, որ նոյնպէս պ. Նաղուբեանի բառարանը չէ տալիս:

Բանալ—открыть, раскрыть, разводить. բառական կը լինէր, եթէ այս վերջին բալի կողքին փակագծում զնվէր о красках, որովհետեւ բանալ միայն այդ գէպքում է նշանակում разводить:

Բանախոյ } բոլորովին սխալ են թարգմանված:
Բանախոյնն } տես վերեւ ծանօթ. 17:

Բանաւոր—устный. և փետոյ՝ մի դարձված—բանաւոր գրականութիւն—устная литература. արբը նոր ստացիք՝ բանաւոր—устный, փետոյ՝ գրականութիւն բառարանը տալիս է մեզ—литература, էլ ինչ հարկաւորութիւն կար այդ երկու բառն էլ մէջ բերելու և թարգմանելու. միթէ պ. Նաղուբեանի բառարանի օգնութեամբ կարելի էր այլ տեսակ թարգմանել: Ի տեղի քերականական վարժութիւններ տալու, պ. Նաղուբեանը աւելի լաւ կ'անէր, եթէ չը մոռանար բանաւոր բառի միւս՝ ոչ պակաս կարեւոր նշանակութիւնը—разумный, словесный (հակադրում է՝ անբան), այն ժամանակ զոնեա փոքր ի շատե միաք կ'ուսենար բանաւոր գրականութիւն մէջ բերելը և թարգմանելը:

Բանաւտ տես վերեւ բան:

Բանկոյտ (պակասում է բարկացկոտ)—гнѣвлиый, раздражительный, միթէ պակաս լաճախ նշանակում է ուղղակի сердитый:

Բարձրագագն—ինչո՞ւ անպատճառ съ высокими вершинами. այդ ածականը կարող է ստանալ մի առարկայ մի գաղաթ ունեցող, ուրեմն—съ высокой вершиной:

Բարձրանոց—плоскогоріе, возвышенность. բացի գոգականի նշանակութիւնից այդ բառը ունի և ածականի նշանակութիւն բարձր, возвышенный. և ընդհակառակը՝

Բարոյական—правственный—բացի ածականի նշանակութիւնից ունի և գոգականի նշանակութիւն—правственность, правоучение (զորօրինակ առակի բարոյականը):

Բարձ (կամ՝ բարեւ) здравствуй. ինչո՞ւ միայն եղակի, քանի որ здравствуйге նոյնպէս նշանակում է բարով. մնաս բարով—счастливо оставаться, պ. Նաղուբեանը, ուրախանալով որ զտու է ռուսերէն մի դարձված, որը բառացի համապատասխանում է հայերէն մնաս բարով դարձվածին, մոռանում է այդ դարձվածի ամենօրեայ գործածութիւնը прощай մոքով. հարկաւոր էր աւելացնել և մնաս բարով ասել—прощайся:

Բար՝—правъ,—ու. վարք—образъ жизни. աւելացնելու է և поведение.

Բար բառի տակ բերված է մի դարձված՝ բացը մնալ, որը անպատ է: Բերանին քալ—возражать (?):

Բերել—нести, принести. պահառում է вести (водить), привести (приводить), везти (возить), привезти (привозить). պ. Երազմանը, որ անգլան զգուշ է որ վախենում է մի գուշ է չը կարողանան առանց իւր օգնութեան թարգմանել՝ նամակ գրել, զգուշ է լինել, բազմախիտ անտառ և ալը, չէ օգնում, երբ հարկաւոր է՝ թէ ինչպէս պիտի ուստի թարգմանվի օրինակ և բնական բերել:

Բեռ - ПОЛЮСТЬ. բաց է թողլած ГВОЗДЬ նշանակութիւնը:

Բժշկանոց իբրև МЕДИЦИНСКАЯ ШКОЛА անվանող բառ է, այդ բառը իւր կազմութեամբ չէ կարող աղբ նշանակութիւնը ունենալ. համանման կազմութիւն ունեցող բառերին նախած՝ բժշկանոց պիտի նշանակէ մի հիմնարկութիւն կամ տեղ, ուր բժիշկներ են կենում կամ հաւաքվում (համեմ. գժանոց, փետանոց, դարմանանոց և ալը): Այդ՝ իսկապէս աւելորդ բառի փոխարէն հարկաւոր էր կաղմիւ և մէջ բերել մի բառ, որ նշանակէր ЛѢЧЕБНИЦА (օրինակ բուժարան):

Բժշկանք—лѣчение նշանակում է, բաց Լѣкарство չէ նշանակում. աւելի լաւ կը լինէր աղ օխալ նշանակութեան տեղ (лѣкарство) բառաբանում գտնելնք исцѣление:

Բնապշտ—натуральность

Բնապշտական—натуральностический } անվանող բառեր են:

Բնաջնջ—քանի որ չէ բերված բառի նշանակութիւնը (истребленный, искорененный), հարկաւոր էր բնաջնջ անել զարծվածի հետ բերել և բնաջնջ լինել:

Բոլոր—բառի տակ բերած տարի բոլոր (круглый годъ) ասում ենք տարին բոլոր: Եւ ինչո՞ւ միայն բոլոր երես պիտի նշանակէ круглое лицо, քանի որ կա՞ն և լաճախ դործածական՝ կլոր երես:

Բոլոր—пыль, կրքի—ման ժամանակ. բոլորք բառի սեռականը չէ բոլորք ման, այլ դա պիտի բերվէր ներքեւ՝ բոլորքում (ն) բառի տակ. և բացի աղ՝ կիրք չէ նշանակում гнѣвъ, այլ страсть:

Բոյ (==բոն)—гнѣздо. гнѣздо նշանակում է միայն (եթէ չը լինենք փոխաբերականը, զորօրինակ՝ гнѣздо разбойниковъ) թռչունի բուն. մինչդեռ հալերին բուն նշանակում է և կենդանիների ու զազանների բուն. ուրեմն հարկաւոր էր՝ բացի гнѣздо, նշանակել և нора, берлога. բացի աղ՝ բուն բառի տակ աւելորդ չէր լինիլ բերել՝ բուն զննել, բուն չինել, որոնց ուստի լաւ և ճիշդ թարգմանելը անհամեմատ աւելի գժվար է քան թէ նամակ գրել—писать письмо կամ բուժ անկրկն—тупой уголъ:

Բոն—тупой, —անկրկն—тупой уголъ (չնորհալաւութիւն—мерси! բառար. եր. 338); знакъ препинаія, замѣняющій запятую. ասանքներ՝ ալնպէս է մեկնված, իբր թէ ստորակէտի փոխարէն կարելի է բուժ գնել:

երկրորդ՝ սխալ մեկնություն է. պիտի լինել, բոլոր (') — знакъ, соотвѣг-
ствующій тире (или черточкѣ) или двоеточию (иногда и запятой):

Բարան — цвѣтникъ, оранжерея. երկրորդ նշանակությունը քեֆի
բան է:

Բռնել — держать, поймать; приняться. (ծառը բռնեց — дерево при-
нялось). բառարանի տված աղբ նշանակությունը դժվար կը լինի
թարգմանել ջալը բռնեց, աչն պիտի բան բռնեց և այլն. իսկ
աչն մարդը լւր ուրդու համար վարժապետ բռնեց կամ ևս
ծառաչ բռնեցի միամիտ մարդը, հաշտարով պ. Նազուրեանի բառա-
րանին, պիտի թարգմանէ՝ этотъ человекъ поймалъ учителя, կամ я
поймалъ слугу. ճիշդ աղբն, ինչպէս մի հալ, ուղեւորով մի ուսուի տակ
թէ ինչը մեծ օջաղի զաւակ է, տակ է я большой кухни сынъ.

Գալ — придти, приходить (մի և նոյն բանն է կրկնված). պահատւ է
прѣхать, (прѣзжать). չը կողմանի գալ:

Գալագալութիւն — съ идеями, — մարդъ человекъ съ идеями. համեմ. նա-
մակ — письмо, գրել — писать — նամակ գրել — писать письмо:

Գաղտնապահ — умышленно скрывать тайны. ինչու ոչ тайну (համեմատ.
բարձրագագալ):

Գալալել (պիտի տրվել և գալ թաղի). զործածական է գալ-
թաղալել — соблазняться, իսկ возмущаться է նշանակում. որինն սխալ է
և возмутить, возмущающій негодование, возмущение.

Գալալութիւն — съѣденный волками, — լինել бытъ съѣденнымъ волками,
նոյնպէս և

Գալալութիւն — растерзанный волками, — լինել бытъ растерзаннымъ
волками — աւերորդ զոհութիւն. ամենամանրորձ թարգմանորդ հէնց նախ
և առաջ աղբն կը թարգմանէր, իմանալով բառարանից գալալակեր,
գալալալալալալ և լինել բառերի նշանակությունը:

Գալալութիւն — жалобщикъ. բերելով զգուշ լինել, գալալակեր
լինել, գալալալալալալալ լինել, որոնք ուսուրէն բառացի ևն
թարգմանութեամբ ապա և աւերորդ ևն, պ. Նազուրեանը, ընդհակառակը՝ չէ
բերում գալալալալալալ լինել, որ ուսուրէն թարգմանութեամբ է жало-
ваться, имѣть жалобу на кого нибудь. որին. այն պարունները ձեռնից
գալալալալալալ ևն — эти господа жалуются на васъ. իսկ жаловаться
մի խորով անում ևն:

Գալալութիւն և ոչ գալալալալ:

Գալալութիւն — кудрявить. տեղիքը курчавить, առաւել ևս завивать:

Գալալութիւն — казначейство. մի գիրք կա, որի անունն է «Գանձարան Սրա-
մեան լեզուի», պ. Նազուրեանի բառարանը տվորիցն է մեկ թարգմանել
աղբ գրքի անունը «Казначейство армянскаго языка» ոչ միայն աղբ, այլ

շատ ու շատ ուրիշ գէպքերում կը հարկաւորվին: Եւ ի՞նչ բանի բառարանում պակասող նշանակութիւնները казнахранилище, сокровищница:

Գռն — ягненокъ, барашекъ. ապա թարգմանեցէր զրանցով օրինակ գառն Աստուծոյ, ուրեմն պիտի բերվէր և агнецъ:

Գեղարեւ — ալի բառի նշանակութիւնները մէջ типичный չը պիտի բերվէր, որովհետեւ типичный չէ նշանակում զեղեցիկ տիպ ունեցող, ալ՝ բնորոշ տիպ ունեցող:

Գեղգեղան — переливъ голоса, фюритура (муз.) ալս վերջին նշանակութիւնը կարելի է դուրս դնել:

Գեղակ — рѣчка, истокъ рѣки նշանակում է և притокъ, истокъ рѣки հասկանալու համար պիտի ալ նշաղական մասնով չը համարենք ի հարկէ, ալ զետեղան (? ծանօթ. խմբ.) և հէնց գործ էլ է անվում զետի ալ, աղբուրի ալ:

Գեղեկ — դարձված՝ գետն է գետին խփել. թէ գետն է բառի ձևից և թէ մեղանում անպատ լինելուց երևում է, որ տեղական դարձված է (Ախալց.) և թվում է ինձ, որ սխալ է թարգմանված:

Գեղեցիկ — разостланный, поверженный по землѣ, разостланный по землѣ զեռ կարելի է (թէ և ինչու ոչ на землѣ), բայց поверженный на землю և ոչ по землѣ:

Գեղեցիկ — волочатый по землѣ. բայց զորանից ունի և չէզոք և կրաւորական նշանակութիւն:

Գեղել — взять въ плѣнь, поработить. աւելացրէր плѣнить և անպատճառ плѣнить. որովհետեւ գերել բայց իւր բուն նշանակութիւնից ունի և փոխաբերական նշանակութիւն, ինչպէս և ռուսերէն плѣнить:

Գեղեցիկ — взять въ плѣнь. աւելի ճիշդ նշանակութիւնն է уводить въ плѣнь, նույնպէս ասում է և գերի վարել. իսկ взять въ плѣнь (բայց գերել) գերի առնել:

Գեղեցիկ — поработитель, աւելացնելու է плѣнитель և плѣнительный:

Գեղեցիկ — плѣнь, невольничество; рабство, պակասում է неволя և плѣнение (զորորինակ Вавилонское):

Գեղ — чесать (шерсть). կարելի էր և հարկաւոր էր բերել դարձված՝ բռնողը գողել — трепать, дать трепку կամ встрепку. պակասում է ալտեղ գողգողել բառը:

Գեղ — худой, дурной (բովանդակութեամբ, բարւապէս). ալ մտքով զործածական է միայն արևմտեան քարառներում. իսկ արեւելեան հայերէնում ալ բառը նշանակում է միայն дурной (անբով, արտաքինով). նույնպէս և

Գեղեցիկ — худо, зло (արևմտեան հայերէնում — վատութիւն, արեւելեան հայերէնում — սղեղութիւն дурнота, некрасивость, որ բառարանում չէ բերված, իսկ худоба ալ չէ նշանակում (լգարութիւն):

Գեղեցիկ — курить вино. զինին չեն քաշում, ալ արաղն են քաշում:

Քիշեր — ночь. դարձված՝ գիշերով գնալ иди ночью. նախ՝ կարող է լինել և **Ֆхать** ночью. երկրորդ՝ գիշերով առանց անել նշանակում է (թէ իբրև գործիական հոլով, թէ իբրև մակբայ) ночью, բացի որ կարող ենք ասել և գիշերը գնալ և թարգմանել նոյնպէս ночью, որ ասելի հետև է հալերէն ձևից. ուրեմն, եթէ հարկաւոր է, ասելի իրաւունք ունի բերված լինելու:

Քիտալի — знание. պակասում է свѣдѣніе և կարելի էր բերել ի գիտութիւն քб свѣдѣнію:

Քիւր բառի տակ կարելի էր բերել, իբրև դարձված՝ գիր անել:

Քիւղանիւթիւ — крестьянство, крестьяне — շինծու և սխալ:

Քլարիւ հանել — ակերորդ դարձված. իսկ գլխարկը ծածկել մենք ասում ենք և գլխարկը գնել:

Քլու — голова, глава. գլուխ գնել взяться за что սխալ է թարգմանված, գլուխ գնել նշանակում է մտաւորապէս обращать внимание, связаться съ кѣмъ нибудь, возиться:

Քլուիւր ծանաչել — знать себѣ цѣну — երևի տեղական է:

Քլուիւր լուսալ — надуть, спровадить. երկրորդ թարգմանութիւնը սխալ է. спровадить համապատասխանում է հալերէն գլխից անել (վարել, ցանել. գլխից ուղ անել):

Քլուիւր փչել — надуть похвальной, ինչու անպատճառ похвальной:

Քլիւ ելնել սճվատնալ քիւլիւն. երևի նոյնպէս տեղական է:

Քլիւից հանել սճվատնալ քիւլիւն, испортить — սխալ թարգմանութիւն է. ալ դարձվածը մտաւորապէս նշանակում է сбить кого нибудь съ толку, подбить кого нибудь, сдѣлать что н. противъ воли:

Պակասում են հետեւեալ դարձվածները.

Քլուի գործոց, Քլուիւր տանել, Քլուի հանել (մի բանից), Քլուի առնել կամ՝ վեր առնել, վերցնել (օր. Քլուի առաւ, վերառաւ, վերցրեց գնաց), Քլիւն գնել (և նստացնել), Քլիւի գալ (կամ Քլուի գալ), Քլուի ընկնել, Քլիւի վերալ, Քլիւի վերալ տեղ ունիւ, և այլն:

Քլիւր — чернильный орѣхъ. ասում են чернильный орѣшекъ (տես և հետեւեալ՝ գիտութիւն):

Քիւլ — иди; уйди, уходить. ակերցրէք **Ֆхать**, **поѣхать**, **уѣхать**, **ѣздить**. գնալ գալ бытъ знакомымъ, взаимно посѣщать. թող ընթերցողը ինքը նախադասութիւններ կազմէ ալ դարձվածով և թարգմանէ պ. Նազուբեանի տված նշանակութիւնով. անպիսի կուրիոզներ կը ստանալ, որոնց մասին հեղինակը իսկի չի էլ մտածել: Առաջարկում ենք գնալ գալ թարգմանել бывать у. к. н., посѣщать к. н.:

Քիւլ — поѣздъ, походка. գնալ բառի տակ **Ֆхать**, **поѣхать** բառերի հոլը անգամ չը կալ. ալ մի հարկաւորվեցաւ. Գնացք բառի տակ ակերցնելու է և шествіе:

Գոհակութիւն — довольствіе, довольство, առաջին նշանակութիւնը կարելի էր չը բերել և փոխարինել удовольствием. հարկաւոր է անպատճառ աւելացնել благодарность, благодареніе (գործինակ՝ գոհութիւն Աստուծոյ благодареніе Богу):

Գոհանակութիւն — благоволеніе, գորանից աւելի գլխաւոր և ճիշդ նշանակութիւնն է довольство, благодарность.

Գողակութիւն անէշ воровать. ճիշդ չէ, գոհեա միակը չէ, աւելի լաճար թարգմանվում է совершить воровство, кражу. իսկ

Գողանալ միայն украсть չէ նշանակում, այլ և воровать.

Գոյն բառի տակ բերված է երեք դարձված՝ գոյնը թափել, գոյնը նետել, գոյնը դնել. այդ երեքից երկու առաջինը տեղական են. իսկ չեն բերված աւելի ընդհանուր՝ գոյնը վէր տալ, գոյնը թռչել, գոյնը գնալ:

Գովասանք — восхваленіе, хвала. աւելացրէք похвала

Գործ — дѣло, работа. բայց ևն թողված дѣяніе, трудъ, твореніе, сочиненіе. Այս բառի տակ բերված չորս դարձվածներից երկուսը սխալ են թարգմանված. գործի լինել չէ նշանակում примѣститься, пристроиться, այլ թարգմանելու է дѣломъ заниматься. գործ. ինչ գործի ես что ты дѣлаешь? чѣмъ (какимъ дѣломъ) ты занимаешься (կամ заняты)? գործ բռնել — подрачиться ճիշդ չէ, նշանակում է предпринять дѣло. взяться за дѣло (ինչպէս որ թարգմանված է բառարանում) կարող է նույնպէս նշանակել բաց էլի предпринять дѣло և ոչ այն մտքով որ = за дѣло приняться:

Գործարան — фабрика (աւելացրէք заводъ || организмъ. организмъ չէ, այլ органъ:

Գործել — работать || вязать, ткать. միթէ կարելի է գործնով սահմանափակել այդ բառի նշանակութիւնը և մէջ չը բերել дѣлать, совершать, творить, дѣйствовать, выдѣлывать, обрабатывать. չէ որ գործող անձինք (պիտարում, և այլն) թարգմանում ենք дѣйствующія лица և ոչ работающія лица. կամ թէ՛ ինչ անցանք եմ գործում — какое преступленіе я совершаю, дѣлаю և ոչ работаю:

Գործել — дѣятель. տեսնում էք ինչ տեղ հարկաւոր եկաւ գործել բառի չը փշած նշանակութիւններից մէկը. հասարակական գործիչ общественный дѣятель — բազմաթիւ վարժութիւններից (=աւելորդութիւններից) մէկն է:

Գորով — нѣжное чувство, умиленіе. էլ ինչ нѣжное чувство, ուղղակի нѣжность, ինչպէս և

Գորովազուն — нѣжный, чувствительный:

Գոգ նախ և առաջ գոգկան է = яма. իսկ լեռոյ՝ գործ է անվում և անականի մտքով = замкнутый. համեմ. լոյս — свѣтъ, լոյս (անականի

մարտի) — СВѢТЛЫЙ. օր. լուս սենեակ. այս իմ համեմատութեան երկրորդ մասը տարարազդարար մոռացված է բառարանում: Սորա միակ զեպքերը չեն. ում չէ լալանի հալերին դուականի երբեմն անտկանապէս գործածվելու չափաւթիւնը. դեռ հնուց ունինք օրինակ՝ Նա հ սււր հ եր ունէլը:

Գուշ — ТУПОЙ. գուշականի նշանակութեամբ — ФИТИЛЬ — երկի տեղական (Ախալց.) գաւառարանութիւններէից մէկն է:

Գոմարդի — ЭСКАДРОНЪ. այդ բառը ոչ թէ այդ նշանակութիւնը ունի, այլ ուղղում են որ ունենալ. ուրեմն այդ նշանակութիւնը քէֆի բան է. իսկ գլխաւոր և ճիշդ նշանակութիւնը չէ բերված՝ батага, толпа, полчище:

Գրուէր — разношникъ писемъ (?). разношникъ-ը ոչ միայն բերում է այլ և տանում է, իսկ գրարեւր, որ գէր է բերում — податель писемъ:

Գրագէտ — грамотный || литературно образованный. գործ է անվում և литераторъ մարդ:

Գրիտանալիս — обниманіе. անկայրէք և объятія:

Աւարան օրինակներ՝ իմ կարծիքով՝ աւելի քան բաւական են ապացուցանելու համար՝ թէ պ. Նաղուբեանի բառարանը լաջողված չէ և իւր գլխաւոր մասում, բառի ճիշդ և գլխաւոր նշանակութիւնը, ինչպէս տեսանք օրինակներէից, չաճախ չենք գտնում, կամ բերած նշանակութիւններին հետ համահասարակ ուրիշ գործածական նշանակութիւնները չենք գտնում և կամ գտնում ենք ոչ գլխաւոր և ոչ ճիշդ նշանակութիւնը. պատահում է անգամ որ տեսնում ենք բառին սխալ նշանակութիւն տված: Նոյնը, գուցէ միայն աւելի լաջն չափով, կարելի է ասել և դարձվածների մասին. նոյնանից մի ահագին քանակութիւն կարելի է դուրս գցել բառարանից իբրև աւելորդութիւններ, իբրև հասարակ նախադասութիւններ կամ վարժութիւններ՝ չաճախ պարզամիտ և ծիծաղելի, որոնք ոչինչ առանձնապատկութիւն կամ ընտրողութիւն չունին, այլ ուղղակի թարգմանվում են բառացի՝ նոյն բառարանի օգնութեամբ. միևնույն ժամանակը տեսնում ենք շատ կարևոր և բնորոշ դարձվածներ չը բերված, երբեմն բերածներն էլ չը հասկացած և սխալ թարգմանված. կան և աջակիսիք, որոնք միւս բառարաններին ընդհանուր չեն: Այս իմ եզրակացութիւնը ես հիմնում եմ ոչ միայն երեք առաջին տառերի տակ բերված բառերի և դարձվածների քննութեան վերայ, այլ և միւս տառերի տակ գտնվող բազմաթիւ օրինակների վերայ, որոնց վերև բերած կարգով մի առ մի չառաջ բերելը շատ հեշտ կը տանէր, բացի որ՝ մի ազգային եզրակացութիւն անելու համար իմ վերև բերած օրինակների քանակութիւնը, ինչպէս ասացի, ես աւելի քան բաւական եմ համարում:

Աւելին պահանջողներին կարող եմ առաջարկել մի քանի նմուշներ էլ.

Գոմի — ВОЖЪ, — քաշել протянуть на кого ножъ — ուտերէն չէ. ուտերէն ասում են — заносить на к. н. ножъ, замахнуться на к. ножомъ:

Գոմի — СПОКОЙНЫЙ, тихій, — երկխալ спокойный, тихій ребенокъ:

Գործիք — горькій, приторный. Կրկնորդ նշանակութիւնը սխալ է, приторный, ընդհակառակը՝ նշանակում չափազանց քաղցր (և այդ պատճառով զգվելի)։ **Գառն** բացի горькій նշանակում է և прискорбный, печальный, որ բառարանը չէ տալիս։

Գարան բառի տակ բերված են դարան գործել, դարան գնել, խոլ աւելի ընտրելին չը կա՞նք՝ դարան մանել, դարանամուտ լինել։

Գործ — **ВНԷ**. քաղաքից դուրս **ВНԷ** города. հաշուից դուրս **ВНԷ** счета — աւելորդ վարժութիւններ. գոնեա բացի **ВНԷ** города տրվէր և за городомъ։

Ետ — **задъ, назадъ**. **задъ** նշանակելու համար ետ դործ է անվում ետք ձևով. ետ դալ — придти обратно. այդ обратно կարելի էր դնել ուղղակի ետ բառի տակ **назадъ** բառի հետ միասին, այն ժամանակը ետ դալ ով ինչպէս կ'ուզենար, այնպէս էլ կը թարգմանէր. **պ.** Ետդուրեանը կարծես ստիպում է ետ դալ անպատճառ թարգմանել **придти** обратно. իբր թէ չէ կարելի թարգմանել և **придти** назадъ. ետ գնալ **вернуться, возвратиться**. այս **послѣдѣн** խօսքերով կարելի է թարգմանել և ետ դալ. տարակուսութեան տեղիք չոր տարու համար հարկաւոր էր ետ գնալ թարգմանութեան մէջ մտցնել — **идти** (уходить) назадъ։

Երախ — **блаженъ**! տես վերև, և բնեկր։

Էլ — **дискантъ**. գլխի բառի պարզ նշանակութիւնն է **звонкій, звонный**, որ **պ.** Եղբորեանի միտք չէ ընկել։

Ընդունալիք — **воспріятія, усвоенія, уразумѣнія**. անփորձ մարդը կը կարծէ, թէ, դրանք լողնակի թվի ուղղականներ են. բազմ բանից դուրս է գալիս որ դրանք եղակի սեռականներ են. հարկաւոր էր անհամար լիք ընդունելութեան ձևերով մեկնել, կամ զուցէ հէնց ուղղակի բերել՝ ըմբռնողական ընդունականութիւն և այն ժամանակ թարգմանել սեռականով։

Վարարեցնել — **воцарить, царить**. այս վերջինը ամենևին չէ նշանակում թագաւորեցնել և այս հայերէն բառը **царить** թարգմանելը նշանակում է կարծել թէ **царить** անկասար ձևն է **царствовать** բառի և չ'իմանալ թէ **царить** չկա՞ր բառ է **царствовать**, թագաւորել, իշխել, տիրել (**ор.** **царить** тишина)։

Եւ — **что, если, — և хотя**. թէ-ի նշանակութիւնների մէջ պակասում է **или**. պակասում է թէ ոչ не то, а то, иначе։

Ելել — **печь, հաց թխել** — **печь** **хгѣбъ**. ինչու անպատճառ հաց թխել, կարելի է շատ բան թխել։

Ժապոնէնգործութիւն — **ленточное издѣліе**. սխալ է. ուղում է **апель** **ленточное производство**։

Ժպտել (**Ժպտալ**) **улыбаться**. դարձված՝ բախտը **Ժպտում** է — **счастіе** **улыбается**։

իմիջի—պ. Նաղուրեանը մակբալ է համարում. մակբալը, ինչպէս չարտնի է, զնվում է բալի հետ, խոկ ի միջի, ինչպէս ալս զգում է և պ. Նաղուրեանը (բերելով ի միջի ալսոց), գործ է ածվում ալս (ալսոց) բառի հետ, ուրեմն ի միջի մակբալն է, ալ կաղմված է ի նախ-դրից և մէջ զոչականից և պիտի գրվի առանձին ի միջի. ամբողջ դարձվածը ի միջի ալսոց գրարառականութիւն է, միակըն է մեր արդի գրականական և լուսաւոր հասարակութեան լեզվի մէջ:

լեզուանի—говорокъ, говорливый, говорунъ } ուսերէն ալսխօսերը
լեզուանիութիւն—говорливость, болтливость } իսկապէս չատախօսութիւն են նշանակում, մինչդեռ լեզուանութիւն, լեզուանի մենք գործ ենք ածում սոսր, ճարտար լեզու (ոչնեցող) մտքով—остроязычный, остроязычность:

լոյս—свѣтъ. ալս բառի մասին տես վերև գուր բառը:

բռն—умъ. պակասում է разсудокъ, разумъ:

գլուխը խելքը չը կալ (գլխումը խելքը չը կալ)—нѣтъ царя въ гловѣ—չատ խրթին ուսականութիւն է մի աղպիսի անմեղ դարձվածի համար, որ նշանակում է онъ глупъ, дуракъ կամ որա նման մի բան: Խելքը հասնել և խելքը բանի է հասնում միեռնոյն դարձվածն է: Խելքը բան է կարում ոչնեց ոչ не понимает. բաց են թողված խելքս է կարում (կարում է, կարեց և ալն) не думаю (думаю, догадываюсь, соображаю, сообразилъ, догадаюсь) օր. խելքս ալնպէս է կարում թէ որ... я такъ думаю, что. պակասում են խելքը փչեց—вздумалъ, пришла фантазія. խելքը գնալ (մարդու խելք է զնում) приходить въ восторгъ, быть безъ ума отъ к. или отъ ч.:

ձիշդ չեն թարգմանված

խելքը բանի տալ увлечься чѣмъ. ես կը թարգմանէի предаться ч. н., ալս դարձվածի աւելի ուժեղ աստիճանն է ուշը, ուշ ու խելքը, ուշ ու միտքը մի բանի տալ որ նշանակում է предаться (вѣмъ своимъ вниманіемъ, весь) ч. н., сосредоточиться:

խելքին զոռ տալ чепуху морозить—խրթին ուսականութիւն է, բաց ալն է նշանակում. чепуху морозить (=ерунду говорить, творить) նշանակում է չիմար չիմար գուրս տալ, չիմարութիւն (անհեթեթութիւն) անել. իսկ խելքին զոռ տալ նշանակում է мудрить, мудрствовать, мудрствовать лукаво:

խեղել просить, անպատճառ հարկաւոր էր բերել իբրև դարձված ալն բալի խնդրեմ ձեզ, որ, բացի прошу, չատ լաճախ նշանակում է пожалуйста: Ալս բառի պատճառով ես չիցիցի պ. Նաղուրեանի բերած:

չեղի բերէ—դարձվածը. ալն վարձվածը պ. Նաղուրեանը թարգմանում է милости просимъ (և ինչու անպատճառ. просимъ և ոչ прошу, проситъ, просятъ). ալն թարգմանութեան հետեանքը ալն կը լինի որմի ալս-

պիտի դարձված, օրինակ՝ հաւրս խնդրում է ձեզ, որ աչս և բեկոյ շնորհ բերէք ի ռմօտ, պ. Նաղուրեանի բառարանի օգնութեամբ թարգմանելով, պիտի ստանանք մի աղալիսի ռուսերէն՝ (мой) отецъ просить васъ, чтобы вы сегодня вечеромъ милости просимъ къ нему. բայց եթէ նա տար շնորհ բերել փախաւ, աչս ժամանակ կը թարգմանէր օтець просить васъ, чтобы вы пожаловали (կամ ուղղակի՝ пожаловать) къ нему сегодня вечеромъ, եթէ պ. Նաղուրեանը ուզում է անպատճառ գտնել հաւերէնում միտի փախաւ զարմաւորան զարմաւորան, կարելի էր օգտուել հրամայել բառից լառաջացած համեցէք խօսքից որ նշանակում է և միտի փախաւ և փախալիս մի գեղեցիկ ձև (դարձված), ինչպէս հրամայէ— что прикажете? чего изволите?

Այս և սոցա նման շատ ուրիշ գեղեցիկ ազգու, և բնորոշ դարձվածներ մոռանալով, տեսէք թէ ինչպէս պ. Նաղուրեանը չէ մոռանում լառաջքերը և ամեն հեռախոսութեամբ ու ներքոյն թարգմանել

շնորհալուրէն— мерси! ներողութիւն— пардонъ, (ինչու ոչ— виновать), տիկին— мадамъ!

«Խաչն»— любовникъ, любовница. դէ թարգմանեցէք աչս նշանակութիւններով

Նալրանդեանի՝ Քոչրիկ, կանչեց քաջ պատանին,

Մնաս բարեալ, սիրական.

Աչս դրօշակին պիտի նալէ

Ամբողջ բանակ խալեան:

Կամ Գամառ-Փաթիպալի՝ Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական

Հարազատ քուրս խլեց իմ փեսան:

Այս լաւելվածի մէջ ես խոստացաւ միայն մի քանի նմուշներ բերել. աւաքանը ես բոլորովին բաւական եմ համարում. բայց, վերջացնելուց առաջ, աղ Նմուշների թիւում անկարելի է չը վիշել պ. Նաղուրեանի բառարանի տված մի հոգակապ և բնորոշ կուրիօզ՝

կաճ տես թաղի

№ В կաճ նշանակում է воёлокъ

թաղի— гончая собака (տ. բառ.):

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅ

(Կը շարունակւի)

ՊՈՏԱՊԵՆԿՈ, Ի. Գ. Ն. — ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅ (На дѣйствительной службѣ). վէպ: Թիֆլ. Հայոց Հրատ. Ընկ. հրատարակութիւն: Թարգմ. Տ. Ս. — Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1892 թ. 326 էրես, գինն է 75 կ.:

Առաջ ենք բերում ռուս ժամանակակից նշանաւոր կրիտիկոս և հրապարակախօս Սկաբլինսկու¹⁾ կարծիքը Պոտապենկոյի մասին:

«Պոտապենկոյի տաղանդի գլխաւոր առանձնատկութիւնը կալանում է նրանում, որ նա չափ պարզ և աշխուժ կերպով է նայում կեանքի և մարդկանց վրայ, մի նաւածք, ուր երեւում է նրա բարեսիրտ և ոչ չարամիտ լաւատեսութիւնը բոլորովին զուրկ մնալ, տխուր և մաշող հուետեսութիւնից, որով վարակւած է մեր ժամանակակից գրականութիւնը. միևնույն ժամանակ բոլորովին զուրկ ողբերգական գոչներից ու եղանակներից և աչն ամենից, ինչ որ տխրացնելով ընթերցողի սիրտը կարողանար նրա մէջ առաջ բերել տխրութեան զգացմունք և զժգոհութիւն կեանքից: Ինչ որ ներկայացնելիս լինէր Պոտապենկոյն մինչև անգամ ամենաառաւելի բաներ ընթերցողը դուրս է բերում մի արիացնող զգացմունքի ուրախութիւն, նրա հոգին պարզւում է և նա պատրաստ է լինում նոր խի բացականչելու:

Ինչ և իցէ՝ արժէ ասել:

Ընթերցողի ազդ բարեսիրտ տրամադրութեան նա հասնում է ոչ թէ կեանքը սոսկ վարդապոն նկարագրելով, ոչ, դուք կը գտնէք նրանում հասարակական միևնույն վերքերը և

անկարգութիւնները, միևնույն դրամատիկական և ողբերգական եղանակները, միևնույն չար և անպիտան մարդկանց, միևնույն արիւնարբու տարրերին¹⁾, որոնք խժուում են անզուրկ և թուլ ճանճերին, միևնույն ինչ որ մենք տեսնում ենք ներկայ գրականութեան մէջ: Բայց եթէ հեղինակը երբեմն իրան չտուով դրամատիկական հակումով, մնալ նաւածքով կեանքի և մարդկանց վրայ՝ գիտմամբ թարձրացնում է գոչները, ստորագծում է աչն, ինչ որ նկարագրած տեսարանում ամենավրդուեցուցիչն է լինում՝ ընթերցողի սիրտը ճմլեցնելու համար, — Պոտապենկոյն և ոչ մի առանձին ջանք չի գործ դնում, որ այս կամ աչն դրամատիկական դրութիւնը ցնցի ընթերցողին. ընդհակառակը նրանում միշտ պատահում են աչն պիտի միջանկեալ տարրեր, որոնք միանգամայն չէզոքացնում են դրամատիկականութիւնը. երբեմն նա մտցնում է չարագործի բնաւորութեան մէջ աչնպիտի լարվելի չատկութիւններ, որոնք ակամայ հաշտեցնում են ընթերցողին այս վերջինիս հետ. միևնույն ժամանակ առաքինի և մեղաւած կողմը լինում է վերին աստիճանի կոմիկական և արդարեւ կարծես իրանցտանջանքներին արժա-

¹⁾ Скобичевский. Исторія новейшей русской литературы. 1891 г. С.-Петербургъ.

¹⁾ Արարուգիներին, ինչպէս ասում են Թիֆլիսցի հայերը և ասել է Սուրբուհիկանցը:

նաճում են (աղպլիսի տաղաւորութիւն անում է «Առողջ մտքեր»¹⁾ վերնադրով բոմանը) կամ երբեմն առաքինութիւնը վերջ ի վերջոյ աջնպէս է չաղթում, իսկ չարիքը աչն սատուճան սատուի է պատվում, որ աղպլիսի վախճան տեսնելով ընթերցողը պատրաստ է ուրախութիւնից ներկէ մարդկանց նրանց բոլոր մանր խռովութիւնները: Այս բոլորից կարելի էր եզրակացնել, թէ ընթերցողը Պոտապենկոյին կարողալուց չէտոյ մի անբաւական ոչ գոհացած զգացմունք պիտի ստանար, քանի որ ընթերցողի հոտառութիւնը և փորձը պիտի նրան չիշնայէին որ իրականութեան մէջ զրեթէ երբէք աղպլիսի բարի վախճան տեղի չէ ունենում և որ չար մարդիկ աւելի զզւելի են, քան Պոտապենկոյի նկարածները: Սակայն ընթերցողը մեծ հրճանքով կարող է Պոտապենկոյին և մասամբ չը գոհացած, հակառակ կողմից մեծ դահունակութիւն և մեծ էստէտիկական վաղելչութիւն է ստանում: Այդ նրանից է, որ Պոտապենկոյի տեղեւորութեան մէջ կալ նաեւ մի ուրիշ աւելի նշանաւոր և ամենից շատ աչքի բնկնող լատիւթիւն, դա է հումորը, ծիծաղը: Եւ չիւրաւի՝ Պոտապենկոյի գրածների աչն երեսներն են շատ հետաքրքրութեամբ կարդացւում և ձեր վիշողութեան մէջ մնում, ուր հեղինակը հեգնում, ծաղրում է իւր հերոսներին: Պոտապենկոյի՝ չափազանց բարե-

սիրտ և միեւնոյն ժամանակ շատ տեղի և անխնայ հումորի զլխաւոր չաղելութիւնը կալանում է նրանում որ, նկատելով ծաղրելի և վնաս կողմերը դուրս բերած անձինքների, նա կարողանում է ձեր առաջը երևան հանել աչն ներքին հակասութիւնների անմտութիւնը, որոնք թաղնւած են նրանց մէջ:

Եւ ինչ աւել (Սուրբ գեղարեստ), «Ջւարճալի գրույ», «Հաղագիւտ տոն», «Նորին գերազանցութեան քարտուղարը»¹⁾ գրածների մասին, ուր հումորը և կոմիզմը տիրում են անսահման կերպով: Մինչև անգամ նրա մեծ գրածները, ինչպէս «Առողջ մտքեր» և «Գաղափարական քահանա», որոնք իսկի ծիծաղի համար չեն գրւած, սրանց միայն աչն երեսներն են ամենագեղեցիկը, ուր հեղինակի հումորն է խաչտում: Ինչքան հիանալի են օրինակի համար ժամանակակից երիտասարդութեան հետեւալ կամրկական տրպարները: Արեմչատով, Վետկիցի, Օլէնին, Միշուրին: Սրանք ամենը կենդանի կանգնած են ձեր առաջ իրանց կատարեալ անպատեհութիւնով և իրանց բոլոր մտաւոր և բարոյական ներքին հակասութիւններով: Իսկ երբ կարդում էք նրա «Գաղափարական քահանան», ուր ներկայացւած է ակադեմիաւարտ մի ել խոստարդ, որ փոխել է փաղուն ապագան գիւղական քահանայի համեստ սրաչտոնի հետ և որը երազում է իրագործել

¹⁾ Здравия понятія.

¹⁾ Святое искусство, Потѣшная исторія, Рѣдкій праздникъ, Секретарь его превосходительства.

իւր կողման բարձր իղէալները, ձեզ
աինքան չի հետաքրքրում հալը Կի-
րիլի աջ ձգտումը, որքան ալն բո-
լոր կոմիկական շիթթութիւնը, որ
տեղի է ունենում երիտաւարդ հո-
գեորականին՝ շաղած և խեղքը կորց-
րած շրջապատողների մէջ: Այստեղ

ես դուք հանդիպում էք ամենալն
քաղաքիսում մի շարք տիպարների
և տեսարանների, ուր ամենալն մի
տողից ցատում է հեղինակի հումորը
և ձեր մէջ ուրախ ծիծաղ չարու-
ցանում:

Ֆ.

Նոր ստացած գրքեր

1) ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ, բժիշկ. — «Հիպնոտիզմ (L'Hypnotisme): Մասն առաջին: Արևստական քուն: Արտաստացած «Մուրճ» ամսագրից: Թիֆլ., տպ. Ռոսինեանցի, գինն է 50 կոպէկ:

2) ԳԱԼԵՄՔԵՐՍԱՆ, Հ. Գրիգորիս Վ., Մխիթարեան ուխտէն. — «Յուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն»: Վիեննա, 1892 թ., Մխիթարեան տպարան: Catalog der armenischen Handschriften in der K. Hof- und Staatsbibliothek zu München, von P. Gregoris D-r Kalemkiar, Mitglied der Mechitharisten Congregation. Wien 1892, Mechitharisten-Buchdruckerei.

3) «ՏԵՂԵԿԱԳԻՐ» ԹԻՓԼ. Հայոց Հրատար. Ընկերութեան 1891 չա-
նիս—1892 մարտ:

4) ՇՁԵԳԻՐԻՆ, Ն. — «Ամենախմաստուն Տառեխ և Յիշող խոյ առակ-
ները»: Թարգ. Մանդալ: Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի, 1892 թ.,
գինն է 10 կոպէկ:

5) ՍԻՍՈՆԵԱ, Ե. — «Կոլումբոս և Ամերիկայի գիւտը»: Թարգմ. Ն.
Տ. — Ա., Աղբիւրի 1892 թ. VI ընծան: Թիֆլիս, տպ. «Արօր» Տ. Նազա-
րեանցի, 1892 թ., (Կոլումբոսի պատկերով):

6) «ԳԻՐԲ ՀԵՐՁՈՒԱԾՈՅ», հրատարակութեամբ Միաբանի, Ար-
տաստացած 1892 թ. Արարատ ամսագրից: Վաղարշապատ, Մալր Աթոռի
տպարան, 1892 թ., գինն է 50 կոպէկ:

7) ՓԱՓԱՋԵԱՆՑ, Վ. — «Սասունցի Օհան (Թիւրքահայերի կեանքից),
մի իրական պատմութիւն»: Մոսկւա, տպ. Բարխուդարեանի, 1892 թ.,
գինն է 5 կոպէկ:

8) ԱՆՆՆՆՍԿԱՅԱ, Ա. — «Ընտանիքի չոյր»: Ռուսերէնից թարգմ.
օր. Վ. Տէր-Յովսէփեան: Հրատ. Թիֆլ. Հրատ. Ընկերութեան. Թիֆլ., տպ.
Ռոտին., 1892 թ., գինն է 10 կոպէկ:

9) «ՎԱՂԱՐՇԱՊԱՏՅԻ ՅԱՐՈՒԹԻՆ ԱՐԱՐԱՏԱՆԻ» կեանքը (ինք-
նակենսագրութիւն): Թարգ. ռուսերէնից Պ. Պ. — Հրատ. Թիֆլ. Հրատ.
Ընկեր. — Թիֆլ., տպ. Ռոտին., 1892 թ., գինն է 75 կոպէկ:

10) «ԲԼԳ.ՆԱԶԱՐԵԱՆՑ», Սարգիս քահանայ: Համառօտ քրիստոնէա-
կան վարդապետութիւն ըստ դաւանութեան հայոց առաք. ուղղափ. սուրբ
Եկեղ. Թիֆլիս, տպար. «Արօր», 1892 թ., գինն է 60 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Հրապարակական նիստերի արձանագրութիւնները մեղանում: Թիֆլիսի թեմական պատգամաւորի ընտրութեան գործը:—Թիֆլիսի Հալոց Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը:—Թիֆլիսի Հալոց խմբագրական ժողովը:

Անցեալ համարում ես ներկայացրի Թիֆլիսի թեմի կաթողիկոսական պատգամաւոր ընտրելու ժողովի արձանագրութիւնը, աշխատելով կարելիին չափ ճշգրիտ լինել: Այսօրուայ օրս սա մի մեծ ցաւ է որ մեր պարբերական հրատարակութիւններում դուք ի զուր կ'որոնէք գոնէ մօտաւորապէս ճշգրիտ արձանագրութիւն սր և է նիստի: Այդ վտրձով զիտեն մեր բոլոր հալ հրատարակութիւնները ընթերցողները, որոնք սր և է նիստի ներկայ են եղել և ապա կարողացել մեր լրագիրները մէջ ալդ աչքով տեսած և սեպհական ականջով լսած վիճարանութիւնների մասին զեկուցումները: Անխիղճ կերպով ուրիշների խօսքերը ծումուել, վեղաթիւրել, կամ մէկի առածը առաջ բերել, միւսի մասին զիտումը լռել կամ անիմալութեան չափ կրճատել—այդ մեր մամուլի մէջ ամենասովորական երևոյթներն են, որի զէմ բոլոր շիտակ մարդիկ պէտք է զինուեն: Այդ ցաւը, որը մի օրգանական ցաւ է, ուղղելի կը լինէր եթէ մեզ մօտ կալացնող հրապարակական ժողովների համար ընտրւեն բարեխիղճ քալատաւարներ, որոնց զլխաւոր գործը կալանում է հէնց նիստի արձանագրութիւնները կազմելում: Բաւց երկար տարիների զիտողութիւնը ինձ համոզել է, որ մեղանում նոյն իսկ քարտուղարները իրանց պաշտօնը չեն հաւկանում: Շատ տակաւ բացառութեամբ մեղանում քարտուղարները աւելորդ բեռն են համարում ժողովների մէջ եղած վիճարանութիւնները կարելիին չափ լիակատար կերպով արձանագրել: Աւ մանաւանդ այդ անրնական է և տարօրինակ, որ նոքա հէնց այդ գործի համար են ընտրւում: Դա անկասկած նրանից է որ մեղանում մարդիկ սովոր են արտասանած խօսքերին գին չը տալ: Աւ ալսպիտով դուրս է գալիս որ մենք վախ ենք

առեւ եւրոպական կարգ ու կանոններից արտաքինը—քարտուղարներ նշանակելը—բայց ահա բանը, որ էութիւնն է կաղմում, ահա է՝ կարելիին չափ լիակատար և ճշգրիտ արձանագրութիւնը—դա երկրորդական բան է համարում: Նւ ապա հանգամանքներում, ի հարկէ, ամեն լրագիր իւր ուղածը կը ներկայացնի իւր ընթերցողներին. ոչ մի միջոց չը կա՛ կոնտրոլ անելու, ստուգելու տպածի ճշդութիւնը և ամեն մէկը, որի խօսքերը դուրս են բերած լրագրական արձանագրութեան մէջ՝ կարող է հերքել տպածը, կամ լիտ կանգնել իւր իսկ արտասանած խօսքերից եթէ պատահաբար այդ խօսքերը ճիշդ լինեն արձանագրած: Գրաւոր ոչ մի ապացոյց չը կա՛— ոչ մէկը և ոչ միւսը ստուգելու համար:

Այս կարգ ու կանոնների կամ աւելի ճիշդն ասած՝ այդ անկարգութեան և անկանոնութեան պէտք է վերջ դնել: Մեր հասարակական հիմնարկութիւնների օգուտը այդ բանը ալժմ բարձրագոյն պահանջում է: Այդ պատճառով ես, նախ քան շարունակելը պատգամաւորական ժողովի մասին խօսելու, հարկ եմ տեսնում ապա միջանկեալով մի առաջարկութիւն անել, որի իրագործումով միայն իմ կարծիքով կարելի է վերջ դնել այլ և այլ ռեպորտեօրական բարբարոսութիւններին: Այդ միակ միջոցը—սղագիրն էր (ստենոգրաֆ) ունենալն է, քանի որ փորձը արդէն առատօրէն ապացուցել է, որ մեր սովորական քարտուղարների վերայ չուներ դնել անհնարին է: Սղագրութիւնը (ստենոգրաֆիա), որպէս չափն է՝ արագ գրելու մի ձև է, որի համար ձեռնարկներ կան բոլոր եւրոպական լեզուների համար և կա՛ նոյնպէս, որքան լինձ չափն է, նաև հայերէնի համար: Արդ, մեր ընկերութիւնները ժողովներում արձանագրութիւնները պէտք է կատարեն ոչ թէ քարտուղարների ձեռքով, այլ սղագիրների ձեռքով: Նւ մի քաղաքում, որպէս Թիֆլիսն է, ուր գտնւթիւն ունին Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Հայուկեաց Բարեգործական Ընկերութիւնը և Հրատարակչական Ընկերութիւնը, որոնք բոլորն էլ իրանց կանոնաւոր ընդհանուր ժողովներն ունեն, մի քաղաքում, ուր, բացի այդ ընկերութիւնների ընդհանուր ժողովներից, կապանում են նաև այլ հրապարակական նիստեր շատ անգամ բացառապէս հայերէն լեզուով, մի քաղաքում, վերջապէս, ուր երեւմն-երբեմն լինում են նաև հայերէն հրապարակական դասախօսութիւններ և այլն,—ես կարծում եմ որ արդէն արժէ որ մէկն ու մէկը լաւ սղագիր ձանաչի, որը, որոշ վարձով կը հրաւիրւի արձանագրութիւններ կաղմնու ամեն անգամ, երբ որ և է տեղ հայկական հրապարակական ժողով կը գումարւի:

Սղագրութիւնը կարելի է սովորել մի-երկու ամսում: Բոլոր արեւստներից դա ամենահեշտն է:

Բայց թէ որքան աւելորդ բան է համարում արձանագրութեան գործը մեղանում, դորա ամենալաւ ապացոյցը կարող է լինել հէնց ահա, որ Թիֆլիսի թեմական պատգամաւոր ընտրելու ժողովը, մարտի 8-ին,

չունեցաւ նոյն իսկ իւր ընտրած քարտուղարը, ուր մնաց թէ իւր պաշտօնական արձանագրողը: Նոյնքան աւելի ուրախ պէտք է լինէին լրագիրները, որոնցից իւրաքանչիւրը ազատ էր իւր ձեռով ներկայացնել տեղի ունեցած բանախօսութիւնները: Բայց այն, ինչ եւ ներկայացրեցի անցեալ անգամ, ամբողջութեամբ պաշտանում եմ և աչսօր, գտնելով «Մուրճ»-ում անցեալ անգամ տպւածը իբր ձեւարտութեան ամենահաւատարիմը:

Այսքանը թող բաւական լինի ալն վտրձի դէմ որ արեւց ռուսինացին սովոր մի թերթի կողմից՝ «Մուրճ»-ի ղեկուցման հաւատարմութիւնը պատգամաւորական ժողովի մասին՝ կասկածի ենթարկելու:

Մարտի 8-ի ժողովը ամբողջ տեղական մամուլում արձագանք տւեց. մասնաւորապէս աչքի ընկաւ նաեւ ռուս մամուլի մասնակցութիւնը ընդհանուր հետաքրքրութեան: Ժողովի հետեանքը արդէն լաւանի է մեր ընթերցողներին՝ 45 հոգի, համարելով ժողովը թերի, դուրս եկան դաշլիճից մնացած 51 հոգին շարունակեցին գործը, պ. Արզար Յովհաննիսեանին տալով 46 ձայն, պ. Սպանդ. Սպանդարեանին 43 ձայն:

Տեղահները ժողովի ապօրէնութեան դէմ բողոք տւին ս. Էջմիածնի Սինոդին. և գործը ալժամ քննուում է:

Ինչպէս պէտք է նաեւ խնդրի վերալ: Օրինաւոր էր ժողովը թէ ոչ և օրինաւոր է ընտրութիւնը թէ ոչ: Ահա հարցեր, որոնց պատասխանը պէտք է տալ:

Ինչու են ժխտում մարտի 8-ի ժողովի օրինաւորութիւնը: Որովհետեւ աղ ժողովին կանչած էին մասնակցելու, ի թիւս ալլոց, ալնպիսի մարդիկ, որոնց ընտրողական իրաւունքը կասկածելի էր, իսկ մի եկեղեցում մի անգամ ընտրւածները բոլորովին չէին կանչւած, որովհետեւ թեմական առաջնորդը նոցա չէր ճանաչել իբր օրինաւոր կերպով ընտրւածներ: Եւ արդէն անցեալ անգամ պատմեցի թէ որոնք են աղ վիճելի ընտրութիւնները (Էջմիածնեցոց, ս. Լուսաւորիչ եկեղեցիների և Կոմիտի բարեկարգութեան), որոնց առիթով բողոք էր գնացել Էջմիածնի Սինոդին: Դոցա մասին վճիռը դեռ չեկած, թեմ. առաջնորդը դումարեր մարտի 8-ի ժողովը, որի նկարագիրը տպւեց «Մուրճ»-ի անցեալ №-ում:

Մարտի 8-ի ժողովի օրինաւորութիւնը պաշտպանողները ասում են թէ ընտրողական գործը Սինոդին չի վերաբերում, ալ թեմական առաջնորդին. աղ ասելով նոքա հիմնւում են Պոլոթեհնիէի 938 լողւածի վերալ, ուր որոշւած են թեմական առաջնորդի վարչական իրաւունքները. աղ լողւածը նոքա հակադրում են 939 լողւածին, ուր որոշ ասւած է թէ դատաստանական մասում Սինոդն է քննում ի միջի ալլոց նաեւ առաջնորդի դէմ տւած դանդաւանները: Եւ ահա, որովհետեւ ընտրութիւններէ

գործը զատատանական գործ չէ, այլ իբր թէ վարչական գործ է, դորանից նոքա հետեցնում են թէ Ախողը ուրեմն վարչական գործերում, և ալս ղէպընում ընտրողական գործերում, չունի իրաւունք առաջնորդի գործողութիւնը քննելու, վաւերացնելու:

Այս զատողութիւնը պարզ ու որոշ բացատրած է «Արձագանք»-ի մարտի 18-ի համարում:

Սա մի աշնպիսի թէօրիա է, որի անհեթեթիւնը ապացուցանելու նեղութիւնն անգամ մարդ չը պէտք է կրի: Այդ թէօրիայով թեմական առաջնորդը կարգում է կատարեալ տէր ընտրութիւններ, որի ղէմ ոչ մի բողոք չի կարող դնալ բարձրագոյն հոգևոր իշխանութեան: Այդ թէօրիալի ակնյայտնի անհեթեթութեան պատճառով ես կը թողնեմ նորան անուշադիր: Չը խօսած արդէն Պոլսի միջին աշն չօգւածի մասին, որը Ախողին չատկացնում է ընդհանուր վերահսկողութիւն նորան ստորադրեալ բոլոր անձերի և մարմինների վերայ:

Բայց ճիշդ է արդեօք թէ ընտրողական գործը վարչական գործ է: Համարձակ կարող եմ ասել որ ընտրողական գործը ամենքից ընդունել է որպէս վարչական գործ հէնց միայն պատճառով որ նա զատատանական գործ չէ: Երեակապիւ ես որ աշխարհքումս կան միայն վարչական և զատատանական մարմիններ, վարչական և զատատանական գործեր և իրաւունքներ:

Բացի այդ իրաւունքներից կան այսպէս կոչւած սահմանադրական իրաւունքներ (Grundrechte), որոնք բոլորում են մի հաստատութեան հիմնական օրէնքներից, լինեն սոքա դրւած թէ չը գրւած: Ընտրելու իրաւունքը չի բոլորում ոչ մի վարչական և ոչ մի զատատանական օրէնքից. նա հաւուց աղբի, կամ, ասելի ճիշդ ասած, լուսաւորչական հասկերի իրաւունքն է որը կապւած է Հայաստանացի կոչւած եկեղեցու գոյութեան հետ: Ընտրողական սկզբունքը հիմքն է Նոստրալական եկեղեցու: Արեւելի է քանձնել մէկին, դիպուք առաջնորդին, ընտրութիւններ կառավարելը, որոշ հրահանգներով, բայց դնել նորան աշն ղրքի մէջ, որ նա ոչ միայն կառավարի, այլ *безапелляционно* տէր դառնալ ընտրութիւններին, նա միակ տէր լինի ճանաչելու կամ չը ճանաչելու ընտրողների իրաւունքը, այդ կը նշանակէ վտանգի ենթարկել ժողովրդական իրաւունքը: Ընտրողական գործերում առաջնորդի ղէմ ասելի բարձր իշխանութեան դանդատով ղիմելը, մանաւանդ կը մարդիկ խախտւած են տեսնում իրանց սահմանադրական իրաւունքները, դա մի իրաւունք է, որը, որպէս ես անցեալ անգամ էլ ասացի, ոչ ոք չի կարող խլել ժողովրդից: Ընտրողական գործը աշխատեցին վարչական ճիւղին չատկացնել, բոլորովին մոռանալով որ ժողովուրդը թեմական առաջնորդի ստորադրեալ չէ, նա չէ ստորադրեալը նոյն իսկ Ախողի: Ընտրողական գործերում առաջնորդաբանը և սխողը ապա և կաթողիկոսարանը զատատանական

ինստանցիաներ են, ուր վճռում են թէ որքան են պահպանւած օրէնքով սահմանած ձևերը ընտրութիւնների ժամանակ: Եթէ աղ արտաքին ձևերը պահպանւած են, ապա և ընտրութիւնները կանոնաւոր են, եթէ չեն պահպանւած՝ կանոնաւոր չեն, միևնույն է թէ վատ թէ լաւ կը դատուին ընտրութիւնների հետեանքները: Ընտրութիւնները անվաւեր են ճանաչում երբ արտաքին ձևերը խախտել են և կամ երբ հաստատուի անբարոյական միջոցների գործիք ընտրւածների կողմից՝ ընտրելու համար:

Դատեցէք ուրեմն ապուհեալ թէ ինչ վարչական դեր է կատարում թեմական առաջնորդը ժողովրդական ընտրողական գործերում:

Կարճ կտրենք՝ ընտրողական գործը ինքն ըստ ինքեան վարչական գործ չէ և ամենից պակաս՝ թեմական առաջնորդների վարչական իշխանութեան գործն է: Առաջնորդը վարդին է ընտրութիւնների, նա կատարողական իշխանութիւն է. նա միևնույն ժամանակ առաջին ընդունողն է ժողովրդի դանդախների, բաց նա վերջեական վճիռ կաշարքողը չէ:

Ներկայ թեմական առաջնորդը աղ տեսութիւնը ընդունեց (տես նորա խօսքերը «Մուրճ» № 2), բաց նա հետեւողարար չը վարեց երբ դեռ պատասխան չը ստացած իրանից բեկւած ընտրութիւնների առիթով՝ նա վերընտրութիւններ նշանակեց. և երկրորդ՝ երբ նա ժողով գումարեց առանց սպասելու վերընտրութիւնների մասին վճռի Սինոդի կողմից:

Թեմական առաջնորդի և միւսների ապ խօսքերը թէ՛ Այնողը գիտէր որ մարտի 8-ին ժողով է լինելու, և եթէ չարգելեց, ուրեմն նա, Սինոդը, համաձայն էր, — աղ խօսքերը իմ կարծիքով զօրութիւն չունին:

Անկախ աղ բոլորից մարտի 8-ի ընտրութիւնը ըստ իս վաւերական չի կարող համարուել այն պատճառով, որ 100 իրաւաստուններից քաւարկութեան մասնակցել են միայն 51 հոգի, ապինքն $\frac{2}{3}$ -ից պակաս անդամներ, և որ աղ ժողովում ամենից շատ ձայն ստացածը միայն 46 ձայն ստացաւ, ապինքն բոլոր իրաւաստունների թւի կէսից պակաս: Խնկատի առնելով որ այս կամ այն պատճառով քաւարկութեանը մասնակցել են օրէնքով պահանջւած երկու երրորդականից (66-ից) աւելի պակաս ձայնատուներ, խնկատի առնելով որ ամենից շատ ձայն ստացածը ընդհանուրի թւի կէսից պակաս է ստացել, — ինչ սովորական գերադույն չա՛ռ ունինք արդեօք վերջեական համարելու աղ քաւարկութիւնը, քանի որ ընդունւած կանոն է աղդուիլ հետեանքներով բաւականա՛նալ միայն այն ժամանակ, երբ երկրորդ փորձը կապալուցանի որ այլ ևս լաւագոյն հետեանքներ ստանալ անկարելի է: Երկրորդ անգամ քաւարկութեան պէտք էր սպասել նաև այն դէպքում, եթէ բոլոր երեցիկների մասնակցութեամբ ոչ ոք չ'ընտրւէր կէսից աւելի ձայներով, ուր միայն թէ մարտի 8-ին ապ կամ այն պատճառով չը մասնակցեցին քաւարկութեան ձայները $\frac{2}{3}$ -ականը: Կե՛ս ուրեմն

աջնայէս է թւում որ նոյն իսկ ընարողական էտիկան պահանջում է որ ամենքը, առանց խտրութեան, յանկանան մի երկրորդ քւէարկութիւն, եթէ նոյն իսկ մարտի 8-ի ժողովի բացումը օրինաւոր ճանաչել Սինոդի կարմից:

Անցեալ անգամայ քրոնիկից մեր ընթերցողներին արդէն չափանի է, որ փետրարի 14-ին Նշանակած թեմական պատգամաւորի ընտրութիւնը Արցախի թեմում (որի թեմական քաղաքը Շուշին է) չետաձգեց չարուցած երկու վիճելի խնդիրների պատճառով: Նիստը չետաձգելու առիթով ես կ'ուզէի մի երկու լուսաշարան խօսքեր ասել: Ենթ վերաջ գտնէ աչն տպաւորութիւնը արին լրագիրներում տպւած թղթակցութիւնները ալի առիթով, թէ նիստը չետաձգելը ժողովի անպաշտօնութեան տպաւորութիւն է արել ժողովականների և ժողովրդի վերաջ առնասարակ: Զարմանում են որ նիստում տեղի են ունեցել խօսակցութիւններ ալ և ալ ըստ իս իսկ որ վիճելի խնդիրներին առիթով, բոլորքէլ են, երբ նիստը պէտք է չետաձգէր Սինոդից պատասխան տտանալու համար, և ալէն: Բայց ալի վրդովմունքը ոչ միայն արդարացի չէ, ալ և դատապարտելի է: Նս աւելին կ'ասեմ. շատ բնական էր և շատ լաւ են արել որ նիստը չետաձգել են մինչև Սինոդից պատասխան տտանալը վիճելի խնդիրներին մասին: Եթէ Թիֆլիսում մարտի 8-ին գումարւած ժողովը չետաձգէր, ինչպէս որ չետաձգեց Շուշունը, ալի ցոյց կը տար որ մենք տրամադրութիւն ունինք լաւ օրինակից դաս առնելու, թէկուզ ալի դասը Շուշին լինի տալիս Թիֆլիսին:

Որպէս չիշում կը լինեն ընթերցողները, փետրարի 14-ին կապանալիք ժողովը չետաձգելու պատճառները հետեւեալ երկու խնդիրներն են եղել՝ կարելի է արդեօք դրսից էլ թեմական պատգամաւոր ընտրել, երկրորդ՝ կարելի է որ մի ծխական պատգամաւոր աչնքան ձաչն ունենալ, որքան ձաչն ունի ստացած հաւատարմութիւններով:

Ալի հարցերին Սինոդի պատասխանը եղել է հետեւեալը. թեմական պատգամաւոր ընտրել կարելի է նաև դրսից միայն կանխաւ առնելով քւէարկելի անձի համաձայնութիւնը, և երկրորդ՝ մի ծխական պատգամաւոր երկու ձաչնից աւելի ունենալ չի կարող:

Ինչ առաջին խնդրին է վերաբերում, ես անցեալ քրոնիկում արտալալուեցի աչպէս՝ «Շատ բնական է որ ժողովականները պարտաւոր չեն միայն իրանց միջից ընտրել, ալ կարող են ընտրել (թեմական) պատգամաւոր և սորա կանգիդատ ում և կամենան»:

Երկրորդ խնդրի մասին իմ կարծիքն էր որ կարելի է թող տալ նաև հեռից ձաչն տալը, գրաւոր կերպով, բայց որ առնասարակ նպատակաւարմար ընտրութիւնների համար պահանջւում է անձամբ ներկայութիւնը,

և որ լամենայն դէպս մի մարդուն լանձնել տանեակ ձայներ՝ անթողատելի է: Վերը ես առաջ բերի Սինոդի պատասխանը այդ մասին, ահա է որ մի անձին երկու ձայն միայն թողատրոււմ է ունենալ: Աւելորդ չէ այդ առիթով ակտեղ առաջ բերել Նովկոսի Նախկին փոխարքայի շրջաբերականի 4-րդ լողւածը այդ մասին, որը զրաբառ թարգմանութեամբ հետեւեալն է ասում. «Ընտրեալ երեսփոխանք ի տեղական բնակչաց ի դէպս անհնարութեան ուղեորելոյ ի թեմական քաղաքն, կարող են տալ արոււմ զ'ըրուսնոս իւրեանց ըստ հաւատարմագրաց (Избранные изъ мѣстныхъ жителей представители могутъ, въ случаѣ невозможности отправиться въ епархіальный городъ, передать свой голосъ по довѣренности.): Որպէս տեսնում է ընթերցողը, այդ շրջաբերականով իրաւունք է տրոււմ հաւատարմագրով ձայնը մի ուրիշին հաւատալ: Բայց շրջաբերականը չի ասում թէ արդեօք մի քանի երեցփոխներ կարող են միեւնոյն անձին իրանց ձայները հաւատալ թէ ոչ: Իհարկէ ալապիսի դէպքում Սինոդը կողւած է գոնէ առժամանակ իւր հրահանգներով օրէնքի պակասը լրացնել, որպէս և եղած էլ է: Բայց ըստ իս, աւելի լաւ կը լինէր որոշել որ նաև հաւատարմագրով մի անձն չը պէտք է մի ձայնից աւելի ներկայացնէ: Եթէ պէտք է խրախուսել անձամբ ներկայութիւնը, ապա և պէտք է կարելիին չափ սահմանափակել հաւատարմագրերով ձայներ հաւատալը: Իսկ կարելիին չափ մեծ սահմանափակումը ահա կը լինէր, որ հաւատարմագրով մի անձն միայն մի ձայն ներկայաննէր և ոչ երկուսը:

Նս մի փոքր երկար կանգ առալ ալս կէտի վերայ, ուշադրութիւն դարձնելու համար Արցախի թեմի պատգամաւորական ժողովում պ. Եղիշէ Մաղաթեանի կողմից շոշափած ահա երևութի վերայ, որ ժողովի 41 ձայնից ամբողջ 22-ը, ուրեմն զեռ. կէսից էլ աւելին, հաւատարմագրով են ներկայացել: Միթէ իրօք այդքան ընտրւածների համար եղել է «դէպք անհնարաւորութեան ուղեորելու ի թեմական քաղաքն», որպէս շրջաբերականի 4-րդ լողւածն է նախատեսնում, և կամ միթէ նոցանից չատերի անձամբ գալը ահաքան նիւթական զոհաբերութիւններ կը պահանջէր, որպիսի հանգամանքը ընտրւած անձի ներկայ չը լինելու վարդելի պատճառներից մէկը կարելի է համարել: Պարոն Մաղաթեանը ի նկատի է առել նաև ալս վերջին հանգամանքը, ասելով՝ «գիտեմ միւս կողմից և ահա, որ մեր վիճակի հեռաւոր տեղերի երեսփոխաններից ոմանք չլատներ կարող են կրել՝ գալով մեր քաղաքը չատկապէս ալս գործի համար»: Բայց ի նկատի առնելով բոլոր օրինական և թէ ալ չարդելի պատճառները, պ. Մաղաթեանը իրաւացի կերպով դարձրել է ժողովի ուշադրութիւնը հաւատարմագրերով ձայներ ձեռք բերելու չար գործադրութեան վերայ: Նւ իրօք, զեռ. հասկանալի է եթէ Նովսեայ գաւառացի ընտրւածները իրանց ձայները հաւատարմութիւններով ուրիշներին են տւել. բայց

ինչը կարող է, օրինակ, նորն իսկ Շուշույ գաւառի գրեթէ բոլոր երեսփոխաններին տալով որ իրանց ձայները ուրիշներին տալին: Նթէ աւելին չ'ասեմ, առնալով պէտք է խոստովանել որ այդ հանգամանքը մի առանձին պատիւ չի բերում Վարաբաղի թեմի ընտրւած ծխական-պատգամաւորներին:

Խնդրի պարզարանութեան համար տեղ եմ տալիս այստեղ ինձ ուղարկած հետեւեալ ցուցակը Արցախի թեմում մի կողմից ընտրւած երեսփոխաններին և միւս կողմից հաւատարմագրերով ներկայացած անձերի:

Շուշի քաղաքից՝

Հաւատարմագրերով ներկայացած

Ազոնայ եկեղեցւոյ

անձեր.

- 1 Աթաբէղեան, Նիկողայ
- 2 Մաղաթեան, Նղիշ
- 3 Դանիէլեան, Կարապետ

Ղազնէցոյ եկեղեցւոյ

- 4 Իւլըաշեան, Ստեփան
- 5 Բահաթրեան, Խ. Բժ.
- 6 Խանդամիրեան, Մկրտիչ

Մեղրեցոյ եկեղեցւոյ

- 7 Թիւնիբէղեան, Բաբա
- 8 Տէր-Աստածատրեան, Անդրէաս
- 9 Ահարոնեան, Դանիէլ

Խուբլարեանց, Աւետիս

Վերին Լադի եկեղեցւոյ

- 10 Ասրիբէղեան, Բախիշ (բացակայ)
- 11 Տէր-Վաւթեան, Յովհաննէս
- 12 Թադէոսեան, Իսահակ

Շուշու գաւառից՝

- | | | |
|-------------------------|-------------|--|
| 13 Նղիեաց, Յարութ. | Ուումեցի | Շխիւեանց, Կարապետ |
| 14 Ղարուշեան, Բախիշ, | Թաղարեցի | Շահնաղարեան, Մովսէս |
| 15 Կարապետեան, Գ., | Դաշուլաղցի | } Իւլըաշեան, Ստեփան ¹⁾ մի ձայնի իրաւունքով: |
| 16 Ղուլիք և խալեան, Ա., | Խնձրոտան. | |
| 17 Մաղաթեան, Կ. | Աւետարանեցի | Խանդամիրեան, Տիգրան |
| 18 Սարգսեան, Դանիէլ, | Հալեցի | Օհանեան, Նիկողայ |
| 19 Փիրումեան, գնդ., | Նախիջևանիկ. | Աթաբէղեան, Նիկողայ |

¹⁾ Սենտղի կարգադր. համաձայն՝ երկու ձայնից աւելի ունենալ չի կարելի, իսկ Ստ. Իւլըաշեան, որպէս երեսփոխան՝ արդէն մի ձայն ունէր, հետեւողէս իւր մէջ միայնում էր երեք ձայն՝ երկու ձայնի իրաւունքով:

20 Քամալեան, Ոսկան, Գիշեցի:

Ջուանշիրի դաւառից

21 Իւղբաշեան, Բախիշ, Մեծ չէնացի

22 Տէր-Աստաճատ, Անդր, ¹⁾ »

23 Կարապետեան, Ս., Առաջածորեցի Բէգլարեան Վարրիէլ

24 Ղահրամանեան, Բ., Գանձատարե. Բէլլուբէգեան, Յովհաննէս

Ելիսաւետապոլի դաւառի

մի մասից

25 Բաբայեան, Ա., Ներքին չէնացի

26 Բողիւկեան, Մարտիրոս, Նոր չէնացի

Ջաբրայիլի դաւառից՝

27 Մելիքե. Առուշ-բէկ, Հաղրութե.

28 Ստիպարեան, Ս. Թաղասեռեցի

Ջանգեղուրի դաւառից՝

29 Տ.-Թովմասեան, Յ. Ղարաղլաղե.

30 Գաւթեան, Բաբա, Նոյն գիւղացի Տէր-Թովմասեան, Յարութիւն

Լանքարան քաղաքից՝

31 Նազարբէգեան, Նիկողայոս:

32 Ստեփանեան, Մարգարէ:

Նուխի քաղաքից և գիւղերից

33 Սարգսեան, Գաւիթ

34 Մակեղոնեան, Ալեքսանդր

35 Ներսիսեան, Աբրահամ

36 Մարգարեան, Գրիգոր

37 Նստիւրեան, Ալեքսանդր

38 Մանուչարեան, Ստեփան

39 Տէր-Խաչատրեան, Եղիազար

40 Ղուկասեան, Առաքել

41 Խաչիւսեան, Մարտիրոս

42 Ղարիբեան, Կարապետ

43 Սիլիկեան, Ռուստամբէկ

44 Աղալարեան, Պառուկեան

} Լազարեանց, Խահակ:

} Բարախանեան, Առաքել

} Տէր-Սարգսեան, Միրզա

} Ղուկիքիսայեան, Վարրիէլ

} Արրահամեան, Անդրէաս

} Վրթանէսեան, Մակեղոն ²⁾ (բա-
ցակալ):

} Խաչատրեան, Յակոբ

¹⁾ Սա ընտրուեց նաեւ Նուշի քաղաքում, տես անուն № 8.

²⁾ Սորս բացախալութեան պատճառով և Ստ. Իգլաշեանի մի հաւատարմագիրը չընդունելու պատճառով բոլոր ձայները Թիւր հղաւ 41, վերանակ 44-ի:

Այն թատրոնական չանձնաժողովը, որին Թիֆլիսի թատերասէր հաշարակուծիւնը կազմել էր 1891/92 թ. սեզոնին հապկական թատրոնի ղերասանական խումբ և թատրոնական ներկայացումներ ունենալու համար, մարտի 22-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճներէց մէկում աւեց իւր հաշիւը նոյն ալդ հասարակութեան: Թատերասէրների ալդ ժողովը ամենատարօրինակ ժողովն էր որ երբ և իցէ ես տեսած եմ կեանքումս: Աղածը և ցաւալի էր և խրատական վերին աստիճանի: Յամենալն դէպս նա բնորոշ էր ներկայիս համար, երբ ալ և ալ և իրարից շատ տարբեր սկզբունքների տէր մարդիկ չիւտամ են իրար հետ հասարակական գործի ասպարէզի վերաջ: Սովորական ընկերութիւններում, ուր մի որոշ և ամենքից անվիճելի կերպով ընդունւած կանոնադրութիւն կայ, մանաւանդ երբ կանոնադրութեան ոյժի վերաջ աւելանում է նոյն ալդ ընկերութիւնների անցեալի ոյժը, — մարդկանց աշխարհաճապացքները սուր գոյներով չեն կարողանում երևան գալ. այն ստիպմունքը, որ գործ է դնում կանոնադրութիւնը ընկերութեան անդամներին որոշ կանոններից չը չեղեւ՝ նա թագցրած է պահում շատերի թաքուն ինստինկտները, նոցա ձգտումների աստառը: Մարտի 22-ի ժողովը չ'ունէր կանոնադրութիւն, թէ և մի կանոնադրութեան թեի տակ էր գործում. ալդ ժողովը պէտք է կառավարէր ոչ ալնքան կանոնադրութեան ոյժով, որքան ալն ոյժով, որ տալիս է մի գործին գաղափարը, զգացմունքների համերաշխութիւնը, առողջ դատողութիւնը: Մարտի 22-ին կապացած ժողովը պէտք է լուծէր ալն խնդիրը, թէ ալ և ալ չկոլաների, բոլոր խնդիրներում ալ և ալ տեսակ մտածողների, ամեն ուրիշ բանում տարբեր սկզբունքով վարւողների մի ժողով ինչ կարգով կ'ընթանար, երբ ալդ ժողովը ինքը իւր բաղդին է թողած: Այն ալդ հետաքրքրութեան համար է որ ես ուզում եմ կանգ առնել ալդ ժողովի մանրամասների վերաջ: Դա վերին աստիճանի կարեւոր է մեր հասարակական ոյժերի կազմակերպելուն հետամուտ ընթերցողների համար:

Թատրոնական կոմիտեի կազմակերպ կարճ պատմութիւնը մի քանի ամիտի խօսքերով ես արդէն արել եմ «Մուրճ»-ում (1891 № 10): Բալց հարկաւոր է նորից վիչեցնել. 1891 թ. մալիսի 31-ին Թիֆլիսի թատրոնական ակումբի անունից հրաւէր եղաւ հասարակութեան, որ ցանկացողները գանձ 1891/92 թւականին մշտական թատրոն ունենալու վերաջ մտածելու համար: Ժողովում եկան ալն եզրակացութեան թէ պէտք է նախ և առաջ 2500 ռ. ապահովութեան կամ բեղերւի գումար հաւաքել՝ կամաւոր ստորագրութեամբ: Ժողովարարութիւն անելու համար ընտրւեցին բաց ձայներով երեք հոգի: 1800 ռ. հաւաքելուն պէս լուսիսին նորից ժողով գումարեց ստորագրութեան մակնակցած անձերից քաղաքալին տան դահլիճում, ուր վճուեց սպասել մինչ 2500 ռ. հաւաքելը: Յուլիսի 11-ին կապացաւ վերջին ժողովը, ուր վճուեց հալոց թատ-

յոնի կառավարութիւնը 1891/92 թ. սեւեռնի համար չանձնել նոյն ալք նիստում ընտրելի 5 հոգւոց բաղկացած չանձնաժողովին, սորա վերայ դնելով ալս վերջին պարտականութիւնը՝ մինչ մեծ պատը (1892) գործը վերջացնելուց չետո՛ւ՝ իւր գործունէութեան հաշիւը ներկայացնել ընկերութեան:

Պարզ է ուրեմն թէ ինչ վերջնական ակտով էր վերջանում հասարակութիւնից ընտրւած թատրոնական չանձնաժողովի լիազօրութիւնը: Պարզ է նաև որ չանձնաժողովի գործունէութեան հաշիւ տեսնողը կարող էր լինել միմիայն ալս ժողովը, որ մասնակցած էր անցեալ տարւալ ժողովարարութեան: Եւ ոչ աւելի պակաս պարզ է որ ալք ժողովին մասնակցելու, կամ ալ խօսքերով՝ ժողովի անդամ ճանաչելու իրաւունքը վերջանում էր հէնց ալս լուսէին, երբ ժողովը վերջացրեց կոմիտեոյ գործունէութեան հաշիւ քննելը:

Ալս պարզ և, որպէս չոյս ունիմ, ամենքին մատչելի լոգիկայով մտածողներին, սակայն, սիւրպրիզներ էին պատրաստւած և ալս էլ մեծ սիւրպրիզներ:

Լրագիրներում ամենքը կարդացին այսպիսի չափաբարութիւն:

«Վիւրակի, մարտի 22-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, համաձայն հաստատւած կանոնադրութեան 30 մարտի 1882 թւականի, նշանակւած է Հայոց Դրամատիկական Ընկերութեան (Ակումբի) ընդհանուր ժողովը՝ քննելու անցեալ 1891—1892 թ. թատրոնական սեզոնի հաշիւը և առաջիկայ 1892—1893 թ. թատրոնական նախահաշիւը հաստատելու:

«Ալք ժողովին, բացի Ակումբի անդամներից, կարող են մասնակցել ալս անձինք որոնք իրանց նւիրատուութիւններով նպաստեցին 1891—1892 թատրոնական ֆոնդին, և նոյնպէս նոքա, որոնք կը տան նւիրատուութիւններ (մինչև 12 ժամը մարտի 12-ին) ոչ պակաս քան 10 ռուբլի կամ կը գրեն անդամ Ակումբի: Երկու դէպքերումն էլ դրամը կանխիկ»:

Ուրեմն հին անդամները, առանց նոր նւիրատութեան, շարունակում են նաև ապագայի համար անդամներ ճանաչել, իսկ նորերից միայն նոքա, որոնք 10 ռուբլի կը վճարեն:

Ով նշանակեց ալք տակտան, ահա խնդիրը:

Ժողովի նախագահ իշխ. Ն. Ամատունին չափոնեց թէ այդպէս է կարգադրել թատրոնական կոմիտեոյ: Եւ ալք նոյն կոմիտեոյ, իսկ որ ցոյց տւեց որ հաշիւ ներկայացնելով, նա իւր լիազօրութիւնները վերջացրած համարելու տրամադրութիւն չունի. հաշիւը տալուց չետ՝ կոմիտեոյ անդամներն շարունակեցին, վարչութեան անձերին վազել սառնասրտութեամբ, բազմած մնալ նախագահական սեղանի շուրջը, առանց մտքովն անգամ անցկացնելու թէ իրանց գործը կատարւած վերջացած է և որ նրանց մնում է միայն հեռանալ, թերևս չնորհակալութիւն չափունել իրանց ընտրող հա-

սարակութեան, արդար սպասելիքով փոխադարձ շնորհակալութեան հասարակութեան կողմից:

Երբ կոմիտեաի գործունէութեան հաշիւը կարդացւեց և հաստատուեց, նախագահ իշխ. Ամատունին հրաւիրեց ժողովին լսել նախկին կոմիտեաի պատրաստած նախահաշիւը զալ սեզոնի համար: Արկին թիւրիմացութիւն. միթէ մեր ընտրած կոմիտեաին մենք իրաւունք ենք չտակացրել իւր գործը վերջացնելուց չետ՝ նախահաշիւ առաջարկել և հաստատուել տալ? Աւ միթէ ժողովի հին անդամները շարունակում են իրաւունք բանեցնել նաև զալ սեզոնի համար. միթէ դոքա մշտական իրաւատէրեր են թատրոնական դործի համար: Այդ հիմնական խնդիրները պարզելու համար երբ ժողովականներին մէկը վերկացաւ խօսք խօսելու՝ նախագահը նրան թող չը տուց մի բառ անգամ արտասանելու: Նա, այդ խօսք ուզողը ինքը հին անդամ էր և ալն կարծիքի էր որ ինքը չունի իրաւունք չանուն հասարակութեան նախահաշիւներ լսելու և հաստատելու. նա ուրեմն զո՞հ էր բերում իւր կարծեցեալ իրաւունքը՝ միայն թէ խնդիրը պարզէր: Բայց նախագահը չուզեց որ ժողովականները իրանք պարզած տեսնեն իրանց իրաւունքները, ալն աստիճան, որ երբ ալ նոյն անդամը ուզեց խօսուել և խօսք պահանջեց՝ նրան սպառնաց նախագահը, չալտնելով որ եթէ չի ուզում լսել նախագահին խօսքին՝ կարող է դուրս գնալ: Ժողովականներին մեծամասնութիւնը, որ համամիտ էր կոմիտեաին և նորա դաշնակից նախագահին, հէնց մի աղիպի խօսքին էր սպասում, և սկսեց բռնալ իրաւունքներն պարզաբանութիւնը պահանջող անդամներին վերոյիշեալին՝ դուրս, դուրս! Ժողովականների մի մասը, քոքրագոյնը չորդորեց նորան տեղում նստել, և սկսեց իրարանցում, շխթութիւնը, որ աննկարագրելի է: Խաղաղելուց չտող նախագահը ալնու ամենալինւ կարդացնել տուց նախահաշիւը զալ սեզոնի համար մի ժողովի առաջ, որի իրաւունքները ոչ մի կերպ պարզած չէին: Այդ միջոցին խօսք ուզեց պ. Ա. Արատիանեանց, որը բաւականին երկար ճառում չալտնեց մօտաւորապէս հետեւեալը:

«Անք ամենքս հաւաքուել ենք ալտեղ թէ նախկին կոմիտեաի գործունէութեան հաշիւը լսելու և թէ ապագալ սեզոնի մասին մտածելու համար: Փատրոնի զոյութիւնը մեր բոլորի ցանկութիւնն է և միայն խնդիրը ալն է թէ ինչ հիւքերի վերալ պէտք է դրած լինի հալկական թատրոնը, որ նա կարողանալ չաջողութեամբ շարունակել: Տարարախտարար ալ մասին ալս տարի տարբեր հալեացքներ կան, մինչդեռ անցեալ տարի մեզ ամենքիս միացնում էր ոչ միայն թատրոն ունելու ցանկութիւնը, ալ և նորան ոտքի վերալ կանգնացնելու միջոցը: Այդ միջոցը գտնուեց՝ թատրոնը կապելով ժողովրդի հետ: Անցեալ տարի մենք զիմեցինք հասարակութեան, որը չը զլացաւ մեր հրաւերին արձաղանք տալու, նախ լսելով ալ գործին 2800 ուրբլի գումարը: Բայց մենք աւելին արինք, մենք վճարեցինք որ հասարակութիւնը ինքը տէր լինի իւր թատրոնին»

մենք համաձայնեցինք որ ներառու անձերից ժողով գումարի և նա ինքը ընտրի ալն մասնագիտովը, որին կ'ուզենալ հաւատալ ալ գործը և հաւաքած գումարի վերալ սնօրէնութիւնը: Ազգայէս էլ եղաւ, թատրոնը հիմնուց, գոյութիւնը սրահայանեց մի տարր, և ալ թատրոնը ունեցաւ ալնքան մեծ ծախք, որպիսին ունեցած չէր թերես երբէք. բայց նա ունեցաւ նորոպէս ալնքան մուտք, որ մենք անցեալ տարի չէինք էլ եւթադրել: Չը նապած ծախքի եւթադրածից կրկնակի աւելլ մեծ լինելուն, նա ծածկուց. հետեապէս մենք լուծեցինք մի խնդիր, որի լուծելը հրաշք էր համարուամ: Այլ կատարից ալ հրաշքը: Թատրոնին տէր դարձած հաւտարակութիւնը: Ազգ չը պէտք է մոռանալ:

«Այժմ ես ցաւելով պէտք է վկայեմ, որ մի տարւալ իւրտուր ուղում են արդէն մոռացութեան տալ: Մենք վրդովեցինք, խմանալով լրագրական լատարարութիւններից, որ նոքա, որոնց ձեռքով պէտք է դամարի ալս ժողովը, ալ կերպ են մոռածում: Ես ալսուղ տեսած և լսածը միայն արդարացնում է նոցա, որոնք ազգայէս վրդովել էին: Մենք այժմ տեսնում ենք որ մեղնից ընտրած կոմիտեաի անդամները, մի հատ տարի իշխանութիւն բանեցնելով, արդէն հպարտացել են, *защитились*, ինչպէս ռուսքէն ասում են: Բաւական չը համարելով իրան լանձնած գործը, որի վախճանն էր հաշտուութիւնը, նա այժմ մեղ օրէնքներ է տալիս, ինքնագլուխ կերպով որոնելով նոր անդամների համար անդամաւճարը: Ինքնագլուխ կերպով նա վճռում է անցեալ տարի վճար տաւաններին լատկացնել անդամակցութեան իրաւունքը դաւոց տարիների համար և ալն:

«Մի կողմ թողնելով իրաւունքի խնդիրը ինքնագլուխ կերպով ազգպիսի կարգադրութիւններ անելու, հետաքրքիր է խմանալ թէ ինչու նորերի համար կոմիտեաը 10 ռուբլու անդամաւճար է բնդունել, որի հետ ըստ երեւթիւն, ալսուղ շատերը համակարծիք են: Ազգպիսի բարձր անդամաւճար նշանակելը, տփրախտարար պատահական չէ: Կոմիտեաի անդամներից մէկը մի երկու շաբաթ առաջ ասում էր ինձ՝ ինչ հարկաւոր են նոր անդամներ: Իսկ կոմիտեաի մի ալ անդամ հէնց պարս, Նիտից առաջ բացատրում էր իւր միտքը ալսպէս՝ «պէտք է *исходить из положения* (մտքել) թատրոնական բնդհանուր ժողովները»: Դուք տեսնում էք ուրեմն թէ ինչպիսի մտքեր են սաղմ գցել մեր անդամներից շատերի մէջ: Եւ նորա կարծիքով՝ թանղ գլին նշանակելով՝ ժողովները կը մաքրեն: Ահա ալսպէս են մոռածում նորա, որոնց նշանակելը իբր կոմիտեաի անդամներ՝ պարտական են հէնց ալն մարդկանց, որոնց 50 կոպ. կամ 1 ռ. երկու—երեք ռուբլիներ են վճարել ժողովին մասնակցելու համար: Պարոնների, ալ ձեր աչքում կոպէկանոց գրպանների տէր մարդիկն են որ ստեղծեցին ներկալ թատրոնը. դոցա մասնակցութեամբ է որ թատրոնը դառաւ ժողովրդական. դոցա շնորհին է որ թատրոնը լաճախում էր: Ազգ ժողովրդականութիւնը ալն հրաշքը գործեց, որ չը կարողացաւ գործել սահ

տասը տարի իւր թէ գոյութիւն ունեցող Դրամատիքական Ակումբը և տեղացի տուգները:

«Ինչ պէտք է անել ուրեմն: Պահպանել ժողովրդական սկզբունքը, որ հիմքն էր մեր անցեալ սեզոնի թատրոնի: Առաջարկում եմ որ 1) կոմիտեաւը իւր գործը վերջացած համարի, 2) ժողովը վճռի նոր հանգանակութիւն անել, նշանակելով անդամավճարի minimum-ը մի ուսուրի. 3) նոր նւիրատուների ժողովում ընտրել թատրոնական նոր կոմիտեաւը»:

Պէտք էր սպասել, որ ալս ձառը, որ բազմիցս բուռն ծախահարութիւններով էր ընդհատուում և հաւանութեան նշաններ խլում նոյն իսկ հակառակ բանակից, իւր ներգործութիւնը կ'անէր և լետ կը կանգնացնէր ժողովի նախագահին և կոմիտեաւին նոցա բռնած ծուռ ճանապարհից: Բալլայ աջպէս չեղաւ: Եղան նոյն իսկ առաջարկներ, պ.պ. Սպ. Սպանդարեանի և Խ. Խաչատրեանի կողմից որ Ակումբի նախագահը ինքը լանձն առնէր գործի պատասխանատուութիւնը, ընտրելով օգնականներ ժողովին անդամներէց: Պր. Արամյանեանցի առաջարկը նոյն իսկ քւէարկութեան չուղեց ենթարկել նախագահը: Դորանից ծագեց մեծ տարաձայնութիւն, մեծ շփոթութիւն, որին մասնակից եղան նաև ալն կողմնակի անձերը, որոնք եկել էին անդամ գրեւոր լուսով: Նիստը փակեց առանց հետևանքի:

Յաջորդ երեսում ընթերցեցները կը գտնեն թատրոնական կոմիտեաւի ներկայացրած հաշիւը, որը ալնպէս էլ սպում եմ առանց նկատողութիւնների:

ԼՈՒՍԻՆԻ

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՅԻ

1891—1892 թ. Թատրոնական սեզոնի:

Մ Ո Ւ Տ Ք		Ռուբ.	կ.
Հանգանակութեամբ ժողոված դրամ		2843	27
Տոկոս ընթացիկ հաշից		11	65
Սեպտեմբերի 5 ներկայացումից		2411	50
Հոկտեմբերի 7 »		2952	40
Նոյեմբերի 8 »		2809	75
Դեկտեմբերի 7 »		2175	35
Յունւարի 8 »		2657	25
Փետրւարի 4 »		1891	45
Ափրիլներից 39 ներկայացման		117	—
Տուգանքներից		40	—
Բաժանորդներից		605	—
Գ Ո Ւ Մ Ա Ր Ն Է		18514	62
Պակասորդ լրացրած ¹⁾		270	32
		18784	94
Պարահանդէսից գոյացած դումար		700	

¹⁾ Վերադարձեալ պակասորդ դումարը լրացրել են իրանց սեպտեմբերի միջոցներից պ.պ. Գ. Տէր-Նիկողոսեան և Կ. Հեջուբեան:

Ե Լ Ք

	Թուր.	Կ:
Պր. Պետրոսեանին համաձայն ընդհանուր ժող. որոշման ձանապարհաճախք (Կ. Պոլիս գնալ-ղալու) .	500	—
Վարձատրութիւն դերասանական խմբի 5 ¹ / ₂ ամսուայ .	8032	50
Թատրոնի վարձ 39 ներկայացման	4300	—
Ճանապարհաճախք Պոլսի դերասաններին	422	—
Վարձատրութիւն հեղինակ. և թարգմանիչներին . . .	427	90
Պիեսներ և դերեր արտագրելու և պատրաստելու . . .	334	65
Աֆիշա՝ մեծ և մանր, ցրելը, կպցնելը և յայտարար- ութիւններ թերթերում	754	95
39 ներկայացման գիշերւան անհրաժեշտ ծախք ¹⁾ . .	1372	41
Նպաստներ հասանելիք դերասանական խմբի անդամ- ներին	2640	53
	18784	94

¹⁾ Թատրոնի ծառաներին, դերձակին, դեկորատորին, պարուարին, երաժիշտներին, երգիչներին, ստառլիտներին և այլ ծախք:

«ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» 1891 ԹԻԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ:

1891 թ. յունիսի 13-ից թ. Ը. Հ. Գ. Հրատարակութեան խմբագրա-
կան մասնաժողովի նոր կազմութիւնը (4 նոր և 3 հին անդամներ) սկսեց իւր
գործունէութիւնը, որը մինչև ընդհանուր ժողովը (մարտի 20 1892) տեղեց 6
ամիս, չը հաշւած յուլիս և օգոստոս ամիսները: Ահա դրական արդիւնքը
նրա գործունէութեան, թողնելով մի կողմ իւր նիւտերում մշակած և չա-
րուցած խնդիրները:

Հրատարակւած են. 1) Յ. Պարոնեան՝ Մեծապատիւ մուրացկաններ:

2) » » Ազգային Զոջեր:

3) Օժեշկօ՝ Բը-ա-բա:

4) Կուլիկովա՝ Շնիկ:

5) Շչեգրին՝ Զատկի գիշերը, Մուացկոտ ոչխար,
Ազատամիտ:

6) Ալֆոնս Գոդէ՝ Տարսակոնցի Տարտարէնը:

7) Օստրապորսկի Օրլէանի կոչը:

8) Պոտապենկօ՝ Գաղափարական քահանայ:

9) Անենսկայա՝ Ընտանիքի կոչը:

10) Յ. Արարատեանի կեանքը:

Մամուլի տակ են. 11) Յ. Պարոնեան — Պտուտ մը Պոլսոյ թաղերում,
Հոսոսի չիշատակարանը, Խիկարի գուշակու-
թիւնքը:

12) Բոսկօ՝ Տարրական քիմիա:

13) Շչեգրին՝ Խիղճը կորաւ, Խղէալիստ ծածան
(Корась идеалистъ), Իմաստուն ծանծաղուկ
(Премудрый пискарь):

Պատրաստ են,—բայց դեռ չեն լանձնւած մամուլին:

14) Ն. Լալադեան «Ժողովրդական նիւթերի ժո-
ղովածու.—Ջաւաղք»:

15) Գոգոլ — Տարաս Բուլբա:

16) Բժ. Պոկրովսկի. Մանուկների հոգատարութիւ-
նը (Ժողովրդի համար գրւած):

17) Շմիթի—Մուանը ¹⁾ (մանկական):

¹⁾ Վիշէների պատճառով ուշացաւ տպագրութիւնը:

Պատրաստուում են, — և շուտով կը լանձնեն տպագրութեան:

18) Պոլոթենիայի աշխարհաբառ թարգմանութիւնը.

19) Ֆլամմարիոնի՝ Հանրամատչելի տիեզերագիտ.

20) Սպենսերի՝ Մտաւոր, բարոյական, ֆիզիկական կրթութիւն¹⁾:

21) Գոգոլի՝ Շինէլ:

Կարդալով այս ցուցակը և տպած գրքերի բովանդակութեան հետ ծանօթանալով, ընթերցողը մօտաւոր գաղափար կարող է կազմել թէ ինչ ծրագրով և ուղղութեամբ է ղեկավարել Հրատ. Ընկերութեան խմբագրական մասնաժողովը. սակայն շատ բան նորա համար դեռ հասկանալի կարող է և չը լինել (ինչպէս երեսց Ընդհ. ժողովում մի քանիսների կողմից), եթէ նա մօտ ծանօթ չը լինի թէ ինչ ծրագրի և սխտեմի արդիւնք է այդ բոլորը, նա մանաւանդ որ 6 ամսաջ ընթացքում անկարելի է ի հարկէ ամբողջապէս լրագործել մի ծրագիր և շատ շատ կարելի է միայն սկսել, ղենել հիմքերը, իսկ ամբողջացնելը, լրացնելը պահանջում է աւելի երկար ժամանակ:

Ընդ. կանոնադրութիւնը որոշ սահմաններ, ինտորովցիաներ չի տալիս հրատարակութիւնների մասին: «Խմբագրական մասնաժողովը, աւած է կանոնադրութեան § 11, ընտրում է տպագրելիք հեղինակութիւնները և նշանակում հեղինակներին կամ թարգմանիչներին վարձատրութիւն նոցա աշխատութեան համար: Առանց նորա վճռի ոչ մի գիրք չէ կարող հրատարակել ընկերութեան կողմից», իսկ § 1 աւսպէս է որոշում Ընկերութեան նպատակը՝ «հրատարակել հպերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանած գրքեր»: Վերջիշեալից պարզ է որ Ընկերութեան անունով տպած գրքերի բովանդակութեան և ուղղութեան համար միակ պատասխանատուն խմբագրական մասնաժողովը է, որովհետեւ նա է միայն ընտրում գրածքները և ամբողջապէս նորա հպեցողութիւնից է կախած տպել այս կամ այն գիրքը: Եթէ նորա գործունէութիւնը չի գոհացնում Ընկերութեան անդամների մեծամասնութեան (անդամների թիւը սահմանափակած չէ)՝ ընդհանուր ժողովը իւրաքանչիւր տարի միջոց ունի նորոյն խմբ. մասնաժողովի կազմութեան կէսը, ընտրելով մեծամասնութեան կարծիքով չարմարագուններին, իսկ թէ ինչ սկզբունքներով կը ղեկավարել և ինչ ուղղութիւն կունենայ այդ խմբ. մասնաժողովը՝ դա կախած է նորանից թէ ինչ մարդկանցից է նա կազմած:

Մարդիկ տարբեր տեսակէտներ ունեն թէ հատարական գործերում և թէ գրականութեան մէջ: Այս վերջինիս նշանակութեան մասին եղած զանազան կարծիքները կարելի է բաժանել երկու որոշ տեսակի. մի կող-

1) Քննուում է թարգմանութիւնը:

մից կանգնած են նրանք, որոնց համար կեանքի պահանջները և պատկանելությունը հասարակական «պրոդ» խնդիրները քիչ նշանակություն ունեն և որոնց կարծիքով զրականությունը նախ և առաջ «ճաշակ» զարգացնելու համար է. սոցա դեռիզն է «արևատը-արևատի համար»:

Միև կողմից, այս գրականական էպիկուրեանների հանդէպ գտնուած են նրանք, որոնց իդէալն է ժողովրդի բարօրութիւնը և որոնց սկզբունքն է «արևատը—կեանքի համար»: Սոքայ, չը բացասելով դրամաթի մէջ ճաշակի կարևորութիւնը, կարծում են որ, երբ ժողովուրդը հազար ու մի անփետածկելի կարիքներ ունի, երբ նրա միտքը խաւար է, աշխարհակցողութիւնը փակ՝ մոտեցնում միտքն «գեղեցկի» մասին, «ճաշակի» մասին՝ շուտովութիւն է, նամանաւանդ որ «ճաշակը» զարգացած մտքի ու հոգու արդատիք է, ուրիշն միտքը, հոգին զարթեցնելը պէտք է նախորդէ «ճաշակին»: Սրանց կարծիքով զրականութիւնը օլիմպիական բարձրութեան վրայ չը պէտք է սաւառնի, այլ նա կապւած պէտք է լինի կեանքի հետ. հասարակական երևութիւնների անալիզը, հասարակական կեանքի բարոյցած խնդիրները, պահանջները պէտք է մեծ տեղ բռնեն ամեն, նոյն իսկ զեղարւեստական, դրամաթիների մէջ: «Կեանքի պահանջներ» ասելով սոքա հասկանում են մի հաւաքական հսկալ մարմնի—ժողովրդի պահանջներ: Արդ, որոնք են մեր ժողովրդի ներկալ պահանջները. ալք խմանալու համար պէտք է ծածօթ լինել նորա կարիքների հետ. պէտք է զիտել իրականութիւնը: Մեր ժողովուրդը ունի զպրոցներ, ուր ուսանում են մօտ 14 հազար հոգի նրա հարապատ դաւաններից, որոնք նրա մօտ ապագայի բոլորն են. նա իրաւունք ունի պահանջել սրանց համար ըստ կարելոյն լաւագոյն ուսում. ժողովուրդը ինքը ունի ևս պահանջ կրթւելու, լաւագոյնելու իւր աշխարհակցողութիւնը, բարւոքելու իւր կացութիւնը՝ զրականութիւնը պաշար չ'ունի նրան ալք բաներում օգնելու. ժողովուրդը, վերջապէս, ուղում է ճանաչել, ուսումնասիրել՝ իսկ զրականութիւնը համարեա չի դրադում նրանով: Այս բոլորից լետոլ պարզ է թէ Հրատարակական Ընկերութիւնը, իբրև իրականութեան ծնունդ, իբրև հասարակական հիմնարկութիւն, որ կանչւած է հասարակական կեանքի մէջ մի որոշ գործ կատարելու, մի պակաս լրացնելու՝ ինչ խնդիրների վրայ պէտք է ծանրացնի իւր ուշադրութիւնը. զպրոցական կարիքներ, մանկական-պատանեկական ընթերցանութիւն, չափահասների ընթերցանութիւն, ժողովրդական գրքեր, ժողովրդի և հալրենիքի ուսումնասիրութիւն—ասա ինչ է գրած նրա առաջ: Կանգ առնենք իւրաքանչիւր խնդրի վրայ առանձին:

1) Գպրոցական ինչ կարիքները Հրատարակական Ընկերութիւնը կարող է լրացնել: «Աւագոյն ուսումը» մասամբ կախւած է լաւագոյն կազմած ձեռնարկներից, մանաւանդ ընդհանուր զարգացուցիչ աւարկաներից՝ ընդհանուր զրականութեան, ընդհանուր պատմութեան, հալոց զրականութեան և բնական գիտութիւնների վերաբերեալ: Հրատ. Ընկ. խմբ. մասնաժողովը

իւր գործունէութիւնը սկսեց մի չափաւարարութիւնով, ուր, ի միջի աչքոյ, չափաւած էր, որ կ'ընդունեն աղբախի ձեռնարկներ տպագրութեան համար: Չը ստանալով երկար ժամանակ և ոչ մի առաջարկութիւն, նա մտածեց ինքն իւր վրա՝ վերցնել նախաձեռնութիւնը այս տեսակ գրքերի մի սերիա կազմելու, և մասնաւոր կերպով դիմեց Մոսկւայի համալսարանի ընդհ. գրականութեան և ընդհ. պատմութեան պրոֆեսորներէից մէկին, որ նա մատնացող անի լաւագոյն և չարմարագոյն ձեռնարկները ուսաց թէ եւրոպական ուրիշ լեզուներով: Այս սերիային մասամբ պատկանում են Ֆլամմարիոնի Տիեզերագիտութիւնը, Ռոսկոի Քիմիան և Սպենսէրի Ֆիզ., մտաւոր և բարոյական կրթութիւնը ուսուցիչների և ծնողների համար:

2) Մանկական-պատանեկական ընթերցանութեան գրքերի թիւը մեր գրականութեան մէջ հազիւ 100 հատ կը համարէք. պահանջը այս տեսակ գրքերի ահագին է. մտաբերէք միայն այն, որ մեր դպրոցներում սովորողները թիւը մօտ 14 հազար է. սրանց մտաւոր սնունդ միթէ չի հարկաւոր: Եւ ահա Բնկերութեան հրատարակութիւնների մէջ անհրաժեշտ է գրքերի մի երկրորդ սերիա. լաւագոյն մանկական-պատանեկական գրածքներ: Այդ սերիան սկսեց «Շնիկ», «Բնտանիքի սփսբ», «Առւան» գրքով:

3) Չափահասների ընթերցանութեան գրքերը որոշելուց առաջ պէտք է իմանալ թէ ովքեր են կազմում ընթերցողների այդ կոնտինգենտը: Դիտողութիւնը ցույց է տալիս, որ հաջ հափհաս ընթերցողների կոնտինգենտը բաղկացած է. ա) նրանցից, որոնք միայն հասարակ գրագիտութիւն գիտեն—հասարակ ժողովուրդ կամ ստորին ընթերցողներ. բ) սկզբնական կամ միջին ստոր կրթութիւն առածները—մեծ մասամբ՝ արհեստաւորներ, գործակատարներ, վաճառականներ, հողերակառնների ահագին մասը, մանր պաշտօնեաներ, շատ քիչ գիւղացիք և ալին. սրանց կարելի է անւանել միջին ընթերցողներ. գ) տեղ են բռնում նրանք, որոնք ունին միջին կրթութիւն կամ զարգացում. դժբաւն՝ հալոց դպրոցների ուսուցիչներ, վարժուհիներ, շատ քիչ թւով հողերակառններ, գործակատարներ, վաճառականներ և մանր պաշտօնեաներ. դոցա կ'անւանենք ինտելիգենտ ընթերցողներ. զ) տեղէ բռնում մի փոքրիկ խումբ, բարձր ինտելիգենցիան կամ բարձրագոյն կրթութիւն առածները, որոնք օտար գրականութիւնից են քաղում իրանց մտաւոր սնունդը և, եթէ հետաքրքրւում են հաջ գրականութեամբ, բաւականաւորում են միայն մամուլով, որի միջոցով հետեւում են հասարակական զանազան երևոյթներին: Հասկանալի է վերեւ բերածներից, որ ընթերցանութեան գրքեր ասելով պէտք է հասկանալ այնպիսի գրքեր, որ մեծամասնութեան մատչելի են և կը կարդացան. իսկ այդ մեծամասնութիւնը հաջ ընթերցողների ահագին կոնտինգենտը բաղկացած է վերեւ լիշած առաջին, երկրորդ և երրորդ կատեգորիաներից: Բայց գուցէ մտածողներ լինեն, որ առանց այն էլ մեր

գրականութիւնը հարուստ է ընթերցանելի գրքերով, այդ իլլիւզիայից հանելու համար ազդէս մտածողներին մինք կ'առաջարկենք մանեւհալ գրականներ, որը և կամի կամ վերցնի ամենալիւր կազմած գրացուցակներ և տեսնի. նա չի պանիլ 300-ից աւելի ընթերցանութեան գրքեր: Այս բոլորից բղխում է կարիք չափահասներէ ընթերցանութեան աշխարհի գրքերի մէջ, որ լարմարեցրած են կամ ստորին ընթերցողի հատկացողութեան կամ միջին և կիսաինտելիգենտ: Այս սերիալի գրքերը կարելի է բաժանել երկու զլխաւոր տեսակի՝ բեւեռի և տրիտիալի և գրեթէ անհրաժեշտ փոխարինող անհրաժեշտ գրքեր:

Բեւեռի տրիտիալում կան զանազան ուղղութիւնների գրեթէ անհրաժեշտ: Ուղղութեան զանազանութիւնը սկզբունքների, աշխարհայեցողութիւնների մէջ կարող է լինել և ոչ արտապատելու ձևի, տիպերի մէջ: Իդէալական, ոգևորիչ գրեթէ և սատիրական գրեթէ կարող են ներշնչւած լինել միևնույն, օրինակ դեմոկրատիական, լուսաշաղիմական ոգով: Տգէտ պէտք է լինել մտածելու համար, ինչպէս մի հալ վիպասան արաւ աղ մարտի 20-ի ընդհանուր ժողովում, կարծելութիւն ոգևորիչ, իդէալական գրեթէ հրատալակողը, եթէ միևնույն ժամանակ հրատալակում է մի սատիրական գրեթէ և հակասում է իրան. իբրեւ իմ եթէ մէկը պաշտում է Շիլլերին, Հիւգօն, պէտք է ատի Շիլլերին: Հատարական երևութիւնների անալիզը, որը ցոյց է տալիս հատարական կազմակերպութեան բացասական կողմերը, որպէս պակասութիւնները, բոլորք քննադատութիւնը չը գոհացնող ներկայի գէմ, աւելի որոշ է գառնում ան, ինչին ուղում ենք համեմել, պիտիք իդէալականը: Բայց կարելի է նկարագրել և միմիայն իդէալականը, ոգևորել նրանով, որին ձգտում ենք համեմել: Միթէ վշտեր, Ալֆոն, Շիլլերին, Գոթոլ, Պարոնեան իրանց անխնայ սատիրալով աւելի պակաս հատարական կրթիչ նշանակութիւն ունին, աւելի պակաս են նպատում իդէալականին ձգտելու, քան Շիլլերը, Հիւգօն իրանց բարձր իդէալական գրեթէ և սատիրան մի աղղու բողբ է տիրապետող բացասական երևութիւնների գէմ. անխնայ քննադատութիւն է հատարական տղեղ կողմերի. քննադատութիւն և բողբ են տանում դէպի լուսաշաղիմութիւն, որը իդէալ է, իսկ իդէալիստ գրողը, ոգևորած ցոյց տալով աղ իդէալը, նույնպէս կանչում է դէպի նա: Այդ պատճառով ոչ միայն հակասութիւն չը կալ սատիրալի և իդէալական գրեթէ մէջ, ալ մի խոր, փիլիսոփայական կար «Օրէստի Կոստ» իդէալական գրեթէ է. տէք ընթերցողներին միմիայն իդէալական ոգևորիչ գրեթէ, որոնք, բայց հոյին բարձրացնելու, վառում են և երևակայութիւնը, — և կարող է լուսաշ գալ սխալ ըմբռնողութիւն՝ ճարտարէններ, Գոն-Ալիստոններ:

Ուրեմն արտաքին կողմից չի կարելի բմբռնել բեւեռի տրիտիական գրեթէ անհրաժեշտ ներքին կապը և լնկերութեան ալ տարալ հրատարակութիւնների բեւեռի տրիտիական գրեթէ անհրաժեշտ մէջ ուրիշ կապ պէտք է գտնել:

նոցա մէջ կարմիր թելով անցնում է հասարակական լառաջադիմութեան տեղեկացման, ժողովրդասէր ողին, լառաջադիմական ձգտումները Օրէնսի կոչ, Բը-ա-բա, Գաղափարական քահանայ, Տարաս Բուլրա, Ջատիկի գիշեր, Մոռացկոտ ոչխար, Ազատամիտ, Խիղճը կորաւ, Խղէալիստ Մածան, Խմաստուն Պանծազուկ, Շինէլ, Մեծագատիւ Մուրացկաններ, Ազգային Ջոջեր, Պտույտ մը Պոլսոյ թաղերում՝ ունին որոշ ուղղութիւն և մի ընդհանուր կապ ¹⁾:

Ինչ վերաբերում է գիտնական ժողովրդականացրած դրքերի տերիւրին՝ պէտք է նախ և առաջ նկատել որ երկու տեսակի են աշխարհի գրքերը. մէկը՝ միտքը ու աշխարհայեցողութիւնը բացող, զարգացնող, միւսը՝ գործնական նպատակների ծառայող, ժողովրդին իւր իրաւունքները բացատրող, օգտակար տեղեկութիւններ և զիւղատնտեսական գիտելիքները մատակարարող: Առաջի տեսակի գրքերից են այս տարի Ֆլամմարիոնը, Բոսկոն, իսկ երկրորդ տեսակից՝ Պոլոթենիայի աշխարհարար թարգմանութիւնը, Պոլոթենիայի Մանուկների հոգատարութիւնը, Հողի մշակելը:

4) Մենք վերև ասացինք, որ մեր ժողովրդի և հայրենիքի ուսումնասիրութեան վրա մեր գրականութիւնը քիչ ուշադրութիւն է դարձնում, և Հրատ. ընկերութեան նպատակներից մէկն էլ պէտք է լինի զարկ տալ այդ ուսումնասիրութեան այդ նպատակներով է նա ձեռնարկել. «Արատսկու կեանքի» թարգմանութիւնը, որ ծանօթացնում է մեր ժողովրդի և հայրենիքի ամենամօտ անցեալը. դուրս համար է նա ձեռնարկել կազմել մի ընդհանուր ծրագիր Տաճկաստանի վարչական, ժողովրդագրական, տնտեսական և այլ պայմանների մասին, որ այդ ծրագրով ամենավերջին հետազոտութիւնների վրա հիմնւած գիրք կազմել: Ժողովրդի հետ ծանօթանալու և նրան ուսումնասիրելու նպատակով էր նա ձեռնարկել ժողովրդագրական հիւթերի (հրդեր, աւանդութիւններ, սովորութիւններ և այլն) ժողովածուների հրատարակութիւնը, որի առաջին գիրքը՝ Ն. Լաւալեանցի ժողովածուներից կազմւածը՝ արդէն պատրաստ է, և վերջապէս հայրենիքի ուսումնասիրութեան հրատարակներից զրոյած էր մասնաւոր կերպով գիմել Հրատ. ընկ. իմր. մասնաժողովը ԼՂմիւսի Միաբանին էլիզէ Ռէկլիւի Բնդհանուր աշխարհագրութեան Փրանսերէն ընագրից քա-

¹⁾ Զուտ դեղարեւոտահան բարձր դրածքներ, կլասիկներ Թարգմանելը այնքան հեշտ է, ինչպէս Թուում է շատերին. կլասիկ Թարգմանողը պէտք է ունենայ դուրս համար աւանդին պատրաստութիւն և շնորհք: Հրատ. Բնկ. այս խընդրում սպասողական գիրք է բռնում, այսինքն նա ինքը չի ձեռնարկում և տպագրում, այլ սպասում որ դրսից աւանդակին, ինչպէս այդ եղաւ Շէկապիրի «Մակքէթի» նկատմամբ, որ և թէ միջև այժմ չը տպուէ, այդ կախած էր դէպի կլասիկների Թարգմանական լեզուն դեռող աւելի խիստ պահանջները: Աւանդակութիւնները ուղղութեամբ են ընդունւել, բայց իմր. մասնաժ. իւր նախաձեռնութիւնը աւելի կարեւոր ժամանակակից պահանջները վրայ է դրածագրել:

ղել մեզ հաջերիս և մեր զրացի ազգերին վերաբերեալ մասերը (տես «Արա-րատ» 1892 թ. փետրւարի № ևրես 115):

Ուրեմն տեսնենք ինչ սերիաներ են սկսւել:

- 1) Գասաղբեր և մանկավարժական զրաժ. քններ
- 2) Մանկական-սպասանեկական ընթերցանութեան գրքեր
- 3) Չափահասների ընթերցանութեան գրքեր
 - ա) Բեկտորիստիկական
 - բ) Գիտնական
 - գ) Գործնական նշանակութիւն ունեցող

4) Հայրենիքի և ժողովրդի ուսումնասիրութիւններ:

Ահա ինչ ծրագիր և ուղղութիւն է երեսմ 1891 թ. խմբ. մասնաժողովի հրատարակութիւնների մէջ և ինչ կարելի է խմանալ աղջ Ընկերութեան 1891 թ. գործունէութեան համառօտ «տեղեկագրից»: Հասկանալի է որ 6 ամուսն ընթացքում միայն կարելի էր մի ընդարձակ ծրագրի հիմքերը որոշել և ոչ ամբողջացնել, վերջացնել նրան. աղջ միայն երկար տարիների եռանդուն և անչեղ գործունէութիւնը կարող է անել:

ԼԵԻՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՅԱՆ:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Ֆրանսիացիք 1870 թ. դէս: Բարոյական դարձում և Պոլ Դեժարդէնին բռնչելը «ներկայ պարտականութիւնը»: Վազներին Լօենգլինը Պարեզում: Շեքսպիրի Մալթը Պարեզում: Գերմանական դպրոցական օրէնքները: Վելդենբրոնի թատրոնական նոր գրածքը՝ «Սրբազան ծիծաղ»: Դուքս դը Վարենսի մահը: Մ. Չերաքի նամակը Հայ Համայնքի կողմից: Սուլբիւրիի պատասխանը: Սպիւրժոնի մահը: Մաննինգի մահը: Մեկենգի մահը: Սդամսի մահը: Դատաստանական դորձեր: Շեքսպիրի Հանքի VIII բեմի վրա: Պատկերահանդէս: Folks-Lore-ի ժողովները: Իտալիայի կոլոնիական քաղաքականութիւնը: Ֆերդինանդօ Մարտինիի գիրքը:

Ի՞նչ է կատարուում Եւրոպայում—առաջագիմով աղգերի գրականութեան, գեղարւեստի, գիտութեան, մի խօսքով մարդկային խելքի արտալպտութեան զանազան ճիւղերի մէջ:

Ահա այս հարցերին պատասխան կը տալ կարելոյն չափ պարբերաբար «Մուրճ»-ի նոյն ալս բաժինը:

1870 թ. Հարաբաստիկ պատերազմից առաջ ամբողջ աշխարհին մոռա և տոն տուող Պարիզն էր: Առաջին մենաշնորհը կը մնալ դեռ Պարիզի ձեռքում: Բաւց երկրորդից նա մասամբ զրկւի է և աւսուրալ օրս ամենքը Պարիզի վրայ չեն սեռել առաջալս պէս իրանց հայեացքները, թէև Պարիզը մնում է համաշխարհային քաղաքակրթութեան զարկերակներէից ամենանշանաւորը:

Այժմեան Ֆրանսիացիք մի չափնի ստոխճանով պակասացրել են իրանց գոռոզութիւնը և առաջալս նման չեն կղլիանում, գոհանալով միմիայն Ֆրանսիացու խելքի արտադրութեամբ: Մի աասը տարի հաղիւ լինի ինչ որ Ֆրանսիացիք սկսել են նշանաւոր չափով հետաքրքրել օտար գրականութեամբ: Մի տասը տարի հաղիւ կը լինի ինչ որ ուռւ հեղինակները՝ Տուրգենից, Դոստոեւսկուց սկսած մինչև Տոլստոյ՝ թարգմանում են Ֆրանսերէնի, չափշտակութեամբ կարդացում և թէ վիճաբանութիւններ առաջ բերում և թէ ազդեցութեան հետեանքներ առաջադրում:

Անցեալ ամսին ամբողջ Պարիզի խօսակցութեան միակ առարկան էր Պոլ Դեժարդէնի բրոշիւրը՝ Ներկայ սրարտականութիւնը¹⁾ վերնագրով:

¹⁾ Le devoir présent de M. Paul Desjardin.

Պոլ Դեփարդէնը՝ 30 տարին հազիւ լրացած ճարտասանութեան պրոֆեսոր է։ Բարոյական չարիքը նրան չափազանց վշտացրել է։ Կեանքի ընթացքը նկատելով՝ նրան թւում է որ այս չարիքի մեծ մասը առաջ է եկել աչն բանից, որ ժամանակիս նշանաւոր մարդիկը ինչպէս Ռենան, Դարւին, Տէն, Զոլա գահավիժել են հին բարոյական իդէալները և նրանց տեղերը պարսպ, թափուր թողել։ Երան նպատակ դնելով մի հակալիշիւ կազմել լիշեալների (որոնց նա մկրտում է «բացասականներ») մականոցումը՝ լուծող ազդեցութեան դէմ — նա դիմադրում է «գրականներին», որոնց սոսկ կեանքը, իւր ասելով, զօրեղ հատատութիւն է բարիի հնարաւորութեան և բաւարարութեան»։ Եւ այս վերջինների շարքում նա դասում է Տոլստոյին, Փրանսիացի բանաստեղծ Սիլվի-Պրիւդոմին, Ֆուէին, Սեկրետանին ¹⁾ և ուրիշներին։

Դեփարդէնը գուշակում է «դրականներին» մօտագալ լաղթութիւնը զլխաւորապէս աչն մի ալ պատճառով, որ ալ դ չ ա ղ թ ու թ իւ ն ը պ է տ ք է տեղի ունենալ թէ բարոյական ու թ ե ա ն տե ս ա կ է տ ի ց և թ է տրամաբան ու թ ե ա ն։

Դեփարդէնի ասելով, դրականները՝ նպատակ ունենալով «հասարակական խաղաղութիւնը և բարեօրոյումը կամքի և սիրոյ զարգացմամբ» — պէտք է խուսափեն ամենաչն տեսակ ֆորմուլաներից, որոնք իւր ասելով, միայն չարիք են կազմում։

Այս բարի նպատակին համար Դեփարդէնի առաջարկած միջոցներից ամենից որոշը և զործնականները սրանք են։ «Յրեք տարին մի ժողովել կարծիքների փոխադարձութիւն առաջ բերելու 40 տարեալ գրականութեան չարիքի առաջին առնելու համար և նոյն ալը «ալիդ» (infâme) գրականութիւնը արհամարհանքի մէջ դրելու։ Պէտք է հաստատել միահամուռ մի հաղորդակցութիւն, մի հոսանք ստեղծել աչն բոլոր մարդկանց մէջ, որոնք դաւանում են պարտականութեան հաւատը և նրան զործադրում»...

Անշուշտ ընթերցողը կը նկատի, որ Դեփարդէնի «նարտականութեան հաւատը» սերտ առնչութիւն ունի և արձագանք է Տոլստոյի մտքերին։

Կերմանական մտքերին Պարիզը արձագանք էր տւել, (ինչպէս որ ալդ զիտեն արդէն «Մուրճ»-ի ընթերցողները) անցեալ տարի մեծ դժարութիւններով լաջողցրած՝ Ռ. Վադնիերի Լօէնգրին օպերալի ներկայացումով։

Ալժմ անդլիական մտքերին Փրանսիացիք արձագանք են տալիս ներկայացնելով Շեքսպիրի Մակբէթը ²⁾ Պարիզի Օդէոն թատրոնում։ Իրաւ է

¹⁾ Sully Prudhomme, Fouillé, Ch. Secretan.

²⁾ Մակբէթ տպագրւած է Շեքսպիրի մահէց ևօթը տարի յետոյ, ուստի կատարւում են որ սա փոփոխութիւնները եւթարեւած չը լինի գրամատիկական հիշեակ Միդլթոնի (Middleton) ձեռքում։

սրանից առաջ ևս Պարիզում խաղացել են Շեքսպիրի ողբերգութիւնները, բայց ևս ղիտմամբ մէջ եմ բերում նորագոյն այս փորձերը ցոյց տալու համար թէ Փրանսիացիք առաջաւել նեղ, սահմանափակ Փրանսիացիքը չեն, սրանք ամենքին վարկենի են կոչում:

Բայց ինչպէս որ առաջ անպէս և ալժմ Շեկսպիրը չաջողութիւն չունեցաւ. մասամբ ան բանից որ Մակբէթը ներկայացնում էին բառացի թարգմանութեամբ և թէ ղլխաւորապէս նրանից որ առհասարակ Շեքսպիրը ճանաչւած է Փրանսիայում իբր մի շատ ուշափոստ և շատ կոպիտ գրող:

Փրանսիացիների ասելով Մակբէթը մի վառ բանաստեղծական ֆարս է, բայց և սարսափելի ֆարս:

Մի կողմ թողնելով նոր դպրոցական օրէնքը ուսումնարանների մասին (տես «Մուրճ» № 2) գերմանացիների ուշադրութիւնը գրաւել էր անցեալ ամիս Վիլհելմ II կայսրի ցոյց տւած համակրութիւնը ղէպի Վիլհելմբրուխի (M. de Wildenbruch) մի նոր թատրոնական դրամաքը:

«Սրբազան ծիծաղ» (Das heilige Lachen) ահա գրածքի վերնագիրը որը իսկապէս մի ֆէերիա է 6 գործողութիւնից՝ հանդերձ բաւեւով և երաժշտութեամբ: Պիեսալի ներկայացումը տեղի ունեցաւ շատ շքեղ, շատ ճոխ հագուստներով, շատ զարդարանքներով և մեքենախաղութիւններով ¹⁾: Որովհետեւ ղաղտնի չէր մնացել հասարակութեանը թէ կայսրը ներկայ է եղել նոյն իսկ բեպտիցիալին և թէ ներկայ է գտնւելու առաջին ներկայացման 4/16 փետր. — Schauspielhaus թատրոնի բոլոր տեղերը բռնւած էին թանդ վճարումներով:

Երկուլթը շատ հետաքրքիր էր. ծափահարութիւնների հետ միաժամանակ լսում էին շրւտցներ կայսրի շնորհ ձեռք բերած հեղինակի հասցէին, իսկ ոմանք չը նաչած կայսրի ներկայութեանը չանդգնում էին բեմ կանչել հեղինակի փոխարէն մեքենավարին:

Ահա և գրածքի բովանդակութիւնը որ իսկապէս մի տենդլենցիօզ ալլեգորիա է:

Բայց ամենից առաջ պէտք է իմանալ որ ղուրս բերւած ամեն մի անձնաւորութիւն—որ և է գաղափարի մարմնացումն է: Այսպէս՝ օպտիմուսը (Optimus)—լաւատեսութիւնն է, Պեսսիմովը (Pessimoff)—հոռետեսութիւնը և այս վերջինիս կատաղի թշնամին է ծիծաղի ատուածը (Lachgott)—լախգոտը:

Այժմ երեակայացէք ձեզ որ Պեսսիմովը «մի բոպէ աշխարհքիս տէրը ղառնալով՝ թունաւորում է հաւատը, լոյսը, սէրը և ան ամենը ինչ որ կաղում է կեանքի արժանիքը, որ նա չաջողում է բաժանել ամուսիններին, որ նա ապստամբեցրել է ժողովուրդը թաղաւարների ղէմ և թերահաւատներին կրօնի ղէմ: Օպտիմուսը սրա ղոհների թւումն է լինում: Անիմուսը (Ani-

¹⁾ Machinerie.

mus) ¹⁾ թողնում է իւր կնիւշը—դեղեցկութեան ֆէեան: Բայց սրանք ունենում են մի որդի որ արագիւլ Ադեբարը (Adebar) սրանց համար բերած է լինում: Այս որդին որ է ծիծաղաստածը նրանց կը հաշտեցնի և վերջին լուսէին Պիսիմովը կը հեռանա: մի չիչի մէջ—ուր և նրան կը պահեն անվեաս դարձնելու համար—լսծկած: Փառքը կը լինի Օպտիմուսինը Գեղեցկութեան, Արդարութեան և Ծիծաղինը: Գարնանալին մի հրապուր (charme) կը տարածւի նորից աշխարհիս երեսին և սա կը լինի Նրջանկութեան ապաֆէողը: Ընթերցողը տեսնում է որ ճան Գերմանիայում աշխատում են մաքառել հուստեսութեան դէմ, մարտնչել ուշալական գրականութեան և սրա չափազանց շնատակար համարած հետեանքների դէմ և որ ալս գործին դուլս է անցնում նոյն իսկ կայսրը՝ իւր հովանաւորութեան տակ առնելով վիչեալ հէքիաթեանման լաւատէս մի երազագրութիւն՝ եթէ ներւի ալս խօսքը:

Եւ ալս հանգամանքը զուգադիարութիւն է որ Ռէչնի թէ ձալս և թէ աջ ափերին միանման ինդիրներ են չարուցած, ոչ.—սոքա արձագանք են Տոլստոյի բարոյական մտքերին և գաղափարներին:

Ամենքի վերջնական նպատակն է «մարդկալին բարօրութիւնը և երջանկութիւնը»:

Թագաժառանգ դուքս դը Լլարէնսի վաղաժամ մահաւն առիթով պ. Մ. Չերազ մի նամակ է ուղղում առաջին նախարար Սոլերիւրին, որի մէջ նա, իբրեւ ներկայացուցիչ հայ համայնքի, լայտնում է իւր խոր ցաւաւցութիւնը ալս տխուր կորուստի մասին:

Պ. Սոլերիւրին ներկայացնում է ալս գրութիւնը Անդլիայի Վիկտորիա թագուհուն և սրա անկեղծ շնորհակալութիւնների մասին նամակով լայտնում պ. Չերազին:

Նոյն ամսում Անգլիան դրկեց մինը միւսի ետեից երկու նշանաւոր հոգեւորականներից՝ դրանք են կարդինալ Մաննինգը որի մասին լրագիրները բաւականաչափ տեղեկութիւններ հաղորդեցին և Spurgeon նշանաւոր բապտիստ քարոզիչը: Բապտիստ ²⁾ ծնողների որդի Spurgeon-ը 1850 թ. 16 տարեկան—իրան մկրտել է տալիս հրապարակական ընկղմումով և բապտիստ ֆնում մինջև կեանքի վերջը:

Մկրտութիւնից իսկույն և եթ սկսեց քարոզներ անել և 18 տարին հաղիւ լրացած՝ բապտիստ մի եկեղեցու քարոզիչ նշանակեց: 23 տարեկան՝ ընտրեց քարոզիչ Բիւրեղեան Պալատում (Palais de Cristal) ուր

¹⁾ Լատիներէն—կենդանի:

²⁾ Որոնք երեխաների մղտելը չեն ընդունում և մկրտում են միայն հասակ առածներին:

ժողովներ էին լինում Հնդկաստանը քրիստոնէացնելու առիթով և Սպիւր-
ժոնը քարոզում էր 20—25 հազար ունկնդիրների առաջ:

Նա չափնի դարձաւ իւր նշանաւոր քարոզիչ և կարողացաւ միան-
գամայն գրաւել հասարակ ժողովրդի՝ մանաւանդ բանւորները սէրը: Կալ-
ւինականութիւնը և սաստիկ ատելութիւնը դէպի Հռոմի եկեղեցին նրա
յատկանիշ գծերն էին:

—Կարդինալ Մաննինգի (Manning) մասին արքան կասեց, որ նա
առաջ պատկանում էր անգլիական եկեղեցուն, 1851 թ. 43 տարեկան
ընդունեց կաթոլիկութիւն և 1875 թ. կարդինալութիւն ստացաւ: Վկայում
են որ նա զարմանալի կերպով ճանաչել էր մարդկային սիրտը:

Մեծ դեր է կատարել մարդասիրական ընկերութիւնների հիմնարկու-
թիւնների ժամանակ և մասնաւորապէս նա է հիմնադրել եղել Խաչի Լի-
գայի (Ligue de la Croix):

Անգլիայի բժշկական աշխարհը շատ կորուստներ ունեցաւ, որոնցից
ամենանշանաւորն է սիր Մորէլ Մեկենզիի (sir Morell Mackenzie) մահը
ինֆլուէնցայից:

Սա նա է որ խնամում էր հանգուցեալ Ֆրիդրիխ Կալրին և որ
վարձատրութիւն ստացել էր Հոհենցոլլերն կարգի մեծ խաչ, իսկ չեստը
1887 թ. թագուհուց ստացաւ իւր լօբելեանին ազնւականի կոչում:

Վիտնականներից արձանագրութեան արժանի է աստղագէտ Ադամսի
(Adams) մահը— որը Լըւեռիէի (Leverrier) հետ միաժամանակ գտել էր
Նեպտուն մոլորակը:

Վատաստանական աշխարհում տեղի ունեցան երկու պրոցեսներ որոն-
ցից մէկը՝ ապահարդանի գործ կոմսուհի Ռուսսելի (Russell) իրա ամուսնու
դէմ, պրոցեսներ որոնք տակն ու վրա արին ամբողջ լրագրութիւնը՝ Տալմո
լրագրից սկսած: Բանը նրանումն է որ գործերի քննութեան ժամանակ
դէմ առ դէմ վիճաների արած անտեղի հարցերից հրապարակ հանուցան
լորովին անմեղ մարդկանց ընտանեկան կեանքի մանրամասնութիւնները և
ալտեղից ծագեց կռիւ լրագրութեան մէջ թէ արդեօք հարկ կա՞ թո՞ւ
տալ փաստաբաններին անտեղի հարցեր առաջարկել վիճաներին՝ ներկայ
եղած հանդիսականներին մի քիչ զւարճացնելու մտքով:

Թատրոնական աշխարհի նորութիւնը Անգլիայում Հանրի VIII պիեսի
կրկին երեւալն է բեմի վրայ: Այժմ կան մարդիկ որոնք պնդում են թէ դա
Շեքսպիրի գրածը չէ, այլ նրա ժամանակակից երկու բանաստեծների գործ.
Ջոն Ֆլետչերի (John Fletcher) և Ֆիլիպ Մասսինգերի (Ph. Massinger):
Լրագիրների ասելով երեկի Իրւինգը (Irving) կատարում է խորամանկ
կարդինալ Վոլսէյի (Wolsey) դերը շատ նուրբ կերպով:

Գեղարեստական աշխարհի նորութիւնը դասական նկարիչների ցու-
ցահանդէսն էր: Ի ցուց էին դրւած 180 իւզաների պատկերներ և մօտ 100
ակաբեկ, ամենը առաջնակարգ:

Յոճևար և փետրար ամիսներում Լոնդոնի Աղդալին բանաստեղծութեան (Folklore) ընկերութեան կապացած ժողովներին՝ Մ. Չերազ Ներկապընէ է Ընկ. իբր Նէյր պ. Գր. Խալաթեանցի աշխատութիւնները և այս վերջինիս լուսանկարը, քանի որ Ընկ. մտադրութիւն ունի օտար Փոլկ-լորիստները լուսանկարներէց մի ժողովածու կազմել:

Մի քանի տարի սրանից առաջ խալիան վճուեց Էւրոպական առաջնակարգ պետութիւնների քաղաքականութիւնը բանեցնել:

Այս վճուի հետեանքը եղան պետական պարտքեր, սպառազինումն, երրեակ դաշնակցութեան անդամակցութիւն և նոյն խոյ հեռուաֆրիկական Աբիսինիայում կոլոնիաներ ձեռք բերելը:

Այս բոլորի հետեանքը նոր է կայսրում ամենաշն մերկութեամբ. դրամական տաղնապ (кредитъ) և ընդհանուր ժողովրդական դժգոհութիւն:

Որոշեց Աբիսինիա ուղարկել մի մասնաժողով, որի անդամներէց մէկը պ. Ֆերդինանդօ Մարտինի (M. Ferdinando Martini) իւր տպաւորութիւնները մի գիրք ¹⁾ հրատարակեց, մի գիրք ուր երևում են հեղինակի թէ «սիրտը և թէ ջգերը»:

Ֆ. Մարտինին ներկայումս պատգամաւոր է, իսկ առաջ կոմիկական դերատան էր և նրա գրքից աչքի է ընկնում հեղինակի նկատողական խոշոր ձիրքը: Նա ամենաշն բան տեսել է և նկատել. նա ոչ միայն նկատել է աւագոտ երկիրը և անցել թունաւոր բոյսերի և ծաղիկների կողքով—ալ և ընթրւնել է երկրի հողին, իմաստասիրել նրա բարք ու վարքերը:

Նա տեսել է սեամորթ կանանց սև իրանը և նրանց կրքոտ պարերը, նա լսել է պատերազմական և սիրոյ երգերը, սրտն անջնալէս են աչքում ինչպէս որ կիլիչ արեւ աչքել է երգողների սրտերը, նա ականջ է դրել ներշնչած manzarateh-ների պատմութիւններին իրանց նախնեաց փառաւոր արկածների մասին:

Նա չըջել է այս չարաբաստիկ սովի դաշտում—ուր դիակները կարծես չարթւում են, մինչ այն աստիճան նրանք ծածկւած են միջատներով և ուր երեսալքը աղահուլթեամբ լափում են սատկած ձիաների փթող սրվաչնները...

Նա մտել է ուսումնարաններ, ուր փոքրիկ աբիսինիացիները կարդում են—պատմութիւններ՝ «բարի պատուրը» կամ «ձիթեպտուղի հունձքը» վերնագիրներով—մինչ զեռ նոյն ալդ երեսալքը իրանց օրում ոչ պատուր են տեսել և ոչ էլ ձիթեպտուղ: Նա լսել է ալդ երեսալքի խմբովին երգելը «Խալիա երկիրը՝ քաջերի երկիր է» ²⁾, մինչ զեռ նոյն ալդ երեսալքի

¹⁾ Nell' Africa italiana. Impressioni e ricordi, di Ferdinando Martini. Milano 1892.

²⁾ L'Italie est une race des forts.

հալերը սպանւած են եղել խտլացիների ձեռքով քաղաքակրթութիւնը տարածելու պատրուակով:

Մարտինին աչն.քան քաջութիւն ունի որ նկարագրելով այս երկիրը և խօսելով իրանց խտլացիների կոռնիական քաղաքական կոմէդիայի մասին—բացականչում է՝ մենք՝ — փարիսեցիներ ենք:

Մարտինիի դրքի մասին ղեկուցանող օտարազգին շարունակում է իւր խօսքերը այսպէս:

«Աս միևնույն մշտնջենաւոր տխուր պատմութիւնն է, և խտլացիք բացառութիւն չեն կազմում այս դէպքում: Յանուն քաղաքակրթութեան դնում են հաստատում այն մարդկանց, այն ցեղերի մէջ, որոնք ոչ ոքի չեն խանգարում: Եթէ նրանք ապստամբում են՝ նրանց հրացանի են առնում, որովհետև չարձակւողները ղինւած են կառաքիններով: Եթէ նրանք տներ ունեն—նրանց դուրս են անում տներից և իրանք հաստատում մէջը:

Առաջ՝ վալրենի լինելով—նրանք կռւում էին եղբայրը եղբոր դէմ— իսկ ապիւ նրանց կռւացնում են իրար հետ. բայց փոխանակ վալրենի միջոցներով իրար սպանելու՝ նրանց սովորեցնում են կատարելագործւած միջոցները: Բայց եթէ մի որ և է թշուառ մի դաւադրութիւն կազմի իրերի այս նոր դրութեան դէմ—վալ նրան—նրան կը մեկնեն հրացանի դնդակներով, իսկ որքացած երեխաներին երգել կը տան՝ «Խաւրիան քաջերի երկիր է»...»

† ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ

Մոսկւայից ստացանք հետեւեալ տխուր և անսպասելի լուրը:

«Մոսկւա, 30 մարտի, Երեկոյեան ժամ 10 և 30 րոպէ: Խորին ցաւով հաղորդում եմ մեր չափնի լեզւագէտ Սարգիս Սարգսեանի վաղաժամ մահը կարճատե հիւանդութիւնից չետու: Թաղումը չորեքշաբթի, ապրիլի 1-ին: Տիգրան Յովհաննիսեան»:

Հանդուցեալ Սարգիս Սարգսեանցը մեր նոր լեզւագէտների թերևս ամենատաղանդաւոր ներկայացուցիչն էր. նա առանձին կերպով նւիրած էր հայկական բարբառների նոր գրական լեզւի ուսումնասիրութեան, որի մէջ բաւականին չարգած հեղինակութիւն էր ձեռք բերած: Նորանից կարևոր աշխատութիւններ սպասուում էին զլիսատրապէս միայն աշուհատե, բայց արդէն աչն, ինչ նա տւել է ցայսօր, իւր մի աշխատութիւնով, հանդուցեալի անունը մշտապէս ապահովացրել է հայոց գրականութեան և լեզւագիտութեան մէջ առհասարակ: Նորա աչգ աշխատութիւնն է՝ «Ազուլեցուց բարբառը (զօկերի լեզուն), լեզւագիտական հետազոտութիւն, Մոսկւա 1883 թ.» — Հանդուցեալը ունի նաև գրած երկու քննադատական-լեզւաբանական լօղածներ «Մշակ»-ում, որքան վիշում ենք 1879—1880 թւականներին «Փարոս» պատկերազարդ ամսաթերթի լեզւի առիթով, և երկու նոյնպէս քննադատական-լեզւաբանական լօղածներ «Մուրճ» ամսագրում, առաջինը 1889 թ. № 5, իսկ երկրորդը, աւելի ընդարձակը, մեր ընթերցողներին արդէն չափնի է անցեալ № 2-ից, որի շարունակութիւնը տպւում է ներկայ համարում: Իսկ վերջը կը տպւի չաջորդ № 4-ում: Բացի աչգ, նա տւել է մի գրախօսութիւն «Դարդեղի» ժամանակագրութեան մասին, տպւած «Մուրճ» 1891 թ. № 1: Աչլ տպւած աշխատութիւններ նա չունի:

Կարող ենք հաղորդել, որ հանդուցեալը վերջին 5—6 տարիները պատրաստում էր մի մեծ աշխատութիւն մեր աշխարհագրութեան լեզւի զարգացման պատմութեան մասին, որը պէտք է լինէր նորա ամենանշանաւոր աշխատութիւնը:

Յանձին Սարգիս Սարգսեանցի մենք կորցնում ենք ոչ միայն մի լուրջ լեզւագէտի, այլ և մեր նոր սերնդի ազնւագոյն և փալլուն ներկայացուցիչներից մէկին: Նա արդէն բոլորովին որոշած բնատրուութիւն էր՝

անպատման չարգլած ամենքից, չառաջդիմական ձգտումներով, ազատ ամեն նախապաշարունակների կաշկանդումից, բնկերատէր և մի հումորով, որի արժէքը զիտեն նորա բոլոր ծանօթները և որը իւր դրոշմն էր դնում նոյն իսկ նորա գրական վաստակների վերաջ. դորա մի նմուշը կարող է լինել նոյն իսկ «Մուրճ»-ում աջմ տպւող նորա ըստ երևութին չոր առարկայի մասին քննադատական չօղածը:

Որքան մեզ չալտնի է, նորա ձեռնարկած մեծ աշխատութիւնը մեր գրական լեզւի զարգացման պատմութեան մասին դեռ ևս վերջացրած չէ, բայց կան գրած նախապատրաստական շատ նիւթեր և թերես մի քանի ամբողջացրած գլուխներ. Հանդուցեալը ցանկութիւն և չօթարութիւն էր չալտնում ալ աշխատութեան աջ գլուխները, որոնք աւելի ընդհանուր հետաքրքրութիւն ունեն, «Մուրճ»-ում տպագրել: Մենք կ'անենք հարկաւոր քաջերը հանդուցեալի ընտանիքից ձեռք բերելու աջ կտորները, որոնք տպագրելի են «Մուրճ»-ում:

Հանդուցեալ Սարգիս Սարգսեանցի համառօտ կենսոյնիցը հետեալն է: Նա Ագուլիսին մօտ Յղնա գիւղիցն է, տեղական անունով Քրօղեան, իսկ ընդհանրապէս Սարգսեանց անունով չալտնի ընտանիքից, որի անդամներից շատերը համալսարանականներ են: Մենց 1855 թւականին և դեռ պատանի ուղարկեց Մոսկա, ուր աւարտեց գիմնազը, ապա համալսարանը՝ լեզուպիտական բաժնում. դրեց դեսերտացիա, որի համար ստացաւ արծաթի չքաղրամ: Համալսարանը աւարտելուց անմիջապէս չետոյ 1878-ին հրաւիրեց ս. Էջմիածնի ձեմարանը, որտեղից նա տօգոհ հեռացաւ ու նշանակեց Ռուսաստանի Բախանսկ քաղաքի պրոգիմնազում կլասիկական լեզուների ուսուցիչ: Պրոգիմնազի փակելով, նա մնաց մի առժամանակ անպաշտօն, ալցեկց իւր հալոնիքը, եկաւ Թիֆլիս 1891-ին ալստեղ հաստատուելու և մասնաւոր պրոգիմնազ հիմնելու գիտաւորութիւնով, որ, չը ստանալով թոյլտուութիւն, չ'աջողեց: Լազարեան ձեմարանից հրաւէր ստանալով, 1891 թ. օգոստոսին ուղեորեց Մոսկա Լազարեան ձեմարանի հալոց լեզւի ուսուցչի պաշտօնով: Ներկաջ 1892 թ. մարտ ամսում նա ընտրեց Մոսկալի հասարակութիւնից ծխական պատգամաւորի փոխանորդ և նոյն ամսի 30-ին կնքեց իւր մահկանացուն, կարճատե հիւանդութիւնից չետու:

«Մուրճ»-ի խմբագրութիւնը անմիջապէս հեռագրեց Մոսկա պ. Տիգրան Յովհաննիսեանին «Մուրճ»-ի խմբագրութեան և խմբագրական խորհրդի անունից պսակ դնել հանդուցեալի դադաղի վերաջ:

Թիֆլիսում Քամոնեանց եկեղեցում հանդուցեալի համար հոգեհանգիստ կատարեց, ուր մի հանդուցեալի վիշտակը չարգելու եկած հասարակութեան առաջ ամսադրիս խմբագիրը արտասանեց մի ճառ՝ հանդուցեալին դնահատելու համար որպէս գիտնականի և մարդու:

Ա. Ա.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴԵԱՆ ԱՐԵՂԱՐՁՐ: Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ ապրիլի 4-ին ընկնում է Նորին Բարձր Սրբազնութիւն Մկրտչ արքեպիսկոպոս Խրիմեանի ծննդեան 72-ամեակը: Նշանաւոր հաջի ծննդեան տարեդարձի առիթով հարկ ենք համարում հաղորդել, որ մի ամիս առաջ մի քանի օր շարունակ Խրիմեանի մօտն եղած մեր ծանօթներից մէկը Ներկաւացնում է մեծ ծերունուն միանգամայն ողջ-առողջ, իւր հոգու, մտքի և մարմնի կատարեալ զօրութեան տէր: Մաղթում ենք Աստուծոց, որ Նա երկար կեանք պարգևէ՝ Հալոց Ազգի և Նիկիեցու համար անգնահատելի Խրիմեան Հաջրիկին:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ: Մինչ ալժամ մեզ հասած տեղեկութիւնները կաթող, թեկնածուների մասին տեղիք չեն տալիս փոփոխութիւններ մտցնելու կաթ. թեկնածուների աջն ցանկի մէջ, որ մենք հրատարակել էինք «Մուրճ»-ի լուծարի առաջ-նորոգում. Յիշածներէն մեկի՝ աջն է Մատթէոս եպ. Խզմիրլեանի մասին հարկ ենք համարում լստնել, որ զանազան աղբիւրներից մեզ հասած տեղեկութիւնները աջն աստիճանի իրար հակասող են, որ որոշ կարծիք նորա մասին կազմել մեզ մինչ ալժամ անհնարին եղաւ:

«ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ» լողածը «Մուրճ» № 1 ամբողջապէս արտատպեցին «Մշակ» և «Արմենիա» լրագիրներում, մասամբ նաև «Տարազ»-ում:

ԶՄԻՒՌՆԻԱՅԻՑ ստացւած մի նամակից քաղում ենք հետեւելը, վերաբերեալ կաթողիկոսական խնդրին:

«Կաթողիկոսական խնդրով Պոլսի հալերն էլ սկսում են շարժւել: Լուրեր են տալիս, որ պատրիարքի համար չատ աշխատողներ կան: Եթէ գաւառացիներն իրանց ներկապացուցիչները Պոլսից ընտրեն, այս էֆէնդիները կարող են անակնկալ բաներ անել: Այստեղ աշխարհական պատգամաւոր ընտրւած է պ. Յ. Բաբաղեան, որ Խրիմեանական է:

«Այս կողմի մի երկու թեմեր որոշել են իրանց սեպհական պատգամաւորներն ուղարկել. եթէ մեծամասնութիւնը պէտքէս անէ, լաւ կը լինի»:

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐ. Երեւնում ընտրւած է պ. Ռուբէն Հասան-Ջալալեան, 34 ձայնով ընդդէմ 14-ի, փոխանորդ՝ պ. Վարդան Եղիազարեան 23 ձայնով:

Շուշում (Արցախի թեմ) թեմական պատգամաւոր ընտրւած է երզնկալ հաւատարմատար պ. Ներսէս Ասլանեան Աթաբէգեանց, 36 ձայնով, փոխանորդ՝ պ. Բալաբէգ Մելիք-Ղարապետեան 21 ձայնով:

ՄՈԶՈՒՌԱՐԻՋԷԻ ԵՒՍՕ ՎԵՊԸ. Վրաց գրականութիւնից «Մուրճ»-ը անցեալ 1891 թեմականին առաջարկեց իւր ընթերցողներին իշխ. Իլիա Ճաւճաւաձէի «Վացիա-Աղամիանի» պատմաւ. քը, որը, մեզ հասած վկայութիւնների համաձայն՝ մեծ հրճւանքով կարդացել է հայ ընթերցողներից և որը մեծ պատիւ է բերում թէ հեղինակի տաղանդին և թէ վրաց գրականութեան առհասարակ: Հետեւելով նոյն մտքին, որ մենք քանիցս արդէն չարտօնու առիթ ենք ունեցած՝ մեր զրացի ազգերի կեանքի և դրականութեան հետ ծանօթանալու մասին, ալիս տպագրում ենք մի ալ վրացի հեղինակի՝ աւելի չափնի կազմէր ծածկանունով պ. Ալ. Մոչխուբարիձէի փոքրիկ վէպը՝ Եւթոս, թարգմանութեամբ պ. Մկրտիչ Նաւասարդեանի: Վէպը կը վերջանայ «Մուրճ»-ի չափորդ 4-րդ համարում: Չը նայած որ հեղինակը իւր վէպը կոչել է՝ «Հեզնների կեանքից», բայց աղտոյ խառը դուրս է բերւած թէ Հեզնների և թէ մոխուցիների կեանքը, որոնք բնակւում են Գուշնից գէպի Վալդիկաւազ տանող ճանապարհի վերայ և լեռնական վրացիներ են:

ՅՕԳՈՒՏ Պ. ՌԱՅԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ տոացւած է «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ «Մի սին» ստորագրած պարոնից 5 բուրլի:

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻՋԵԱՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ առիթով տեղ ենք տալիս ալետեղ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան անունից ուղարկւելու պատրաստւած հետեւեալ ուղերձը՝

«Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան Ընդհանուր Ժողովը, իւր մարտի 20-ի նիստում, չանձնեց վարչութեանս — Թարգման լինել նորա երախտագէտ զգացումներին և խորին չարդանքին գէպի Չեզ աչն արդիւնաւէտ դործունէութեան համար, որ Գուք ունեցել էք զրականական և մանկավարժական ասպարէզներում:

Ձեր անունը հայ սրտի մէջ դրօշմւած է, իբրեւ լոյսի, ճշմարտութեան, ազնիւի. շատագոմի:

Ձեր բանաստեղծութիւնները, Ձեր «Ատնի վիշտը» ներշնչւած են բարձր հոգեկան և հասարակական զգացումներով: Նոցա մէջ փաղկում է աչն մասաղ և թարմ ոգևորութիւնը, որ մղում է մարդկանց զէպի անձնէր դադափարական գործունէութիւն:

(Նշողենցէք, միծալարգ քաղաքացի, լնկերութեանս անդամներ շնորհաւորութիւնը և ջերմ զգացմունքի անկեղծ արտայայտութիւնը: Յանկանում ենք Ձեզ ևրկար կեանք, ևրջանիկ օրեր և Ձեր գաղափարական կարօտների իրագործումն):

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 2-ի: «Թիֆլիսի թեմական պատգամաւորի ընտրութեան ժողով» ջղւածում ևրես 330 անուն-ազգանուն № 50 տղւած է՝ Արարատեան Արտաշէս, ուղիղն է՝ Սպարապետեան Արշակ: Նոն ևրես անուն № 46 տղւած է՝ Էնֆրիաճեան Արշակ, ուղիղն է՝ Էնֆրիաճեան Արտաշէս:

Նոն ջղւածում, բողոքալրեր ներկայացնողներից վիշւած են բժ. Տէր-Գրիգորեան Էջմիածնեցոց և Ս. Լիսիցեան ս. Լուսաւորիչ ևկեղեցու առաջին անղամ ընտրւածների կողմից. բալց չէր վիշւած որ նաև պ. Ալ. Քալանթարը ներկայացրեց բողոքալիր Կումիսի բարեկարղութեան առաջին անղամ ընտրւածների կողմից:

ԱՍՏՐԱԽԱՆԻ հալոց հոգևոր զալր. հոգաբարձութեան: Ուղարկում ենք «Մուրճ»-ի ալս տարւալ № ները, Ձեր գրածի համաճախ: Ստուգեցինք և տեսանք որ Ձեր ասածը ստուղ է:

ՄՈՍԿԻԱ, Գ. Ա.-ին: Ստացւած են. լետ կ'ուղարկենք:

Ստացած գրքերից, բացի իւր տեղում վիշւածներից, վիշւու է՝

ԲԱՅՅԻ.—Վէպիկներ և Պատկերներ տղւած և անտիղ աշխատութիւններից: Հատոր առաջին. Թիֆլիս, տղ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 2 ը:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱԶԱՐԵԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ.	Լ.
1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թվականի, երկու հատորով .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
3. ՊԵՏԵՆԱՆՑ, ՊԵՐՃ.—«ՅԵՅԵՐ» (վէպ)	1	—
4. ՏԷՐ-ԳՐԻԳՐԵԱՆՑ, ԴՐԻԴՈՐ (Ղալարցի)՝ «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . .	—	05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկե- ների կեանքից	1	—
6. ԼԷՅ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	—	50
7. Մ.—ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՍՐԸ»: (Կեանքից պատկեր)	—	40
8. ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՑ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . .	—	60
9. ՊԵՏԵՆԱՆՑ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԷ», վէպ	1	20
10. ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բողան. կեանքից . . .	—	15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը . . .	—	50
12. » » » » բ. մասը . . .	—	75
12. ՂԱՐԱԳԻԵՕԶԵԱՆՑ, Յ.—«ՍԵՒ-ԼԵՈՆՑԻՔ» (տոհմագ. պատկ.) . . .	—	15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵԿՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ»	—	03
14. » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	—	03
15. » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	—	05
16. » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
17. » » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
18. » » «ՄԵՐ ԻՆՁԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	—	03
19. ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	—	15
20. ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈՖՆԵՐԸ»	—	10
21. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ» . . .	—	10
22. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.—«ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	—	15
23. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ»	—	20

Դրանք Վ. Բաբայանի կողմից հրատարակված «ՄՈՒՐՃ» թերթի հրատարակած հոդվածների համալրումն է:

ՀԱՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Արաւսիսանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

Հին ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարւած Հին եգիպտական, փիւնիկական և ասորական գրութիւններով և Արեւելքի Հին պատուածիւնների քարտէզով):

281 երես, յառաջաբան և նիւթերի ցանկ

Խաւով է 800 օրինակ, փայլուն լիւղի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 րուբլի

Պէտք է գիտէլ կամ հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, և կամ՝ Въ центральнѣй книжный магазинъ. Ուսումնարանների անուամ է 20% զիջում:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մարտի 20-ի ընդհանուր ժողովը ցանկութիւն յայտնեց, որ Խմբագրական Մասնա-ժողովը ընդհանուր ժողովի նիստերից մէկում տեղեկացնի իւր գործունէութեան ծրագրի մասին: Վարչութիւնս մտադրութիւն ունենալով շուտով նշանակելու ընդհանուր ժողով թէ այդ և թէ ուրիշ մի քանի կարևոր խնդիրների համար, հրաւիրում է ցանկացողներին յայտնել Վարչութեանս միջոցով Խմբագրական մասնաժողովին իրանց կարծիքները գրաւոր կերպով յիշեալ ծրագրի վերաբերմամբ մինչև ապրիլի 25-ը:

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻԻ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմեքեանների ըստը ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆՆԵՐԻ

կարևոր ընկերներ տան տիրիները և աղելու օգնականներ
ըստը արհեստավարների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գո-
լովինսկի պրոսպեկտի վերայ, Մերեմանովի տան և իրա ըստանմունք-
ների մէջ:

Բազում. Միքայէլեան փողոցում,

Միքայէլեանի տ.

Քուծայիսում. Բուլվարի դէմ

Չերեկովի տ.

Բաթումում. Առաք. Մեղիքեան փո-

ղոցում, Կուզուրի տ.

Աստարաղում. Գոստինիի դուռ №

2, Տ. Աֆանասևի:

Նրեանում. իմ ճամբորդ-գործա-
կալների մօտ:

և նրանց շահապարհորդող գործակալների մօտ

Միջին և Էլիսիսկային Ներոպոսի ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ
ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

արտադրութիւն ստացած



առևտրական գրոշմը

Գ. ՆԵՑԴԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, ալն է՝ չարաթով կամ
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով զրամը վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. ըստը պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս և ն.
ասեղներ, թել, մատաքս և այլ մեքենային պատկանելի իրեղեններ ամենազաւրաւոր գներով:



ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

Սաքսոնիայում (Գերմանիա)

ԴԻՐԵԿՏՈՐ՝ ՎԵՅՏԵԼ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ-ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՅ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՅՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՅ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանաւում է Միտլալդէ քաղաքում, Գերմանիայում, (Թալաուրուժիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱՆԵՐԻ չինելու և զորա ամենամօտ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ ելեքտրո-տեխնիկ և ջրաղացների շինութիւն:

Սխտանական ուսումով ալդ հիմնարկութիւնը պատրաստում է հետեալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, ելեքտրո-տեխնիկի և ջրաղացներ շինելու համար:

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին. որոնք իրանց ստորադրեալների չափ պէտք է հասկացողութիւն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ ունենալու համար, ուր հարկաւորւում է մեքենաների տարբ ու կարգ, որպէս՝ թղթի, փաղտենիւթերի գործարաններ, չոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, չաքարի, ասեղների, պողպատեգրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, գալի, լուցկիի գործարաններ և այլն և այլն:

4. Գիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար լիշւած գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ ալդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւալ ապրիլի և հոկտեմբերի կէսին:

ՏԵԽՆՈԼՈԹԻԿՆԸ ուսման առաջին դպրոցում, ճաշած սչակերտի նախապատրաստութիւններին, լինում է 2¹/₂ կամ 3 տարի, երկրորդ դպրոցում 1¹/₂ տարի:

ՏԱՐԻՔԸ ընդունողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ սակաւ:

Սոյն 18⁸⁹/₉₀ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնութիւնների համար կարելի է դիմել՝ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի ալդոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտլալդէի կեանքի և ղեկարացի վարչութեան պահանջմունքների մասին:

«Թիֆլիզի Բնկերութեան Հայոց զրքերի Հրատարակութեան»
խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրու-
թեան համար ընդունում են հետևեալ բովանդակութեան ինքնու-
րոյն և թարգմանական գրածքներ.

1. Գեղարւեստական:

2. Գիտական. զուտ գիտական գրածքներից կը տպագրեն
միայն այնպիսիները, որոնք վերաբերում են հայոց կեանքի հետա-
զոտութեան, իսկ գիտութեան միւս ճիւղերից միայն ժողովրդակա-
նացրած զրքեր:

3. Դասագրքեր, նամանաւանդ ընդհանուր գրականութեան,
ընդհանուր պատմութեան, հայոց գրականութեան, բնական պատ-
մութեան և Ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական դըս-
րոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան համար:


5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վե-
րաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Մանօթութիւն. մանրամասն ծրագիր վերոյիշեալ նիւթերի
ժողովելու համար կը տպագրւի յետոյ: Բնկերութեանս խմբ. մասնա-
ժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընտրութիւն
և քաղածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ
դնում:

Տպագրած զրքերի համար վարձատրութիւն տրւում է մի
տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրածքների համար՝ 20 — 25 ռ.,
իսկ թարգմանական գրածքի համար՝ 15 — 20 ռուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է և աւելի
լինել խմբ. մասնաժողովի հայեցողութեամբ:

Հասցէն՝ Тифлисъ, Правленію Тифлискаго Общества изданія ар-
мянскихъ книгъ.



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ

Բ Ա Յ Ի Ա Ծ Ի

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար զիմե՛լ՝

ԽՐԵԱԳՐԱՏՈՒՆԸ { Тифлисѣ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ՝ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական գրադաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյ, Սիօնի փողոց № 27:

ԲԱՔՈՒ. — պ. Ա. Եափա Դաւթեանց (Մարգաս. ընկ. ընթերցարան):

» պ. Ստեփան Սուլիսանեանց („Надежда“ ընկ., Набережная:

ՈՌԱՏՈՎ. — ՆՈՐ-ՆԱԽՁԵՒԱՆ. — Եղբ. Պ. Լ. Դ. Ունանեաններ:

ԲԱՔՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Ծովաններ):

ՎԱԳԱՐՇԱՊԱՏ. — պ. Ստեփան Արասխանեանց:

ՄՈՍԿՒԱ. — պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тупицына:

» պ. Ստեփան Վարդաղարեանց, (Б. Харитоньевскій, № 6):

ՅՐԵՍԱ. — պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. եղբ. Ծովաններ):

ԹԱԻՐԻՁ. — պ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

ԶՄԻՐՆԻԱ. — պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեսրոպ. վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — պ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՍԷՅԻ. — պ. Սիմէօն Միրզայեանց: Rue St Jacques № 86:

ԽՐԵԱԳՐԱՏՈՒՆԸ գտանուում է Թիֆլիս, Վեկամիւնեան փողոց, տուն № 8: